Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Բակուր

ISSN 1829-1473

3

Գաղափարական

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

Ֆ 51241
29

ԲԱԿՈՒՐ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

Մատենաշար
գիրք երրորդ

ԱՏ. 034

«Շուշի» ԲՀ
հրատարակչություն
Երեւան - 2009

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.3 (3Հ)
Կ-294

Շրույցները վարեց Բակուրը
Մատենաշարի գլխավոր խմբագիր՝ Անահիտ Սասորյան

Գիրքը տպագրվում է ուսուցիչության գեներալ-մայոր Աշոտ Գիգիրյանի հովանավորությամբ:

Կարապետյան Բակուր
Կ-294 Արցախյան գոյամարտի համահավաք, գիրք երրորդ. -Եր.: «Շուշի» ԲՀ, 2009թ. - 240 էջ:

Մատենաշարի երրորդ հատորը սկսվում է Արցախյան գոյամարտի 1930-ական թվականների՝ առաջին անգամ պատմվող իրադարձություններով, որոնք հայտնի պատճառներով տարիներ շարունակ մոռացության են մատնված եղել: Հատորները կազմվում են այնպես, որ ներքին ամբողջականություն ունենան, հնարավորինս լայն ընդգրկեն արցախյան գոյամարտը, որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի շարժման, նրա շարժառիթների, ինքնապաշտպանության կազմակերպման, զուգահեռ ընթացող դիվանագիտական աշխատանքի, պատերազմի բոլոր կողմերի մասին:

Հնարավոր է՝ մատենաշարի հեղինակը համաձայն չլինի պատմողի արտահայտած այս կամ այն մտքի հետ, սակայն բոլոր դեպքերում խմբագրությունը ձգտել է հարազատ մնալ ձայնագրությանը, եթե, իհարկե, այն չի վնասում պետության անվտանգության շահերին:

ԳՄԴ 66.3 (3Հ)

© Բակուր, 2009թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բոգդան Ջանյան....4
Սեյրան Օհանյան....18
Աշոտ Մանուչարյան....21
Սոս Սարգսյան....51
Նորայր Դանիելյան....56
Անատոլի Շաբադ....59
Շահեն Մեղրյան....63
Անահիտ Մարտիրոսյան....68
Վարդգես Բաղիրյան....77
Ռաֆսա Ստարամուդ....88
Ռոբերտ Գեյլ....93
Ալիխանե Մամե....96
Գառնիկ Իսրայելյան....106
Արթուր Ահարոնյան եւ Արարատ Ահարոնյան....112
Ֆելիքս Քոռլեյ....122
Մկրտիչ Տոնոյան....124
Աստվածատուր Պետրոսյան....150
Ռազմիկ Պետրոսյան....169
Նադիր Օսմանով եւ Շաքիր Վելիեւ....176
Սուրեն Գալստյան....178
Գեւորգ Ավագյան....194
Համիկ Սայադյան....209
Ադրբեջանական բանակի դասալիք լեզգի զինվորներ....222
Սանասար Ծատուրյան....225
Սարո Սարուխանյան....228
Անձնանունների ցանկ....231
Տեղանունների ցանկ....236

Պատմում է Բոգդան Ջանյանը ***(բանաստեղծ, հրապարակախոս, 1939-1941 թթ. եւ 1945-1948 թթ. եղել է ԼՂԻՄ-ի գրողների բաժանմունքի քարտուղա-րը, 1948-1954 թթ. աքսոր-վել է Հյուսիսային Ղա-զախստանի «Ջզկազգան» հատուկ ճամբար)։ 29.05.2008 թ . Երեւան***



Բ.Ջ - Իսկական ազգանունս Օհանջանյան է, Ջանյան կնքել է Աշոտ Գրաշին: Երբ 1930-ական թվականներին սովորում էի Շուշի քաղաքում՝ մանկա-վարժական ուսումնարանում, գրական պատի թերթ ունեինք: Ես այնտեղ բանաստեղծություն-ներ էի տպագրել: Այդ օրերին մեզ մոտ է գալիս Աշոտ Գրաշին եւ կարդում է բանաստեղծու-թյուններս: Ես դրանք գրել էի Բոգդան Բաղունի ստորագրությամբ: Աշոտ Գրաշին ասաց. «Ո՞վ է այս սարսափելի անունը»: Ազիզբեկ Հակոբյանը ցույց է տալիս ինձ, ասում՝ ա՛յ, սա է: Գրաշին հարցնում է՝ դուք որտեղացի՞ եք: Ասում եմ՝ տումեցի եմ: Թե՝ հարեւաններ ենք, բայց ինչու՞ Բաղունի, բանաստեղծություններդ լավն են, շնորհքով ես, ազգանունդ ի՞նչ է: Ասում եմ՝ Օհանջանյան: Թե՝ դե, գրիր Ջանյան, ինչու՞ Բաղունի:

Ես ծնվել եմ Հադրութի շրջանի Տումի գյուղում: Տումին ավելի շատ հայտնի է ոչ թե բնության գեղեցկությամբ, այլ իր պատմությամբ: Նշանավոր զորավար Աբու Մովսեսը (Մուսեն) այդ գյուղից էր: Մեր գյուղում «թագավորի աղբյուր» ունենք, թագավորանիստ գյուղ է եղել: Այս գյուղից շատ նշանավոր մարդիկ են դուրս եկել: Ամենամեծ, նշանավոր հայրենասերը եղել է Թեւան Ստեփանյանը, որն իր փոքր ջոկատով ամբողջ Դիզակը մաքրել է թուրքերից: Թեւանի միջոցով Նժդեհը կապված էր Ղարաբաղի հետ: Մի անգամ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը գալիս է մեր գյուղ: Վարժապետ Հայրապետի հետ ման են գալիս եւ զրուցում: Կողքից անցնում է մեր գյուղացի Նիկոլայ Մելքումյանը, ասում է. «Վարժապե՛տ, էդ մարդը ո՞վ ա, հի՞նչ ա ասում»: Հայրապետն ասում է. «Էս մարդն ասում է՝ եկել, Տումին տեսել եմ, պիտի գնամ Ղարաբաղի մյուս գյուղերն էլ տեսնեմ»:

Նիկոլայը թե՝ նեղություն մի՛ քաշիր, եթե Տումին տեսել ես, հաշվիր՝ Արցախի բոլոր գյուղերն ես տեսել: Ինչ որ Արցախում կա, այդ գյուղն ունի՝ լեռներ, գեղեցիկ բնություն, հերոսական պատմություն: Եվ էդ բնությունը ստիպում է, որ բանաստեղծ լինես: Ես չորրորդ դասարանում արդեն բանաստեղծություններ էի գրում: Թերի միջնակարգ դպրոցն ավարտել եմ այդտեղ: Հետո սովորել եմ Շուշվա մանկավարժական ուսումնարանի բանասիրական ֆակուլտետում, այնուհետեւ՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի գրական ֆակուլտետում: Երբ գնացի Բաքու, Չարենցն արդեն եղել էր այնտեղ: Նրան Գրողների միությունից հանել էին, մի երկու տարի Բաքվում տարագիր էր: Դա մինչեւ 1936 թիվն էր: Ես մի բանաստեղծություն եմ գրել՝ «Հուշապատկեր» վերնագրով.

«Առաջին անգամ Չարենցին տեսա որպես տարագիր Բաքու քաղաքում:
Դա նրա համար դժբախտություն էր, հայերիս համար՝ բարեբախտություն:
Չարենցով կարծես Բաքուն հայացավ, հայացավ այնտեղ ամեն-ամենը,
Եվ բազմալեզու այս մեծ քաղաքում հնչեցին դարձավ մեր հայերենը...»:

Հայտնի մատնիչ կար՝ Լեւոն Բաղդասարյան: Գրիգոր Ներսիսյանին նա է ծախել: Ղարաբաղյան շարժման առաջին գրողը Գրիգոր Ներսիսյանն է: Նա շուշեցի է, հայտնի բանաստեղծ: Գրել էր. «Այրող խարազան է դարձել հիմա հիվանդ իմ հոգուն: Կարծես ես խենթ երգիչն եմ մեռելների, որ հետ եմ դարձել էլի գերեվարված իմ քաղաքը հայրենի....»: Պիես է գրել՝ «Ճոճվող ժանիքները»: «Սովետական Ղարաբաղ» թերթի սրբագրիչն է եղել: Գյուղատնտեսական տեխ-նիկումի լեզվի եւ գրականության դասատուն էր: Դրա համար էլ այդ տեխնիկումից ոչ թե գյուղատնտեսներ էին դուրս գալիս, այլ բանաստեղծներ, ուսուցիչներ: Ինչպես Չարենցի ժամանակ Բաքուն, այնպես էլ Գրիգոր Ներսիսյանի օրոք Ղարաբաղը լցվել էր բանաստեղծություններով, է՛, լիքն էր: Ժուռնալ է հրատարակել, իր երկու հատորն է հրատարակել: Լեւոն Բաղդասարյանը հայտնում է, որ նա նացիոնալիստ է: Նրան բանտարկում են 1937 թվին: Գրիգոր Ներսիսյանը գրողների միություն է ստեղծել, մեն-մենակ նա գրական շրջապատ է ստեղծել: Բաքվից գրողներ էին եկել՝ Թաթուլ Ղուլյանը եւ Աշոտ Գրաշին: Գրաշին հանդիպում ունեցավ Ներսիսյանի հետ, եւ Ներսիսյանը նրան ջախջախեց: Աշոտ Գրաշին «Բակինսկի ռաբոչի» թերթում հոդված է գրում, թե իբր Գրիգոր Ներսիսյանը այնպիսի գաղափարներ է արտահայտում, ինչպես դաշնակցական Ավետիս

Ահարոնյանը: Մի խոսքով, նրան բանտարկում են: Առաջին զոհն է սա: Եթե կուզես, իսկական շարժումը նրանով է սկսվել: Գրական միջավայր էր ստեղծել, հայկական միջավայր էր ստեղծել, հայրենասիրություն էր ստեղծել Հայաստանի նկատմամբ: Աղասի Վարդանյան կար, նրան շան օրն էր գցել: Չարենցը Գրիգոր Ներսիսյանին այնքան էր սիրում: Նրա «Գրքաց Բողոն» Երեւանում հրատարակվել է Չարենցի խմբագրությամբ: Ադրբեջանը այս բոլորը գիտեր, մանավանդ որ Միրջաֆար Բագիրովի ժամանակ էր: Շատ մեծ գործեր, գրական մեծ աշխուժություն էր ստեղծել: Ստիպում էր մարդկանց գրագետ խոսել, սովորեցնում էր, թե ինչպես պետք է գրեն: Կազմակերպում էր գրական դատարաններ, որեւէ գործի շուրջը դատ էր բացում: Պատահում էր, որ որպես քաղաքացիական իրավապաշտպան էր հանդես գալիս: Ինչպես Խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանի»-ով մեր մշակույթի, գրականության մեջ վերածնունդ ստեղծեց, այնպես էլ Գրիգոր Ներսիսյանը՝ Ղարաբաղում: Այդպես որ շարունակվեր, Ղարաբաղը, գիտե՞ք, ինչ կդառնար: Դրա համար էլ նրա գլուխը կերան: Նա ուսումն ավարտել էր Պետրոգրադում: Աշխատել էր Ռոստովում: Կինը ռուս էր: Եղել է Աբխազիայի մարզկոմի քարտուղարը: Շատ համարձակ տղա էր: Դատի ժամանակ գրական կոնսուլտանտներ են եղել Սամվել Գրիգորյանը եւ Լեւոն Բաղդասարյանը: Նրա գրվածքները կարդացել են եւ իբր ապացուցել, որ նացիոնալիստական բանաստեղծություններ է գրել: Ոչինչ չի մնացել դրանցից: Նրա ամբողջ ժառանգությունը ԿԱԳԵԲԵ-ն վառել է: Մի գիրք անգամ չկա: Երբ ճամբարից ազատել են, դուրս է եկել, մի քանի քայլ արել, եւ սիրտը պայթել է ուրախությունից: Նրան հետո ներում շնորհեցին: Ամենաողբերգական անձնավորությունը մեր հայ մտավորականության մեջ Չարենցից հետո այդ մարդն է եղել: Նրա մասին չգիտեն, չեն ասում, չեն գրում: Ես հուշեր եմ գրել: Գուրգեն Հովնանը մինչեւ կյանքի վերջը հպարտանում էր, որ նրա աշակերտն է եղել, ասում էր. «Ես գրող եմ դարձել շնորհիվ Գրիգոր Ներսիսյանի»: Նա մեն-մենակ շարժում էր սկսել, եւ՛ գրական շարժում, եւ՛ հասարակական, եւ՛ մշակութային, հրատարակչական, հրապարակախոսական: «Կայծ» թերթը նա է ստեղծել, որտեղ հանդես էր գալիս ֆելիետոններով: Առանց հարցնելու կարողացել է այդ ամսագիրը հրատարակել: Հրատարակչություն կար, ասոցիացիա կար, սակայն գրողների միություն չկար: Բայց նա ստեղծել էր, եւ Ադրբեջանը տեղյակ չէր: Գրողների միությունը 1939 թվին է հիմնվել, իսկ մինչ այդ ինչ եղել է, այդ մարդու ստեղծածն է եղել: Դրանից հետո Թաթուլ Ղուլյանն է եկել: Թաթուլ Ղուլյանը Չարենցի հետ շատ մոտ էր, երբ Չարենցը Բաքվում էր: Բայց Երեւան գնալուց հետո նամակ է գրել

Թաթուլին. «Սիրելի՛ Թաթուլ, այս նամակը կարդալուց հետո տղաներիդ ասա՝ ձեր վերջը վերջ չի, եթե չգաք Երեւան....»: Այս նամակը միամտորեն որ կարդացել է, լուրը հասել է ԿԳԲ: ԿԱԳԵԲԵ-ն դրանով ուզում էր գործ սարքել, դատապարտել, ուղարկել Սիբիր: Բայց Աշոտ Գրաշին գնում է Ադրբեջանի Գրողների միության նախագահ Սամեդ Վուրղունի մոտ, ասում.

- Սամե՛դ, Թաթուլի գլուխը ուզում են ուտել:
- Ո՞վ:
- ԿԱԳԵԲԵ-ն:
- Ինչու՞:

Պատմում է, թե ինչ է եղել, եւ խնդրում է գնալ Բագիրովի մոտ: Գնում է Բագիրովի մոտ, ասում. «Մի շատ տաղանդավոր հայ բանաստեղծ ունենք, բայց ԿԱԳԵԲԵ-ն ետեւից ընկել է, ուզում է բռնել»: Բագիրովն ասում է. «Որ էդպես է, ես կասեմ, որ նրան աքսորեն Ղարաբաղ: Ճիշտ է, Ղարաբաղը Սիբիր չէ, բայց Բաքու էլ չէ»: Եվ նրան ուղարկում են Ղարաբաղ: Գալիս է Ստեփանակերտ: Այն գրական աշխուժությունը, որ կար, Ներսիսյանից հետո ինչ-որ չափով նա էլ է կենդանացնում: Գրական կոնսուլտացիաներ էր կազմակերպում: Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուրի» ազդեցությամբ մի վեպ էր գրում: Բաղարայում գնացել էր գերեզմանոց, որ գրի առնի, թե ինչ իմաստուն տապանագրեր կան: Այնտեղից «դանոս» են գրել Գրողների միությանը, թե ձեր գրողը եկել է Ղարաբաղ, գյուղերն է շրջում, եկել է Բաղարա, փոխարեն կոլխոզի գրասենյակը մտնի, մտել է գերեզմանոց, մեռելներին է այցելել: Համո Ալիխանյանը՝ «Կոմունիստ» թերթի խմբագիրը, զանգ է տալիս. «Թաթու՛լ, շտապ կարգով Ստալինի մասին մի լավ բանաստեղծություն գրիր»: Ստալինի մասին շատ մեծ բանաստեղծություն է գրում ու դրանով փրկվում: Նրան թույլ են տալիս վերադառնալ Բաքու: Այնուամենայնիվ, նրա գլուխը կերան: Սասուն Գրիգորյանը մի գիրք ունի, որտեղ փաստ է բերում, որ հայրենական պատերազմի ժամանակ թուրքերը զորակոչը կատարում էին Ղարաբաղի ու Ադրբեջանի հայերի հաշվին: Այդպես էլ Թաթուլ Ղուլյանին տվեցին պատերազմի բերանը: Նա գնացել է Թեհրան, Թեհրանից Սեւաստոպոլ, այնտեղ էլ զոհվել: Ղարաբաղում մոտ երեսուն երիտասարդ գրողներ կային, եւ բոլորին զորակոչեցին բանակ: Միայն ես, Վերդի Վերխաշյանը եւ Իսպետն ենք վերադարձել: Արշավիր Գրիգորյան կար, որ հայտնի բանաստեղծ էր, Աշոտ Ուլուբաբյանն էր, Հովհաննիսյան Արմենը, Ասատուր Պետրոսյանը... շատերը կային: Բոլորը զոհվեցին պատերազմի դաշտում: Գեւորգ Աբաջյանը «Սովետական գրականություն» թերթում հոդված էր գրել Գրիգոր Ներսիսյանի մասին, որ նա ստեղծագործում էր Շուշանիկ

Կուրղինյանի հետ, Չարենցյան տիպի բանաստեղծ էր, Չարենցը նրան սիրում էր, բայց ԿԱԳԵԲ-ն նրա հետքը ջնջել է: Հակոբ Հակոբյանը ղարաբաղցի է՝ թալիշեցի, 30-ական թվականներին եկել է Ղարաբաղ: Նրան ուղեկցողը Գրիգոր Ներսիսյանն էր: Ահա թե նա դիտավորյալ ինչ է անում: Համբարձում Ավագյանը պատմում է, որ թատրոնի դահլիճում հանդիպում կար Հակոբ Հակոբյանի հետ, որին ուղեկցում էր Գրիգոր Ներսիսյանը: Հակոբյանը ինչ որ կարդում էր, հատուկենտ ծափեր էին լինում, բայց Գրիգոր Ներսիսյանը վերջում որ մի բանաստեղծություն կարդաց, դահլիճը օվացիա արեց: Գրգոր Ներսիսյանը հետո ասել է. «Էնքան խղճում էի էդ մարդուն»: Այն ինչ ես եմ պատմում, ոչ ոք չգիտե: Մի ամիս առաջ Գրողների միություն էր եկել Սամվել Գրիգորյանի աղջիկը, ասում էր. «Հորս հարյուր ամյակն է լրանում, խնդրում եմ, մի բան արեք հորս հիշելու համար»: Գրողների միությունում գաղափար անգամ չունեն, թե դա ով է: Ասում եմ. «Ամոթ ձեզ, Սամվել Գրիգորյանը բանաստեղծ է եղել, գրական գործիչ, թարգմանիչ, այն ժամանակ, երբ Բագիրովը փակել էր հայ թատրոնը, դպրոցները, հայ մշակութային օջախները, նա կարողացել է հրատարակել «Գրական Ադրբեջանը» եւ պաշտպանել հայկական դիմագիծը»: Ասում են. «Դե, կգաս, զեկուցում կկարդաս»: Ասում եմ. «Ես ինչո՞ւ եմ զեկուցում կարդում, կանչիր Վարդան Հակոբյանին, կանչիր Արմեն Հովհաննիսյանին, Վլադիմիր Աբրահամյանին, որոնք նրա հետ աշխատել են, կանչիր Սոկրատ Խանյանին, որն անընդհատ տպագրվում էր այնտեղ: Կանչիր, թող նրանք խոսեն»: Այդ ամսագիրը մեծ դեր է կատարել: Այն փոխարինել է թատրոնին, դպրոցներին:

Բ. - Ես կարդում էի այդ ամսագիրը, երբ դպրոցական էի:

Բ.Ջ. - Ստեփան Զորյանն էր այնտեղ տպագրվում:

Բ. - Սամեդ Վուրղունը հայասե՞ր էր, ո՞վ էր:

Բ.Ջ. - Նա նացիոնալիստ էր, բայց խելոք նացիոնալիստ էր: Երբ Բաքվում մեզ Գրողների միություն էին ընդունում (ես էի, Իսպետը, Գրիշա Մովսիսյանը), ինձ երաշխավորեց Գարեգին Սեւունցը: Սեւունցը ինձ շատ գովում է: Սամեդն ասում է. «Գարեգի՛ն, դե որ էդպես է, Ջանյանին ինչու՞ չեք դարձնում բաժանմունքի քարտուղար»: Ասում է. «Որովհետեւ Ջանյանը կուսակցական տոմս չունի»: Սամեդը այստեղ ոչինչ չի ասում: Բայց մի բան է ասում ու միշտ էլ կրկնում էր. «Դուք՝ հայերդ, վատ գրելու իրավունք չունեք: Ես կարող եմ վատ գրել, քանի որ ես չունեմ մշակույթի այնպիսի հիմք, ինչպիսին հայերդ ունեք: Դուք ունեցել եք Նարեկացի, ձեր գրականությունը շատ հին է: Իրավունք չունեք վատ գրելու»: Նա խելոք էր եւ մեծ անհատականություն էր: Այդպիսին Ադրբեջանը մինչեւ հիմա չունի: Հմայիչ էր: Երբ գալիս էր Գրողների միություն, շենքը լցվում էր, ամեն ինչ

կենդանանում էր: Ինչպես մեզ համար Ավետիք Իսահակյանն էր, նրանց համար Սամեդ Վուրղունն էր: Ադրբեջանի գրողների մասին ես հուշեր եմ գրել, բայց չեմ տպագրել: Ղարաբաղյան շարժումը ղեկավարել է Գրիգոր Ներսիսյանը: Նա ստեղծել է այդ շարժումը՝ իր գրական, հասարակական ամբողջ գործունեությամբ, իսկ մենք նրան օգնել ենք, տրամադրություն ստեղծել, որ շարժումն ապրի:

Երբ գնացի Բաքու, գրական կյանքը շատ էր աշխուժացել, քաղաքը հայացել էր: Ես այնտեղ ընկա գրական շրջապատ, եւ այդ շրջապատ ինձ մտցրեց Համո Սահյանը: Մենք միասին էինք սովորում: Նա արդեն հայտնի բանաստեղծ էր, բոլորը սիրում էին նրան: Իմ գրական ակտիվ գործունեությունն այնտեղ սկսվեց: Ինստիտուտն ավարտելուց հետո եկա Լեռնային Ղարաբաղ: Բայց մինչ այդ Համո Ալիխանյանը՝ «Կոմունիստ» թերթի խմբագիրը, ասաց. «Ա՛յ տղա, շնորհքով տղա ես, կգնաս Ղարաբաղ, կկորչես, դու չգիտե՞ս, թե Ղարաբաղում ինչ է կատարվում»: Ասացի. «Ես պիտի գնամ»: Եկա Ղարաբաղ որպես դասատու: Բայց սկսվեցին հալածանքները իմ տրամադրությունների համար: Տեսա, որ ընկել եմ այնպիսի միջավայր, որտեղ ինձ կբանտարկեն: Եկա Ստեփանակերտ: Այնտեղ «Երիտասարդ բոլշեվիկ» թերթի խմբագիրը՝ Մամիկոն Մարգարյանը, ինձ թերթում աշխատանքի վերցրեց: Ես դարձա թերթի գրական բաժնի վարիչը, սկսեցի տպագրվել: 1939 թվականն էր: Այդ ժամանակ Բաքվում երիտասարդ գրողների կուսկոնֆերանսը սկսվեց: Ղարաբաղից գնացել էինք ես, Իսպետը, Վերդի Վերխաշյանը եւ Գրիշա Մովսիսյանը: Եվ մեզ դարձրին Ադրբեջանի գրողների միության անդամ: Ղարաբաղում ստեղծեցին Գրողների միության բաժանմունք՝ ֆիլիալ: Առաջին քարտուղարը Իսպետն էր: Բայց կարճ տեւեց, թերթը փակեցին: Պատերազմը սկսվեց, ես դարձա այդ բաժնի քարտուղարը: Բայց երկար չմնացի, ինձ էլ տարան պատերազմ: Չորս տարի կռվեցի, շքանշաններով վերադարձա:

Բ. - Ո՞ր ճակատում, որտե՞ղ էիք կռվում:

Բ.Ջ. - Կռվել եմ Ղրիմում, Կուբանում, Արեւմտյան Ուկրաինայում: Հասել եմ մինչեւ Բեռլին: Պատերազմից հետո ես եւ կենդանի մնացած ղարաբաղցի ճակատայինները եկանք, տեսանք՝ մենք աշխարհն ազատել ենք ֆաշիզմից, բայց Արցախում դեռ ֆաշիզմ կա՝ թուրքի տեսքով: Դա պատճառ դարձավ, որ մենք անվերջ խոսենք: Եվ խոսում էինք համարձակ, որովհետեւ «ֆրոնտավիկներ» էինք: Ես համարձակ խոսում էի ընկերներիս մեջ, ասում էի. «Ա՛յ ընկերներ, Շուշվա լանջին թուրք երեխեքը «Խան Շուշինսկի», «Կարաբախ շքաստի» են երգում, հայ երեխեքը չեն երգում, մինչեւ ե՞րբ մենք պիտի Կոմիտաս չլսենք...»: Խոսում էինք, թե ինչու պիտի Ղարաբաղը Ադրբեջանի կազմում լինի:

Շատերն էին խոսում, Վերդի Վերխաշյանն էր խոսում, բայց առաջին խոսողը եղել է մարտակերտցի մի կոմունիստ: Հետո նրան բանտարկեցին: Երբ Լեռնային Ղարաբաղում հանրաքվե էր անցկացվել, նա բողոքել էր: Իսկ հանրաքվեն անցկացնում էր Աֆանասի Միրզոյանը:

Բ. - Ի՞նչ հանրաքվե:

Բ.Ջ. - Կեղծ հանրաքվե էր: Մտել են գյուղերը, թե՝ Բաքու՞ ես ուզում, թե՞ Երեւան: Ղարաբաղցին էլ գիտե, որ Բաքուն հարուստ է, նավթ ունի, բայց ասել են՝ Երեւան: Սակայն, կեղծել, քվեները Բաքվի վրա են գրել: Հինգ բոլշեւիկներ են եղել, այդ մարդն էլ այնտեղ է եղել, ասել է. «Ա՛յ մարդ, սա հանրաքվե չի, էսպիսի հանրաքվե չի լինում»: Եվ նրան բանտարկել են:

Մելիք-Շահնազարյանը որ եկավ, նրան Միրջաֆար Բագիրովն էր ուղարկել, թե՝ Ղարաբաղում դաշնակցականներ, հակասովետականներ կան, հավաքեց Ղարաբաղի ակտիվներին, ամենից առաջ՝ շինարարներին: Երբ նա բեմ ելավ, Չանախչիից մի մարդ կար, շինարար էր, տեղից վեր կացավ, ասաց. «Ընկե՛ր Մելիք-Շահնազարով, քո ցեղին վաղուց վերջ ենք տվել, դու որտեղի՞ց եկար: Դե որ եկել ես, ի՞նչ լեզվով ես խոսելու ինձ հետ: Ախր ես հայ եմ, Է՛, հա՛յ, ղարաբաղցի հայ եմ, ուզում եմ առավոտն ասել՝ բարի լույս, իրիկունը՝ բարի գիշեր, բայց ես չեմ լսում, ախր, ես խոսքերը: Ի՞նչ լեզվով պիտի խոսեք դուք»: Նա էլ ասում է. «Выгоняйте этого сумасшедшего старика»: Սա վեր է կենում, ասում. «Ես կքինամ, Է՛, կյուզիմ ձեր ժողովումը»: Որ սա վեր է կենում, դուրս գալիս, բոլոր շինարարները դուրս են գալիս: Բեմում մնում են Մելիք-Շահնազարովը եւ իր էմիսարները: Բա շարժում չէ՞ր սա: Տարերային էր, կազմակերպող չկար: Հակաադրբեջանական, հայրենասիրական տրամադրությունը միշտ աղմկում էր, սակայն սառույցը թույլ չէր տալիս, որ լսելի լինի: Դրանից հետո եկավ երկրորդ սրիկան՝ Տիգրան Տեր-Գրիգորյանը, Ղըզղալայից: Նա եղել է Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագիրը: Մարգար Դավիդյանի հետ Մարիետա Շահինյանի դեմ հոդված էր գրել: Դրանով նրա հեղինակությունը բավական բարձրացել էր Բաքվում, եւ Բագիրովը նրան ուղարկել էր որպես կուսմարզկոմի առաջին քարտուղար: Սա էլ իր հերթին էր ժողովներ անում, ինտերնացիոնալիզմ էր քարոզում եւ հայտնաբերում հայ ազգայնականներին: Այդ ժամանակ Ավետիք Իսահակյանը գալիս է այդտեղ: Բագիրովն այդ մասին իմանում է: «Բակինսկի ռաբոչիի» թղթակիցը՝ Գուրգենը, գալիս է ինձ մոտ, ես էլ մարզսովետի գործկոմում էի նստում, ասում է. «Զգույշ կաց, Բոգդան, Իսահակյանն այստեղ է, քիչ առաջ ես մարզկոմի նախագահի մոտ էի, Բագիրովն էր զանգել եւ ասել՝ Ավետիք Իսահակյանն ի՞նչ գործ ունի ձեզ մոտ, էդ

դաշնակցականն ինչու՞ է եկել: Այդ խոսքից հետո մի ահավոր բան եղավ: Աշխատողները դուրս են գալիս, հետեւում են: Իսկ ես նրա կողքին եմ եղել, մենակ ես էի: Վարպետի եւ նրան Ղարաբաղ բերող Զաքարե Սուվարյանի հետ գնացինք քաղաքի մի փոքրիկ պուրակ, որտեղ Շահումյանի արձանն էր: Այդ ամիսներին Բաքվում հեռակա ուսուցմամբ սովորող հայ ուսանողները Ստեփանակերտում էին: Շրջապատում են Իսահակյանին, հարցեր են տալիս՝ «Ուստա Կարոն» ե՞րբ եք ավարտում, եւ այլն: Նա բոլորին պատասխանում էր եւ ասում. «Դուք ինչպե՞ս եք, ինչպե՞ս եք ապրում էս խանչալավորների մոտ»: Դա մեծ համարձակություն էր: Սուվարյանն այդ թվերին գալիս է Հայաստան: Քանի որ նա Իսահակյանին ճանաչում էր, առաջինը գնում է նրա մոտ, ասում. «Ավո՛, ես գնում եմ Ղարաբաղ, բայց ուզում եմ քեզ տանել ինձ հետ»: Գնում ենք Շուշի: Իսահակյանի կինը՝ Սոֆիկ Քոչարյանը, շուշեցու աղջիկ էր: Քոչարյանները հարուստ են եղել, բայց գնացել են Փարիզ կամ այլուր, դրսում են մահացել: Տիկին Սոֆիկն ասում է. «Ես էլ եմ գալիս, ես իմ ծնողներին թաղել եմ, բայց նրանց չեմ տեսել, գոնե գնամ, գերեզմանը տեսնեմ»: Շուշվա ներքեւում՝ հենց մուտքի մոտ, հայկական գերեզմանոց կա: Տիկին Սոֆյայի ծնողները այդտեղ են թաղված: Նա, քարից քար թռչելով, որոնում էր նրանց գերեզմանաքարերը: Այնտեղ ձոր կա, մտնում է ձորը եւ գտնում: Հողի բլուրը փլվել էր, եւ քարերն ընկել էին այնտեղ: Վարպետն ասաց. «Էստեղ մի շատ լավ տաճար կա, ուզում եմ տեսնել»: Ղազանչեցոց եկեղեցին էր: Գնում ենք: Ահավոր բան էր: Ամբողջ բակը թրիք էր լցրած: Գերեզմանների մարմարե սեւ քարերը ջարդված էին: Վարպետը, Զաքարեն, տիկինը թեքվում եւ համբուրում են մուտքի սրբատաշ քարերը: Նայում են վերեւ, որտեղ հրեշտակի քանդակ էր: Ամեն մի թուրք, որ մտել էր եկեղեցին, այն գնդակահարել էր: Հրեշտակը կախված էր, բայց վրան գնդակների հետքերը կային: Վարպետը դա տեսնում է, քաղաքը տեսնում է ու մի այնպիսի ձայն է հանում՝ փախչե՛ք, այստեղ կոտորած է... Այդտեղից հեռանում ենք: Ստեփանակերտում արդեն Վարպետին էլ էին որոնում, ինձ էլ: ՊԱԿ-ը հետաքրքրվում էր, թե Իսահակյանին ով է ուղեկցել: Վարպետի գնալուց հետո Զաքարե Սուվարյանին բանտարկում են: Ես հաջորդ օրը Խաչատուր Աբովյանի հոբելյանի առիթով գալիս եմ Երեւան: Երբ Վարպետին տեսա, ասացի, որ Սուվարյանին բանտարկել են: Ասաց. «Ոտքս ջարդվեր, ես իզուր եկա այդտեղ, գիտեի, որ նրան կբանտարկեն»: Սուվարյանից հետո ինձ էլ բանտարկեցին: Բայց ինձնից առաջ բանտարկեցին Արտո Ավագյանին: Արտոն երկամյա ինստիտուտում դասախոս էր: Աչքի մեկն էլ քոռ էր: Բայց դավաճան էր, ինձ ծախել էր արդեն: Քսանհինգ հայի մատնել է, եւ բոլորն էլ բռնվել են:

Հայտնի մարդիկ էին, գյուղատնտեսներ կային նրանց մեջ, ուսուցիչներ, այն մարդիկ, ովքեր Ղարաբաղը սիրում էին եւ պարզապես խոսել էին այդ մասին: Ինձ կանչեցին, հարցրին. «Ավետիք Իսահակյանը որ եկել էր Ղարաբաղ, ի՞նչ էր խոսում ձեզ հետ»: Ասացի. «Ոչ մի բան էլ չէր խոսում, ի՞նչ պիտի ասեր ինձ, ես հո նրա ընկերը չէի, ես ուղղակի նրան ուղեկցում էի»: Բայց ինձ բանտարկեցին 1948 թվականի դեկտեմբերի 18-ին՝ մի ցուրտ ձմռան գիշեր: Տարան Բաքու: Եվ մեղադրանքը ո՞րն էր: «Բոգդան Ջանյանը հակասովետականորեն, նացիոնալիստորեն տրամադրված մտավորական է, որն իր շրջապատում պրոպագանդա է տարածել Ադրբեջանի դեմ»: Մեղադրանքը կարդում են, ասում.

- Ստորագրի՛ր:
- Ինչու՞ ստորագրեմ,- ասում եմ,- սա զրպարտություն է:
- Ինչու՞ է զրպարտություն: Այդպես է եղել:
- Այո՛, ասել եմ եւ մի անգամ էլ քեզ եմ ասում, քաղաքացի՛ քննիչ, ինչու՞ Լեռնային Ղարաբաղը, որ հայկական երկրամաս է, որտեղ բացարձակապես հայեր են ապրում, պիտի լինի Ադրբեջանի կազմում: Դա անարդարացի է: Դրա համար էլ Լեռնային Ղարաբաղում մշակույթ չկա, գրականություն չկա: Մեզ նույնիսկ արգելել են Հայաստանի հետ կապ պահպանել:

Բագիրովի օրոք ավելի լավ էր: Գիտե՞ք ինչու: Նա սիրաշահում էր Ղարաբաղին: Միայն մի բանից էր վախենում, Ղարաբաղի՝ Հայաստանի հետ կապ ունենալուց: Ալիեւը զուտ հակահայկական քաղաքականություն էր վարում. Լեռնային Ղարաբաղում հայ չպիտի լինի: Նա այդ առաքելությունն է ունեցել: Իսկ Բագիրովը այդպիսի միսիա չի ունեցել:

Բ. - Պատմեք 1948-ին Ձեր բանտարկության, աքսորի մասին:

Բ.Ջ. - Այս բոլոր դեպքերը՝ Տիգրանի գալը, Շահնազարովի, Իսահակյանի գալը, իմ բանտարկությունը, եղել են 1947-48 թվերին: Ինձ բանտարկեցին Բաքվի բանտում: Այնտեղ Սուվարյանից, Արտո Ավագյանից բացի բանտարկված էր նաեւ Ոսկերչյանը: Նա երկամյակում հոգեբանություն էր դասավանդում եւ մի գիրք էր գրել՝ «Մեր Բայբուրդը»: Գիրքը տպագրվեց միայն ազատվելուց հետո: Պատերազմի տարիներին Կասպից ծովում լողացել, դուրս է եկել, տեսել՝ իր շորերը գողացել են: Այդ մասին ֆելիետոն էր գրել: Գրել էր նաեւ այն մասին, որ մի հայ Հայաստանից եկել է Բաքու, կանգնել Արմենիքենդ թաղամասում՝ փողոցի ծայրին, այնտեղից տեսել, որ ահագին հայեր են գալիս, բայց ոչ մի հայ հայերեն չգիտե: Քանի որ այդ ամենը կատարվել էր պատերազմի ժամանակ, նրան տվել էին քսանհինգ տարվա ազատազրկում: Այդ բոլոր գործերը մի քննիչ պիտի քներ: Քննիչն այնքան բարի մարդ էր, բայց հետո էր բարիացել՝ մեր

ազդեցության տակ: Բերում, ինձ է տալիս «Հոկտեմբեր» ամսագիրը, թե՝ կարդա՛:

Բ. - Հա՞յ էր:

Բ.Ջ. - Հայ էր, բայց ռուսախոս էր: Մեր ազդեցությամբ հայացել էր: Նա գիտեր, որ այդ ամենը սրիկայություն է: Վերջում ինձ կանչեց, ասաց. «Շնորհքով տղա ես, ա՛ռ, քո բանաստեղծությունները, ծրագրերը ետ եմ տալիս»: Իմ մեղադրանքների մեջ նաեւ իմ բանաստեղծությունն էր՝ «Հացի պատգամը»: Ես այդ բանաստեղծությունը գրել եմ՝ նկատի ունենալով հացի հերթերը: Քննիչն ինձ ասում է. «Միամիտ մարդ ես, ինչու՞ ես էդ քոռի հետ ընկերացել: Եթե ինձնից կախված լիներ, ես քեզ բաց կթողնեի: Բայց որ ընկել ես այստեղ, պիտի դատվես: Բայց մի վախենա, երկար չես մնալու»: Բաքվում դատում են: Եվ Ղարաբաղից ցուցադրական մի ամբողջ շայկա են բերում, բոլորը՝ մատնիչներ: Դահլիճում նստում են, տեսնեն՝ մեզ ինչպես են դատում: Այդ օրերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի քսանհինգ ամյակի առթիվ Բաքվում հրատարակվել էր «Լեռնային վտակներ» ալմանախը: Ես Ստեփանակերտում մի կրպակի մոտեցա, որ տեսնեմ՝ այդ ալմանախը վաճառվո՞ւմ է: Այդտեղ մի գյուղատնտես կար, Բարսեղյան էր ազգանունը, ասաց. «Դա ի՞նչ է, որ առնում եք, գոնե «Ղարաբաղ» թերթն առեք, շուկայից մի բան կառնեք, մեջը կփաթաթեք»: Ես նրա հետ կռվեցի: Այդ ժամանակ ՊԱԿ-ից Վաղարշակ անունով մի մարդ գալիս տեսնում է, եւ իսկույն այդ մարդուն տանում, ցուցմունք գրել է տալիս, իբր ես նացիոնալիստական մտքեր եմ արտահայտել: Իմ փաստաբանը թուրք էր, ասում է. «Այդ ամսագիրը նվիրված է եղել Լեռնային Ղարաբաղի տարեդարձին, Ջանյանի մեղքը ո՞րն է»: Դատավորն ասում է. «Ես կարդացել եմ, Ջանյանն այնտեղ նացիոնալիստական բանաստեղծություններ է գրել»: Փաստաբանն ասում է. «Բայց այդ հակասովետական բանաստեղծությունները ո՞նց են տպագրել ալմանախում, տպագրողին պիտի մեղադրեք, ոչ թե Ջանյանին»: Ես այն կարծիքին էի, որ ինձ ազատ կարձակեն, որովհետեւ իմ դեմ ցուցմունք տվողներ համարյա չկային, քիչ էին ու սխալ էին ասում: Ղարաբաղից եկած այդ սրիկաներն էլ համոզվեցին, նայում էին ինձ ու ծիծաղում: Հանկարծ դատավորը կարդում է. «Տասը տարի ազատազրկում, հինգ տարի ձայնազուրկ»: Եվ ես ընկա մի ճամբար, որ կոչվում էր «ստալինյան փակ ճամբար»: Ֆաշիստական տիպի ճամբար էր Ջզկազգան քաղաքում՝ Հյուսիսային Ղազախստանում: Ես Կիրգիրում եմ եղել: Կիրգիրը լրիվ անապատ է, նույնիսկ թռչունները չէին գալիս, եթե սնգամ գալիս էին, ապա կերակրվում էին միայն բանտարկյալների սրտաթորանքում հատիկներ փնտրելով: Այնտեղ միայն ապրելը

ամենամեծ պատիժն էր: Հողը տասնհինգ սանտիմետր փորում էիր, հանք էր՝ պղինձ: Ամբողջ անապատը պղինձ էր, եւ մենք այդ պղնձահանքերում էինք աշխատում: Ճամբարում հանդիպեցի երեսունից ավելի հայերի: Բոլորը գերիներ էին եղել: Ծնորհիվ այդ հայերի՝ ես կարողանում եմ ապրել այնպես, որ չեմ մեռնում: Բրիգադիրը մի գող, ավազակ մարդ էր: Ինձ պահում էին, որ ես ծանր գործ չանեմ: Հայերը իրար պահում էին: Ինձ եւ մի երկու հոգու, որոնք դատապարտվել էին «հակասովետական պրոպագանդա» տարածելու համար (մեզ «բալալայկա» էին անվանում), տարան գյուղատնտեսական ճամբար: Վեց տարի այդտեղ նստել եմ: Երեք տարի էլ Ջզկազգանում էի նստել: Այստեղ արդեն անապատ չէր, դաշտեր էին, այգիներ: Ստալինի մահից հետո՝ 1954 թվին, ինձ ազատում են: Գալիս եմ Ստեփանակերտ: Ինձ նորից պիտի դարձնեին գրողների բաժանմունքի քարտուղար: Բայց Բաքվից՝ Գրողների միության վարչությունից, ինձ վերականգնում են իմ պաշտոնում: Սամվել Գրիգորյանն ինձ նամակ է գրում. «Աչքդ լույս, քեզ վերականգնել ենք քո պաշտոնում»: Բայց այդ թուղթը երկար ժամանակ մնում է մարզկոմում, եւ այն դիտավորյալ պահում է Սարգիս Աբրահամյանը, որովհետեւ Բագրատ Ուլուբաբյանը մարզսովետի գործկոմի նախագահի տեղակալն էր եւ պիտի կրճատվեր, եւ նա ուզում էր այդ տեղը Բագրատին տալ: Ես նրան հարցրի. «Բագրա՛տ, դու ցանկություն ունե՞ս»: Ասաց. «Չէ՛, ա՛յ մարդ, ես ուզում եմ որ դու լինես»: Բայց այնքան են պահում, որ մարզսովետի գործկոմում տեղակալի պաշտոնից նրան ազատում են, եւ նա դառնում է Գրողների միության բաժանմունքի քարտուղար: Իսկ ինձ «Լեռնային Ղարաբաղ» թերթում աշխատանքի ընդունեց Լազր Գասպարյանը:

Լեռնային Ղարաբաղում մի նշանավոր մատնիչ կար, Քրիստափոր Պետրոսյանը, որ ինքնասպանություն գործեց: Նա բոլորին ծախել է: Նույնիսկ Արցախյան շարժման պայթյունի ժամանակ էլի սրիկայություն է արել: Հենց Երեւանից մեկը գալիս էր, նա փողոց էր դուրս գալիս, տեսնի՝ ինչ են հարցնելու, ինչ են լսելու: Ես ու Համո Սահյանը շրջում էինք մեր հրապարակում: Քրիսափոր Պետրոսյանը թաքուն քայլում էր մեր ետեւից: Համո Սահյանը ճանաչում է, ասում է. «Քրիստափո՛ր, էդ ու՞մ ես որոնում»: Նա մեզ էր հետեւում, թե ինչ պիտի խոսենք: Հայաստանից հենց գալիս էին, իսկույն լրտեսներ էին երեւում: Իմ անկումը, եթե կուզես իմանալ, սկսվել է «Հացի պատգամից», որը «Լեռնային Ղարաբաղ» թերթը տպագրել էր: Միտքը սա է. «Երբ ես մանուկ էի, ձեռքիցս որ հաց էր ընկնում, հայրս ինձ ստիպում էր այդ կտոր հացը համբուրել եւ ուտել, ասում էր՝ բալա ջան, հացով երդվում են, հացը հզորություն է, որ մեծանաս ու էդպես լինես,

հայրդ քեզ չի ների»:

Ծարժումը ինչպե՞ս է սկսվել: Մելիք-Ծահնազարովի օրոք է սկսվել, այն ժողովն էր, որ պատմեցի: Մեկ էլ՝ 1960 թվին ավտոբուսի վարորդները եկել, մարզկոմի շենքը շրջապատել եւ բողոք էին հայտարարել: Հիմնական միտքը Ղարաբաղի տխուր վիճակն էր, Հայաստանի հետ միանալու ցանկությունը: Մենք ուզում էինք մոտենալ այդ խմբին: Ես էի, Բագրատն էր, Լազրը: Այդ մարդկանցից երեք հոգի մեզ ասում են. «Տղանե՛ր, մեզ մի մոտեցեք, ձեր գլուխը կուտեն, մենք շատ ենք, մեզ ոչինչ անել չեն կարող»: Բագրատն ասում է. «Դուք հավաքվեք Բագրատի տանը»: Եվ մենք նամակ ենք ձեւակերպում: Նամակը Բագրատ Ուլուբաբյանը վերցնում է, գնում Մոսկվա, այնտեղ հանդիպումներ է ունենում:

Բ. - Տասներեք հոգու ստորագրությամբ նամակն է՞ր:

Բ.Ջ. - Այո, տասներեք հոգու ստորագրությունն էր: Այդ թուղթը առիթ էր, որ նամակը սկվեր: Նրանք հիմնականում բողոքում էին Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի տնտեսական ճնշումների դեմ: Ամեն ինչ կենտրոնացրել էին Ադրբեջանի շրջաններում: Այդ տասներեքի մեջ էր նաեւ Արկադի Մանուչարովը: Նա այդ ժամանակ, գիտե՞ք, ինչ ասաց: Ասաց. «Տղանե՛ր, ուզում ե՞ք ամբողջ մարզի շինարարներին ոտքի կանգնեցնեմ»: Բագրատն ասաց. «Չէ՛, հարկավոր չի, էս նամակը կուղարկենք»: Նամակը տեղ է հասնում, բայց Բագրատին չեն ընդունում:

Բ. - Ստորագրողների մեջ նաեւ Արամ Բաբայանն էր, ի՞նչ եք հիշում նրա մասին:

Բ.Ջ. - Արամը սովխոզի դիրեկտոր էր, հայրենասեր, լավ մարդ էր: Նամակն ուղարկում են Ադրբեջանի կենտկոմին: Կենտկոմն այդ նամակը կարդում է: Այդ ժամանակ Ադրբեջանի կենտկոմի քարտուղարը Ախունդովն էր: Նա Մելքումյան Գուրգենին ասում է. «Պլենում հրավիրիր եւ այս նամակը ստորագրողներին եւ՛ պատիժ տուր, եւ՛ աշխատանքից հանիր»: Այդպես էլ անում են: Մելքումյանը պլենում է հրավիրում, եւ մենք՝ այդ տասներեք հոգիս, առանձին խմբով նստած էինք այնտեղ: Մեր հարցը քննարկում են, եւ մեզ պաշտպանում էր միայն մարզսովետի գործկոմի գյուղատնտեսական բաժնի վարիչը: Նա Խանլարից էր, շատ հայրենասեր տղա էր: Բաբայան Արամը վեր կացավ, բոյով-ջանով տղամարդ էր, ասաց. «Ա՛յ ընկերներ, մեզ նստեցրել եք մեղադրական աթոռին: Էդ մեղադրական աթոռին դուք պիտի նստեիք, որովհետեւ այն օրվանից, ինչ Լեռնային Ղարաբաղը դարձել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, մեր գյուղատնտեսության մեջ, հատկապես, ոչ մի փոփոխություն չի կատարվել: Նույնիսկ ոռոգման ջրանցքները Ղարաբաղի մելիքներն են

կառուցել: Դուք մի բան ցույց տվեք, որ Ադրբեջանն է կառուցել: Չե՞ք ամաչում, մեղադրում եք: Այն ծանր վիճակի մասին ենք գրում, որ տիրում է Ղարաբաղում: Մենք հո Ադրբեջանի դեմ չենք գրել, մենք գրել ենք այդ ճնշումների դեմ»: Հետո ելույթ է ունենում Սարգիս Աբրահամյանը եւ պաշտպանում մեզ:

Բ. - Ո՞վ է Սարգիս Աբրահամյանը:

Բ.Զ. - Մարզկոմի քարտուղարներից մեկն էր: Բայց դիվանագիտական ելույթ էր, այսինքն՝ ոչ նրանց կողմն էր, ոչ մեր կողմը: Ստեփանակերտի քաղկոմի քարտուղարը Օհանջանյանն էր: Նա միայն ռուսերեն էր խոսում. «Эти тринадцать товарищи попали под болото национализма»: Ես տեղից գոռացի. «А вы попали под болото хамизма»: Դահլիճը ճղճղում էր, ծիծաղում: Մարզսովետի գործկոմի նախագահը (Աշոտ Բախշյան կար, հին կոմունիստներ կային) ասաց. «Առաջարկում եմ Բոգդան Ջանյանին դահլիճից հեռացնել»: Ինձ զգուշացում են տալիս, մյուսներին՝ խիստ նկատողություն: Բոլորին գործից ազատում են, այդ թվում՝ ինձ: Ա՛յ, դա շարժում էր: Դրանից հետո շարժումը չլռեց, սկսեց կամաց-կամաց ուժ հավաքել ու պայթեց: Եվ այդ ժամանակ շարժման ղեկավարը դարձավ «Կռունկը»՝ Արկադի Մանուչարովի գլխավորությամբ: Այդ շարժմանը նպաստեց այն ժամանակ մարզկոմի քարտուղար Հենրիխ Պողոսյանը: Շարժումը պայթեցնողները սրանք էին, ոչ թե մեկը կամ մյուսը: Ղարաբաղյան շարժում կոչեցյալը միշտ էլ եղել է, բայց ընդհատակյա, քողարկված: Շարժման պայթյունը Ալիեւը ստեղծեց, որովհետեւ նա բացահայտ հակահայկական քաղաքականություն էր վարում, թուրքացնում էր Ստեփանակերտը, Ղարաբաղը: Սկսվել էր հայաթափությունը: Եթե շարժումը չլիներ, այդ պայթյունը ինչպե՞ս կլիներ: Ով 1988-ն ասում է ղարաբաղյան շարժում, հիմարություն է անում: Դա Ղարաբաղի շարժման պայթյունն էր: Երկու մարդ են մեղավոր, որ պատերազմը սկսվեց. մեկը՝ Ալիեւը, մյուսն էլ՝ Գորբաչովը:

Նույկինի գրքում գլուխ կա՝ «Спасибо, Карабах»: Գրում է. «Շնորհակալություն պետք է ասենք ոչ միայն մենք՝ ռուսներս, այլեւ ամբողջ աշխարհը, որովհետեւ ռուսական պետությունը հասկացավ, որ Ադրբեջանին Ղարաբաղը չէր պետք, նրա թիկունքին կանգնած էր Թուրքիան, որին պետք էր ճանապարհ հարթել դեպի Լեռնային Ալթայ, Ռուսաստան, Եվրոպա: Պանթուրքիզմի ծրագիրն էր: Եվ այդ ճանապարհին կանգնեց փոքրիկ Ղարաբաղը: Լեռնային Ղարաբաղի շնորհիվ է, որ փլուզվեց Սովետական Միությունը՝ այդ չարի իմպերիան, դրա համար էլ պետք է շնորհակալություն հայտնել, ա՛յ ընկերներ»: Ճշմարտությունը սա է: Հետո՝ այդ գիրքը մեծ դեր է կատարել, որովհետեւ ամբողջը հայերի դեմ էին գրում: Ռուսները չէին

հասկանում, որ թուրքերն ուզում են Բաքվի ձեռքով Ղարաբաղը հայաթափել: Բայց հիմա ես վախենում եմ: Ադրբեջանցիներն այդքան քարոզչական աշխատանք են կատարում, ու Ղարաբաղում Գրողների միության վաթսունհինգ անդամ կա, եւ մեկը չկա, որ քարոզչական հոդված գրի: Ես մի գիրք եմ գրել, կոչվում է «Անցած ճանապարհի հուշապատկեր», կապված է Արցախի հետ: Գրել էի նաեւ «Արցախյան գրականության մռայլ տարիները», որը տպագրել եմ, հետո՝ «Գրական ճանապարհի սկիզբը», «Արցախյան հանդիպումներ»՝ Հրաչյա Քոչարի, Նաիրի Զարյանի, Սիլվա Կապուտիկյանի, Գեւորգ Էմինի մասին: Ուզում եմ Ղարաբաղում տպագրել: Բայց հիմա վեր են կացել, Հրանտ Աբրահամյանի գիրքն են տպագրել:

Պատմում է Սեյրան Օհանյանը
(ԼՂՀ ինքնա-պաշտպանության ուժերի գլխավոր շտաբի պետ, ԼՂՀ պաշտպանության նախարար, 2008 թ. ապրիլի 14-ից՝ ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ):
25.07.1993 թ., Չլդրան

Բ. - Տարբեր ռազմաճակատներում հանդիպել ենք իրար: Առաջին անգամ Կրկժանի ազատագրման գործողություններից առաջ էր: Դուք լեռնային մասում ղեկավարում էիք պաշարումը:

Ս.Օ. - Կրկժանը մենք մի քանի անգամ էինք գրավել ու հանձնել: Մենք հանդիպել ենք 1992-ի հունվարին: Ես այդ ժամանակ արձակուրդում էի ու որոշեցի «հանգիստս» լեռներում անցկացնել: Իրոք, հրաշալի «հանգիստ» էր: Փաստորեն, ադրբեջանցիները ստիպված էին առանց մարտի թողնել Կրկժան թաղամասն ու հեռանալ: Գիտես, որ Կրկժանը բարձր դիրքում է, ու վերեւից Ստեփանակերտը կրակի տակ էին պահում: Բայց գնալուց առաջ հրկիզեցին բնակավայրը:

Բ. - Ի՞նչ մասնակցություն եք ունեցել հետագա մարտական գործողություններին, երբ ազատագրեցին Խոջալուն, Շուշին, բացվեց Արցախը աշխարհի հետ կապող միջանցքը:

Ս.Օ. - Խոջալուի ազատագրման ժամանակ ինձ էր վստահված օդակայանի գրոհի ուղղությունը:

Բ. - Դուք, լինելով խորհրդային բանակի սպա, ինչպե՞ս էիք համակերպվում այն ժամանակվա ջոկատային կառուցվածքին: Ի՞նչ տարբերություն եք տեսնում այն ժամանակվա եւ այսօրվա միջեւ:

Ս.Օ. - Դժվարությունները շատ էին: Հաճախ ջոկատները չէին ընկալում հրամաններն ու թերանում էին: Բայց եւ կային հրաշալի տղաներ, որոնց հետ հեշտ էր: Օրինակ՝ չորրորդ վաշտի հրամանատար Գագիկ Սարգսյանի հետ ամեն ինչ հարթ էր ստացվում: Խոջալուում ես խնդիրներ չունեի: Ինքնապաշտպանության ջոկատային կառուցվածքը չաշխատեց: Մենք չկարողացանք հասկանալ իրավիճակն ու կանխարգելել խուճապը: Որտեղ որ հայտնվում էի, կռվում էի, սակայն ամեն տեղ չէի հասցնի լինել: Իսկ հիմա բանակային կառույցներ են,

կա պատասխանատվության զգացում: Ճիշտ է, շարային կարգապահություն չկա, քանի որ դրա համար ժամանակ չունեինք, բայց մարտական կարգապահությունը շատ բարձր է:

Բ. - Հավանաբար տեղեկություն ունեք նաեւ ադրբեջանական բանակի կարգապահության մասին: Ու՞մն է բարձր, մե՞ր, թե՞ թշնամու:

Ս.Օ. - Նախաձեռնությունը մեր ձեռքին է, մենք թելադրում ենք մեր կամքը: Իսկ դա նախ եւ առաջ ամուր կարգապահության արդյունք է: Առանց դրա անհնար են մարտունակությունն ու ճկունությունը, արագ տեղափոխությունները: Ցավոք, մեր փորձառու հրամանատարներից շատերը զոհվել են:

Բ. - Ինձ թվում է, որ այսօր կարող ենք որոշ խաղաքարտեր բացել: Խոսքս 1992-ի ամռանը Մարտակերտի հանձնման մասին է: Մարտական գործողությունները գլխավորում էր փորձառու զորահրամանատար Արկադի Տեր-Թադեւոսյանը:

Ս.Օ. - Այն ժամանակ դեռեւս բանակ չկար: Խուճապի բանալին չկարողացանք գտնել: Հրամանատարությունն իրավիճակը չէր հսկում: Իհարկե, հրամանատարներն էլ էին մեղավոր, բայց դրա մեծ ծանրությունն ընկնում է ցածր օղակների հրամանատարների վրա, քանի որ նրանք կարող էին կանխել խուճապը: Իհարկե, թուրքերը մեծ ուժերով էին հարձակվում՝ կործանիչ ինքնաթիռների, ռազմական ուղղաթիռների, տանկերի եւ հրետանու պաշտպանությամբ:

Բ. - Եթե կազմակերպված պաշտպանություն լիներ, գուցե հաջողվեր դիմակայել թշնամու ուժերին:

Ս.Օ. - Կարծում եմ, որ լեռնային շրջաններում կարելի էր հետ մղել թշնամուն: Պուշկին յալը հանձնեցինք առանց մի կրակոցի:

Բ. - Հիշու՞մ եք՝ հետո մենք հանդիպեցինք Ալաշանի շտաբում, Դուք արդեն Մարտակերտի ուղղության գլխավոր հրամանատարն էիք:

Ս.Օ.- Այո, Պուշկին յալը մեր ձեռքին էր, ու պատրաստվում էինք գրոհով ազատագրել Մարտակերտը: Սակայն թուրքերը կանխելով գրոհեցին Հակոբ Կամարիի ուղղությամբ: Մենք շտապեցինք այնտեղ: Երկու տանկ խփեցինք: Ժորայի հրետանին շատ օգնեց, բայց նրանք այդ պահին էլ փոխեցին հարձակման ուղղությունը, գրոհեցին հեռուստաաշտարակի ու քարհանքերի բարձունքների վրա: Մենք ստիպված հետ նահանջեցինք: Ես էլ եմ մեղավոր զգում: Մարդկանց մենք չկարողացանք նպատակաուղղել, հզոր բռունցք ստեղծել:

Բ. - Դուք այն ժամանակ ասացիք, որ ջոկատների ու վաշտերի հրամանատարները խորհրդակցության չեն եկել:

Ս.Օ. - Այո, կարգապահությունը թույլ էր:

Բ. - Հիմա նման բան անհնա՞ր է:

Ս.Օ. - Հիմա ամեն ինչ այլ կերպ է: Առաջադրանքը տրվում է պաշտպանական շրջանի հրամանատարին, եւ վերջ: Հրամանն օրենք է: Սա բանակ է:

Բ. - Որտե՞ղ վիրավորվեցիք:

Ս.Օ. - Չլդրանից ոչ հեռու, սեպտեմբերի 10-ի մարտերում: Բժիշկները ստիպված անդամահատեցին ոտքս:

Բ. - Որպես բանակի շտաբի պետ՝ ինչպե՞ս եք ընկալում այս հաղթանակները:

Ս.Օ. - Երբ զգում ես զինվորի հաղթական ոգին, ինքդ էլ ես ոգեւորվում: Իհարկե, սա նաեւ բանակի գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանի ջանքերի արդյունքն է: Մենք արդեն ապացուցել ենք, որ հզոր ուժ ենք, եւ մեզ հետ պետք է հաշվի նստել: Բոլոր ստորագրված կամ չստորագրված թղթերի հետ մեծ դեր ունի եւ այս գործոնը:

Բ. - Մի հարցի վերաբերյալ հետաքրքիր է եւ Ձեր կարծիքը: Դուք մասնագիտությամբ զինվորական եք, եւ ինքնին հասկանալի է բանակի շտաբի պետ լինելը, իսկ ինչպե՞ս են քաղաքացիական մասնագիտության տեր մարդիկ երկու տարում բանակի գլխավոր հրամանատարի դիրքին հասել:

Ս.Օ. - Դա բնական է: Ոչ մեկը ռազմական ակադեմիայի կրթություն չի ունեցել, բայց կյանքը նրանց ավելին է տվել: Ես մայոր էի, բայց հիմնական գիտելիքները ձեռք բերեցի պատերազմի ընթացքում: Բոլոր մասնագետ հրամանատարներս ուրախ ենք, որ մեր հրամանատարությունը շատ վճռական է, եւ ամենեւին էլ պատահական չեն մեր բանակի հաջողությունները: Մեծ է եւ Պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի դերը: Իհարկե, կադրային հարցը բանակում ամենածանրն է: Կադրային սպաները մեզ մոտ շատ քիչ են, չնայած հայ սպաները խորհրդային բանակում մեծ թիվ էին կազմում: Շատ հրամանատարներ զոհվեցին, բայց նորերն են ծնվում: Ռազմական տեսանկյունից Ղարաբաղը շատ հետաքրքիր երեւույթ է: Իզուր չէ, որ խորհրդային բանակի բոլոր հայ մարշալները արցախցի են: Բայց եթե նրանք այդպես էլ չիմացան, թե ինչպես ծառայեն սեփական ժողովրդին, ապա այսօրվա մեր զորավարները գիտեն դա:

Պատմում է Աշոտ Մանուչարյանը («Ղարաբաղ» կոմիտեի անդամ, 1991-ին ՀՀ ՆԳ նախարարի պաշտոնակատար, 1991-1993 թթ. ՀՀ նախագահի անվտանգության գծով խորհրդական): 19.04.2006 եւ 10.07.2008 Երեւան

Բ. - Ինչպե՞ս կապվեցիք արցախյան խնդրի հետ:

Ա.Մ. - Այդ դեպքերի հետ կապված հայտնի կատակ կա, որի հեղինակը Սամսոն Ղազարյանն է. «Երեւանում առաջին հանրահավաքի օրը հավաքվել ենք, ավտոբուսից իջնում է Աշոտ Մանուչարյանը, ասում է. «Տղե՛րք, էս ի՞նչ խաբար է»: Ասում են. «Ղարաբաղն ենք պահանջում»: Թե՝ Ղարաբաղն ի՞նչ է: Մոտեցրինք քարտեզին, ցույց տվեցինք, բացատրեցինք, ասաց՝ միկրոֆոնն ու՞ր է: Եվ այդ օրվանից չենք կարողանում միկրոֆոնից կտրել»:

Իրականությունը հեռու չէ դրանից, համենայն դեպս՝ սկիզբը, հանրահավաքների շրջանը: Ես աշխատում էի դպրոցում: Այդ ժամանակ գրիպի համաճարակի պատճառով դպրոցներում արտահերթ արձակուրդ էր հայտարարված: Եվ օգտվելով առիթից՝ երեխաների հետ մեկնել էինք Դիլիջան: Երբ վերադառնում էինք, տեսանք, որ օպերայի շենքի մոտ ժողովուրդ է հավաքված: Հարցրինք, թե ինչ է պատահել: Ասացին, որ ղարաբաղյան խնդրի հետ կապված արդեն երկրորդ օրն է, ինչ հանրահավաքներ են սկսվել: Սկզբում ուղղակի որպես մասնակից միացանք: Հանրահավաքի ակտիվիստներից շատերին ճանաչում էի: Ամեն ինչ փոխվեց, երբ քաղբյուրոյի ներկայացուցիչներն եկան: Այդ օրը կենտկոմի դիմաց Համբարձումը Գալստյանն էր հանրահավաքը վարում: Նա հայտարարեց, որ պետք է հանրահավաքի մասնակիցներից պատվիրակություն գնա եւ հանդիպի կենտկոմի բյուրոյի ներկայացուցիչների հետ: Սկսեցին անուններ տալ՝ գրող այսինչ, նկարիչ այսինչ... Երբ հինգ-վեց հոգու անուն տվեց, ես չդիմացա եւ բղավեցի.

- Մի հոգու էլ ուղարկեք, որ քաղաքականությունից հասկանա: Համբարձումը Գալստյանը, քանի որ լեզվին ոսկոր չկար, ասաց.

- Այդքան խելոք ես, դու էլ գնա:

- Կգնամ,- ասացի ես:

Դրանից հետո միացա շարժմանը: Մինչ այդ մեկ անգամ հանդիպել էի Իգոր Մուրադյանի եւ Մանվել Սարգսյանի հետ:

Բ. - Ի՞նչ տպավորություն ստացաք:

Ա.Մ. - Առաջին հանդիպումը կապված էր ուրիշ հարցի հետ: Ինձ ասացին, որ նրանք Ղարաբաղի հետ կապված ինչ-որ հարցադրումներ ունեն: Ես նրանց զգուշացրի, որ դա կարող է քաղաքական կոնտեքստում գնահատվել, իբր ոչ թե արտաքին, այլ ներքաղաքական խնդիրներ են լուծում, քանի որ այդ ժամանակ խմորումներ կային Հայաստանի կոմկուսի կենտկոմում կատարվող փոփոխությունների առնչությամբ: Մինչ այդ տեղյակ էի, որ կուսակցական կազմակերպություններում, Գիտությունների ակադեմիայի որոշ ինստիտուտներում, պետհամալսարանի առանձին ֆակուլտետներում Արցախի խնդրի կապակցությամբ կուսակցական ժողովներ էին տեղի ունենում: Բայց չէի սպասում, որ դա զանգվածային բնույթ կկրի, այլ որակներ կստանա:

Բ. - Վազգեն Մանուկյանը մի կողմում էր, Իգոր Մուրադյանը՝ ուրիշ, ինչպե՞ս էիք կողմնորոշվում, թե որն է ճիշտ, ինչպե՞ս էիք նայում հարցին՝ այն պետք է համահայկական խնդրո՞ւմ ներառվի: Ձեր դերը ո՞րն էիք համարում: Ելույթները ինչպե՞ս էիք նախապատրաստում:

Ա.Մ. - Սկզբնական շրջանում հարթակում կանգնած էր համարյա ողջ մտավորականությունը: Սա, իհարկե, պայմանականորեն եմ ասում: Երեւի մտավորականության մի քանի հարյուր ներկայացուցիչներ, իրար փոխարինելով, տարբեր տեղեր հանդիպելով, պարբերաբար հայտնվում էին հարթակում, եւ առաջնորդող ուժը ձեւավորվում էր այդտեղ: Դրանից առաջ ավագ սերնդի ներկայացուցիչները՝ Բագրատ Ուլուբաբյանն ու Մոսկվայում ակադեմիկոս Աղանբեկյանն էին այդ հարցով զբաղվում: Ինձ Աղանբեկյանի հետ ծանոթացրեց Յուրի Թադեւոսովիչ Մովսիսյանը, որը վառ անհատականություն էր, մեծ նվիրյալ, շատ ազնիվ, մաքուր մարդ էր եւ երբեք չէր թմբկահարում իր գործունեության մասին: Նրա ներկայությունը ինձ համար ազդանշան էր, որ կարգին մարդիկ են ներգրավված: Շատերին այդ ժամանակ անձամբ չէի ճանաչում: Նրանց կողքին նոր սերունդն էր, որի ներկայացուցիչներն էին մասնավորապես Իգոր Մուրադյանը, Մանվել Սարգսյանը: Նրանք նույնպես տպավորություն թողեցին: Անսովոր մարդիկ էին եւ իրական նվիրյալներ այդ գաղափարին: Առաջին հանդիպման ժամանակ, նաեւ հետագայում, երբ ձեւավորվում էր կազմկոմիտեն, ինձ ավելի շատ տեսնում էի օժանդակ դերում, քանի որ ինձ այդ հարցերին տեղյակ, բանիմաց չէի համարում: Կային մարդիկ, որոնք տարիներով, նույնիսկ տասնամյակներով էին զբաղ-

վել, ուստի՝ առաջնահերթությունը նրանցն էր: Ես ինձ օգնականի դերում էի դրել, մինչեւ սկսեցի նկատել, որ թերացումներն ու բացերը բավական մեծ են, եւ պետք է ընդգրկվեն մարդիկ, ովքեր բարձրակարգ կազմակերպիչներ են, քաղաքական նուրբ, ճկուն եւ ավելի ամբողջական մտածելակերպ ունեն: Չկային այդպիսի կազմակերպիչներ: Թեեւ ես Իգոր Մուրադյանի գիտելիքները, կարողությունները բարձր եմ գնահատում:

Բ. - Բայց դուրս մղեցին նրան:

Ա.Մ. - Այո, բայց նախ՝ գնահատականը: Նրանցից յուրաքանչյուրը վառ անհատականություն էր, անկասկած, ուներ որոշակի քաղաքական մակարդակ: Կարեւոր էին նաեւ կամային հատկանիշները, էներգիան, որը նրանց մղում էր այդ գործին: Թերություններն առաջին հերթին վերաբերում են կազմակերպչական կողմին: Միանգամից հսկայական շարժում սկսվեց, եւ անհրաժեշտ էր ճիշտ կազմակերպչական աշխատանքներ կատարել: Այդտեղ նաեւ փիլիսոփայություն կար: Իգոր Մուրադյանը կարծում էր, որ Խորհրդային Միության պայմաններում վտանգավոր է, քանի որ կազմակերպման բոլոր օղակները միանգամից դառնում են հարվածների թիրախ: Նա ավելի շատ հոմենիզմի կողմնակից էր, որ մարդկանց մի խումբն ասում է, իսկ մյուսներն ըստ դրա կառուցում են իրենց գոր- ծունեությունն ու կյանքը:

Բ. - Հոմենին ո՞վ էր:

Ա.Մ. - Անձնավորված չէր. Զորի Բալայանը, Սիլվա Կապուտիկյանը, Իգոր Մուրադյանը... Ակտիվ մարդկանցից կազմված խումբ կար, որը գործում էր: Եվ ենթադրվում էր, որ հենց այդպես պետք է գործենք, իսկ եթե կազմակերպչական կառույց ստեղծենք, կհարվածեն: Բայց եթե անգամ կառույց չի ձեւավորվում, միեւնույնն է, գործունեությունը պետք է կազմակերպվի: Այն, որ որոշ ուղեղներ կային, լավ էր, բայց ամբողջականությունը ապահովված չէր: Իսկ նման գերխնդիրները պահանջում են ավելի համապարփակ մոտեցում: Իգորի այն տեսակետին, թե խորհրդային համակարգի պայմաններում զգուշությունն անհրաժեշտ է, լուրջ էի վերաբերվում, քանի որ դա անմիջապես հարձակումների թիրախ դարձավ:

Բ. - 1988 թ. մայիսին Սարդարապատում Իգորի դեմ ուղղված ելույթներ կային: Դա սարքա՞ծ էր:

Ա.Մ. - Պայմանական եմ ասում՝ մոտ հինգ հարյուր մտավորականներ ժողովրդի կողմից ընկալվում էին որպես շարժման ուղղորդող ուժը՝ մինչեւ փետրվարյան հանրահավաքների ավարտը: Հենց դրանք ավարտվեցին, սկսվեցին հետապնդումներն ու հալածանքները: Կանչում էին ՊԱԿ-ից, դատախազությունից, զգուշացնում էին՝ այլեւս

չմասնակցեք, արգելում ենք... Սկսվեցին համամիութենական որոշումները, հանրապետությունների արձագանքները, թե՝ «խարխլում են ժողովուրդների եղբայրությունը»: Բոլորն էլ զգուշանում եւ ինչ-որ չափով վախենում էին, ինչը շատ բնական երեւույթ էր Խորհրդային Միությունում: Մարդիկ բաժանվեցին երկու կատեգորիայի. նրանք, ովքեր վախենում էին, բայց վախը հաղթահարում եւ գործում էին, եւ նրանք, ովքեր զգուշացան եւ ետ քաշվեցին: Այդ հինգ հարյուր մտավորականներից պայմանական հարթակում մնացին հիսունը: Հարթակը չէր գործում: Մի քանի ամիս հավաքները ժողովի բնույթ էին կրում: Այսօր սխալ է ասել, թե քշեցին: Միակ մարդը, որը հեռացավ բախման պատճառով, այդ պահի իրական կազմակերպիչը՝ Իգոր Մուրադյանն էր: Մենք մայիսին վերսկսեցինք հանրահավաքները: Եվ խնդիրը ծագեց այն քանից հետո, երբ նա մի հանրահավաքի ժամանակ ելույթ ունեցավ: Հետագայում այդ ելույթի մոտիվները, դրդապատճառները ավելի հասկանալի դարձան, Իգորի աշխարհընկալումն ավելի ամբողջական ըմբռնեցի: Մուրադյանը ելույթի ժամանակ հայտարարեց. «Բոլորդ եկեք բենզինով լցված շշերով, որ մենք ադրբեջանական գործոնին հակադրենք հայկականը»: Էությունը հետեւյալն էր. Գորբաչովը լկտիաբար ասաց, թե քանի որ Սումգայիթը որպես գործոն գոյություն ունի, ապա մենք պետք է հաշվի նստենք ադրբեջանցիների կարծիքի հետ եւ Ղարաբաղի խնդիրը լուծենք ըստ նրանց ցանկությունների: Շատ անբարո ելույթ ու գնահատական էին այն իմաստով, թե քանի կա ջարդարարի գործոնը, պետք է նրան զիջել, որ էլ չջարդի: Բայց մյուս կողմից՝ սխալ է դրան հայկական գործոնը հակադրելը: Ինձ համար նման հարցադրումն անընդունելի էր: Կարծում էի, որ պետք է հակադրել, բայց ոչ թե գործոնները հավասար հարթության վրա դնել: Մի անգամ ադրբեջանական մամուլում կարդացի. «Չնայած հայերը ջարդարար, անբարո ու բարբարոս ժողովուրդ են, բայց համատարած այդպիսին չեն, կան մարդիկ, որոնց հետ կարելի է խոսել»: Առաջինը Թումանյանի անունն էր, ինչը բնական էի համարում, քանի որ հայ-ադրբեջանական բախումների ժամանակ նա խաղաղարարի դեր էր տանում: Բայց զարմացա, որ երկրորդը Նժդեհն էր: Հետագայում, երբ ավելի խորը ուսումնասիրեցի Նժդեհի մոտեցումները, հասկացա, որ նա եղել է արդարության, մարդկային սկզբունքների բարձրագույն պահապան եւ ադրբեջանցիների հանդեպ էլ է եղել արդար ու ճշմարիտ: Ադրբեջանցիներն անգամ նրա ուժային գործողություններն իրենց հայրենակիցների հանդեպ համարում էին արդարացի կռիվ. նա իրավունք ուներ: Այսպիսի մոտեցումներն ինձ ավելի հոգեհարազատ են: Իգորի առաջարկը կարծր գնահատականներ ստացավ: Ավելին,

այն ժամանակ կասկած կար, որ կարող է սադրանք լինել, քանի որ մեկս մյուսին լավ չէինք ճանաչում: Իգորին մինչեւ հանրահավաքները տեսել էի մեկ անգամ, իսկ հանրահավաքների ժամանակ երեւում էր որպես ակտիվ կազմակերպիչ: Բայց, ամեն դեպքում, անծանոթ մարդ էր: Իգորի դեմ ընդվզեցին համարյա բոլոր կազմակերպիչները: Այդ ժամանակ արդեն «Ղարաբաղ» կոմիտեն կար: Կոմիտեի առաջին կազմը, որի մեջ էին Մանվել Սարգսյանը, Գագիկ Սաֆարյանը, ձեւավորեց Իգորը: Հետո դարձյալ Իգորի առաջարկով՝ նրանց միացան Համբարձում Գալստյանը եւ Վազգեն Մանուկյանը: Կազմկոմիտեն «Ղարաբաղ» կոմիտեին կից յուրատեսակ քարտուղարության դեր էր կատարում: Ես քարտուղարության կազմում էի:

Բ. - Կադրային կազմը բնակա՞ն ընտրությամբ էր: Ինչպե՞ս եղավ:

Ա.Մ. - Ապագա կազմի ընտրությունը շատ բնական էր: Մտավորականներից մայիսին մնացել էին հիսուն հոգի, որոնք տարբեր գործառույթներ էին կատարում: Դա կազմակերպող օղակն էր: Հիսուն հոգու մեջ գծագրվում էր առավել ակտիվ, գրագետ մասը: Մենք հաճախ հավաքվում էինք Վազգեն Մանուկյանի տանը: Մի անգամ գնացի, տեսա՝ խոհանոցի սեղանին ինչ-որ բան է գրում: Հարցրի՝ ի՞նչ ես գրում: Ասաց՝ «Ղարաբաղ» կոմիտեի նոր կազմը: Իգորի հետ ընդհարումից հետո, փաստորեն, կոմիտեի կազմը ձեւավորեց Վազգեն Մանուկյանը՝ երեւի տարբեր մարդկանց հետ բանակցելով: Ինձ էլ առաջարկեց ընդգրկվել կազմում: Վազգենը Իգորի նման վաղուց էր գբաղվում Ղարաբաղի խնդրով, նա էլ էր այն մարդկանց մեջ, ովքեր, իմ կարծիքով, մեծի իրավունքով կարող էին այդ հարցերը կարգավորել:

Բ. - Դուք ելույթից հետո սովորաբար գո՞հ էիք լինում ձեր ասած խոսքից:

Ա.Մ. - Ինձ համար շարժումը սահմանափակված չէր քաղաքական, հետագայում նաեւ ռազմական խնդիրներով: Մի այլ հարթություն կար, որն ինձ համար կարեւորագույնն էր այդ հարցում: Ես աշխատում էի դպրոցում, որը սովորական դպրոց չէր: Մի քիչ ֆանտաստիկ դպրոց էր այն առումով, որ ուսուցչական կազմում հարյուր տղամարդ կար: Քաղաքի մյուս դպրոցներում երեւի միասին այդքան տղամարդ չլինեին: Հավաքվել էին գաղափարակիցներ, եւ դրախտի պես մի տեղ էինք ստեղծել երեխաների համար: Դպրոցը բավական խորը հոգեւոր, բարոյական խնդիրների ուղղությամբ էր գործում, եւ շարժումը՝ այն էլ երկրով մեկ եւ լրիվ անսպասելի, կարծես մեզ համար նվեր լիներ: Իմ համոզմունքն է, որ այն, ինչը մարդկանց պահում էր հրապարակում, ամենեւին էլ Ղարաբաղը չէր, առավել եւս՝ դեմոկրատիան կամ անկախությունը: Թեեւ, անկասկած, այդ բոլոր հարցերը կարող էին դեր խաղալ, եւ կարեւորագույնը Ղարաբաղն էր, բայց մարդկանց լիցք

էր տալիս այն, որ նոր որակ զգացին իրենց եւ մյուսների մեջ: Իսկ միասնությունը ուրիշ որակ էր հաղորդում այդ ամենին: Այն, ինչ որ մենք անվանում ենք հոգեւոր շերտ, կարծում ենք, թե ինչ-որ բարդ երեւույթ է, որը գոյություն ունի միայն եկեղեցիներում եւ սրբավայրերում: Պարզվում է, որ եկեղեցին, սրբավայրը մարդն է: Երբ նա հայտնվում է հատուկ վիճակում, այդ ամենը սկսում է դրսեւորվել: Ելույթի մի մասը այն հարցերն էին կազմում, որոնք պիտի ամրանային որպես գաղափարներ: «Ղարաբաղ» կոմիտեի համար քննարկվում էր ընդհանուր քաղաքական դրվածքը: Յուրաքանչյուրը ստանում էր իր հանձնարարականը: Ամեն ինչ ինտերակտիվ էր:

Բ. - Հիմնական որոշումներ կայացնողն ո՞վ էր:

Ա.Մ. - Կոլեգիալ էր: Կոորդինատորը Վազգեն Մանուկյանն էր, նա ավելի բարձր դիրք ուներ: Բայց, միեւնույնն է, «Ղարաբաղ» կոմիտեն միասնական օղակ էր, եւ ոչ մեկն իրեն թույլ չէր տա քիթը ցցել: Ի սկզբանե մթնոլորտը այդպիսին էր, ոչ մի հրամանատարական տոն չկար:

Բ. - Դա հետագայում եղավ, վերջին շրջանում, երբ պետք է իշխանության գային:

Ա.Մ. - Երբեք: Ամենավերջին օրը «Ղարաբաղ» կոմիտեի շարժման վարչության խնդրանքով որոշում էինք, թե ով է լինելու ՀՀ Գերագույն խորհրդի նախագահը: Միայն թե լսեիք՝ նիստի ժամանակ ինչ էր ասվում Լեւոնի եւ Վազգենի հասցեին: Երկուսն էլ թեկնածու էին, եւ մեզնից յուրաքանչյուրը ոչ թե ասում էր, թե նրանք ինչքան լավն են, այլ հստակ ասում էին, թե ինչ խոշոր բացեր կան, որոնք խանգարում են, որպեսզի նրանք կարողանան գործերը նորմալ կատարել:

Բ. - Լեւոնի մեջ ի՞նչ թերություններ էիք տեսնում:

Ա.Մ. - Մի անգամ կարդացի մի բանվորի արտահայտությունը՝ կապված սոցիալ-դեմոկրատական կուսակցության հետ: Լենինի եւ Պլեխանովի բնութագրերն էին: Ասում է. «Плеханов барин, а Ленин наш - рабочий, крестьянский»: Լեւոնը մի քիչ «բարին» էր, կարող էր ասել՝ հոգնած եմ, գլուխս ցավում է: Բայց շարժումը նման բաներ թույլ չէր տալիս: Մի քիչ փափկասուն էր: Պատասխանատվության զգացումը, որն ամեն վայրկյան պետք էր, նրա մեջ կարծես չկար: Պատերազմի տարիներին ես ազգային անվտանգության հարցերով խորհրդական էի, նա ՀՀ նախագահն էր: Տեսնում էի՝ խելագար վիճակ է, բայց նա՝ հանգիստ, հանդարտ, կարող էր այդ պահին փիլիսոփայության գիրք բացել եւ կարդալ: Առաջ շատ էի զայրանում: Բայց հետո մտածում էի. «Ես այդ պահերին հիստերիկ էի, եթե նա էլ նույն վիճակում լիներ, ապա երկու հիստերիկ մարդ այդ իրավիճակում անհեթեթ որոշումներ կկայացնեին: Ավելի լավ է՝ ես որպես հիստերիկ վազվզեմ, իսկ մյուսը

հանդարտություն պահպանի, որ կարողանա սառը գլխով հարցերին մոտենալ»: Այսինքն՝ ինչքան էլ այդ պահին բացասական երանգ կար դրա մեջ, կար եւ դրականը: Համենայն դեպս, այն ժամանակ ես մարդկանցից ավելի մեծ լարվածություն էի սպասում: Ես կազմակերպչական աշխատանքի առանձնահատկություններն ավելի լավ էի պատկերացնում, եւ ինձ զայրացնում էր գործին վերաբերվելու առումով ամեն մի շեղումը: Նրանք ավելի շատ մտավորականի մոտեցում ունեին՝ ճիշտ բանն ասել ենք, ինքն իրեն կդասավորվի: Ինքն իրեն կարող էր եւ չդասավորվել, իսկ պատասխանատվությունը շատ բարձր էր: Հիմա ավելի փիլիսոփայորեն եմ տրամադրված: Ամեն ինչ իրար շատ սուր էինք ասում, բայց ընկերաբար:

Բ. - Եվ գիտեին, որ Աշոտ Մանուչարյանը կասի:

Ա.Մ. - Ոչ միայն Աշոտ Մանուչարյանը, ամեն մեկն էլ կարող էր հանգիստ վեր կենալ եւ իր խոսքն ասել: Քառյակ կար, որը պայմանականորեն քաղաքական պլանավորման դեր էր խաղում. Վազգեն Մանուկյանն էր, Լեւոն Տեր-Պետրոսյանը, Դավիթ Վարդանյանը եւ ես: Եթե բարդ խնդիր կար, մինչեւ կոմիտեի նիստը հավաքվում էինք, մտածում, նախապես փաստաթուղթ կազմում: Բայց Վանո Սիրադեղյանը կարող էր հանգիստ մտնել եւ ասել՝ ախմախ-ախմախ դուրս եք տվել: Նրա արտահայտվելու ձեւն էր այդպես, ոչ թե արտոնություն կամ առավելություն ուներ: Այսօրվա բառերով ասած՝ դեմոկրատական մոտեցում էր տիրում: Թեեւ այսօր այդ բառերը լրիվ կորցրել են իրենց իմաստը:

Բ. - Հետո ձեզ տարան Ռուսաստան. դա ի՞նչ հետք թողեց, դպրո՞ց էր, դա՞ս էր, ի՞նչ էր:

Ա.Մ. - Տոլստոյն ասում է, որ տղամարդու համար բանտը պարտադիր է: Այնքան էլ հաճելի տեղ չէ, բայց յուրօրինակ դաս է մարդու համար, մտորելու երկար ժամանակ է տալիս նրան: Ես քրեական գործով բանտարկյալների՝ մարդասպանների, բանդիտական խմբերի հանցագործների հետ էի նստած: Նրանք անընդհատ փոխվում էին, քանի որ քննչական մեկուսարան էր: Խցում երեքից հինգ հոգի էին լինում: Բոլորս այդպիսի խցերում ենք եղել, որպեսզի շփումները քիչ լինեն: Կողքի խցում միութենական մասշտաբի օրենքով գող էր նստած: Իսկ իմ ճակատին երեւի գրված էր, որ պետք է խորհրդական լինեմ: Նրան ասել էին, որ քաղաքական բանտարկյալներ էլ կան, նա էլ միանգամից հետաքրքրվել էր:

Բ. - Ո՞վ էր նա:

Ա.Մ. - Բանտում գողական երգեր չէին երգում: Ամբողջ օրը ռադիոընդունիչը միացրած էր, որպեսզի ձայները խլացնի, որեւէ խոսակցություն չլինի: Ցերեկը մեկ ժամ եւ երեկոյան ժամը տասից մինչեւ

առավոտյան ժամը վեցը անջատում էին: Այդ ժամերին սկսում էին կանչել իրար, կարող են նաեւ երգել այդ ժամանակվա տարածված երգերից՝ «Подмосковные вечера» եւ այլն: Մի օր բլատնոյ երգեր լսեցի, որ մինչ այդ չէի լսել: Սկզբում մի հոգի երգեց, հետո՝ երկրորդը, հետո սկսեցին երեքով երգել: Կարծես հատուկ բան էր կատարվում: Մեկ էլ միանգամից ձայները կտրվեցին: Մեկը գոռաց. «Слушай, тюрьма»: Եթե մեկը անպատասխանատու ձեւով հայտարարեց, ապա հաշիվ են մաքրում, թե՝ ինչու՞ այդպիսի բան ասացիր: Ասաց. «К нам,- ասում է բանտախցի համարը,- из стамбульской крытки прибыл вор, только Барбос»: Ասելուց հետո տասնհինգ հոգի սկսեցին միասին երգել: Հետո զգացի նրա գալը, քանի որ խուցը հենց մեր կողքին էր: Այնտեղ իրար որեւէ բան փոխանցելու հատուկ ձեւ կա՝ սկսած քսիֆներից մինչեւ ուտելիք ու հաբեր: Այդտեղ սկսեց լցվել ամեն ինչ: Երբ դուրս էինք եկել զբոսանքի, տանիքի վրա դարձյալ խուցեր էին, բայց առաստաղ չկար, երկինքը երեւում էր: Երբ պահակը մի քիչ հեռանում էր, դարձյալ կարող էիր գոռալ: Ասացին, որ Բարբոսը ուզում է ինձ հետ խոսել: Բավական գրագետ էր, երիտասարդ, ինձնից երեւի մի քանի տարի մեծ էր: Հարցեր տվեց երկրի քաղաքականության վերաբերյալ, հատկապես օրենքների տրամաբանությունն էր հետաքրքրում՝ որտեղ է գնալու, ինչ է լինելու: Հարցրեց, թե ինչով կարող է օգտակար լինել: Ասացի, որ տղաներին չեմ կարողանում գտնել: Գիտեի, որ կոմիտեից այդտեղ էլի մարդ կա: Ընդամենը տասը րոպե հետո ասաց, թե Սամսոն Ղազարյանը որտեղ է, եւ կարող եմ նրա հետ կապվել: Քանի որ նա կողքի խցում էր, նրա միջոցով կարողանում էի բոլորից տեղեկություն ստանալ: Բոլորի վիճակին շատ թե քիչ ծանոթ էի: Ընդհանուր առմամբ՝ տղաները դիմացել էին, որեւէ մեկի հետ արտառոց դեպք չէր պատահել: Եղան մեկ-երկու մի քիչ ետ քաշվելու հայտարարություններ, թե այս սրությանը պետք չէր հասցնել:

Բ. - Ռուսները ձգտու՞մ էին որեւէ մեկին մոտենալ, փորձել իրենց կողմը գրավել:

Ա.Մ. - Սկզբում քննչական կազմը ներկայացավ որպես միութենական դատախազության հույժ կարեւոր գործերով քննիչներ: Ես երկու հարցաքննության եմ պատասխանել: Լավ չէի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում: Փիլիսոփայությունը հետեւյալն էր՝ Ղարաբաղյան շարժումը սկսել է հայաստանյան մաֆիան: Հենց այդ միտումը զգացի, ասացի, որ հրաժարվում եմ հարցերին պատասխանել: Դրանից հետո մի քանի անգամ հարցաքննության փորձ արեցին, դարձյալ չպատասխանեցի: Երբ հերթական անգամ կանչեցին հարցաքննության, նստած էին ոչ թե մեկ, այլ երեք հոգի, ինչպես առաջին անգամ: Քննչական խումբ էր: Շատ կիրթ էին խոսում.

- Աշոտ Գառնիկովիչ, մենք որոշեցինք ներկայանալ:

- Դուք արդեն ներկայացել եք,- ասացի:

- Ոչ, մենք ստիպված էինք սխալ ներկայանալ: Մենք ԽՍՀՄ դատախազությունից չենք, այլ ՊԱԿ-ից:

Եվ սկսեցին ներկայանալ՝ «Начальник отдела следственного управления, замначальник отдела следственного управления...»: Հետո հասկացա, թե ինչն էր պատճառը: Քանի որ ես պատգամավոր էի, ինձ մոտ էին կենտրոնանում ժողովրդից եկող բողոքները, հատկապես բողոքների այն մասը, որոնք առավել ծանր հանցագործությունների մասին էին՝ կատարված բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Ուզում էին, որ ես՝ որպես պատգամավոր, առաջ քաշեմ այդ հարցերը: Ասացին. «Մենք գիտենք, որ Դուք միշտ դեմ եք եղել անարդարություններին, մենք էլ ենք դեմ: Մենք ուսումնասիրել ենք ձեր տղաների գործունեությունը: Դուք ոչ մի բանում մեղավոր չեք: Բայց, հասկանու՞մ եք, ձեր պայքարի մեջ հանցագործ տարրերից էլ են փորձել մտնել: Բոլոր մարդիկ, ովքեր անմիջական մասնակցել են, մաքուր մարդիկ են: Իսկ նրանք փորձել են միջնորդավորված կառավարել, որպեսզի իրենց կաշին, իրենց գողացածը փրկեն: «Ղարաբաղ» կոմիտեն այստեղ երկար չի մնա: Մենք պատրաստ ենք անմիջապես բոլորին ազատ արձակել, հատկապես եթե Դուք մեզ օգնեք: Կարո՞ղ եք մեզ փոխանցել «Ղարաբաղ» կոմիտեի արխիվը»: Այդ ժամանակ սկսեցի վիճաբանել, արխիվի հարցը շրջանցել, թե. «Ի՞նչ արխիվ, ի՞նչ եք խոսում... եթե հանցագործներ կան, իհարկե, ամեն հանցագործ էլ կուզի ցույց տալ, թե ինքը լավ մարդ է, որպեսզի կապ ստեղծի, բայց նման բան չի կարող լինել...»: Մեր ձերբակալված տղաներից մեկի գրությունը դրին առջեւս: Կարդում եմ. «Աշոտ, ինձ ասացին, որ նրանք պատրաստվում են հայաստանյան մաֆիայի բոլոր պարագլուխներին պատժել, միակ նպատակը դա է, շարժման հետ նրանք խնդիր չունեն, կարող ենք անգամ շարունակել: Եթե դեմ չես, ես հանձնեմ արխիվը»: Նրան ասել էին. «Մենք գիտենք, որ քեզ մոտ է արխիվը»: Հաշվարկել էին, թե ես ավելի շատ ում հետ եմ կապ պահպանում: Նա մեր դպրոցի ուսուցիչներից էր: Փաստը աչքիս առաջ էր, եւ այդ պահին չգիտեի ինչ անել: Գրեցի. «Ամբողջ արխիվը, որ քեզ մոտ է, կարող ես տալ նրանց»: Նրա մոտ ոչինչ չկար: Կարդում է, հասկանում, թե ինչ է գրված, եւ ինչքան հին թռուցիկներ, անպետք թղթեր կան, տալիս է նրանց: Հասկանում են, որ իրենց հիմարացրին, բայց էլ ոչինչ չունեին անելու: Գոնե այդ տղային ազատել էին: Ինձ պարբերաբար ասում էին. «Բոլոր տղաները տուն են գնալու, նրանք բացատրություն են տվել, իսկ դու ոչինչ չես ասել, դու մնալու ես այստեղ»: Այսինքն՝ իմ հանդեպ հոգեբանական ճնշում էին կիրառում: Ըստ էության, կոտրված մարդ

չկար, կարող է մի քիչ թուլացած լինեին: Դե, չէր կարելի ասել, թե առողջարան էր:

Բ. - Կոմիտեի անդամները լավ վիճակում վերադարձան:

Ա.Մ. - Երբ ինձ այստեղից տարան օդանավակայան, ես սարսափահար վիճակում էի, մտածում էի, թե տանում են Եթովպիա, արտաքսում են երկրից: Բարձրացրին բեռնատար մեծ ինքնաթիռը: Օդաչուների խցիկի տակ մի խուց կար, որտեղից լսվում էր նրանց խոսակցությունը: Երբ օդաչուն ասաց. «Днепропетровская зона ответственности», մտածեցի, որ տանում են Մոսկվա՝ քննություն անցկացնելու, ծայրահեղ դեպքում՝ Խորհրդային Միության հյուսիս, համենայն դեպս՝ ոչ Եթովպիա: Վերադառնալիս էլ չգիտեի, թե ուր են տանում: Երբ նստեցրին մեքենան, լսեցի Սամսոն Ղազարյանի ձայնը, նա բղավեց: Երբ բարձրացանք ինքնաթիռ, բոլորս շատ երջանիկ էինք, հասկանալի էր, որ Հայաստան ենք գնում: Ինքնաթիռում նստած էին քննիչները, պահակախումբը: Յուրաքանչյուրիս նստեցնում էին երկու պահակների արանքում, բայց թույլ էին տալիս, որ իրար ողջունենք, գրկախառնվենք: Ընդհանուր մեղմ տրամադրություն էր տիրում: Քսանչորս ժամ պահելուց հետո բերեցին Երևանի բանտ: Առավոտյան պատժախցի դուռը թակեցին, այսինքն՝ կարելի՞ է ներս մտնել: Զարմացա, ասացի՝ այո՛: Պահակն էր. «Սուրճ կխմե՞ք»: «Իսկ կարելի՞ է»,- ասացի: Ես սուրճ չեմ սիրում, բայց բանտում սարսափելի կարոտել էի: Կես ժամից ներս մտավ սկուտեղով՝ վրան սուրճ, շոկո-լադ, միրգ, այսինքն՝ բոլոր արգելված ուտելիքները: Այդ մի քանի օրվա ընթացքում հոգեբանական ընկճվածությունն անցավ:

Բ. - Բայց զգացիք նաև, որ լուսապսակով եք վերադառնում:

Ա.Մ. - Դա լրիվ ուրիշ բան է: Իհարկե, երբ դուրս ես գալիս բանտից, Պետրոս առաքյալ ես կամ ուրիշ մեկը, քեզ ձեռքերի վրա են տանում, «ուռա» են գոռում: Այդ ամենն ազդում է, եւ սկսում ես լուրջ ընդունել: Դա շատ վտանգավոր է: Մարդուն կոտրելու համակարգերից ամենաուժեղը բանտը, մահվան վտանգը կամ ռազմաճակատը չեն: Մեր տղաները բոլորն էլ եղել էին վտանգավոր գոտիներում, բայց այդ իրավիճակից նրանք դուրս եկան առանց կոտրվելու: Իսկ փառքը, փողը եւ իշխանությունը մարդ չեն թողնում: Ամենավտանգավորը փառքն է: Երբ խոսում ես, թվում է, թե ձայնդ վերեւից է լսվում:

Ելույթներից առաջ խոսակցության պնակը որոշվում էր, բայց յուրաքանչյուրն ինքն էր որոշում, թե տվյալ միտքը ինչպես հաղորդի, ինչպես մարդկանց համոզի, որ հենց այդ ճանապարհը կամ գնահատականն է ճիշտ: Ինձ համար միեւնույնն էր, թե ինչ պնակ են տալիս խոսելու համար: Սովորաբար ամեն մեկի համար ընտրվում էր այն հարցերի շրջանակը, որը նրան բնորոշ էր: Ես ավելի շատ

օրինականության, արդարության հարցերն էի առաջ քաշում: Ղարաբաղն ինձ համար խաչ դարձավ, երբ առաջ եկավ ազգային անվտանգության խնդիրը: Այդ ժամանակ ես քիչ էի զբաղվում Ղարաբաղով: Պատգամավոր էի, հիմնականում այլ հարցերով էի զբաղվում:

Ասացի, թե մարդկանց պահող հանգամանքը որն էր: Առաջացել էր հոգեւոր դաշտ, ինչը հատուկ ներդաշնակության վիճակ էր: Ես միշտ իմ ելույթներով այդ մթնոլորտն եմ սպասարկել, ուստի իմ ասածներից որոշ բաներ շատ էֆեկտիվ են եղել: Եթե այդ մթնոլորտը ամուր է, ցանկացած հարց չնչին բան է դառնում, եւ ինչ ասես, մարդիկ կարող են անել: Հանրահավաքի ժամանակ գնում էի, հետեւիցս ահագին մարդիկ էին գալիս, մեկը ուշացած էր եկել, հարցրեց, թե ով է խոսել: Նրան պատմում էին: Հետո հարցրեց. «Իսկ Աշոտ Մանուչարյանը ի՞նչ ասաց»: Սկսեցին պատմել, թե ես ինչ եմ ասել: Ես ոչ մի նման բան չէի ասել: Պատմողին հիմնականում այդ մթնոլորտն էր հաղորդվել, եւ նա փորձում էր ինչ-որ մտքեր, բառեր գտնել՝ մթնոլորտը փոխանցելու համար: Այլ հարց է, թե որքանով էր նրան հաջողվում: Անգամ ֆանտաստիկ գործերը, որ մենք ի գորու ենք եղել կատարել, եղել են միմիայն այդ մթնոլորտի դրսեւորմամբ: Եվ լավագույն դեպքում գրում էին, թե ժողովուրդը համախմբված է, ինչպես երբեք: Համախմբվածության հարցը չէր միայն: Դա հոգեւորի սկիզբն էր, որն ազդում է բոլոր մարդկանց վրա: Նույնիսկ այդ ընթացքում ոչ թե երկու-երեք, այլ հարյուր անգամ կրճատվել էր հանցագործությունների թիվը: Նշանակում է Հայաստանում ոչ ոք գողություն չէր անում:

Բ. - Իսկ ինչու՞ չկարողացաք պահել: Ճիշտ է, մթնոլորտը երկար պահել չէիք կարող, բայց բարոյական անկումը ինչու՞ եղավ:

Ա.Մ. - Ես բուտիրկայում գրքեր էի կարդում: Ի դեպ, բանտում ընկալումը ավելի սուր ու ամբողջական է: Այնտեղ ինձ վրա ֆանտաստիկ ազդեցություն գործեց Դանթեի «Դժոխքը»: Դժոխքն ունի ինը շրջան: Չորրորդ շրջանից երեւում են մարդասպանները, որոնք աստիճանաբար ավելի ահարկու են դառնում: Իններորդ շրջանում թվում է, թե պետք է միայն ամենասարսափելի մարդասպանները լինեն, աստծուն դավաճանողները՝ Հուդան: Բայց կողքի փոսում նրանք էին, ովքեր հավատացողներին խաբել են: Իրեն հավատացողին մոլորեցնելը համարվում է շատ ավելի դաժան հանցանք, քան ամենասարսափելի սպանությունը: Բացատրությունը շատ պարզ է. եթե սպանում ես մեկին, ապա սպանում ես նրա մարմինը, իսկ եթե խաբում ես, ուրեմն՝ սպանում ես հոգին: «Ղարաբաղ» կոմիտեն համարվում էր հոգու, հոգեւոր դաշտի պահապան, անկախ նրանից՝ մարդիկ հասկանում էին, որ հոգեւոր դաշտն է միացված, թե չէին հասկանում: Եվ երբ այդտեղ մտնում է խաբեությունը, մարդը կորցնում է սրբությունը, հավատը

լույսի նկատմամբ: Երբ ստանձնում ես մարդկանց առաջնորդելու պատասխանատվությունը եւ դրա հետ մեկտեղ փառքը, բայց միեւնույն ժամանակ տրվում ես այդ փառքին, հարստությանը եւ իշխանությանը, ուրեմն՝ ոչ մի իրավունք չունես: «Ղարաբաղ» կոմիտեում իմ առաջին կռիվը այդ հարցի կապակցությամբ, որքան էլ զարմանալի է, եղել է Վազգեն Մանուկյանի հետ կոմիտեի վերջին կազմի գործունեության մոտավորապես տասներորդ օրը: Հարթակում կանգնած էինք, տեսա՝ Վազգենը ծխում է: Հարցրի.«Ա՛յ տղա, էդ ի՞նչ մարկա ես ծխում»: Նայեց ծխախոտի տուփին, ասաց. «Մարլբորո եմ ծխում»: «Դու ի՞նչ իրավունք ունես «Մարլբորո» ծխելու»,- ասացի ես: Այդ ժամանակ «Մարլբորո» ծխում էին միայն ցեխավիկները եւ շրջկոմի առաջին քարտուղարները: Վազգենը նայեց ինձ, ասաց. «Ա՛յ տղա, լակոտ, դու հլա կարճ շալվարով վազվզում էիր, ես բուհ ընդունվող աշակերտների հետ պարապում էի, միշտ ավտոմեքենա եմ ունեցել, ծխել եմ «Մարլբորո» ու գնացել եմ ռեստորան: Կարո՞ղ է քեզ նման փսլնքոտի պատճառով ապրելակերպս փոխեմ»: «Կարող ես չփոխել, շարունակիր նույն կերպ ապրել,- ասացի ես,- բայց, բարի եղիր, դրանից առաջ դիմում գրիր եւ «Ղարաբաղ» կոմիտեից դուրս արի»: Շշմած նայեց ինձ: Ասացի. «Ես չեմ կարող ամեն մեկին մոտենալ եւ բացատրել, թե այդ «Մարլբորոն» որտեղից քեզ: Մարդիկ նայում են մեզ, եւ «Ղարաբաղ» կոմիտեն պիտի լինի ճգնավորների հավաք»: Հասկացավ, որ արդարության խնդիր կա: Բայց հետո տղաների կեսն ինձ ծաղրում էր: Կես լուրջ-կես կատակ ստեղծեցին «բարոյական հանձնաժողով»՝ էթիկայի հանձնաժողով: Հանձնաժողովում միայն ես էի, այն էլ նախագահն էի: Վանոն գալիս էր, թե՝ «Ախպեր, մի զույգ նասկի են ախպարները դրկել, հիմա հագնե՞մ, թե՞ տամ ֆոնդին»: Այդ ժամանակ լուրջ չէին ընդունում, բայց հետո պարզ եղավ, թե որքան լուրջ էր: Ոչ ոք չէր սպասում, թե իր հետ կարող է այդպիսի բան կատարվել: Յուրաքանչյուրը պատրաստ էր զոհողության: 1990 թ. մայիսի 27-ին՝ Նուբարաշենի դեպքերի ժամանակ, ռուս զինվորականին՝ Սուրկովին, տարել էին, որպեսզի ռուսներին թույլ չտա կրակել: Մենք էլ գնացել էինք մերոնց ետ պահելու: Մերոնք բլուրների վրա էին: Բարձրանում էինք բլուրը: Պարզ չէր, թե որտեղից, բայց տարբեր բլուրներից կրակում էին: Մերոնք մտածում էին, թե ռուսներն են կրակում: Բայց արդեն ռուսները չէին, իրար վրա էին կրակում: Ես առջեւից էի քայլում, Վազգենը՝ հետեւից: Վազգենը արագ ինձանից անցավ, սկսեց իմ առջեւից գնալ, որ փամփուշտն առաջինը իրեն հասնի: Ասացի. «Վազգե՛ն, ի՞նչ ես անում, մեկ չի՞»: Ասաց. «Չէ, մեկ չի, եթե քեզ հանկարծ բան պատահեց, գնամ տուն, մայրդ հարցնի՝ Աշոտն ու՞ր է, ես պատասխան չեմ ունենալու, իսկ դու

այդպիսի խնդիր չունես»: Վազգենի ծնողները մահացել էին: Այսինքն՝ Վազգենը նաեւ «դուխով» տղա է: Նույնն արել են Վանոն, Բաբիկը, Լեւոնը, եւ մտածելը, թե նրանցից մեկնումեկը հետո կարող է սայթաքել պաշտոնի կամ փողի պատճառով, ֆանտաստիկ էր, մտքովս էլ չէր անցնում: Իսկ էթիկայի հանձնաժողովը ոչ թե խոշոր դեպքերի համար էր, այլ մանրուքների:

Բ. - «Ղարաբաղ» կոմիտեն երբ եկավ իշխանության, ինչու՞ թույլ տվեց, որ իշխանության մեջ մտնեն այդքան գողեր, թալանչիներ, որոնք ավելի շատ տեղեր ստացան:

Ա.Մ. - Ես շատ «ցեխավիկների», շրջկոմի քարտուղարների, դատախազների եմ ճանաչում, որոնք մինչեւ շարժումը կաշառակեր, անազնիվ, գող մարդիկ են եղել: Բայց մեծ թվով այդպիսի մարդկանց գիտեմ, որոնք սննկացել են շարժման ժամանակ, որովհետեւ իրենց ամբողջ փողը ներդրել են այդ գործին: Ասկերանի գումարտակի հրամանատարը՝ Ապրեսյան Միշան, Աբովյանի բազայի վրա կազմակերպեց «Արցախ» գունդը եւ գնդի բոլոր կարիքները հոգում էր սեփական միջոցներով: Նա բավական ճարպիկ տղա էր, փող ու միջոցներ էր կուտակել, բայց հիմա ոչինչ չունի: Այդպիսի մարդուն, երբ իր ողջ ունեցածը տալիս է, ես երբեք պիտակ չեմ կպցրել: Վերջին մարդը պետք է լինեմ՝ ասելու, թե նախկինում ով է եղել: Այդ մթնոլորտում բոլորն իրենց տնից էին բերում: Մարդը ընդհանուր հոսանքի մեջ է: Դա իր առանցքը չէ, իր առանցքը շատ թույլ է, մի թեթեւ քամի փչեց, նա կգլորվի ներքեւ: Իսկ պաշտոնը ոչ թե քամի է, այլ փոթորիկ, որին դիմանալ է պետք: Նրանք փիս, արյունարբու մարդիկ չէին, պարզապես մարդը թույլ է: Նույնիսկ երբ ուժեղ գաղափարական շարժումը հանգեցնում է ընդվզումների, մեծ փոփո- խությունների, հետո սկսվում են կյանքը, առօրյան եւ կյանքի բերած էրոգիան, այդ ժամանակ պետք է կարողանաս մարդուն պահել: Դրա համար ուժեղ հոգեվոր համակարգ է պետք: Շատ երկրներում այդ դերը ստանձնում է եկեղեցին, բայց մեզ մոտ այդպես չէ: Խորհրդային Միությունում այդ դերը խաղում էր մտավորակա- նությունը՝ իր գործունեությամբ, ստեղծագործական միություններով: Մեր երկրում ստեղծվեց մի հզոր համակարգ, որը ոչ մտածված էր, եւ ոչ էլ ինչ-որ ձեւ էր ստեղծված, որին համապատասխան այն պետք է ամրանար: Կյանքի հոսանքի հետ եկավ, նրա հետ էլ գնաց:

Բ. - Դուք գործընթացի եւ՛ մեջն էիք, եւ՛ կողքին: Այդ մթնոլորտում Ղարաբաղի հարցի, նոր իշխանության գալու, կադրային խնդիրների մասին խոսեք: Դուք զբաղվում էիք խորհրդարանի ձեւավորման հարցով:

Ա.Մ. - Ճիշտ եք նկատել, որ ես եւ մեջն էի, եւ կողքին: Ժամանակա-

վորապես դպրոցից դուրս էի եկել եւ զբաղվում էի հարցերով, որոնք քանի դեռ հոգեւոր դաշտում էին, իմն էին, իսկ երբ քաղաքական դաշտ էին տեղափոխվում, արդեն ինձ հետաքրքիր չէին: Չնայած ես ունեի քաղաքական փորձ՝ կապված կոմերիտմիության աշխատանքների հետ, չէի ուզում մտնել քաղաքականության մեջ: Ընտրությունների արդյունքում շարժումը եկավ իշխանության, շարժումը, ոչ թե ՀՅԾ-ն՝ որպես կուսակցություն: Այն ժամանակ կուսակցություն բառը ես համարում էի անեծք: Այն միշտ նշանակում է մասնավոր: Իսկ շարժումն ավելի էական արժեքների վրա էր հիմնված: Այդ ժամանակ հիմնադրված եւ սաղմնավորվող բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, ինչպես Քրիստոնեադեմոկրատական կուսակցության հիմնադիր Ազատը, հանրապետականների հիմնադիր Աշոտ Նավասարդյանը եւ այլն, անցել են շարժման ցուցակով, ոչ թե իրենց կուսակցությունների անվան տակ: Օրինակ՝ Գաբրիելյան Մեխակը որ գալիս էր խոսելու, ինձ համար պարզ էր, որ խոսում է Դաշնակցության անունից: Ամեն մի տեղի համար կռիվ էր անում, քյալլա էր տալիս, որ ավելացնի: Ես ասում էի, որ չափը չանցնի, որովհետեւ տարբեր կազմակերպություններ շատ կան: Ես առաջարկել էի եւ ստացել շարժման վարչության համաձայնությունը, որ բոլոր հիմնական ստորաբաժանումները ներկայացված լինեն, հատկապես նրանք, որոնք զինված ուժ ունեն: Դա նաեւ ապահովում էր պառլամենտի ենթակայությունը այդ բոլոր ուժերին: Սեփական կոպիտ սխալն եմ համարում, որ ՀԱԲ-ը չհայտնվեց այդտեղ: Պարզապես ՀԱԲ-ի առաջին դեմքերի շարքում քաղաքականացված անձիք չկային: Չէի կարողանում որեւէ մեկին տեսնել, որի հետ հնարավոր կլիներ հարաբերություններ ունենալ: Բարդ էր նրանց հետ խոսելը, եւ դա բերեց ծանր հետեւանքների: Ըստ էության, բոլոր քաղաքական եւ ռազմաքաղաքական ստորաբաժանումները ներկայացված էին պառլամենտում: Շատ ուշադիր հետեւում էինք, որ ընդգրկվեն ազդեցիկ եւ պարկեշտ մարդիկ: Անկասկած, եղան բազմաթիվ սխալներ, պատահական մարդիկ էլ հայտնվեցին, բայց այսօր ոչ ոք չի առարկում, որ այն վերջին տասնհինգ տարիներին ամենաբարձր մակարդակն ունեցող պառլամենտն էր: Նույնիսկ խորհրդային պառլամենտից ավելի բարձր էր իր որակներով: Երբ սկսվեց նախընտրական քարոզարշավը, քանի որ ընտրական շտաբի պետը ես էի, պարբերաբար «Ղարաբաղ» կոմիտեի նիստերում ասում էի. «Տղե՛րք, մենք գնում ենք իշխանության, հաղթելու ենք ընտրություններում: Ասենք՝ մենք հաղթել ենք, բայց հրաժարվում ենք վերցնել իշխանությունը, դա փոքրոգություն է դառնում, որովհետեւ գոյություն ունեցող իշխանությունը չի կարողանում լուծել երկրի բոլոր հարցերը, ուր մնաց՝ Ղարաբաղի հարցը: Ուրեմն՝ պետք է վերցնել այն, բայց դրա

համար բացարձակապես պատրաստ չենք, ոչ ծրագիր ունենք, ոչ մարդիկ, ոչ էլ աշխատում ենք այդ ուղղությամբ...»: Իմ կռիվները այդ խնդրի շուրջ էին: Ուժեղ առճակատումներ էին լինում, բոլորի հետ շատ չոր էի խոսում. «Ինձ վրա դրել եք ընտրությունները, դուք էլ զբաղվեք ծրագրերով, կադրերի ընտրությամբ»: Չի կարելի ասել, թե ոչինչ չէր արվում: Յուրի Թադեւոսովիչը հրավիրեց չորս տաղանդավոր, երիտասարդ տնտեսագետների, որոնք պետք է տնտեսական հայեցակարգ մշակեին: Այդ ժամանակ Մոսկվան խոսում էր «հանրապետական տնտհաշվարկից»: Այսինքն՝ հանրապետությունները պետք է անցնեին տնտեսական ինքնուրույնության: Այդ չորս երիտասարդներն էին Հրանտ Բագրատյանը, Տիգրան Սարգսյանը, Լեւոն Բարխուդարյանը՝ ֆինանսների նախարարը, եւ ես մեկը: Չորսն էլ հետո պաշտոնյաներ դարձան: Այն, ինչ կատարվեց նրանց հետ՝ վատ իմաստով, Յուրի Թադեւոսովիչի սխալը չէր, այլ շարժման ղեկավարների, որովհետեւ այդ երիտասարդներից ոմանց թողեցին, որ շատ արագ աճեն: Չի կարելի երեսուն տարեկանում դառնալ վարչապետ: Նույնիսկ եթե մարդը շատ տաղանդավոր է, կյանքի փորձը թույլ չի տա, նա կարող է սխալվել: Այդ տղաներից մեկի հետ շատ խիստ խոսեցի, երբ դատախազի տեղակալի հետ կոպիտ էր խոսել, թեեւ այդ պաշտոնյան կարող է այնքան էլ մաքուր ու ազնիվ չէր: Ասացի. «Հորդ տարիքին է, այդ ո՞նց ես խոսում: Եթե հանցագործ է, կարող ես քրեական գործ հարուցել, բայց իրավունք չունես գոռալու, այդպիսի բառեր օգտագործելու»: Եվ դա գալիս էր երիտասարդությունից: Օրինակ՝ Բաբկեն Արարքցյանը իրեն երբեք նման բան թույլ չէր տա: Շատ կարեւոր մի դրվագ պատմեմ: Տնտեսական եւ մի քանի այլ խումբ էլ աշխատում էին, բայց համապարփակ ծրագրային ու կադրային բազա չկար, ասում էին՝ մենք պատրաստ չենք: Կռվելուց հետո մի օր Վազգենին ասացի.

- Ինչ անում ենք, չի ստացվում, չեք զբաղվում, իսկ եթե այսպես շարունակենք, ավանտյուրա է դառնում: Արի տղաների հետ խոսենք, հետո բանակցենք Մովսիսյանի հետ,- նա էր կենտկոմի առաջին քարտուղարը,- եւ առաջարկենք հետեւյալ տարբերակը. մենք վերցնում ենք Գերագույն խորհուրդը, հաղթում ենք ընտրություններում, քաղաքական պատասխանատվությունը մեզ վրա է լինում, մենք ենք մշակում քաղաքականությունը, իրականացնում վերահսկողությունը, որովհետեւ ազնիվ մարդիկ մերոնք են, իսկ գործադիր իշխանությունը կլինի կոմկուսի ձեռքին:

- Հա, երեւի թե ճիշտ ես, բայց եթե հիմա «Ղարաբաղ» կոմիտեում այդպիսի հարց դնեմ, կռիվ-ղալմաղալ կլինի, հետո էլ Մովիսյանը կասի՝ ի՞նչ եք խոսում, ես ձեզ հետ գործ չունեմ, Մոսկվան կարգելի:

- Ուզո՞ւմ ես նախապես խոսեմ Մովսիսյանի հետ,- ասացի:

- Այդ ժամանակ էլ տղաները որ իմանան, խայտառակ ենք լինելու,- ասաց Վազգենը:

- Համարիր, որ իմ ցնդաբանությունն է, դու կապ չունես, քեզ ոչինչ չեմ ասել:

Գնացի Մովսիսյանի մոտ, ասացի.

- Վլադիմիր Միհրանիչ, մենք հաղթում ենք ընտրություններում:

- Ինձ ուրիշ բան են զեկուցում,- ասաց:

- Ես գիտեմ, թե ով է զեկուցում, ձեր աշխատողների հետ ծանոթ եմ, գիտեք, որ նրանցից ավելի լավ եմ հաշվում ու խաբելու հատկություն չունեմ, չեմ խաբում Ձեզ:

- Լավ, ասենք թե:

- Դե, մեր մարդիկ կառավարման փորձ չունեն, ձերոնք էլ պակաս փորձառու են նորագույն քաղաքական գործընթացների մեջ: Քաղաքականությունը մենք կվարենք, վերահսկողություն կիրականացնենք: Իսկ ձեր մարդկանցից, ով վարկաբեկված չէ, կազմավորիր գործադիր իշխանությունը:

- Լավ, գնացեք, հարցդ հասկացա, կմտածեմ, մի քանի օրից կհանդիպենք,- ասաց նա:

Հաջորդ օրը Վազգենը, Լեւոնը, Բաբիկը ինչ-որ հարցով գնում են նրա մոտ: Խոսում են, վերջում Վլադիմիր Միհրանիչը ասում է. «Երեկ Աշոտն էր եկել ինձ մոտ, սփրթնած ասում է՝ ինչ ենք անընդհատ կըռվում, ավելի լավ չէ՞ պաշտոններն իրար մեջ բաժանենք, հանգիստ, լավ ապրենք: Ի՞նչ է եղել, խելոք տղա է, կրթության համակարգում էլ բավական հաջող աշխատել է, թող նա կրթության նախարար աշխատի, ձեզնից ամեն մեկին էլ մի նախարարի պաշտոն տանք, իրար հետ հաշտ ու համերաշխ կապրեք»: Նրանք ասում են. «Աշոտը մեզ ոչինչ չի ասել, եթե այդպիսի ապուշություն է դուրս տվել, գնանք տեսնենք, թե ով է նրան թույլ տվել»: Եկան, թե՝ ես ի՞նչ ես գնացել դուրս տվել: Որ իմացա, թե ինչ է պատահել, ասացի. «Տղե՛րք, էլ մի ասեք, վատ երազ էի տեսել այդ օրը, գնացի այնտեղ, չգիտեմ՝ ինչեր եմ ասել, կներեք, անցած լինի»: Ջղայնացան՝ այդպիսի բան չլինի էլ: Այդ խոսակցությունը եղել է 1990 թվականի մայիսին: 1991 թվականի մայիս թե հունիս ամիսն էր, ես անվտանգության հարցերով խորհրդական էի, Ազգային Ժողովի իմ առանձնասենյակում նստած էի, ասացին, որ ինձ ցանկանում է տեսնել Վլադիմիր Մովսիսյանը: Նա այդ ժամանակ պատգամավոր էր: Մտնում է ներս, ասում.

- Աշո՛տ ջան, տղա ջան, ես այսպես չեմ կարող, ես ամբողջ կյանքս աշխատանքի սովոր մարդ եմ, ինֆարկտ կստանամ, կմեռնեմ, ես ի՞նչ դեպուտատ, ինձ մի գործ տվեք, մի գործկոմ, մի նախարարություն

տվեք, գործ անեմ:

- Վլադիմի՛ր Միհրանիչ, Ձեզ մի տարի առաջ առաջարկում էի վարչապետ լինել, չհամաձայնվեցիք:

Այնուամենայնիվ, գնացի խոսեցի, եւ նա սկսեց զբաղվել փախստականների խնդրով: Հիմա մտածում եմ, որ կոպիտ սխալ եմ թույլ տվել: Թեեւ նրանց համար խոսեցի, որովհետեւ ես իրոք լավ գիտեմ այդ կատեգորիայի մարդկանց. նա է, Ալեքսան Մատվեյիչը... Բայց ես հիմա շատ վատ եմ վերաբերվում նրանց, որովհետեւ նրանք պահապաններն են այսօրվա վիճակի: Այնքան Ռոբերտին ու Սերժին չեմ մեղադրում, որքան այդ մարդկանց, քանի որ նրանց արդարացնողն են, մեծի իրավունքով ասում են՝ սա ճիշտ է: Եվ ես հասկանում եմ, թե նրանք ինչու են այդ բանն անում: Բոլոր դեպքերում, նրանք այնպիսի մարդիկ են, որ իրոք կարող են ինֆարկտ ստանալ, եթե գործ չանեն: «Ղարաբաղ» կոմիտեն մեղավոր չէր, որ իշխանության ձեւավորումը չգնաց այդ ճանապարհով: Դա կոմկուսի ընտրությունն էր: Իսկ իշխանության ձեւավորման հետագա փուլերում այնպես արվեց, որ անցումը մեղմ լինի, առճակատումներ չլինեն: Օրինակ՝ Գագիկ Հարությունյանի ընտրությունը խորհրդարանի փոխնախագահի պաշտոնում կարող էր շարժումը ամբողջությամբ այնպես ձեւավորել, որ հակառակորդին ոչ մի տեղ չտրվեր, բայց որոշվեց առճակատման այդ աստիճանին չհասցնել:

Բ. - Անցնենք անվտանգության խնդրին:

Ա.Մ. - Ես գնացի դպրոց, չմնացի: Եկա, երբ պատերազմը սկսվում էր: Գետաշենի դեպքից քսան օր շուտ եմ եկել: Շաբաթը մեկ Լեւոնը, Վազգենը լինում էին դպրոցում, զրուցում էինք, ասում էին՝ արի, վիճակը բարդանում է: Չէի գնում: Բայց մի օր Վազգեն Սարգսյանը ավտոմատով եկավ, ասաց. «Գիտե՞ս, որ պատերազմ է սկսվում, ի՞նչ է, մենք գնանք կռվելու, դու այստեղ դա՞ս տաս»: Ասացի. «Ճիշտ եք ասում»: Դարձա Ղարաբաղի օպերատիվ շտաբի ղեկավար, ազգային անվտանգության հարցերով խորհրդական, ներքին գործերի նախարար:

Բ. - Մի հսկայական համակարգ կապված է անվտանգության հետ՝ դպրոցը, ամբողջ երկիրը՝ տնտեսությամբ, բոլոր մյուս ոլորտներով, եւ եթե մի տեղը քանդվում է, ամբողջ երկիրն է փլուզվում: Անվտանգությունը խորհրդային ՊԱԿ-ը չէ, որ հետեւում է, թե ով ինչ է խոսում, որ գրեն, ներկայացնեն... Կոնցեպտուալ խնդիր է, որը պետք է նորմալ մշակել:

Ա.Մ. - Հետախուզությունը, հակահետախուզությունը ազգային անվտանգության համակարգի հետ որեւէ կապ չունեն: Անվտանգության համակարգը նշանակում է պետության ուղեղը, ուրիշ ոչ մի բան:

Բ. - Ձեր մոտեցումն այն էր, որ ամբողջ ինֆորմացիան պետք է կենտրոնացվի մի տեղում եւ հսկվի: Այդ համակարգը ինչպե՞ս էր աշխատում, ո՞նց էիք ծրագրել, եւ ի՞նչ վիճակ ստեղծվեց: Ինչու՞ չկարողացանք համեմատաբար կատարյալ անվտանգության համակարգ ստեղծել:

Ա.Մ. - Ասացի, որ անվտանգության համակարգը պետության ուղեղն է, եւ երբ պատերազմի մեջ ես, ուղեղը սկսում է աշխատել այդ ուղղությամբ: Բնական է, որ ղարաբաղյան պատերազմի ժամանակ ազգային անվտանգության ողջ ճիգերի իննսուն տոկոսն ուղղված էր պատերազմի բոլոր կոմպոնենտների ապահովմանը՝ սկսած արտաքին քաղաքական, տնտեսական, ռազմական ոլորտներից մինչեւ քարոզչություն, տեղեկատվական եւ հոգեբանական պատերազմ: Այս բոլորը կապվում են իրար հետ, ամբողջացվում, իրարից անկախ ոչինչ չի կատարվում: Շատ քչերը գիտեն, որ Շուշիի ազատագրումից առաջ մենք Իրանի Իսլամական Հանրապետության միջնորդական առաքելությանը խնդրեցինք անհապաղ թողնել տարածաշրջանը: Նրանք միջնորդություն էին իրականացնում մեր եւ ադրբեջանցիների միջեւ: Մենք ասացինք, որ մեր ունեցած տվյալներով՝ առաջիկա ամիսներին տարածաշրջանում իրավիճակը կտրուկ սրվելու է, եւ միջնորդը հայտնվելու է երկիմաստ վիճակում: Նրանք շնորհակալություն հայտնեցին եւ հեռացան: Շուշիի գործողությունը անընդհատ հետաձգվում էր տարբեր պատճառներով՝ կամ եղանակի, կամ ինչ-որ բանի պակասության: Երկու ամիս անց իրանցիները նորից հայտնվեցին մեզ մոտ, թե՝ մենք ուզում ենք վերադառնալ: Ասացինք, որ ոչինչ չի փոխվել: Չենք ասում՝ Շուշի, Ղարաբաղ... պարզապես ասում ենք, որ իրավիճակը սրվել է: Ասացին. «Մենք գնահատեցինք եւ որոշեցինք վերադառնալ»: Մտածեցինք. «Մենք երեկվա լակոտն ենք, իսկ նրանք այսքան տարվա պետականություն ունեն, եթե ասում են, պիտի վերադառնան»: Ասացինք. «Այո, բայց մեր բոլոր գնահատականները մնում են ուժի մեջ»: Նրանք առաջարկում էին հանդիպել Իրանում: Ստացվեց այնպես, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն այնտեղ էր, եւ ռազմական գործողություններն էին գնում: Բայց եթե պլանավորողը մենք լինեինք, դա բացառվելու էր, որովհետեւ մեր ռազմական եւ քաղաքական հարցերը միմյանց հետ կապակցված էին, որեւէ ռազմական դրույթ չէր կարող հակասել դիվանագիտական դրույթին: Անվտանգության համակարգը առաջին հերթին որոշումներ ընդունելու համակարգ եւ մշակույթ է: Հիմա մեր պետությունը որոշումներն ընդունում է այսպես. գալիս ասում են՝ ինձ այս բանը պետք է, հարցնում են՝ քանիսո՞վ է պետք, եւ հարցը լուծվում է: Ասենք թե «քանիսը» չկա, այդ դեպքում՝ ինչու՞ է պետք: Ենթադրենք՝ ինչ-որ

մեկը գալիս է Հայաստան, եւ լավ կլինի, որ նրան վարչապետը ընդունի: Ես էլ վարչապետի օգնականն եմ, մտածում եմ՝ ընկերս մի բան է խնդրում, ո՞նց չլինի: Այս մակարդակով են ընդունվում որոշումներ: Թե ի՞նչ է, ինչի՞ համար է, նման բաներ գոյություն չունեն: Որոշումների ընդունումը այդ համակարգի առկայության ժամանակ այսպես էր. որեւէ մեկը չէր կարող գնալ արտասահման, եթե նախօրոք իր բնագավառում չստանար ամբողջական ծրագիր եւ ներկայանար, ենթադրենք, ասելով՝ գյուղատնտեսության նախարարությունը ինձ գործուղել է այս հարցերը պարզելու եւ դրանց լուծումները ստանալու: Մեզնից հանձնարարություն էր ստանում՝ ում հետ հանդիպել, ինչ հարցեր պարզել: Գործուղումից հետո նա զեկուցում էր իր գործերի մասին: Եվ եթե պարապուրդ էր տվել, նա ոչ միայն կարող էր այլեւս արտասահման չգնալ, այլեւ ազատվել պաշտոնից եւ վերադարձնել հատկացված գումարը: Հանձնարարականները կատարվում էին, ամբողջ ինֆորմացիան հավաքվում էր մի տեղում: Ազգային անվտանգության համակարգում կա միջգերատեսչական հանձնախումբ, օրինակ՝ տնտեսության ոլորտում: Այն ժամանակ ամբողջական էր, հավաքվում էր ինֆորմացիա՝ կապված պատերազմի, արտաքին կապերի հետ: Իսկ տնտեսական հարցերին դեռ չէինք հասել, քանի որ նոր էր ստեղծվում: Միջգերատեսչական հանձնախումբ էր աշխատում՝ կապված կոմունիկացիաների հետ: Մեր տանկերի վառելիքը տրամադրում էր Ադրբեջանը: Հանձնախումբը պարտավոր էր ապահովել կոմունիկացիոն աշխատանքը: Ո՞նց է աշխատում՝ ոչ մեկին չի հետաքրքրում: Ցանկացած հարցի լուծմանը հնարավոր է հասնել նման համախմբված աշխատանքի շնորհիվ: Միջգերատեսչական հանձնախումբը աշխատում էր, դրանից հետո՝ ազգային անվտանգության խորհրդականի ապարատը, նա էլ ներկայացնում էր Անվտանգության խորհրդին, Նախարարների խորհրդին եւ այլն: Հիմա այդպիսի համակարգ Հայաստանում գոյություն չունի, թեեւ ԽՍՀՄ-ում Հայաստանն առաջինն էր, որ ստեղծեց այն: Ռուսները որ գալիս էին այստեղ, նախանձից մեռնում էին: Ինձ Բուրբուլիսը բողոքում էր. «Այս ինչ հրաշալի պայմաններում եք աշխատում: Ասենք՝ մեզ մոտ տանկը փողոցում կանգնած է, այդ տանկի վերաբերյալ կարող է մի օրվա ընթացքում երեք տարբեր փաստաթուղթ ստորագրվել...»: Ինչի՞ շնորհիվ Հայաստանում այն ստեղծվեց: Մի քանի հրաշալի զուգադիպություններ եղան: Սիմոնյանց ազգանունով մարդ կար, որն աշխատել էր Խորհրդային Միության ՎՊԿ-ի կարեւորագույն ոլորտներում, հատուկ ծառայությունների հետ եւ արտասահմանում խորհրդային օբյեկտներ էր կառուցում: Նա հանրագիտարանային գիտելիքների տեր մարդ էր: Մենք նաեւ ՊԱԿ-ից կանչեցինք Վահան Ավագյանին, որը դիսերտա-

ցիա էր պաշտպանել պետական անվտանգության գծով՝ «Ինֆորմացիոն, անալիտիկ համակարգերի գործունեությունը»: Երրորդ զուգադիպությունը. երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, ՊԱԿ-ի մի շարք աշխատողներ հայտնվեցին օդում, այդ թվում՝ Խորհրդային Միության ՊԱԿ-ի անալիտիկ վարչության պետը՝ Ռուբանովը: Մենք նրան հրավիրեցինք Հայաստան եւ խնդրեցինք խորհուրդներ տալ: Դրանից հետո տարբեր հարցերով անընդհատ դիմում էինք նրան: Մեր փորձը հարստացրինք, ներգրավեցինք նաեւ հայ մասնագետների: Այդ ոլորտում աշխատանքները հսկայական տեմպերով զարգանում էին: Օրինակ՝ քաղաքակիրթ աշխարհը չի հասկանում, թե ԱՄՆ-ը ինչ է անում, այնքան որ կատարելագործվել է նրա ազգային անվտանգության համակարգը: Մեր՝ հայության պոտենցիալը հսկայական է, միայն մի բան է բացակայում: Եթե ես պետության ղեկավար եմ, ուզում եմ որոշ խնդիրներ լուծել, նույնիսկ եթե այնքան էլ գրագետ չեմ: Յուրաքանչյուրս էլ ինչ-որ հարցում անգրագետ ենք: Ռոբերտ Քոչարյանը նոր էր ընտրվել ՀՀ նախագահի պաշտոնում, շնորհավորեցի եւ ասացի. «Քեզ ո՞վ է ասում, որ այսքան էշություններ ասես»: «Ոնց թե»,- ասաց: Ասացի. «Ամեն մեկս օրական հինգից տասը էշություն ասում ենք այն դեպքում, երբ պաշտոնյա չենք, իսկ երբ պաշտոնյա ենք դառնում՝ հիսունից հարյուր, քանի որ ինչքան որոշումները շատ են, այնքան էշությունը շատ է: Երբ տնտեսությունից ես խոսում, կողքիդ պետք է լինի այնպիսի մարդ, որը տնտեսությունից ավելի շատ է հասկանում եւ թույլ չի տա սխալներ անել: Ես ազգային անվտանգությունում եմ աշխատել, եւ իմ յուրաքանչյուր աշխատակիցը իր բնագավառում ինձնից տասն անգամ խելոք էր: Իմ տաղանդը այն էր, որ այդ բոլոր մարդկանց միասնական աշխատանքը կազմակերպում էի ու ամբողջական արդյունքը տալիս որպես պետական քաղաքականություն: Ես տեսնում եմ երկու մարդու, որոնք կհամարձակվեն քեզ ասել՝ աչքիդ վերեւն ունք կա. Սերժ Սարգսյանն ու Վազգեն Սարգսյանն են: Մյուսները քո ներկայությամբ կվախենան խոսել, ուր մնաց՝ ինչ-որ միտք արտահայտեն: Իսկ դա անընդունելի է, նշանակում է դու անընդհատ կոպիտ սխալներ ես անելու: Որպեսզի այդ սխալները չլինեն, պետք է ստեղծես համակարգ, քննարկումներ լինեն: Չեմ ասում, թե դու ախմախություն դուրս տաս, եւ մի լակոտ էլ քեզ բռնի դրա վրա: Բայց այդ պայմանական լակոտները, որոնք իրենց բնագավառում տաղանդավոր մարդիկ են, քննարկումներ կանեն: Պետք է ամբողջացնել երկրի պոտենցիալը: Հայաստանը ֆանտաստիկ համակարգ է: Աշխարհում այդպիսի երկու համակարգ գոյություն ունի՝ հայկականը եւ հրեականը: Հրեականը շատ է զարգացել, բայց նրանք մի մեծ խնդիր ունեն. բոլոր տեղերում նրանց ընկալում են որպես թշնամի: Հայերը

բոլոր տեղերում այդ երկրի լոյալ քաղաքացիներն են: Այսինքն՝ հոյակապ վիճակում ենք գտնվում, մնում է իրականացնել կենտրոնացում՝ առանց այդ սկզբունքը խախտելու: Ոչ մեկից չի պահանջվում իր պետության հանդեպ լոյալությունը կորցնել, առաջին տեղում այդ երկիրն է, բայց սա էլ իր հայրենիքն է, եւ հնարավորին չափ կգործի այստեղ»:

Համակարգը չստեղծվեց, նա հրաժարվեց այդ մտքից: Մինչ այդ օրուգիշեր հարցնում էր, թե երբ ենք այդ համակարգը ստեղծելու, բայց երբ հայտնվեց այնտեղ, պարզ դարձավ, որ բավականին անձնական հարցեր կան լուծելու: Իսկ եթե գնում ես այդ պաշտոնին անձնական հարցեր լուծելու համար, պարզ է, որ համակարգը դրանց կխանգարի:

Ազգային անվտանգության քարոզչական, ինֆորմացիոն ոլորտում լրատվամիջոցների ոչ մի հարց անպատասխան չէր մնում: Ինֆորմացիան տրվում էր լրիվ, որպեսզի Հայաստանի քարոզչական համակարգը ներսում եւ դրսում կարողանա խնդիրներն ապահովել: Համակարգը ստեղծելու որեւէ խնդիր չկա, պարզապես ցանկություն է պետք: Հիմա թերթերը նույնիսկ անձնական խնդիրներում չգիտեն, թե ինչ գրեն: «Հայոց աշխարհ» թերթը մի շաբաթ Սերժի դեմ հոդվածներ էր գրում: Նրանց Սերժն է հովանավորում, բայց այնքան անգրագետ են, գլխի չէին ընկնում, որ Սերժի դեմ է ուղղված: Իսկ Սերժն էլ չունի այնպիսի ստորաբաժանում, որ ամեն ինչին հետեւի: Էլ չեմ խոսում պետական մոտեցումների մասին:

Բ. - Անվտանգության հարցերի հետ կապված՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ խնդիրներ ունենու՞մ էիք, եւ ի՞նչ հարցերի շուրջ:

Ա.Մ. - Հաճախակի, օրվա ընթացքում ոնց էլ լիներ, խնդիրներ առաջանում էին: Նախագահը բավական բարդ պաշտոն է հատկապես այսօրվա աշխարհում, որն ունի իր պատկերացումները պետության, նախագահի վերաբերյալ: Եվ նախագահը պետք է համապատասխանի այդ պատկերացումներին: Դա է պատճառը, որ նախագահը կարող է ունենալ զարգացումների վերաբերյալ այլ կարծիք, այլ նպատակներ, բայց խոսի մեկ այլ նպատակի մասին, որովհետեւ նա սպասարկում է ոչ միայն իր երկրին, ժողովրդին, այլ իր ժողովրդի անունից իմպուլսներ է ուղարկում աշխարհին: Եվ եթե նա չի համապատասխանում աշխարհի հզորագույնների սկզբունքներին, մոտեցումներին, ապա իր երկիրը կանգնեցնում է խայտառակ դրութ- յան առաջ: Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ «Ղարաբաղ» կոմիտեի մյուս տասն անդամները կրում էին պատասխանատվություն, նրանց գլխին դրված էր նույն պսակը, ինչ առաջյալների, եւ թույլատրվում էր համա- պատասխան վարքագիծ: Հանցագործությունները այս հանգամանքի հետ էին կապված: Օրինակ՝ ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը իրեն պահել է

Խոսքը Մոսկվայի մասին է: Նախարարների ցուցակում ընդգրկված էին այսպիսի անձիք. օրինակ՝ ազգային անվտանգությունում Մարիուս Յուզբաշյանն էր, արտաքին գործերում, արդարադատությունում՝ Հայկ Քոթանջյանն ու Լյուդմիլա Հարությունյանը: Լյուդմիլա Հարությունյանը այդ ժամանակ պատգամավոր էր եւ շատ մտերիմ հարաբերություններ ուներ ոչ միայն Ռաիսա Մաքսիմովնայի, այլեւ ինչ-որ չափով Գորբաչովի հետ: Ներգրավված էր նաեւ Մոսկվայից իրավաբան Յուրի Բարսեղովը: Առաջին աշխատանքային կետը համարվում էր Մոսկվան այն առումով, որ Մոսկվայի ազդեցությունը հսկայական էր: Այդ պահին դեռեւս գոյություն ուներ Խորհրդային Միությունը: Կառավարությունը, իհարկե, չսահմանափակվելով միայն Խորհրդային Միության սահմաններով, առաջին հերթին պետք է կարողանար Մոսկվայի հետ կարգավորել այն խնդիրները, որոնք գոյություն ունեին Ղարաբաղում եւ Ղարաբաղի շուրջ: Կառավարության համար արդյունավետ գործունեություն ծավալելը պատերազմող եւ անդադար թեժացող պատերազմով Ստեփանակերտում դժվար էր: Ենթադրվում էր, որ նրա զգալի մասը, եթե ոչ ամբողջը, կենտրոնանալու էր Ղարաբաղից դուրս, առաջին հերթին՝ Մոսկվայում՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակը, բայց նաեւ այլ կետերում՝ թե՛ Խորհրդային Միությունում, թե՛ նրանից դուրս: Կառավարության աշխատանքները՝ շտաբերի կողմից համաձայնեցված, կատարվում էին: Մի շարք անձիք արդեն որոշակի գործունեություն էին ծավալել՝ նախապես ներգրավված լինելով շտաբերի աշխատանքներում, որովհետեւ շտաբերն էին ձեւավորում ապագա կառավարության ուրվագծերը: Շատ ցավալի մի իրադարձություն տեղի ունեցավ, որն ի չիք դարձրեց կատարված աշխատանքները: Խոսքը Ազգային ժողովի ընտրությունների մասին է: Կոպիտ խախտվեց պայմանավորվածությունը Հայ հեղափոխական դաշնակցության կողմից: Ըստ էության, Ղարաբաղում ընտրությունները խիստ դժվարացված էին այդ ժամանակ: Ղարաբաղի շտաբում բոլոր ֆունկցիաները բաժանված էին շտաբի անդամների միջեւ: Ընտրություններով մասնավորապես զբաղված էին անձիք, որոնք կապված էին ՀՅԴ-ի հետ: Այդ ժամանակ այսպիսի խնդիր, թե՝ դու էս ես, էն ես... չկար, բոլորն էլ ապահովում էին նույն խնդիրը: Դրա համար որեւէ կասկած չկար, շտաբն էլ շատ միասնական էր աշխատում: Պատգամավորների ցուցակագրումը իրականացվել էր այնպես, որ Դաշնակցության ներկայացուցիչները մեծամասնություն էին կազմել: Այսինքն՝ խորամանկություն էր կատարվել: Այդ պահին պայմանավորվածություն կար, որ ամեն ինչ կոնցեսուսային է, ավելին՝

համոզմունք կար, որ Ղարաբաղի ղեկավարը պետք է անպայման լինի ՀՅԴ ներկայացուցիչը, եւ այդ դիրքորոշմանը հավանություն էր տվել Հայաստանի անվտանգության խորհուրդը՝ ծանոթանալով շտաբերի առաջարկությանը: Քանի որ միասնական աշխատանք էր, Ղարաբաղի ճկունությունը ավելի մեծ դարձնելու համար ճիշտ էր այն, որ ղեկավարը հակառակ ուղղության քաղաքական գործիչ լինի, որպեսզի որեւէ գործողություն, որ Ղարաբաղը կատարում է, եւ դա դժգոհություն է առաջացնում այս կամ այն երկրում, չանդրադառնա Հայաստանի Հանրապետության վրա:

Բ. - Տրամաբանորեն ճիշտ է, բայց էությամբ՝ կասկածելի:

Ա.Մ. - Բացարձակ ճիշտ էր եւ՛ էությամբ, եւ՛ տրամաբանությամբ: Կրկնում եմ՝ սա շտաբերի որոշումն էր՝ հավանության արժանացած Անվտանգության խորհրդի կողմից: Հայաստանի անվտանգությունը կարող էր ասել՝ ո՛չ, ոչ մի դեպքում, պետք է լինի մեր մարդը:

Բ. - Բայց նրանց համագործակցությունը, հետագա կա՞պը, չէ՞ որ նրանք կարող են հակադրվել:

Ա.Մ. - Դաշնակցությունից ենթադրվում էին երկու անձնավորություն՝ Արթուր Մկրտչյանը եւ Շահեն Մեղրյանը: Ամեն մեկն ուներ իր բացերն ու առավելությունները: Արթուր Մկրտչյանը՝ ազնվագույն մարդ էր, իսկական մտավորական: Բայց մյուս կողմից էլ այն առնականությունը, ամրությունը, որ ուներ Շահեն Մեղրյանը, չեմ կարող ասել Արթուրի վերաբերյալ: Շահենի դրական կողմերն էին՝ լավ կազմակերպիչ, իսկական, առնական տղամարդ: Բացի այդ, շահումյանցի լինելը համարվում էր որպես հնարավոր դրական գործոն, որպեսզի ամբողջական դիտվի Արցախը: Այդ երկու թեկնածուների մեջ պետք է ընտրություն կատարվեր: Եվ Ազգային ժողովի ընտրությունը ավարտվելուց հետո, շատ քվեակետերում, որտեղ հատկապես ռազմական դրություն էր, մի թեկնածուն էր առաջադրվել: Եվ այնտեղ համատարած անցնում էին այն թեկնածուները, որ պլանավորել էին շտաբերը: Արդյունքում թվական առավելությունը Դաշնակցության կողմն էր: Եվ երբ շտաբերը հավաքվեցին, որպեսզի նորից գնահատեն, թե այդ երկուսից ով պետք է լինի Ազգային ժողովի նախագահը, մեկ էլ խնդիր ծագեց՝ դե, իրենք էլ կընտրեն: Այսինքն՝ հասկանալի դարձավ, որ մեկը ուզում է ոչ համաձայնեցված գործել, եւ դա Դաշնակցությունն էր: Արթուրը ընտրվեց՝ խախտելով պայմանավորվածությունը: Կարող էր հենց Արթուրը ընտրվել, բայց Դաշնակցության ցանկությունն այն էր, որ ինքը ղեկավարի Արցախը: Դա առաջին լուրջ պառակտման քայլը եղավ, որը մինչեւ այսօր էլ փակ է այստեղի եւ Արցախի հասարակության համար, որովհետեւ, ելնելով շահերից, այն է՝

պատերազմական վիճակ եւ այլն, այդ ամենը չի հրապարակվել: Դրանից հետո Վահան Հովհաննիսյանի հետ ինչ խոսում էի, ուշադիր նայում էի երեսին, ասում էր. «Էս անգամ չենք քցելու»: Բացահայտ կոպիտ բան էր տեղի ունեցել: Դրան նախորդող մի դեպք էլ էր եղել՝ զենքի մատակարարման հետ կապված: 1991 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներն էին, այդ ժամանակ Արցախի համար հինգ հարյուր ավտոմատը նույնն էին, ինչ մի տարի հետո գուցե հինգ հարյուր ինքնաթիռը: Եվ ես Մարուխյանի հետ պայմանավորվածություն ձեռք բերեցի, խնդրեցի նրան աջակցել, քանի որ մենք, իշխանություն լինելով հանդերձ, չէինք կարողանում անհրաժեշտ չափով զենք հայթայթել Արցախի պաշտպանության համար: Մարուխյանը խոստացավ օգնել: Դաշնակցական գործիչները, որոնք կապված էին զենքի մատակարարման հետ, ինձնից՝ որպես ներքին գործերի նախարարից, ստանում էին նույն փաստաթուղթը, ինչ որ մյուսներն էին ստանում: Դրա վրա գրված էր բառացիորեն հետեւյալը. «Սույն փաստաթուղթը ներկայացնողը կատարում է հույժ կարեւոր պետական առաջադրանք: Հանձնարարվում է բոլոր պետական, իրավական եւ այլ մարմիններին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել նրա առաքելությունը իրականացնելիս»: Այսինքն՝ նրանք ստուգման ենթակա չէին, գործում էին՝ ներգրավելով բոլոր ուժերը, որպեսզի գործը հասնի նպատակին: Ես, այդ թուղթը Դաշնակցությանը տալով, զգուշացրել էի, որ ես հասկանում եմ, որ այս փաստաթղթից օգտվելով՝ կարելի է կատարել այնպիսի քայլեր, որոնք պետության հետ որեւէ առնչություն չունեն, բայց ես հիմա ի զորու չեմ վերահսկողություն իրականացնել, իսկ գործի շահը պահանջում է, որ ես վստահեմ եւ փաստաթուղթը տամ: Այդ հինգ հարյուր ավտոմատը, որ հասավ Արցախ, բաժանվեց ոչ թե Արցախի շտաբի կողմից, այլ Դաշնակցության կողմից, որպես կուսակցական պատկանելություն:

Բ. - Կամ զենքը հանձնում էին, ստորագրություն պահանջում, որ նա Դաշնակցության անդամ է:

Ա.Մ. - Դա արդեն եղել էր: Երկրորդ պահը եղավ այդ ցավալի իրադարձությունը՝ կապված Արթուրի հետ, այն հայտնի դեպքը, որ Տեր-Պետրոսյանը չէր ընդունել, երբ Արթուրը ժամանել էր այստեղ: Ես այդ օրը Արթուրին հանդիպեցի, ասացի, որ իր հետ դա որեւէ առնչություն չունի, այս դեմարշները իր հետ կապ չունեն, դա Դաշնակցության ղեկավարության դեմ է: Հետո դեմարշներ կատարում էր Արթուրը Դաշնակցության ղեկավարության համար: Այսինքն՝ Արթուրը իրեն դրսեւորեց առաջին հերթին որպես Արցախի նախագահ, եւ երկրորդ հերթին՝ ՀՅԴ ներկայացուցիչ: Այս իմաստով՝ Արթուրը իրեն անթերի պահեց:

Բ. - Ստեղծված իրավիճակում դեմարշն էլ ճիշտ ձեւ չէր:

Ա.Մ. - Ես հասկանում եմ: Մեծ պրոբլեմ էր առաջացել: Դրանից հետո շտաբերը կազմաքանդվեցին, աշխատանքի համակարգը լրիվ ուրիշ դարձավ: Այսինքն՝ հսկայական վնաս հասցվեց գործին: Հետագա ամբողջ գործունեության տրամաբանությունը, երբ Արցախի ռազմական եւ քաղաքական համակարգերը տարանջատված էին գործում, դրա հետեւանքն էր:

Բ. - Ես հիշում եմ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը Ազգային ժողովում ասաց. «Հայ հեղափոխական դաշնակցությունն իմ կյանքի թշնամին է, ես պետք է հետեւողական լինեմ այդ խնդրում»:

Ա.Մ. - Ես չեմ կարող ասել, թե երբ եւ ինչ է ասել Լեւոն Տեր-Պետրոսյանը, այդ պահը չեմ հիշում, բայց հակադաշնակցական ելույթներ նա ունեցել է: Ես ձեզ ցույց եմ տալիս աղբյուրը:

Բ. - Թե ինչ քաղաքականություն էին վարում, գուցե սխալ, դա՝ մի կողմ: Բոլոր դեպքերում, ՀՅԴ-ն իբրեւ համահայկական կազմակերպություն դիտարկենք: Այս հանգամանքը պետք էր օգտագործել, ոչ թե մեկուսացնել, հալածել:

Ա.Մ. - Այստեղ կարելի է խոսել ինչ-որ չափի, ձեւի եւ այլ բաների մասին, դրանք քննարկելու հարցեր են: Բայց պահվածքը... այս քսան տարվա մեր պատմության ընթացքում ես Դաշնակցության կողմից տեսել եմ դա: Ռոբերտ Քոչարյանի իշխանության բոլոր բացերը ես ամենամբ Քոչարյանին վերագրում եմ էապես ավելի քիչ մասով, քան Դաշնակցությանը, որովհետեւ Դաշնակցության պարագլուխները դուրս էին եկել բանտից միմիայն Հայաստանի պետականության եւ Հայաստանի ազգային կարեւորագույն խնդիրների շուրջ խորքային պայմանավորվածության հասնելուց հետո: Բանտից դուրս գալուց անմիջապես հետո նրանք հանդիպել են Քոչարյանին, խնդրել բոլոր պայմանավորվածությունները չեղյալ համարել, փոխարենը խնդրել են մի քանի պորտֆելներ: Իսկ ամեն մարդու համար հաճելի է վերադասի դիրքերից խոսել, այլ ոչ թե պետական բալանսավորված համակարգի: Այսինքն՝ Դաշնակցությունը ոչնչացրեց հնարավոր բալանսավորված պետական համակարգը արդեն Քոչարյանի օրոք:

Բ. - Ես նկատի ունեմ՝ դարձնել համահայկական, որը նպատակային գործի, ունենա իր լուրջ դերակատարումը, որովհետեւ դա կառույց է, որն ամբողջ աշխարհում ունի իր թեւերը:

Ա.Մ. - Ամբողջ աշխարհում գործողը կարող է եւ չլինի հայկական: Մենք խնդիրը որել էինք. Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Վազգեն Սարգսյանը: Դաշնակցության վերաբերյալ պայմանավորվածությունները դեռ Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության օրոք էին: Այդ երեքի հետ բանակցությունները վարել եմ ես: Դաշնակցության

պարագլուխների հետ, որոնք բանտում էին, նույնպես ես եմ վարել բանակցությունները: Նրանց վստահված անձիք համարյա ամեն օր լինում էին մեր տանը, խոսում էինք, պայմանավորվում՝ ուրվագծելով մի բան. մենք ուզում էինք ստանալ հայաստանակենտրոն եւ հայակենտրոն Դաշնակցություն: Մենք այդ խնդիրը չկարողացանք լուծել, որովհետեւ Դաշնակցության պարագլուխները այլ քաղաքականություն վարեցին՝ մեծագույն վնաս հասցնելով ինչպես Հայաստանի պետականությանը, հայերի ազգային շահերին, այնպես էլ ՀՅԴ կուսակցությանը: Ես այս հարցերում բացարձակ օբյեկտիվ եմ: Օրինակ՝ իմ դեմ հարձակումը, մահափորձը կազմակերպել է Քոչարյանը, բայց եթե պետք է Քոչարյանի գործունեությունը հիմա գնահատել, ապա կասեմ, որ առաջին պատասխանատուն նրա կատարած ամեն մի սխալի, հանցանքի ես համարում եմ ոչ այնքան նրան, որքան Դաշնակցությանը: Որովհետեւ, եթե քաղաքական բալանսավորված համակարգ չես ստեղծում, ցանկացած մարդ կարող է դառնալ սանձարձակ:

Ես հիմա չեմ կարող կոնկրետ հիշել՝ ով ինչ էր անում: Օրինակ՝ Հայկը շատ մեծ դերակատարում է ունեցել հանրաքվեի հետ կապված, նա փաստաթղթերի պատրաստման, միջազգային ատյաններում հիմնավորման հարցերում բավական մասնագիտացած անձնավորություն էր, եւ պետականաշինության, քաղաքական քայլերի ճանապարհին մի շարք ուղղություններում բավական աշխատանք կատարեց:

Բ. - Իսկ Բարսեղո՞վը:

Ա.Մ. - Բարսեղովը երկար ժամանակ պատրաստում էր Արցախի համար միջազգային իրավունքի տեսակետից առավել արդյունավետ հարցադրումները: Միշտ կար պրոբլեմ՝ հենվել պահանջատիրությա՞ն վրա, թե՞ ինքնորոշման: Ըստ իրավիճակի՝ պետք էր երբեմն մեկը բարձրացնել, երբեմն՝ մյուսը: Ետխորհրդային տարածքերում Միացյալ Նահանգները մի քանի տարի՝ մինչեւ 1992 թվականը, ինքնորոշման սկզբունքն էր առաջադրում, որ պետք է հանրապետությունները անջատվեն: Բայց հենց անջատվեցին, արդեն՝ Ղրիմը չպիտի Ուկրաինայից անջատվի, պետք չի, որ Վրաստանից Աբխազիան դուրս գա... Արդեն գործում էր սահմանների անձեռնմխելիության սկզբունքը: Բարսեղովը շատ մեծ աշխատանք կատարեց, որպեսզի դա մի տրամաբանության մեջ տեղավորվի: Այսինքն՝ կան շատ լավ, բավական ճկուն, ձեւավորված համակարգեր, բայց դրանց շատ ավելի կոնցեպտուալ, խորացված տարբերակները Բարսեղովի խումբը, առաջին հերթին՝ Բարսեղովը, արել է:

Բ. - Մինասբեկյանի հետ կապված. ինձ ասացին, որ ուզում է ինձ հետ հանդիպել քաղկոմի առաջին քարտուղարը: Հանդիպեցինք: Նա

խոսակցությունը սկսեց՝ ասելով, որ ինքը արմատներով շուշեցի է, հակված է դեպի Ղարաբաղը, նրա ազատագրումը: Դուք բոլորդ Մոսկվայի բանտում նստած էիք: Ես հարց բարձրացրի Մայիսի 1-ի ցույցը չարգելելու, որ այն արտոնյալ ցույց լինի: Նա հարցը դրեց կենտկոմում եւ կարողացավ համոզել, որ չճնշեն ցույցը: Ձեր բացակայության ժամանակ դա իր դերը ունեցավ: Աստիճանաբար նա եկավ դեպի շարժում: Ձեր կողմից արդարացվա՞ծ էր նրան վստահել կառավարության խնդիրը:

Ա.Մ. - Այդ հարցերում միշտ պետք է զգույշ լինել: Ինձ համար շատ կարեւոր է, թե մարդը որ պահերին է ազնիվ, անձնազոհ: Բոլորս Ղարաբաղ ենք ուզում, եւ մեզնից ոչինչ չի պահանջում այդ պահին ուզելը: Շատ ավելի դժվար է, երբ բոլորը կամ ահագին ուժ դրան դեմ են, եւ այդ պահին ելույթ ես ունենում: Ես ինչպե՞ս եմ կուսակցությունից հեռացել: Մինասբեկյանը ինձ հրավիրում է գրույցի, ասում, թե կոմկուսը համարում է, որ միտինգները պետք է դադարեցվեն, եւ ինձնից՝ որպես կոմունիստից, պահանջում է վեր կենալ եւ հրապարակել: Ասացի. «Ինչպե՞ս կարող է կոմկուսը այդպիսի բան պահանջել, չէ՞ որ դա անարդար պահանջ է: Ասաց. «Համենայն դեպս, բյուրոն այդպես է գտնում»: Ասացի. «Չի կարող կոմունիստական կուսակցությունը ժողովրդին դեմ գնալ, որովհետեւ նա ծառայում է ժողովրդին: Մեր ժողովուրդը հիմա այսպես է գտնում, եւ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պարտավոր է լինել այդ գաղափարը տանողը: Բյուրոյի որոշումը հակականոնադրական է, եւ ես այդ որոշումը չեմ կատարի»: Ասաց. «Կարող ե՞ք այդ նույնը գրել»: Ասացի՝ խնդրեմ: Ասաց. «Հարեւան սենյակում հավաքված են»: Մտա, մի հիսուն հոգի նստած էին: Նրանք իրենց պատկերացումներն են ասում, թե կոմունիստական կուսակցությունն ինչ է, ես՝ իմ պատկերացումները: Վերջում ասացին. «Դուք հեռացված եք, հանձնեք ձեր կուսակցական տոմսը»: Ասացի. «Այստեղ չկա որեւէ կոմունիստ, որին ես կուսակցական տոմս հանձնեմ: Ես տեսա, որ ես կոմունիստ եմ, իսկ բոլորը՝ հակակոմունիստ: Դուք կոմունիստ չեք, որովհետեւ չեք ցանկանում ծառայել ժողովրդին»: Եվ թողել դուրս եմ եկել: Ես բան չունեմ ասելու, քաղկոմի առաջին քարտուղարը չէր կարող այլ կերպ վարվել: Բայց այդ պահին, եթե սիրտը ցավում էր, կարող էր մի օգնական ուղարկել եւ ասել՝ կանչում են քեզ հեռացման համար: Օրինակի համար եմ ասում, թե չէ ես էլի կգնայի:

Բ. - Նա աստիճանաբար եկավ դրան: Այդ ժամանակ դեռ պատրաստ չէր:

Ա.Մ. - Նա շարժման մեջ մտել է այն պահին, երբ մայիս ամսին նրանք արդեն գիտեին, որ մեզ բաց թողնելու մասին խոսակցություն է

եղել, գիտեին, որ շարժումը չի դադարել: Այդ պահին պետք է արդեն հարաբերություններ դասավորեին: Ես չեմ վատաբանում, պարզապես ուզում եմ իմանան, գնահատեն: Ես ինքս եմ նրա հետ խոսել, առաջարկել: Բայց երբ ես պիտի գնահատեմ որպես մարդ, ես շատ ավելի բարձր գնահատում եմ այն մարդկանց, երբ նրանց մի բանի համար պատժում են, իսկ իրենք ասում են: Ասենք՝ Ժիրոն վեր է կենում, ասում՝ եթե մեկը ազատագրված տարածքները հանձնեց, գլուխը ջարդելու եմ: Դրա համար նրա վրա մատ են թափ տալիս, հետո տանում նստացնում են:

Պատմում է
Սոս Սարգսյանը ***(ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, «Համազգային» թատրոնի գեղարվեստական ղեկավար, Հայաստանի Հանրային խորհրդի անդամ):***
04.04.2006 թ., Երեւան

Ս.Ս. - Ծնվել եմ 1929 թ. Ստեփանավան քաղաքում: Միանգամից ասեմ, որ Ստեփանավանը նախկինում կոչվում էր Ջալալօղլի: Այնտեղ Ղարաբաղից տեղափոխված ժողովուրդն էր ապրում, որը միշտ հիշում էր իր արմատները: Լոռեցիներին երկար ժամանակ չէին ձուլվում, առանձին էին: Բագրատ Ուլուբաբյանը շատ լավ գիտեր՝ նրանք երբ են եկել Խաչեն, Շուլավեր, նաեւ Ջալալօղլի: Հայրս երկար հիվանդացավ: Վերջին խոսքը, որ լսել եմ նրանից, այն էր՝ գիտուն, ուսում առած մարդիկ եք, Ղարաբաղի հարցը ո՞նց պիտի լուծեք: 1966 թվականին էր, մինչեւ հիմա ականջիս մեջ հնչում է: Ուզում եմ ասել, որ Ղարաբաղը ինձ համար սրբություն էր, եւ այդպես էլ կա: Ես հաճախ էի գնում Ղարաբաղ, ընկերներ ունեի այնտեղ: Հիշում եմ՝ մի անգամ Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված մարտիկների հուշարձանի մոտ, չգիտեմ ինչու, մենակ էի, եւ մի պառավ կին այնտեղ մաքրում էր: Լսեցի, որ երգելով ինչ-որ դարդոտ բաներ է ասում: Մոտեցա, բարեւեցի, ասացի.

- Այդ ի՞նչ ես խոսում:

- Է՛, բալա, Ղարաբաղը ձեռքներիցս գնում է, թուրքերը լցվել են...

Այնպիսի մի դարդով ու ցավով ասաց: Կլիներ 1982-83 թիվը: Այսինքն՝ այն ժամանակ ժողովուրդն արդեն լարված էր, տեսնում էր, թե ինչ է կատարվում: Հեյդար Ալիեւ կոչվածը մեծ քաղաքականություն էր վարում... Այնտեղի ինստիտուտում ադրբեջանական բաժին բացվեց: Այսինքն՝ մարդիկ հասկանում էին, որ մեծ գրոհ է սկսվել Ղարաբաղի վրա: Հորս եւ այդ կնոջ դեպքերը մնացել են հիշողությանս մեջ: Երբ շարժումը սկսվեց, ես Մոսկվայում նկարահանումների էի, բայց սիրտս այստեղ էր: Այնտեղ «Պրավդայում» տպագրված այլանդակ հոդվածները Խորեն Աբրահամյանի հետ կարդում էինք ու խելագարվում: Եվ ուզում էի ժամ առաջ գալ Հայաստան, իմ ժողովրդի, հարազատների հետ լինել, այդ շարքերում լինել: Ես այդ շարժման մասնակիցն էի: Երբ նկարահանվում էի «Ձորի Միրոն» ֆիլմում,

Ապարանի գյուղերից մեկում մի տարիքով մարդ ինձ հրացան նվիրեց՝ «Մոսին», ասաց. «Էս հրացանը շատ բան է տեսել, գառ ջան»: Հրացանը բերեցի տուն, պահեցի: Մի Գագիկ կար, դաշնակցական էր, որին մերոնք սպանեցին, հրաշք տղա էր եւ Անդրանիկի նման զինագործ էր: Ասացի. «Գագի՛կ ջան, մի հրացան ունեմ, արի ուղարկենք Ղարաբաղ»: Նայեց, ասաց. «Սրա փողով այնքան են կրակել, լայնացրել են, ես կսարքեմ, կուղարկենք»: Տարավ սարքեց, կարճացրեց, բերդանկա սարքեց: Չեմ ուզում ասել, թե առաջին հրացանը ես եմ ուղարկել Ղարաբաղ, բայց 1989 թ. սկզբին ես հրացանն արդեն ուղարկել էի: Հետո առիթ ունեցա շատ զենք ուղարկելու այնտեղ, եւ շատ մարդիկ կային, որ օգնում էին:

Սումգայիթի դեպքից հետո ֆոնդ ստեղծվեց, որի ղեկավար նշանակեցին ինձ, Զորիկին եւ Սարգիս Մուրադյանին: Երկու միլիոն ռուբլի Վեհափառ Վազգեն Առաջինը տվեց, կառավարությունը գումար տվեց: Վեց ու կես միլիոնը բաժանել ենք սումգայիթցիներին ու բաքվեցիներին, որպեսզի տեղափոխենք Ղարաբաղ: Քսանհինգ հազարից ավելի մարդու մենք ուղարկեցինք այնտեղ, ինչքանը մնացին՝ կարեւոր չէ: Ֆոնդում շատ լավ տղաներ էին աշխատում, բավական մեծ խումբ էր: Մի ոտքս Ղարաբաղում էր: Այնտեղ կից ստեղծեցինք կազմակերպություն, որը կօգներ փախստականներին նրանց կենցաղի, կյանքի, լինելիության հարցերում: Վեց ու կես միլիոն դոլարը այդ ժամանակ մեծ գումար էր: Տուն էինք առնում, վերանորոգում էինք, եթե ուզող կար, կով էինք առնում եւ այլն: Կարեւորը՝ ընդհանուր մի զարմանալի նվիրում, ազնվություն կար, ցանկություն կար՝ փրկել Ղարաբաղը: Ինձ համար զարմանալի է, թե դա ինչ ալիք էր մեր ժողովրդի մեջ: Ես մի անգամ գնացի Խնայդրամարկղ, տեսա՝ երկու ուսանող փող են մուծում մեր ֆոնդի հաշվին: Շատ-շատ մարդիկ օգնեցին: Ես հիմա զարմանում եմ՝ այսքան ստոր մարդիկ որտեղ էին թաքնված: Էն ինչ շերտ էր, ինչ մարդիկ էին, ինչ բարոյականություն էր, ինչ հայրենասիրություն էր, ինչ նվիրում էր, անմնացորդ, անշահախնդիր, եւ տե՛ս, թե ովքեր գրավեցին երկիրը: Շատ զարմանալի բան կատար- վեց, ինչ այլակերպություն տեղի ունեցավ: Ապշում եմ: Հիշում եմ այն տղաներին, որոնք կամավոր գնում էին ճակատ: Մի խումբ եկավ ինձ մոտ, ասացին.

- Գնում ենք:

- Ի՞նչ կարող եմ ձեզ ասել, մի բան պիտի աղաչեմ, գերի չընկնեք, մնացածը դուք գիտեք,- ասացի:

Հետո կապեր ստեղծեցինք Ռուսաստանի, Վրաստանի եւ այլ երկրների հետ ու բավական զենք տեղափոխեցինք: Չեմ ուզում շատ խոսել մեր կազմակերպության մասին: Ինչ կարողացել ենք, արել ենք,

ո՞վ չէր անում: Առանձնապես հերոսություն չի եղել:

Բ. - Հերոսություն չէր, բայց յուրաքանչյուրիս այդպիսի մոտեցումը արդյունք էր տալիս, միասնական հերոսությունը շատ ավելի կարեւոր էր:

Ս.Ս. - Բաներ կան, որոնք մարդը բարձրաձայն չի ասում, չի խոսում, բայց նրա էության ընդերքում միշտ կան: 1915 թվականից հետո մնացած ցավի, ողբերգության մասին խորհրդային շրջանում ո՞վ էր խոսում: Բայց չխոսելով հանդերձ՝ արդարության տենչ կար մեջ մեջ, կուտակվել-կուտակվել էր ու պոռթկաց: Շատ կոմունիստներ, պետական, կուսակցական գործիչներ ամեն հարցում մեզ օգնում էին: Մենք ժողովուրդ ենք, որը դարերով արդարություն է փնտրում: Այսօր էլ ենք փնտրում: Հայ մարդուն կարելի է գնել, ենթարկել միայն արդարությամբ: Հայ մարդը միշտ այդ տենչը ունի: Անարդարությունից նա պարզապես հիվանդանում է, կործանվում, խախտվում, խեղվում է ներսում: Այսօր անարդարություն շատ կա, ցավոք: Եվ պատերազմ էր, եւ տոն էր մեզ համար, հրճվանք էր: Ես երկար մնում էի Ղարաբաղում: Ընկերներ ունեի այնտեղ, ասացին. «Գնանք այտեղ, մի լավ քեֆ անենք»: Բոլորը երիտասարդ- ներ էին: Սովետական բանակն այնտեղ էր: Այդ ամենի հետ միասին տղաները հոգու ի՞նչ ուժ դրսեւորեցին, ի՞նչ ճառեր ասացին, ի՞նչ ելույթներ ունեցան, պարեցին, հայրենասիրական երգեր երգեցին: Զարմանալի օր էր: Շատ ջահել երեխեք էին՝ 12 -20 տարեկան:

Բ. - 1991 թ. Դուք նախագահի թեկնածու էիք:

Ս.Ս. - Դա անցած-գնացած բան է, հետաքրքիր չէ: Նախ հետաքրքիր չէ այն իմաստով, որ ես անձամբ չէի ուզում: Դաշնակցությունը, ես միշտ էլ ասել եմ ու կասեմ, ինձ համար կուսակցություն չէ, դա ուխտ է, որովհետեւ ես չեմ կարող չլինել այն կուսակցությունում, որն ուզում է ազատ, անկախ, միացյալ Հայաստան: Մինչեւ կյանքիս վերջը դա իմ երազանքն է: Դաշնակցականները պարզ ասում են՝ սա է մեր ուզածը: Դեմոկրատիա, մարդու իրավունք, զահրումար բաներ... Մենք ազգային խնդիրներ ունենք լուծելու, որոնք կիսատ են, մեր նախնիները շ՛ատ-շատ բեռ են թողել, պարտականություն են թողել մեզ վրա: Իրենք իրենց պարտականությունը կամ չեն կարողացել կատարել, կամ չեն ուզել, չգիտեմ, բայց մեր սերունդի վրա մեծ բեռ կա եւ շարունակում է մնալ մեր վզին: Մենք չենք կարող ապրել այնպես, ինչպես, ասենք, շվեյցարացիները: Մենք խնդիր ունենք լուծելու եւ պետք է լուծենք՝ անկախ ամեն ինչից: Ես հավատում եմ դրան:

Բ. - Այդ խնդիրը լուծելու համար պետք է ներքին հզորություն էլ ունենանք:

Ս.Ս. - Հասկանալի է: Պիտի ունենանք եւ՛ տնտեսություն, եւ՛

քաղաքականություն, եւ՛ մշակույթ, ամենակարեւորը՝ գիտելիք: Դա է ուժը: Մենք միշտ կրկնել ենք ու հպարտացել, որ հայ գյուղացին քարերի վրա հող է սարքում: Ո՞նց էր Նահապետը քթոցով հողը լցնում: Այդպես ենք այս քարքարոտ երկիրը ծաղկեցրել: Բայց հիմա չեմ տեսնում, որ գործունյա ենք, նախաձեռնող, աշխատասեր: Մենք ունենք այդ տաղանդը, բայց գործարար, նախաձեռնող մարդու համար այնքան խոչընդոտներ կան, որ ազգի հանճարն է կորչում, համենայն դեպս, չի գործում ազգի հանճարը: Մենք աշխարհով մեկ ստեղծագործել ենք, արարել, կառուցել: Հիմա մի տեսակ անկում կա, բայց մեր բոլոր թերությունները բացատրելի են: Եթե նայում ենք մեր պատմությանը, տեսնում ենք՝ այս թերությունը բացատրելի է, արդարացում կա: Մենք ինչու՞ չենք կարողանում միասին միեւնույն երգը երգել: Միասին չենք եղել: Չեն թողել, որ միասին լինենք:

Բ. - Ինքդ պիտի նվաճես դա:

Ս.Ս. - Այո, մանավանդ այն ժամանակ: Բայց եթե ինձ հարցնեն՝ ի՞նչ է հայ ժողովուրդը, կասեմ՝ աշխարհով մեկ թեւերը փռած արծիվ է, պետք է մի օր այդ թեւերը անպատճառ թափ տալ: Հզո~ր ժողովուրդ ենք, Ավստրալիայից մինչեւ Լոնդոն մենք ենք, դրանից պետք չէ մեծ ողբերգություն սարքել:

Բ. - Դա պիտի ուժի վերածել:

Ս.Ս. - Այս փոքր երկրում չի էլ կարող այդքան մարդ ապրել, բոլորը մեծ տարածք են ուզում: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ մենք ունեցանք մեծ զորավարներ՝ Իսակովը, Բաղրամյանը, Խուդյակով-Խամփերյանցը, Բաբաջանյանը եւ քանի-քանի գեներալներ, որոնք իրենց տաղանդով ասպարեզ եկան: Մեզ ասպարեզ է պետք, մենք մեծ երկրի, մեծ տարածքի ժողովուրդ ենք: Մեր ժողովրդին խեղդել են այստեղ, այս սարերի մեջ, եւ, միեւնույնն է, պոռթկալու ենք:

Նոր կառավարությունը, կոմունիստներին փոխարինող կառավարությունը փակեց ֆոնդը: Ես գնացի Վեհափառի մոտ, ասացի, որ փողի կարիք կա: Ասաց. «Երկու օր համբերիր»: Պարզ է, որ պիտի խորհրդակցեր: Երկու օր հետո գնացի, ասաց. «Հարմար չգտանք, որ շարունակեք ձեր գործունեությունը»:

Բ. - Բայց կարելի էր պայքարել, համոզել, որ պետք է այն գործի:

Ս.Ս. - ՀՀԾ-ի դեմ պայքար կա՞ր: Նրանք ասում էին՝ մեր դեմ խաղ չկա... Ասում եք, որ խոսեմ իմ թեկնածության մասին: Ինչի՞ համար խոսեմ: Այն ժամանակ խաղ չկար Լեւոնի դեմ: Ես երբեմն մտածում եմ՝ Արտաշես թագավորից մինչեւ Դեմիրճյանը, Սուրեն Հարությունյանը, հայ ժողովուրդը ոչ մի թագավորի այնպես չի սիրել, ինչպես Լեւոն Տեր-Պետրոսյանին: Եվ զարմանում եմ, թե ինչու Լեւոնը չգնահատեց այդ անսահման սերը: Այն ժամանակ էլ պարզ էր, որ Լեւոնը անցնելու էր

առանց խոսքի, խաղ չկար, ոնց ուզում ես, ինչ ուզում ես... Թեկնածությունս դնելը հետաքրքրության համար էր՝ տեսնելու, թե ինչ է դուրս գալիս: Ուզում էինք մտնել այդ գործի մեջ, մասնակից լինել, Ղարաբաղում էլ տեսնեն, որ դեմոկրատական երկիր է, մի թեկնածու չէ: Խաղի պես բան էր: Ես Հրայր Մարուխյանին ասացի, որ հարյուր տարվա կուսակցությունը պիտի քթի ծակ ունենար՝ տեսնելու, որ Սովետը տապալվում է: 1985 թվին արդեն պարզ էր: Եթե 1985 թվականին Դաշնակցությունը, որը վախենում էր վնաս տալ մեզ՝ քաղաքացիներիս, ու ՊԱԿ-ից սարսափում էր, գար եւ այստեղ բջիջներ դներ, ապա կոմունիստները պատրաստ էին իշխանությունը հանձնել Դաշնակցությանը: Բայց Դաշնակցությունը ուշացավ եւ պահը կորցրեց: Այն ժամանակ շրջկոմի քարտուղարները գալիս էին ինձ մոտ, ասում. «Ասա Մարուխյանին, որ այս պաշտոնը տա ինձ»: Ասում էի, Մարուխյանը՝ սպասեք, տեսնենք, վաղը... Այսինքն՝ ինչպես ժամանակին դաշնակցականները իշխանությունը տվեցին բոլշեւիկներին, այնպես էլ սրանք պատրաստ էին վերադարձնել:

Լոռեցի մի տղա, Մանվել էր անունը, շատ լավ տղա էր, եկավ ասաց.

- Ձենքի տեղ եմ արել:

- Գնա բեր, տեսնեմ,- ասացի:

Բերեց, ասացի. «Հա, շատ լավ, դե տեղափոխիր Ղարաբաղ»: Ավտոբուսը Կիրովաբադով էր գնում: Նա ավտոբուսի տակը հարմարություն էր սարքել: Բայց ճանապարհին բռնել էին, Մոսկվայի ՊԱԿ-ի աշխատողներն էին: Մի օր հետո ինձ կանչեցին: Գնացինք ՊԱԿ-ի շենքը, մտանք մի սենյակ, որտեղ հինգ հոգի էին՝ ռուսներ:

- Здравствуйте.
- Здравствуйте.
- Сос Саркисян, ты ему деньги давал?
- Да.
- А! Значит правильно?
- Да, а что?
- Говорит, что вывозите оружие в Карабах.
- Не знаю, я ему дал деньги на свадьбу...

Երկար հարցուփորձից հետո մի հայ չեկիստ մտավ ներս: Գնդապետ էր, մոտ հինգ րոպե լսեց, ասաց. «Я запрещаю вам с нашим народным артистом так разговаривать»: Ինձ ասաց. «Վեր կացեք, գնացեք, սրանք ովքե՞ր են, ի՞նչ իրավունք ունեն, որ Ձեզ քննում են»: Այսինքն՝ նույնիսկ ՊԱԿ-ի տղաները գիտեին, թե ինչն ինչից է, եւ ժողովրդի հետ էին: Այնպես որ, կարող էր ուրիշ կերպ լինել:

Պատմում է Նորայր Դանիելյանը ***(Մարտակերտի շրջանի պաշտպանության գլխավոր հրամանատար, զոհվել է 1993 թ. հոկտեմբերի 18-ին):***

17.10.1993 թ., Դրմբոն

Բ. - Մարտակերտի շրջանի մի մասն ու Շահումյանի շրջանը թշնամու ձեռքին են: Ինչպե՞ս եք ընդունում հրադադարը:

Ն.Դ. - Ինքս Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի պատգամավոր եմ: Մեր շրջանի հարթավայրային գոտին ու Շահումյանի շրջանի հարցերը միշտ էլ օրակարգի խնդիր են եղել: Այժմ մենք գտնվում ենք մեծ փորձությունների նախաշեմին: Բարդ պահ է, երբ շնչելու հնարավորություն է տրված: Ավելի վճռական մարտեր են սպասվում: Ադրբեջանը փորձում է ռազմական անհաջողությունն ու կորուստները լրացնել քաղաքական ու դիվանագիտական խաղերում, կարգավորել բարոյալքված բանակը՝ փորձելով բարձրացնել զինվորների ոգին, որն, ըստ իս, արդեն անհնար է: Չեմ արհամարհում թշնամու ուժը, գիտեմ՝ ինչի են ընդունակ, եւ որն է այդ ուժի սահմանը: Ադրբեջանցի զինվորը հասկացել է, որ անելու ոչինչ չունի, ոչինչ էլ չի շահելու, որ ղարաբաղցին երբեք իր պապենական երկիրը չի զիջելու իրենց: Մենք ստիպված ենք պատերազմական գործողությունները Կուբաթլիի եւ Ֆիզուլու շրջաններ տեղափոխել, որպեսզի այլեւս փորձության չենթարկենք մեր բնակիչներին: Ողջ աշխարհը, այդ թվում եւ Ադրբեջանը, համոզվել են, որ Ղարաբաղը չի նահանջելու: Ղարաբաղցին մինչեւ արյան վերջին կաթիլը կկռվի:

Բ. - Իսկ հրադադարը ի՞նչ ազդեցություն է թողնում զինվորի մարտական ոգու վրա:

Ն.Դ. - Նայած թե ինչքան կտեւի հրադադարը: Եթե այն շատ երկարաձգվի, անշուշտ, բացասական հետեւանքներ կունենա: Իրոք, զինվորը հանգստանալու, ուժերը վերականգնելու, վերքերը ապաքինելու կարիք ունի: Տասնհինգ զինվոր մեր գնդից այս մեկուկես ամսում հասցրին ամուսնանալ:

Բ. - Շրջանում, փաստորեն, գոյություն ունի երկու տիպի իշխանություն՝ ռազմական եւ քաղաքացիական: Ինչպիսի՞ն են հարաբերությունները, եւ ինչպե՞ս եք համագործակցում:

Ն.Դ. - Հարաբերությունները նորմալ են: Ամեն ոք պետք է իր տեղն իմանա եւ իր գործն անի: Հայ աշխատավորը պետք է հաց ստեղծի: Իհարկե, կյանքը ստիպել է, որ հնձվորը թողնի մանգաղն ու զենք վերցնի: Քաղաքացիական իշխանությունների աշխատանքը դեռեւս հեռու է բավարար լինելուց: Մենք էլ ենք ձգտում օգնել: Եթե պետք է լինում, տանկի մարտկոցները հանում ենք, կոմբայնին կցում ու հնձում արտը: Դիրքերից հանում ենք կոմբայնավարին ու դաշտ՝ հունձի ուղարկում: Հացի համար պայքարը եւս ռազմաճակատ է: Հաճախ էլ տրակտորները հանում ենք հերկից ու տանկի համար խրամատներ փորում: Խաղաղ բնակչությունը հիմնականում մեր ազատամարտիկների ընտանիքներն են: Առաջին դիրքերում գտնվող զինվորի համար հիմնականը իր ընտանիքի վիճակն է, նրա հոգսը: Ողջ հանրապետությունում ռազմական եւ տեղական իշխանությունների համագործակցությունը սերտ է, եւ օգնում, լրացնում են իրար, քանի որ հոգսը համընդհանուր է: Հիմնական հոգսերից մեկը զինվորների ընտանիքների կենսապայմանների ապահովումն է: Բայց մեր գլխավոր խնդիրն այսօր մեր երկրի, մեր հանրապետության սահմանների պաշտպանությունն է:

Բ. - Արդեն պատերազմը լեռներից հարթավայր է տեղափոխվում: Հնարավո՞ր են նույն հաջողությունները հարթավայրային տեղանքում: Չէ՞ որ դա այլ մարտավարություն է պահանջում:

Ն.Դ. - Դա հիմնականում կախված է կենդանի ուժի եւ մարտական տեխնիկայի հզորությունից: Ես համոզված եմ, որ եթե ադրբեջանցի զինվորը լեռներում թողել է տանկն ու փախել, ապա հարթավայրային պայմաններում ավելի հեռու կփախչի: Մենք հաղթանակի համար մեծ քանակով հրետանի եւ զրահատեխնիկա ունենք, որն ադրբեջանական բանակից ենք գրավել: Բացի այդ, մեր բանակը ավելի ճկուն է ու շարժունակ, ավելի հմտորեն ենք տիրապետում տեխնիկային, մարտավարական ձեւերին, ուստի՝ հարթավայրում եւս առավելությունները շոշափելի կլինեն: Մեր այսօրվա զինվորների մարտական պատրաստվածությունը չի զիջում ռուսական բանակի զինվորների պատրաստվածությանը: Մերոնցից յուրաքանչյուրը հիմնովին ծանոթ է զենքի ու տեխնիկայի մի քանի տեսակներին:

Բ. - Ազատամարտիկներից շատերը հինգ-վեց տարի է՝ պատերազմում են: Ի՞նչ ես կարծում, երբ խաղաղություն հաստատվի, այսօրվա ակամա զինվորն ինչպե՞ս կընդունի դա:

Ն.Դ. - Զինվորը յոթ-ութ օր դիրքերում հերթապահելուց հետո, երբ երեք օրով ազատ է արձակվում, անպայման իր ընտանիքի հոգսերով է տարվում, հաց է հայթայթում, երեխաների դաստիարակությամբ զբաղվում: Ես անձամբ ճանաչում եմ իմ բոլոր զինվորներին, ինչպես

նաեւ շրջանի բնակչությանը: Կարծում եմ, որ բոլորն էլ խաղաղությունն ավելի են սիրում: Պատերազմում են խաղաղության համար:

Բ. - Ինքս էլ, արցախցի լինելով, ծանոթ եմ հայ ժողովրդի այս հատվածի հոգեբանությանն ու խառնվածքին, ուստի՝ համաձայն եմ քեզ հետ: Սակայն Օմարի լեռնանցքի դիրքերում մի զինվորի պատահեցի, որը մտահոգվեց, երբ ասացի, թե շուտով խաղաղություն կլինի: Ասաց, որ ինքը սովորել է պատերազմին ու ստիպված այլ տեղ կմեկնի, ուր պատերազմ կա:

Ն.Դ. - Նման բացառություն հնարավոր է: Մենք պատանիների վաշտ ունենք, որի զինվորները, լավ տիրապետելով զենքին ու տեխնիկային, ներշնչվածության մեջ կարող են իրական սահմանները մոռանալ: Դա եւս հասկանալի է:

Բ. - Վերջերս եղա Հյուսիսային Կովկասում, որտեղ հանդիպեցի երիտասարդ մարտակերտցիների: Այսօր շատերն ասում են, թե նրանք դավաճաններ են, հայրենի օջախը լքողներ:

Ն.Դ. - Ես համաձայն չեմ: Բանակը օրենքների միջոցով է ստեղծվում: Եկեք իրերին իրական հայացքով նայենք: Մարտակերտը հանձնվեց ոչ մարտակերտցիների մեղքով: Շահումյանի ու Մարտակերտի անկումից հետո զինվորը միանգամայն անպաշտպան էր տեսնում իր ընտանիքը: Նրանց ինսուլինինգ տոկոսն իր ընտանիքի, իր տան պաշտպանության համար է կռվում: Եթե նրա ընտանիքը փողոցում է՝ անտեր ու անօթեւան, սովի մատնված, ապա նա չի կարող կռվել: Ուրեմն՝ մենք պարտավոր ենք հոգալ նաեւ նրա ընտանիքի համար: Վերջերս ԼՂՀ Պաշտպանության պետկոմիտեի նախագահը ելույթներ ունեցավ հեռուստատեսությամբ եւ ռադիոյով՝ հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ցանկացած քաղաքացի կարող է անարգել հայրենի եզերք վերադառնալ, օգտվել օրենքի պաշտպանությունից: Ինչ ես ստանձնել եմ Մարտակերտի ուղղության հրամանատարությունը, համարյա ոչ ոք չի հեռացել մեր շարքերից: Ընդհակառակը՝ համալրվել ենք: Ղարաբաղից ստիպված հեռացածներն այսօր կարող են հայրենիք վերադառնալ: Վերջին մեկուկես ամսում հարյուր հիսուն ընտանիք վերադարձել է:

Բ. - Որպես զորահրամանատար, հավանաբար, քո սիրած հերոսն ունես: Ավելի շատ ու՞մ կուզենայիր նմանվել:

Ն.Դ. - Իմ իդեալը Նժդեհն է: Ամենակարեւոր որոշումներն ընդունելուց առաջ վերընթերցում եմ Նժդեհի գրածները: Փաստորեն, նա ինձ հետ է: Այսօրվա մեր հրամանատարներից յուրաքանչյուրը վառ անհատականություն է: Մեր զոհված ընկերներն, անկասկած, լավ մարտիկներ էին: Նրանցից յուրաքանչյուրը մի առավելություն ուներ, ու բոլորը լրացնում էին մեկմեկու: Մեր այսօրվա հրամանատարները եւս օժտված անձնավորություններ են, ու մենք միշտ սովորում ենք իրարից: Դա եւս մեզ ուժեղ է դարձնում:

Պատմում է Անատոլի Շաբադը ***(Հելսինկյան հանձնաժողովի անդամ, ԽՍՀՄ Գխ պատգամավոր, մարդու իրավունքների պաշտպան եւ ակադեմիկոս Անդրեյ Սախարովի զինակից):***

21.01.1992 թ., Ստեփանակերտ

Բ. - Որպես Հելսինկյան հանձնաժողովի անդամ՝ Քարոլայն Քոքսի ու Ելենա Բոնների հետ Դուք ելույթ ունեցաք ԱՄՆ-ի Կոնգրեսում եւ պաշտպանեցիք արցախահայության դատը, նրա ապրելու, գոյատեւելու իրավունքը: Ինչպե՞ս կապվեցիք Արցախի, նրա խնդրի հետ:

Ա.Շ. - Պրոբլեմի մասին տեղեկացա 1965 թվականին, երբ հանգստանում էի Ջերմուկի առողջարանում: Արցախյան այս բռնկումը շատերի համար ոչ թե ազգային հարց էր, այլ կազմակերպված առաջին պաշտոնական անհնազանդության օրինակը կոմունիստական իշխանությունների դեմ: Հենց դա էլ Մոսկվայում շատ մարդկանց մեջ հիացմունք առաջացրեց: Կարծում եմ, որ Սախարովի վրա հենց դա էր տպավորություն թողել: Ինչ խոսք, անկախության հետ գոյություն ուներ եւ ազգային հարցը: Ահա, փլվել է կոմունիստների իշխանությունը, որի դեմ առաջինը բարձրացավ արցախահայությունը եւ, ինչպես ամեն մի առաջամարտիկ, հայտնվեց ամենածանր վիճակում: Ժողովրդական միտքը առաջ է գնացել, իսկ Արցախյան հարցը դոփում է տեղում: Կարծես ինչ-որ տեղ մարդիկ հատուցում են այն բանի համար, որ առաջինն էին: Ահա, այսպիսին էր սկզբնական տպավորությունը: Ես միշտ Սախարովի հետ էի: Քանի որ միասին էինք աշխատում, ուշադրությամբ հետեւում էի նրա հետաքրքրություններին: Եվ ահա, անցյալ տարվա մայիսից, երբ Անահիտ Բայանդուրը խնդրեց ինձ շտապ Հայաստան մեկնել (դա, փաստորեն, խորհրդային բանակի ձեռնարկած «Օղակ» օպերացիայի օրերին էր), ես ամբողջությամբ նվիրվեցի այս խնդրին: Գետաշեն մեկնելու համար ուշ էր, ու ես Հայաստանի հյուսիս՝ Ոսկեպար գնացի:

Բ. - Իրադարձություններն այսօր շատ արագ են զարգանում: Փոփոխվում է եւ իրավիճակը ԼՂՀ-ի շուրջ: Կա երկու հայացք. հայացք Արցախից դեպի դուրս եւ հայացք դրսից դեպի արցախյան իրադարձությունները: Ինձ հետաքրքրում է Ձեր հայացքը Ղարաբաղից դեպի

դուրս:

Ա.Շ. - Արցախից բոլորն էլ միանգամայն այլ կերպ են դիտում, քան դրսի հայացքն է: Այստեղից հայերի հայացքի մեջ միամտություն կա: Արցախցիները հավատացած են, որ Ռուսաստանը անպայման կպաշտպանի հայերին, քանի որ երկուսն էլ քրիստոնեական աշխարհից են: Նման մոտեցումը բացարձակապես ոչ մի հիմք չունի: Ոմանք հույսեր էին կապում այս շրջանում Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի հետ: Այն եւս զուրկ է հիմքից, քանի որ Ռուսաստանը կլանված է իր ներքին խնդիրներով: Բացի այդ, Ռուսաստանում այսօր ատում են այդ բառը, քանի որ այն հիշեցնում է իմպերիալիստական քաղաքականությունը, ինչն էլ այսօրվա փլուզմանը հասցրեց: Ինքս ատում եմ այդ բառը: Մի խոսքով, այստեղից հայացքն ինչ-որ այլ է: Ղարաբաղն արդեն անկախություն է հռչակել, սակայն մտածողությունը «մարզային» է մնացել եւ ամենեւին չի համապատասխանում անկախ երկրի քաղաքացիների մտածողությանը: Միշտ հույս ունեն, թե ինչ-որ մեկը պիտի օգնի, ինչ-որ մեկը ինչ-որ բանի համար պետք է պատասխան տա: Եթե դուք անկախություն եք հռչակել, ինչու՞ եք շարունակ կենտրոնի հովանավորության մասին մտածում: Մի՞թե չզգացիք, թե դա ինչ չարիք էր ձեզ համար: Այլ հարց է, երբ ամեն մարդ իրեն քաղաքակիրթ աշխարհի մասն է զգում եւ դրա մեջ էլ տեսնում է իր գոյության իրավունքի երաշխիքը: Այստեղ նա իրավունք ունի անօրինություններից պաշտպանություն փնտրելու: Ի՞նչ կա որ, թող դա լինի Ռուսաստանը, Անկախ պետությունների համագործակցությունը կամ ողջ աշխարհի հանրությունը: Այս իմաստով արդարացված է ինչ-որ մեկի խնամակալության վրա հույս դնելը, բայց ոչ ավելին: Ահա, այսպես եմ տեսնում հայացքների տարբերությունը: Ինչ խոսք, ներսից հայացքը իրավիճակի սրությունից է գալիս: Այստեղ լույս չկա, հաց չկա, ջուր չկա, ռմբակոծում են, կրակում: Իսկ հեռուստատեսային նորություններով դատողները ավելի հանգիստ են վերաբերվում հարցին: Հենց դրա պատճառով էլ կարեւոր է տարբեր մակարդակների տարբեր ներկայացուցիչների այստեղ գալը: Նրանք կարող են հարցի զգացմունքային կողմի՝ այսօրվա ցավի մասին հաղորդել աշխարհին:

Բ. - Մենք ականատես եղանք այն ավերածություններին, որ պատճառել էին «Գրադ» տիպի տեղակայանքից արձակված ռումբերը: Դա չի՞ նշանակում, որ խորհրդային բանակը (բանակը դեռ այդպիսին է) ինչ-որ իներցիայով շարունակում է միջամտել առճակատմանը՝ ի շահ մի կողմի:

Ա.Շ. - Բանա՞կն է կիրառում այդ ահավոր զենքը, թե՞ ադրբեջանցիներն այն բռնագրավել են բանակից: Տարբերությունը միայն զենքի ավելի մասնագիտական կիրառման, ավելի ճիշտ նշանառության մեջ

է: Երբ անցյալ տարվա հուլիսին հաուբիցային մարտկոցներն էին օգտագործում, բանակը կտրականապես ժխտեց, որ ադրբեջանցիները նման զենք ունեն: Գլխավոր շտաբի հատուկ հանձնաժողովի հետ ստուգեցինք փաստաթղթերը, որոնք ապացուցում էին, որ օգոստոսի 22-ից հետո բանակը ոչ մի կողմից գործողություններին չի մասնակցել: Այնինչ, հաուբիցային հրետանուց կրակոցները շարունակվում էին: Այդ ժամանակ այսպես կոչվող Գերանբոյի շրջկոմի առաջին քարտուղար Մերշադ Ալիեւը խոստովանեց, որ իրենք նման մարտկոցներ ունեն: Դա այն ժամանակ նորություն էր: Հնարավոր է՝ բանակի պաշտպանության տակ ադրբեջանցիներն էին կրակում, չնայած այն օրերին եւս բոլոր «խաչմերուկներից» գոռում էին, որ բանակն է կրակում: Հիմա Շահումյանի շրջան եմ մեկնում, չնայած դժվար է իմանալ, թե հատկապես ով է կրակում՝ բանա՞կը, թե՞ ադրբեջանցին: Աղդամում ադրբեջանցիները ռազմական մեծ պահեստ են բռնագրավել: Այնտեղ մարտական տարբեր զենքեր են եղել:

Բ. - Եվ դա նրանց ինչ-որ առավելությու՞ն է տալիս:

Ա.Շ. - Ռազմական գործողությունների հստակության առումով, ինչպես երեւում է, նրանք ոչ մի առավելություն չունեն: Խաղաղ բնակիչների վրա ռումբեր տեղալը ավելի շուտ հակառակն է ապացուցում:

Բ. - Փլուզվեց ԽՍՀՄ-ը: Այժմ հերթը ԽՍՀՄ տիպի փոքր կայսրություններինն է:

Ա.Շ. - Այժմ Ադրբեջանում առկա է ժողովրդական ճակատի ու հին կոմունիստական համակարգի միջեւ հակամարտությունը: Ըստ երեւույթին, պայքարն այնտեղ տեղափոխվում է ազգամիջյան հարթություն: Ես միշտ վտանգ էի տեսնում այն բանի մեջ, որ ազգային-ազատագրական պատերազմը վեր է ածվում ժողովուրդների միջեւ կենսական տարածքների համար պատերազմի: Ադրբեջանցիներն ասում են, թե քանի որ հայերը դուրս են քշել իրենց, հիմա էլ իրենք դուրս կքշեն հայերին: Խոսքս Սումգայիթի, Բաքվի դեպքերի մասին չէ: Ռուսաստանի համակրանքը կախված է տվյալ կողմի անբասիր վարքագծից: Պատերազմում անպայման խախտվում են մարդու իրավունքները: Այսօր հայերը գրավել են Կրկժանը եւ ճիշտ են արել, որովհետեւ այդտեղից ադրբեջանցիները կրակում էին քաղաքի վրա: Մի քանի օր առաջ իմ գլխավերեւով գնդակների տարափ եղավ: Ռմբակոծությունից ավերվել է Կրկժանը: Կլինեն եւ պատասխան քայլեր: Այդպես ժողովուրդների միջեւ բորբոքվում են կրքերը: Հենց դա էլ դժվարացնում է միմյանց միջեւ խաղաղության հաստատման գործը:

Բ. - Հիմա՝ Ձեր մասին: Դուք նվիրվել եք շատ վտանգավոր եւ դժվար գործի՝ մարդու իրավունքների պաշտպանությանը: Որտե՞ղ են

թաքնված այդ վարքագծի ակունքները:

Ա.Շ. - Ես տարիներ շարունակ ջրային տուրիզմով եմ զբաղվել: Լաստանավով հաղթահարել եմ Չույա, Կատուն, շատ վտանգավոր Ուրսուլ լեռնային արագահոս, բուռն գետերը: Անցյալ տարի Իրկուտսկի մարզում՝ Ուրուխ գետում, կորցրի ընկերոջս:

Բ. - Դա ապրելաձե՞ւ է, թե՞ անհրաժեշտություն:

Ա.Շ. - Ես տեսական ֆիզիկայի մասնագետ եմ: Մեր ամենօրյա կյանքում լճացում էր: Այդպես ապրել չէի կարող: Եվ ահա սպորտում գտա շարժման մեջ ապրելու հետաքրքրությունը: Իսկ այժմ քաղաքական բուռն իրադարձություններն ինձ կլանում են, ու ջրային սպորտի համար ժամանակ չունեմ:

Բ. - Այո, երեւի կյանքը լեռնային փոթորկուն գետ է հիշեցնում: Իսկ Ձեր ընտանի՞քը:

Ա.Շ. - Որդիս՝ Գեորգին, 1988 թվականի դեկտեմբերին առաջիններից մեկն էր, որ Սպիտակ հասավ: Իմ մասնագիտության գծով այժմ ոչինչ չեմ անում, չնայած դեռեւս տպագրվում են հին աշխատություններս: Ավելի շատ զբաղված եմ քաղաքական, պառլամենտական գործունեությամբ, Գիտությունների ակադեմիայի խնդիրներով, ակադեմիայի ընտրողների ակումբի նախագահն էի: Մեզ հաջողվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավոր ընտրել տասներկու գիտնականների, որոնք ժողովրդավարական հայացքների տեր էին, այդ թվում՝ Անդրեյ Սախարովին: Քերոլայն Քոքսի ու Ելենա Բոնների հետ ելույթ եմ ունեցել հայ-ադրբեջանական խնդիրներին նվիրված ԱՄՆ-ի Կոնգրեսի հանձնաժողովի նիստում: Ձգտում եմ շարունակել իմ ընկերոջ՝ Անդրեյ Սախարովի մարդասիրական գործը:

Պատմում է Շահեն Մեղրյանը
(Շահումյանի շրջանի գործկոմի նախագահ, ԼՂՀ ԳԽ պատգամավոր, Արցախի բանակի Շահումյանի ինքնապաշտպանության հրամանատար):
30.01.1992 թ., Շահումյան

Բ. - Պարոն Մեղրյան, Դուք ղեկավարում եք Շահումյանի շրջանի պաշտպանությունը, միեւնույն ժամանակ Ձեզ հաճախ ենք հանդիպում երեւանյան գերատեսչություններում:

Շ.Մ. - Դրա պատճառը շրջանի բնակչության մթերքի, պաշտպանության համար անհրաժեշտ նյութերի պակասն է, սոցիալ-տնտեսական գործունեության ապահովումը: Սովորաբար, երբ ինքս եմ գալիս, շատ հարցեր ցանկալի լուծում են ստանում: Այստեղ ավանդություն է դարձել «երբ երեխան լաց չի լինում, մայրը չի կերակրում» աշխատելու ձեւը: Իհարկե, օբյեկտիվ պատճառներ կան: Մեր պայմանները կտրուկ տարբերվում են Երեւանի պայմաններից: Այնտեղ մարդկանց մտահոգությունն այլ է, մերը այլ: Որոշ գերատեսչություններում իրար չենք հասկանում: Կամ էլ այն մարդիկ, որոնք կոչված են զբաղվելու խնդիրներով, բոլորովին չեն պատկերացնում իրավիճակը Արցախում եւ Շահումյանում, թե ինչ չափերի է հասել թուրքական ռազմական ճնշման ազդեցությունը, թե ինչ մասշտաբի ռազմական գործողություններ են վարում նրանք, ինքներս ինչպիսի պայմաններում ենք ստիպված լինում ետ մղել նրանց անընդհատ հարձակումները եւ դրան զուգահեռ փորձել ապահովել մարդկանց կենսական նվազագույն կարիքները, որոնք անհրաժեշտ են պարզապես գոյությունը պահպանելու համար:

Բ. - Եթե շրջանի գործկոմի նախագահն ու պաշտպանության ղեկավարը ինքն է ստիպված գալիս, գերատեսչությունների դռներն ընկնում, ուրեմն՝ բացակայում է այն համակարգը, որն այս ճակատագրական իրավիճակում պարտավոր էր ինքնուրույն գործել եւ ապահովել անհրաժեշտ միջոցներով:

Շ.Մ. - Ոչ թե չի գործում, այլ այդ համակարգը դեռ չի ստեղծվել: Գուցե այն ստեղծման գործընթացի մեջ է: Բայց երեւի դա ավելի շատ կապված է մարդկանց հոգեբանության հետ, նաեւ այն բանի հետ, որ

մեր ժողովուրդը կանգնած է մի երկմտանքի, երկընտրանքի առջև: Պետության վերակառուցումը պետք է ռազմական ուղղությա՞մբ ընթանա, թե՞ ուղղակի ժողովրդավարական, բարեկեցիկ հանրապետություն կառուցվի, որը կօժանդակի արցախցիների պայքարին: Իհարկե, մեզ՝ հայրենի հողի պաշտպաններիս համար անհրաժեշտ է, որ Հայաստանում խաղաղություն լինի, հայ ժողովուրդը այլևս չզգա այն ահն ու սարսափը, որ պատում է հրետակոծության ժամանակ:

Բ. - Այսինքն՝ Արցախին ուժեղ Հայաստան է պետք:

Ծ.Մ. - Մեզ անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետությունում գործի այն ուժեղ համակարգը, որը կլինի ճկուն եւ արագ կողմնորոշվող՝ Արցախի ցանկացած կարիքներն արագ բավարարելու իմաստով: Հավանաբար, դրա համար պետական մոտեցում է պետք: Սա է պատճառը, որ հաճախ եմ Երեւան գնում: Այստեղ պաշտպանությունը կազմակերպող ինչ-որ համակարգ կա, ու կարող եմ երբեմն բացակայել:

Բ. - Ինքս Շահումյանում ականատես եղա «Գրադ» տեղակայանքից ադրբեջանցիների արձակած հրթիռների կործանարար հետեւանքներին: Ղարաչինարում տեսա նրանց արձակած պարաշուտե արկերի պայթյունները օդում: Դրանք, փաստորեն, ռուսական բանակի զինանոցից են: Դա ձեզ խորհելու առի՞թ է տալիս:

Ծ.Մ. - Ավելին կասեմ: Ճիշտ է, ադրբեջանցիների զինանոցում վերջին մոտ քսան օրերին նկատվում է մարտ վարելու նոր համակարգ, որը յուրահատուկ է նախկին խորհրդային բանակին: Դրան մենք ծանոթ էինք Էրքեջի, Մանաշիդի, Վերին Շենի պաշտպանության ժամանակ: Չորրորդ բանակի զորամասերը կրկին մասնակցում էին ադրբեջանական կողմից գրոհներին: Նրանց տանկերը հաճախ են երեկոյան մոտենում մեր սահմաններին՝ պրոֆեսիոնալ վարպետությամբ, ինչը յուրահատուկ չէ ադրբեջանցիներին: Ողջ գիշեր հրետակոծում են մեր դիրքերը եւ բնակավայրերը: Նրանք, իհարկե, խուսափում են բացահայտվելուց եւ առավոտյան ետ են վերադառնում:

Բ. - Քաղաքական տեսանկյունից ինչպե՞ս եք գնահատում այս երեւույթը:

Ծ.Մ. - Այստեղ քաղաքական հարց չկա: Կա վարձու մարդկանց մի հավաքածու, որ ծառայում է ադրբեջանցիներին: Չեմ կարծում, թե այստեղ առկա է Ռուսաստանի կառավարության որեւէ դիրքորոշման ազդեցությունը: Սա 23-րդ դիվիզիայի հրամանատարության նախաձեռնությունն է, իհարկե, առատաձեռն վարձատրության դիմաց: Նրանք մեր դեմ կռվելու բավական փորձ ունեն: Վերջերս իմացանք, որ մեծ թվով ռուսական բանակի զինվորներ են զոհվել Շահումյանի շրջանի տարածքում: Չորրորդ բանակը, փաստորեն, անկշռելիության վիճակում է, եւ նրան օգտագործելը դժվարություն չի ներկայացնում ադրբեջանցիների համար:

Բ. - Այսօր այնպիսի զանգվածային հարձակման դեպքում, ինչպիսին, ասենք, Քարինտակում էր, կամ Աղդամից Ստեփանակերտի ուղղությամբ լայն ճակատով հարձակումներն էին, Շահումյանի պաշտպանությունը կարո՞ղ է ետ մղել:

Ծ.Մ. - Զանգվածային բառը այս դեպքում տարակուսանք է առաջացնում: Ռազմական տեսանկյունից նման հասկացություն գոյություն չունի: Շահումյանի բնակավայրերի վրա միշտ էլ ողջ ճակատով նման գրոհներ են լինում: Ադրբեջանը կենտրոնացրել է հսկայական զրահատեխնիկա, թնդանոթներ, մեծաքանակ հետեւակ:

Բ. - Նրանք շատ հարվածներ են ուղղում խաղաղ բնակչության վրա:

Ծ.Մ. - Պատահական չէր վերջերս «Գրադով» շրջկենտրոնի ռմբակոծումը: Համոզված եմ, որ Արցախի մյուս շրջաններում եւս շուտով կանցնեն մեր շրջանում ծավալած պատերազմական սխեմային: Անհրաժեշտ է, որ մենք ավելի լուրջ մոտենանք այս պատերազմին: Եթե թշնամին համոզվի, որ, Շահումյանի վրա մեծ ուժեր նետելով, Մարտակերտից հակահարված չի ստանա, դա մեծ վնաս կլինի մեզ համար: Մեր ռազմավարությունը ողջ Արցախում պետք է միասնական մի մարմին լինի:

Բ. - Պատկերացնու՞մ էիք, որ ազգային-ազատագրական պայքարը նման պատերազմի մեջ կներքաշվի:

Ծ.Մ. - Գուցե մեր կանխատեսած սցենարն այլ էր, բայց գիտեինք, որ սա լինելու էր: Ուստի՝ հոգեբանորեն պատրաստ էինք պաշտպանության կազմակերպմանը: Հիշում եմ՝ Հայաստանի նախագահը մի հանդիպման ժամանակ հարցրեց. «Իսկ ժողովուրդը կկռվի՞»: Այսօր, ահա, ժողովուրդը կռվում է մինչեւ ատամները զինված ավազակաբարո թշնամու դեմ: Հայաստանում շատերը չէին հավատում, թե Շահումյանը հնարավոր է փրկել: Իսկ շրջանի բախտը ինքը՝ ժողովուրդն է որոշում:

Բ. - Այսօրվա հայացքով ինչպե՞ս եք վերաբերվում Ազատի, Կամոյի, ապա Գետաշենի եւ Մարտունաշենի բռնագաղթին:

Ծ.Մ. - Ազատ եւ Կամո գյուղերը զիջելը մութ պատմություն է, որը պարզաբանման կարիք ունի: Գետաշենն ավելի բարդ խնդիր է, որը լուծվել է կայսերական խոհանոցի մի հրահանգով: Սխալն այն էր, որ Գետաշենում լիարժեք կռիվ չտվեցինք եւ հանձնեցինք առանց կռվի: Եթե կռվեինք, գուցե զոհեր շատ ունենայինք, բայց կխուսափեինք գետաշենցիների այսօրվա ողբալի ճակատագրից ու չէինք կորցնի

պատմական բնակավայրը: Իզուր չէ, որ Ադրբեջանի նախկին ղեկավար Միրջաֆար Բագիրովն ասել էր. «Եթե ուզում եք Ադրբեջանում հայերի հարցը լուծել, ապա պետք է վերացնեք Չարդախլուն, Գետաշենը, Բեկումսարովը, Հաթերքը, Վերին Շենը»: Այսօր այդ ծրագիրն իրականացվում է: Գետաշենի հանձնման ժամանակ ավելի քիչ մեղավոր էին նրա պաշտպանները, քան նրա շուրջ ծավալված մութ խաղերի մասնակիցները: Գետաշենը հանձնելուց առաջ Մոսկվայի հրահանգով Շահումյանից հեռացվել էին չորս հարյուր յոթանասուն ազատամարտիկներ:

Բ. - Իսկ ի՞նչ հնարավորություններ կան պաշարման պայմաններում, փակ համակարգով սննդով ապահովելու համար:

Շ.Մ. - Ժողովուրդն ինքն իրեն ապահովում է: Այսօրվա բարդությունները չէին լինի, եթե ժամանակին չքանդեին տասնյակ պապենական ջրաղացները: Հացի խնդիրը չի լուծվել: Մենք կարտոֆիլը փոխանակում ենք մարտակերտցիների հացի հետ: Դժվարություններ ունենք վառելիքի ձեռքբերման հարցում: Ինձ թվում է, որ պետական օղակներում հարցին լուրջ մոտեցումը կարող է զգալիորեն թեթեւացնել արցախցիների վիճակը:

Բ. - Ինչ խոսք, Գյուլիստանի մելիքական իշխանության հինավուրց ավանդույթներն են, որ այսօր ժողովրդին մղել են ինքնապաշտպանության, կենաց ու մահու կռվի: Ժամանակակից ռազմավարության առումով ի՞նչ ունակություններ է ցուցաբերում տեղի ժողովուրդը:

Շ.Մ. - Մի քանի ամիս առաջ մենք բավարարվում էինք պարտիզանական պայքարի մեթոդներով, իսկ վերջերս զգալով, որ պատերազմի որակը լիովին փոխվում է, մեր կառուցվածքների մեջ զինվորական մասնագետներ ենք ներգրավել, որոնք բարձր մակարդակով կազմակերպում են այս դժվարին գործը: Արդյունքները շոշափելի են: Ձգտում ենք նվազագույն կորուստներով իրականացնել պաշտպանությունը:

Բ. - Ինչպիսի՞ն են հարաբերությունները հայաստանաբնակ շահումյանցիների եւ բուն Գյուլիստանի բնակիչների միջեւ:

Շ.Մ. - Վերջերս նրանք նախաձեռնել են նոր ջոկատների կազմավորման գործը, որպեսզի մեկ ամսով մասնակցեն իրենց հայրենիքի պաշտպանությանը: Նրանք հիմնականում ցնցված են եւ չեն պատկերացնում, թե ինչ կարող են կորցնել: Թող տեսնեն վանեցիներին, կարսեցիներին, հայրենի երկրամասը կորցրած հայությանը, որոնց երրորդ, չորրորդ սերունդները Երեւանում են եւ տառապում են հայրենաբաղձությամբ: Հողից կտրված լինելը նախկին շահումյանցիներին օժտել է վախի զգացումով: Լրատվամիջոցների կիսատ եւ ոչ

լիարժեք տեղեկությունները նրանց հիվանդ են դարձրել: Պետք է սկսվի իսկական կամավորական շարժումը: Նախկին արցախցիները պարտավոր են զենքը ձեռքին գալ եւ պաշտպանել հայրենի գյուղերը, հողը, նախնիների գերեզմանները, հազարամյա եկեղեցիները, տաճարները, իրենց հայրերին, մայրերին, քույրերին: Միայն այսպես նրանք կարող են վերականգնել լիարժեք արցախցու անունը: Սա վերաբերում է նաեւ այլ երկրներում, ասենք, Ռուսաստանում ապրող արցախցիներին:

Պատմում է Անահիտ Մարտիրոսյանը *(մինչեւ 1990թ. ինժեներ-քիմիկոս, 1991 թ. ռազմաճակատային բուժքույր, 1992-1994 թթ. «Անահիտ» ջոկատի հրամանատար)*

12.01.2005 թ., Երեւան

Ա.Մ. - Ծնունդով Չարդախլուից եմ, ապրել եմ Բաքվում: 1989 թվա- կանի հոկտեմբերի 27-ին ընտանիքով պատրաստվում էինք լքել քաղաքը, մեր տունը: Ամեն պահ սպասում էինք, որ ահա կհայտնվի խուժանն ու կկոտորի մեզ: Ամեն ինչ թողած՝ պետք է գայինք Հայաս- տան: Ամուսնուս, երեխաներիս հետ դուրս եկանք տնից:

Բ. - Ի՞նչ է ամուսնուդ անունը:

Ա.Մ. - Ի՞նչ կարեւոր է անունը, ես նույնիսկ նրան թաղել չկարո- ղացա, գերեզմանը չունեմ: Բոլոր ազգերին, ժողովուրդներին կարող եմ հանդուրժել, բայց... Այդ ժամանակ օգնում էին հայերին, Բաքվից դուրս էին բերում: Իրավիճակը սարսափելի էր, հատկապես գիշեր- ները: Երեխաներս էլ փոքր էին: Մենք էլ էինք ուզում գնալ, բայց չհաս- ցրինք, երկու թաղամաս անցանք, թուրքերը շրջապատեցին: Իմ ու երեխաներիս առաջ ամուսնուս գլխատեցին: «ԲՄՊ»-ով հսկում էր ռուսական բանակը: Այնտեղ մի հայ տղա կար, սկսեց կրակել դրանց վրա: Այդ տղայի անունը Վահրամ էր թե Վարդան, լավ չեմ հիշում, բայց նրա աչքերը չեմ մոռացել, եթե հիմա տեսնեմ, հազարի մեջ էլ կճանաչեմ: Երեխաներիս հետ հայտնվեցի օդանավակայանում: Մեծ տղաս բացարձակապես չէր խոսում, համրացել էր: Եկանք Հայաստան: Մի քանի ամիս մնացի Հոկտեմբերյանի Ջանֆիդա գյուղում, մինչեւ մայրս Կարմիր խաչի օգնությամբ ինձ գտավ:

Պատերազմը որ սկսվեց, ես քսանհինգ տարեկան էի: Երեխաներին թողեցի մորս խնամքին ու գնացի առաջին գիծ՝ սկզբում որպես բուժքույր: 1991 թվականին մենք դիրքեր էինք պահում: Մեզնից պա- հանջում էին չկրակել, չպատասխանել, չնայած հակառակորդի կող- մից կրակ լինում էր:

Բ. - Որտե՞ղ էիք դիրքեր պահում:

Ա.Մ. - Մարտակերտում՝ Մարաղայից սկսած: Ես հիմնականում Մարտակերտում եմ եղել: Ինձ հետ էին այն տղաները, որոնք հիմա

լեգենդ են դարձել, օրինակ՝ Վլադիմիր Բալայանը, Մոնթե Մելքոնյանը: Լեոնիդ Ազգալդյանի հետ կապված մի դեպք եմ հիշում: Ազգալդյանին հարցրի՝ դուք ի՞նչ գույնի եք: Նկատի ունեի կուսակցական պատկանե- լությունը: Նա շատ խելացի մարդ էր: Ծնկի եկավ, մի բուռ հող վերցրեց ու ասաց. «Ի՞նչ գույնի է այս հողը, ես այս գույնի եմ»: Այդ դրվագը «Մենք մեր հողի գույնի ենք» ֆիլմում կա: Նրանք իմ ախպերներն էին: Ես հպարտ եմ հիմա, որ սովորական մարդ եմ, բայց Վլադիմիրի, Լեոնիդի, Կոռնիձորի Արայիկի կողքին ու նրանց կողմից հարգված եմ եղել: Որը «քույրիկ» էր ինձ ասում, որը՝ «Մաուգլի»:

Բ. - Ինչպե՞ս որոշվեց, որ պիտի զենք վերցնեք, հրամանատար լինեք:

Ա.Մ. - Դրմբոնի մարտի ժամանակ: Երբ ադրբեջանցիները 1992 թ. սկզբին առաջին անգամ մտել էին Դրմբոն, սարսափելի քաոս էր առաջացել, շատերը փախչում էին: Իմ ձեռքին մի պայուսակ կար՝ առաջին բուժօգնության պարագաներով: Այն կողմից համ ռուսներ էին գալիս, համ թուրքեր, անորոշ վիճակ էր: Զայրացա տղաների վրա, որ տեսա փախչում են: Զենքը վերցրի ու հայհոյելով նրանց ասացի. «Այս ի՞նչ եք անում, բացատրեք ինձ, թե դուք ինչ եք անում: Ես խնդրում եմ իմ հետեւից եկեք, այդ տականքները չպիտի ապրեն, ես չպիտի լինեմ, բայց նրանք էլ պիտի չլինեն, ամբողջ իմ էությունը քանդել են, նրանք ապրելու իրավունք չունեն»: Ամոթից թե ինչից մարդիկ ետ եկան: Ադրբեջանցիները նահանջեցին: Հետո նստած էինք գյուղում: Մի տատիկ կար, որն ասել էր. «Ես դուրս չեմ գալու մեր գյուղից»: Ինսուն տարեկան կին էր, բայց շատ ժիր էր: Կերակուր էր եփում, կանաչի տապակում, մենք էլ մսի պահածո էինք տալիս, դրանով մեզ համար ճաշ էր եփում: Մենք գնում, նրա տանն էինք հանգստանում: Գյուղը դատարկված էր: Տասնչորս վիրավորի դուրս բերեցինք, ինչ օգնութ- յուն հնարավոր էր՝ ցույց տվեցինք, փրկեցինք: Ես մասնագիտությամբ բուժքույր չեմ, ինժեներ-քիմիկ եմ: Պատերազմում եմ սովորել բժշկա- կան օգնություն ցույց տալը, մեր տղաներից մեկն է ինձ սրսկել սովորեցրել: Ասում էր. «Մի՛ վախեցիր, ամենակարեւորը չվախենալն է, ուժեղ եղիր»: Աստիճանաբար ամեն ինչ սովորել եմ: Ես չեմ գնացել որպես «դեմք», այլ սովորական կին եմ եղել, իմ կողքին էլ սովորական ու շատ լավ մարդիկ էին: Այդ տղաները գնացին, գլխավոր հրամանա- տարին ասացին. «Մենք ուզում ենք, որ Անահիտը մեր հրամանատարը դառնա»: Այդ ժամանակ տասնչորս հոգի էին: Հետո Պարգեւ սրբա զանը տասնչորս ռուս տղաների բերեց իմ ջոկատ, որոնք «Սուրբ խաչի նվիրյալներ» էին կոչվում: Նրանք զենքին լավ էին տիրապետում: «Ես» բառը չեմ սիրում, «ես»-ը գոյություն չուներ, «մենք»-ի շնորհիվ ենք պատերազմը շահել: Երբ հարցրի, թե ինչու են ինձ ընտրում, ասացին.

«Այս քառսի մեջ հասկացանք, որ դու չես փախչի»:

Բ. - Ովքե՞ր էին այդ տղաները:

Ա.Մ. - Սովորական տղաներ էին. մարաղեցիներ կային, Վովա կար, Իվան, չեմ կարող մոռանալ Սերյոգային: Նա 1941 թվին ծնված տղա էր, երբ եկավ Ղարաբաղ, ասաց. «Ух ты, Աֆղանստանը խաղալիք է այս մարտերի համեմատ»: Նվիրված մարդկանց հետ եմ ես եղել: Պատերազմում ես ճանաչում էի իմ թշնամուն ու ընկերոջը, բայց պատերազմից հետո՝ ոչ: Ամեն պատերազմ իր սինդրոմն ունի: Ղարաբաղյան սինդրոմ էլ կա. կռվում են մի խումբ տղաներ, բայց վայելում է մի ուրիշ խումբ: Սովորական պատերազմ էր, սովորական կռվում էինք: 1991 թվականի վերջն էր, Ստեփանակերտում բռնում էին ջահել տղաներին, համալրում ֆիդայիների շարքերը: Իմ ջոկատում քսանութ տղամարդ էին, ոչ մի կին չկար: Երբ տղաները ասել էին, որ Անահիտը միակ կին հրամանատարն է, հարցրել էին՝ չլինի՞ թե դա «Փառանձեմ» ջոկատն է: Պարզապես գործողությունն էր այդպես կոչվում, որը Արկադի Տեր-Թադեւոսյանն էր ղեկավարում. Սեւանի Սուրոն էր, Յուրան, Ուզբեկը, Շահումյանից՝ Վերին Շենից եկած տղաներն էին՝ Նորիկի գլխավորությամբ, չորս հոգի Հոկտեմբերյանից էին, «Էրեբունի», «Նժդեհ» ջոկատներն էին:

Բ. - Ձեր ջոկատը ի՞նչ գործողությունների է մասնակցել, ի՞նչ հետախուզության է գնացել:

Ա.Մ. - Մեր առաջին հետախուզությունը շատ ծիծաղելի էր, սարսափելի մի բան դուրս եկավ: Լուսադեմին՝ ժամը չորսին, ռացիայով կապվում եմ Արմենի հետ եւ ասում. «Արմեն, պղոճները»: «Պղոճներ» ասելով՝ տանկերը նկատի ունեինք: Արմենը Մարտակերտի հրամանատարներից մեկն էր: Անհարմար է պատմելը, եթե ինձ բռնեն, կսպանեն, մանավանդ որ հիմա նա բարձր պաշտոն է զբաղեցնում, թեեւ չեմ վախենում: Երբ նրան ասացի, որ «պղոճներն» են գալիս, ըստ երեւույթին նա քնած էր, դրա համար էլ նրա տղաները մորթվեցին Մաղավուզի մարտի ժամանակ: Նրանց դիրքը մեր դիրքից վերեւ էր, մեզ հետ Քսանվեցի Յուրան, Ուզբեկն ու Շամշադինցի Արշոն էին: Արմենը քնաթաթախ ասաց. «Ի՞նչ պղոճներ, հա, ճիշտ ես ասում, պղոճները ամբողջ գիշեր ինձ կերան, Անո, ի՞նչ ունես խմելու»: Ասում եմ. «Արմեն, պղոճներ, յոթ հատ պղոճ է գալիս քեզ վրա»: Ասում է. «Յոթ հատ, ինչ էլ ճիշտ հաշվեցիր»: Ստիպված ասացի. «Արմեն, հիմա՛ր, տանկերը»: Ասաց. «Հա, հասկացա, տանկերը»: Բայց դե արդեն ուշ էր, ամեն ինչ բացվել էր:

Ես Բույան անունով ձի ունեի: Բաքվում ես սպորտսմեն եմ եղել, սպորտի վարպետի թեկնածու: Ձին ինձ նվիրեց մի բիձա մարդ: Բարձրահասակ, շատ սիրուն ձի էր, չէր քայլում, այլ պարում էր: Որձ

ձի էր: Տղաները փորձի համար գալիս ինձ խփում էին, ձին վրա էր տալիս նրանց, քացով խփում: Տղաները հաճախ էին այդ խաղը խաղում: Ես ինձ իրավունք եմ վերապահում ասել, որ ձին զոհվել է հերոսի մահով: Ես նրա համար շատ արցունք եմ թափել, քանի որ նա իմ ընկերն էր: 1992 թ. մենք Մաղավուզում էինք: Ռացիայով իմացանք, որ Պավել Երիցյանի ջոկատը ծուղակի մեջ է հայտնվել: Մաղավուզի քարհանքի բարձունքը թուրքերի ձեռքն էր ընկել: Մենք Մաղավուզի գերեզմանոցում էինք. իմ ջոկատն էր, Արմենի ջոկատը, եւ մի «շնիկ» էր վազվզում, որը պետք չէր, որ այնտեղ լիներ, բայց հիմա գեներալ է դարձել, Յուրան էր, «Միայնակ գայլը», մի տղա էր Մոսկվայից եկել՝ Վովան, մեկ էլ մի լավ «Ավչարկա» շուն ունեինք: Ռացիայով հայտնեցինք, որ թուրքերը Մատաղիսի տակով են մտել: Վերջին կետում կանգնած է եղել Արմենը՝ իր ջոկատի հետ, հետո «Շիլկան» էր, հետո իմ ջոկատն էր, այնուհետեւ «Միայնակ գայլի» «ԲՄՊ»-ն էր: Դիրքերում ջուր չկար, ներքեւից էշերով ջուր էինք կրում: Միանգամից վերեւ բարձրացանք, ու թուրքերը ետ նահանջեցին: Արմենը վեց զոհ տվեց, ինքը ընդամենը քերծվածք էր ստացել: Ուզում էինք իջնել այն դիրքով, որտեղով թուրքերը մտել էին: Նրանք մտել էին գերեզմանոց: Այնտեղ տուն կար, որտեղ թաղման հացկերույթի արարողություններն էին անցկացնում: Սեղան, աթոռներ էին դրված, սպասք կար: Իրենց ջոկատով այդ սենյակում էին նստած: Շատ պատահական էին եկել, նույնիսկ տղաներից մի քանիսը մորթվել էին: Մեզ ասացին. «Իջեք ներքեւ, Պավելը ծուղակի մեջ է»: Նրա տղաներից երկուսը եկան: Ամոթանք տվեցի, թե ոնց են իրենց հրամանատարին թողել, այն էլ Պավելի նման տղային: Ասացին. «Հիմա խոսակցության ժամանակը չէ, արի՛»: Յուրան եկավ, մատը թափ տալով ասաց. «Անահի՛տ, չհամարձակվես ներքեւ իջնել, եթե քեզ մի բան պատահի, ես քեզ կսպանեմ»: Ասացի. «Լավ, Յուրա՛, ամեն ինչ կարգին է»: Գնացինք, թուրքերը նահանջեցին: Ահագին զենք-զինամթերք վերցրինք: Հրաման ստացանք՝ ներքեւ իջնել: Մաղավուզի Սլավիկը, որին Պիստալետ Սլավիկ էին ասում, քանի որ ձեռքի երեք մատները կտրված էին, եւ բութն ու ցուցամատն էին մնացել՝ ատրճանակի տեսք ստանալով, հրամանատար էր: Նա տարածքը ականապատել էր, սակայն տղաներից ոչ մեկին չէր ասել: Մենք ընդամենը մեկ-երկու կիլոմետր հեռավորության վրա էինք գտնվում: Պետք է այդ տարածքով իջնեինք, հետեւի կողմով մտնեինք գյուղ, ուրիշ կողմից չէինք կարող, քանի որ քարհանքի բարձունքը թուրքերի ձեռքին էր: Անընդհատ գնդակոծության տակ էինք, մենք՝ առաջին հերթին: Ձիուն կապելու հնարավորություն չունեի, պարզապես ծառի մոտ կանգնեցրի: Տղաներին առաջարկեցի հաց ուտել եւ առաջ շարժվել: Մենք

փաթեթներով սուխարիկի նման հացեր էինք ստանում: Բույանը դրանք շատ էր սիրում: Նրա բաժինը պահում էի ու տալիս նրան: Երբ հաց էինք ուտում, զարմացա, որ չեկավ, իր բաժինը չուզեց: Ես էլ առանձնացրել էի՝ մտածելով, թե մի քիչ կջղայնացնեմ, հետո կտամ: Չեկավ: Ասում եմ. «Բույան, չեմ հասկանում, չե՞ս գալիս, չե՞ս ճաշելու»: Գլխով է անում, թե՝ չէ: Վերջացրինք, հավաքեցինք, տղաները ուսապարկերը կապեցին, պատրաստվում էինք գնալ: Բույանը շրջվեց, նայեց մեզ ու մեծ ցատկերով գնաց այն ուղղությամբ, որտեղով պատրաստվում էինք իջնել: Չորրորդին տրաքեց, բարձրացավ օդ: Այն տեսա, որ ընկավ: Երբ մոտեցա, վիրավոր ջանդակով ձգվում, իրեն հրում էր դեպի ինձ, որ հասցնի գլուխը գոգիս դնել: Ես չոքել էի նրա առաջ: Գլուխը դրեց գոգիս: Մեծ, սիրուն աչքերից արցունքները թափվում էին: Ասում եմ. «Բույան, ի՞նչ արեցիր, ինչու՞ արեցիր: Գիտե՞ս, դու բոլորիս կյանքը փրկեցիր»: Ոչ մի կողմով չկարողացանք գնալ Պավելին փրկելու: Այդ պահին հեշտ կլիներ փրկելը: Սուսան անունով մի աղջիկ ունեինք, տասնյոթ տարեկան թմբլիկ աղջիկ էր: Հենց այդ մարտի ժամանակ նրա գլուխը կտրեցին, տարան: Սուսանը Պավելի հետ իջավ: Միայն նա մնաց Պավելի հետ, իսկ տղաները լքեցին նրան, փախան: Պատերազմում եթե վախկոտությունը չլիներ, շատ բաներ չէին լինի:

Գնացել էինք հաց ուտելու: Մարտակերտի դպրոցը ճաշարան էինք դարձրել, նաեւ դոշակներ էինք դրել, որ տղաները քնեն: Տեսնենք՝ մի տանկ է գալիս: Արկադի Իվանիչը դուրս եկավ շտաբից, գնաց դեպի տանկը: Զարմացած նայում էինք, թե ինչ է պատահել: Մոտեցավ, փոքր լյուկից Յաշային քաշեց հանեց, գոռաց. «Դու ու՞ր ես խփում, ես քեզ ո՞ր կողմն եմ ասել խփես»: Նա թե՝ լյուլեն չի ֆոռում: Կոմանդոսը գոռաց՝ գլխիդ լյուլեն է՞լ չի ֆոռում, ու մի հատ խփեց: Արկադի Իվանիչը շատ համբերատար մարդ էր, բայց որ տվեց՝ տվեց: Երբեմն կանչում էր ինձ, կամաց ասում. «Անահի՛տ, աղջիկս, այս խտացրած կաթը, թխվածքը քեզ համար է, ուզու՞մ ես սուրճ էլ եփեմ, Երեւանից սուրճ են ուղարկել»: Իսկ առաջին գծում սուրճը երազանք էր, գերագույն հաճույք:

Մի հետախուզության ժամանակ մենք օղակի մեջ ընկանք: Մեր ուղեկցորդը հանկարծ ասաց. «Գյուղում չըմ վեր ղոլը քինամ»: Ասում ենք. «Հո անասուն չես, բա Արկադի Իվանիչին ի՞նչ էիր ասում, քսանութ հոգու ու՞ր ես տանում»: Նրա հետեւից գնում էինք: Տարածքներ կային, որ շատ էին նման իրար, նույնիսկ գյուղերն էինք շփոթում, կողմնացույց չունեինք, տեղացիների միջոցով էինք աշխատում, նրանք էլ երբեմն չէին արդարացնում մեր հույսերը: Գնացինք, շրջապատման մեջ ընկանք: Ռացիա ինձ առաջին անգամ տվեց

Մոնթեի ընկեր Աշոտը: Ռացիայով լսում էինք. "Дорогие армяне, мы вам гарантируем жизнь, сдавайтесь": Ես սկսեցի թուրքերեն խոսել.

- Ու՞մ հետ եմ խոսում:

- Ո՞վ ես, բաքվեցի ե՞ս,- հարցրեց թուրքը:

- Բաքվեցի եմ:

- Դու աղջիկ ես, ո՞վ ես դու:

Ու սկսեց նկարագրել, թե ինձ բռնի, ինչ է անելու:

Ասացի.

- Գնդապե՛տ Սադիխով, չլինի՞ դու ես:

Ես ռացիայով խոսակցությունների ժամանակ լսել էի այդ անունը:

Ասաց.

- Ես քեզ կբռնեմ, Լենինի հրապարակում մերկ կկախեմ, ամեն օր քեզնից մի կտոր կկտրեմ ու դրանով քեզ կկերակրեմ:

- Մինչ կհասցնես քո ուզածը անել,- պատասխանեցի ես,- եթե ձեր գերի զինվորները վերադառնան ձախ ականջը կտրած, իմացիր, որ ես եմ արել:

Ավելի կատաղեց, թե՝ ես քեզ անպայման պիտի բռնեմ: Ռացիան անջատեցի՝ մտածելով, որ, միեւնույնն է, մեզ փրկող չի լինելու: Այնքան մոշ էինք կերել, որ ստամոքսի ցավ էր սկսվել: Տեսա՝ վեց հոգի օրորվելով, ավտոմատները քարշ տալով գալիս էին: Երկու աղջիկ էին, չորս տղա: Աղջիկները ռուսի արտաքին ունեին: Մտածեցի՝ միգուցե մեր աղջիկներից են, բայց նկատեցի, որ «օդերով» են ման գալիս: Եկան, վեցն էլ ծառին թիկն տվեցին ու սկսեցին ծիծաղել: Տղաներին կանչեցի, գնացինք, նրանց առաջ կանգնեցինք: Ասացին. «Армяне, нас не трогайте, мы кайфуем»: Աղջիկներից մեկը Խարկովից էր, մյուսը լատիշ էր: Իսկ տղամարդիկ թուրքեր էին. մեկը Բաքվից էր, մեկը՝ Աղդամից, երկուսը՝ Կիրովաբադից: Հավաքեցինք փաստաթղթերը, բայց չգիտեինք, թե ինչ անենք, նույնիսկ չգիտեինք՝ մենք այդտեղից դուրս կգանք, թե ոչ: Մի կերպ դուրս եկանք, տղաները մեզ փրկեցին: Այդ ուղեկցող «էշն» էլ հազիվ գլխի ընկավ, թե որ ճանապարհով կարող ենք դուրս գալ: Մի վիրավոր ունեի: Իսկ այդ թուրքերը պատահական գնդակից մահացան: Այս ամենը մեզ համար սովորական դեպքեր էին, որ լինում են պատերազմում: Պատերազմը մեզ համար սարսափելի չէր: Սարսափելին հիմա մեր կյանքն է: Պատերազմում կարող էի, օրինակ, Արայիկին ասել՝ դու մի քնիր, ես մի քիչ քնեմ: Ու հանգիստ քնում էի՝ վստահ լինելով, որ Արայիկը ինձ չի դավաճանի:

Բ. - Տղաները նվիրվա՞ծ էին, լսու՞մ էին քեզ:

Ա.Մ. - Նրանք են ինձ ընտրել եւ ինձ լսում էին, հարգանք կար միմյանց հանդեպ: Պատասխանատվությունը մեծ էր, դժվար էր

հրամանատար լինելը: Երբ բուժքույր էի, պատասխան էի տալիս միայն իմ կյանքի համար, իսկ հրամանատարի դերում պարտավոր էի ավելի զգոն լինել:

Բ. - Ո՞րն է եղել ամենադժվար որոշումը, որ կայացրել եք, խնդիրը, որի լուծումը ձեզ է հանձնված եղել:

Ա.Մ. - Նման մի դեպք եղել է, երբ Մարաղա չհասած՝ Մարգուշավանի մոտ, շրջափակման մեջ երկու օր սոված-ծարավ նստած էինք: Ապրիլի 10-ից հետո թուրքերը երկու-երեք անգամ մտել ու դուրս են եկել: Ապրիլի 10-ին ես այնտեղ էի: Մարաղայի երկրորդ դիրքը մերն էր: Սերգեյն էր այնտեղ, Մարաղեցի Ռոման... Մտանք մի դաշտ, մեծ-մեծ ելակների մարգեր կային: Դրանց մեջ ման գալով՝ ելակ էի ուտում, մտածում էի՝ ջհանդամը, մեռնելուց գոնե կուշտ մեռնեմ: Գյուղը համարյա դատարկ էր: Մտանք տների նկուղները, որպեսզի ուտելու որեւէ բան գտնենք: Գտանք ուտելիք: Նստած էինք, ու մտածում էի, որ ես այլեւս այստեղից դուրս չեմ գալու: Առաջարկեցի, որ ինչ ունենք՝ ամբողջ թղթաբանությունը, պատռենք, որովհետեւ հավանական է՝ գերի ընկնենք: Վեց հոգով էինք, Մարգուշավան գյուղի վերջում՝ նախավերջին տանն էինք, «ԿՆԵԲ»-ի մոտ: Զինվորական բաճկոնի գրպանից հանեցի երեխաներիս նկարները: Տղաների հետ հիմա որ հանդիպում ենք, ասում են՝ երեւի դա ամենասարսափելի պահն էր: Իվանը նայեց աչքերիս, ասաց. «Ընկե՛ր հրամանատար, դու կենդանի նրանց ձեռքը չես ընկնի»: Ասացի. «Շնորհակալություն, Վանյա»: Իվանը բաքվեցի փախստական էր, մինչեւ հիմա էլ Մարտակերտի զորամասերից մեկում գումարտակի հրամանատար է: Տղաներիս նկարները դրեցի առջեւս ու ասացի. «Հաջողություն, երեխեք, էլ չենք տեսնելու իրար, բայց շատ կուզենայի, որ աստծո կողմից ուղարկված մի մարդ ձեզ ասի, որ ես ձեր հոր վրեժը լուծել եմ, ամեն ինչ արել եմ այնպես, ինչպես ճիշտ եմ համարել: Մնաք բարով»: Խոսելով՝ նկարները կամաց-կամաց պատռում եմ: Տղաները մոտեցան, գրկեցինք իրար: Գիշերը կարողացանք գոմերի կողմով դուրս գալ: Շատ վտանգավոր էր, թուրքերն ամենուր էին: Բայց երեւի աստված մեր կողմից էր: Դուրս եկանք Երրորդ սովխոզի ուղղությամբ: Ճանապարհ ընդհանրապես չկար: Այգիների, ցեխերի միջով էինք առաջ գնում: Նրանք դարձյալ կանգնած էին: Ուզում եմ մեր ժողովուրդը չմոռանա, որ առաջին անգամ թուրքին ծնկի է բերել: Իմ տղաներից վեց հոգի զոհվել են, ռուսներից երկուսը Դրմբոնում զոհվեցին: Առաջին զոհը Պավելն էր, հետո՝ տանկիստ Վոլոդյան: Ինքս տղաներին լսում էի, երբ ասում էին, որ ինչ-որ բան սխալ է: Ինձանից ի՞նչ հրամանատար, ոչ էլ կադրային սպա էի, որ պատերազմից բան հասկանայի: Ամեն ինչ սովորել ենք պատերազմի ընթացքում՝ մեր կաշվի վրա զգալով,

միմյանցից հարցնելով, չենք ամաչել չիմանալու համար, մենք մի թիմ էինք: Իմ միակ անխախտ վճիռն այն էր, որ պատերազմից դուրս չեմ գա, մինչեւ նրանք իմ հողից չվերանան: Դրմբոնի կռվի ժամանակ երկու հոգու կորցրի, վեց հոգու գերի վերցրինք, մի ռուս սպայի վերցրինք: Այդ ժամանակ մեր շտաբը Չլդրանում էր:

Բ. - Հրամանատարը Սեյրանն է՞ր:

Ա.Մ. - Այնտեղ էին Սեյրանը, Ֆելիքս Գզողլյանը, Սամվել Բաբայանը, Արկադի Իվանիչը, Դավիթաշենի տղաներն էին, Ղահրամանյան Սամվելը՝ Ոսկորը: Ոսկորենց հետ գնացինք: Երբ գերիներին բերեցինք, ասացի. «Տղանե՛ր, այդ թուրքերից մեկը ինձ ծանոթ է»: Ասացին. «Անո՛, դու լրիվ ստերի հերը անիծիր»: Պնդում էի, որ ես նրան ճանաչում եմ, Բաքվում իմ հարեւանն է եղել: Չէին հավատում, թե՝ հարեւանը եկավ ու քեզ գերի ընկավ: Բոլոր փաստաթղթերը Արկադի Իվանիչը սովորաբար ինձ էր տալիս, ես էի կարդում: Այդ անգամ էլ փաստաթղթերում նայեցի, կարդացի նրա անունը՝ Ռահիմով Սեյրան: Շտաբի մոտ մի սարայ կար, թուրքերին փակել էին այդտեղ: Գզողլյան Ֆելիքսը ինձ կանչեց. «Զեմլյա՛կ, արի՛ այստեղ, սուրճ եմ եփում, ուզո՞ւմ ես խմել»: «Ուզում եմ,- ասացի,- բայց այնտեղ մի թուրք կա, եթե հաստատվեց, որ իմ ասածն է, նրան ինձ եք տալու»: Ֆելիքսը սկսեց հայհոյել ինձ. «Էլի սկսեց այս դաժան, անտեր շունը, քեզ կնիկ ասողի ինչն եմ ասել, հերիք է, էլի: Արի, այստեղ վեր ընկի՛ր: Խոհանոցում հավ են եփում, հիմա հաց կուտես, սոված չե՞ս»: Բայց մինչեւ իմ ուզածը չանեի, չէի հանգստանա: Տղաները հավաքվեցին, թե՝ ի՞նչ է եղել: Սամոն հարցրեց. «Հաստատ գիտե՞ս, որ այդպես է»: Ասացի. «Սամո՛, արի ինձ հետ»: Մտանք այնտեղ: Մոտեցա այդ թուրքին, կոշիկիս ծայրով գլուխը բարձրացրի, ասացի. «Ռագիմով Սեյրան, սալամ ալեյքում»: Նրա մայրը հայուհի էր, իմ եղբայրը նրա մորաքրոջ աղջկան էր ուզում կնության առնել: Թուրքերեն հարցնում եմ. «Ինչու՞ ես եկել այստեղ, ի՞նչ գործ ունես, մորդ ծեծելով ուղարկել են Մոսկվա, եղբայրներդ Մոսկվայում են, իսկ դու եկել ես այստե՞ղ»: Մեր թաղամասում նրանք բանջարեղենի խանութ ունեին: Եթե նրա փաստաթղթերում չկարդայի՝ «Հատուկ նշանակության ջոկատ», հնարավոր է, որ գերիների փոխանակման ժամանակ նրան զիջեի: Շատ նիհար տղա էր՝ սափրած գլխով: Մենք գլուխները սափրած, շերտ-շերտ սեւ մազափնջերը գծերի նման թողած, պարանոցներին հիերոգլիֆներ դաջած տղաների էինք բռնել: Որքան գիտեմ, նրանք մի քանի ամիս Թուրքիայում են սովորել: Երբ փաստաթղթերը նայեցին, ասացին, որ սովորել են, այդ պատճառով էլ կոչվում են Հատուկ նշանակության ջոկատ, ՕՄՕՆ: Այդ տղան քրոջս համադասարանցին էր, դեռ այն ժամանակ հայերին ծաղրում էին: Նրան ասացի. «Քեզ

աստված է ինձ մոտ ուղարկել»: Ասաց. «Ես ձեզ չեմ ճանաչում»: Գլուխը բարձրացրի, ասացի. «Դու ինձ չես ճանաչու՞մ»: Տղաները փորձում էին ինձ հետ պահել՝ ասելով, որ միգուցե ես սխալվում եմ, եւ նա իմ հարեւանը չէ, բացի այդ, արդեն հայ կնոջ կերպարը կորցնում եմ: Ասացի. «Ոչինչ, ես հիմա նրան այնպես կցավացնեմ, որ ամեն ինչ կհիշի, իսկ իմ կանացի կերպարը կորցնում եմ, որովհետեւ իմ դաստուն սրանք են եղել, եւ սարսափելի է, որ ուսուցչիդ գերազանցում ես»: Թուրք տղան ասաց. «Անահի՛տ, ինձ ստիպեցին»: Սամոն զարմացավ, թե՝ «Հա էլի, ճիշտ ես ասում, ո՞նց ճանաչեցիր»: Ասացի. «Դրան ինձ պիտի տաք»: Թուրքը ասաց. «Ինձ մի խփեք, ես ձեզ լավ կծառայեմ, ձեր կողմից կլինեմ»: Ասացի. «Շուտ պիտի մտածեիր այդ մասին, հիմա շատ ուշ է, դուք այնպիսի ցավ եք ինձ պատճառել, որ ամեն ինչի համար պատասխան կտաս»: Ոսկորն առաջարկեց տանել Պուշկին յալ: Թուրքին քարշ տալով տանում էի, ժողովուրդը մեր ետեւից գալիս էր, նույնիսկ լուրը տարածվել էր, որ Անահիտը իր հարեւանին է հանդիպել, տանում է: Սամոն ինձ ասաց. «Հանգիստ եղիր, ես կողքիդ եմ»: Սարսափելին այն է, որ հայ կինը, որը սիրում է ընտանիք, խաղաղություն, սիրում է աստծուն եւ հնազանդ է նրան, հանկարծ դառնում է գազան եւ մարդ մորթելուց բավականություն է ստանում: Եվ դա նրանք են սովորեցրել:

Պավել Երիցյանին դավաճանեցին, հետո ինքը իրեն վերացրեց, բայց նա այդ տղան չէր: Տասնվեցամյա Սուսանը վեց հոգու պայթեցրել է: Նրա համար ցավալի էր, որ իր տղաները իրեն լքել են:

Բեկորի տղաներից մեկը ինձ ասաց, որ Մորուք Ռոման ուզում էր ինձ սպանել: Նա ինձանից զենք էր խնդրել՝ ասելով, որ գերի վերցրած թուրքերի զենքերից է ուզում: Չտվեցի, քանի որ նրան մի անգամ զենք տվել էի, բայց ինչ է արել, չգիտեմ: Նա քրեական դեմք էր, նույնիսկ բանտարկվել է անչափահաս աղջկա բռնաբարության համար: Հետո նրան բռնեցին, տարան Շուշի, դրանից հետո չիմացա, թե նրա ճակատագիրն ինչ եղավ:

Պատմում է Վարդգես Բաղիրյանը (1988-1995 թթ. ԼՂՀ հեռուստառադիո կոմիտեի նախագահի տեղակալ, 1995-1998 թթ. ԼՂՀ հեռուստատեսության վարչության պետ, 1999-2005 թթ. ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, 2005-2008 թթ. ԼՂՀ Հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ, 2009-ից Արցախի Ժողովրդական կուսակցության կենտրոնական գրասենյակի ղեկավար):

28.10.2005 թ., Ստեփանակերտ

Վ.Բ. - 1975 թվականից աշխատում եմ որպես լրագրող: Աշխատել եմ սկզբում ռադիոյում, երբ 1988 թվականին Արցախում հեռուստաընկերություն ստեղծվեց, սկսեցի աշխատել այնտեղ:

Մի դեպք պատմեմ՝ կապված խտրականություն դնելու քաղաքականության հետ: 1987 թվականին ես ռադիոյի գրական-գեղարվեստական բաժնում էի աշխատում: Ինձ գործուղել էին Երեւան, որտեղից ես գրական հաղորդումներ եւ երաժշտական ձայնագրություններ պիտի բերեի: Բերել էի նաեւ Մուշեղ Գալշոյանի «Դավո» պատմվածքի ձայնագրությունը, որը կարդում էր հենց հեղինակը: Դավոն Անդրանիկի զինվորն էր, իսկ այն ժամանակ Ղարաբաղում Անդրանիկ բառը արտասանելը հանցագործության նման մի բան էր: Մեր կոմիտեի նախագահ Գրիգոր Սողոմոնյանին այնքան քաշքշեցին այդ պատմվածքի համար:

1992 թվականի մայիսի 7-ի երեկոյան ես, օպերատոր Բենիկ Ղարախանյանը, օպերատոր Գագիկ Սիմոնյանը, որը Երեւանից էր եկել, գնացինք շտաբ: Այն գտնվում էր Ստեփանակերտի ավտոբազայի տարածքում: Որոշ նկարահանումներ արեցինք: Այնտեղ էին Արկադի Տեր-Թադեւոսյանը, Ֆելիքս Գզողլյանը, Գուրգեն Դալիբալթայանը, Պարգեւ սրբազանը, Արթուր Փափազյանն էր՝ բանակի կապի պետը: Դա ամբողջ հրամանատարական կազմն էր: Սրբազանը մարտի գնալուց առաջ օրհնեց: Մինչեւ Շոշի բարձունքը գնալը (հետո

իմացանք, թե ուր ենք գնում) հարցազրույցներ ունեցանք: Կոմանդոսն ասաց. «Մենք կատարում ենք հայ ժողովրդի կամքը, մենք կհաղթենք»: Կոմանդոսի մեքենայով ինձ, Բենիկին ու Գագիկին տարան հրամանատարական կետը: Մեքենան վարորդը՝ Քաջիկը, քշում էր առանց լուսարձակները վառելու: Մթության մեջ գնում էինք: Հետո իմացանք, որ Դաշուշեն գյուղի վրայով ենք անցել: Երբեմն միացնում էր լույսը, ճշտում տեղանքը: Բարեհաջող տեղ հասանք, երկու ժամ հետո եկան մյուսները: Գիշերը ուղիղ ժամը երկուսն անց կեսին հրաման եղավ, ու Շուշիում սկսվեցին մարտական գործողությունները: Այդ պահին Շուշիից «Գրադ» կայանքով սկսեցին հրթիռակոծել Ստեփանակերտը: Այդ տեսարանը նկարահանել ենք: Մեքենան կանգնած էր հեռուստաաշտարակի բարձունքի վրա, որտեղից հրթիռակոծում էին մայրաքաղաքը: Այդ ժամանակ Կոմանդոսը հրաման արձակեց՝ «Полный залп по базару»: Այդ ժամանակ չգիտեինք, թե «բազարը» ինչ է նշանակում, հետո իմացանք, որ նկատի ունի Աղդամը: Նրանց արձակած հրթիռներին ի պատասխան՝ մի հատ էլ մենք խփեցինք: Հակառակորդի զրահամեքենան իջնում էր Ստեփանակերտի ուղղությամբ, մեր զինվորներից մեկը նռնականետով մի հարվածով ոչնչացրեց: Այդ զրահամեքենան տարիներ շարունակ ոլորանի վրա կանգնած էր: Կոմանդոսը տեղից վեր թռավ ու գոռաց՝ բրա՛վո, բրա՛վո: Նրա եւ մեր ուրախությանը չափ չկար: Զորին փորձեց զգուշացնել, թե կարող է դիպուկահարը աշխատում է: Արկադին ասաց՝ գրողի ծոցը: Ցավոք, այդ ցնծությունը երկար չտեւեց: Երբ մեր եւ հակառակորդի տանկերը դուրս եկան միմյանց դեմ, Արթուր Փափազյանը կապով ասաց. «Զգու՛յշ, դիմացը հակառակորդի տանկն է»: Հանկարծ ուժեղ կրակ եղավ, մեր տանկի մեջ արկերը պայթեցին, տանկի աշտարակը մի կողմ թռավ, տղաները զոհվեցին: Նրանց պատվին տանկը կանգնեցրած է բլրին: Դրանից հետո օդում հայտնվեցին թշնամու ինքնաթիռը եւ միանգամից մի քանի ուղղաթիռ: Շատ ցուրտ գիշեր էր: Լուսադեմին դուրս եկանք խրամատից, որպեսզի մի քիչ տաքանանք: Ուղղաթիռներից մեկը ուղիղ հրամանատարական կետի՝ մեր գլխի վրայով անցավ, կարծես գետնի տակից հայտնվեց: Հազիվ հասցրինք մտնել խրամատ: Տանկի խփվելուց հետո Արկադին դուրս էր եկել հրամանատարական կետից, անհանգիստ ետ ու առաջ էր գնում: Դալիբալթայանն ու Զորի Բալայանը մի քիչ վիճեցին: Մենք էլ ունեինք ուղղաթիռներ, որ պիտի Գորիսից օգնության հասնեին: Այն հարցն էր քննարկվում, թե ինչու չեն գալիս: Դալիբալթայանն ասաց, որ ինքը լիազորված չէ հրաման արձակել, որ ուղղաթիռներն այնտեղից բարձրանան: Զորին ասաց, որ գնում է Ստեփանակերտ, ինձ էլ առաջարկեց միասին գնալ: Սերժ Սարգսյանը

Պաշտպանության պետական կոմիտեի նախագահն էր, այժմյան քաղաքապետարանի շենքում էր նստում: Զորի Բալայանը գնաց Սերժ Սարգսյանի մոտ բանակցելու, իսկ ես մտա ռադիոտուն, տեսնելու, թե ինչ հրավիճակ է տիրում, ինչպես նաեւ ինֆորմացիա տալու համար: Զորին դեռ չէր վերադարձել, ես որոշեցի գնալ տուն՝ ընտանիքիս տեսնելու: Երբ հետ եկա, Զորին արդեն գնացել էր: Շատ ափսոսում, անգամ ցավում եմ, որ բախտ չվիճակվեց զինվորների հետ մտնել Շուշի, գոնե իմ «զենքով»՝ գրիչով ու տեսախցիկով, մասնակցելու ազատագրմանը: Շուշի հասա ավելի ուշ՝ մայիսի 9-ի կեսօրին, Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների հետ: Մտանք Ղազանչեցոց եկեղեցի, որտեղ Պարգեւ սրբազանը պատարագ էր մատուցում: Այդ բոլոր կադրերը տեսագրված են: Ելանք հեռուստաաշտարակի բարձունքը, որտեղից ադրբեջանցիները իրենց հաղորդումներն էին հեռարձակում: Ամբողջ տեխնիկան իր տեղում էր, ոչինչ փչացած չէր: Մինչեւ Շուշիի ազատագրումը, նաեւ այդ օրը որոշում կար (Մինիստրների խորհրդի նախագահը Օլեգ Եսայանն էր), որ հեռուստատեսությունը պետք է տեղափոխվի այդտեղ, քանի որ մեր հեռուստառադիո կենտրոնի շենքը 1992 թվականի փետրվարի 19-ին Շուշիից խփած արկից վառվել էր, ամբողջ արխիվը փչացել էր:

Բ. - Բայց չէ՞ որ մերոնք են պայթեցրել:

Վ.Բ. - Այո, բայց բռնկվել էր, կրակը տարածվում էր, տակը վինապահեստներ էին, պայթեցրինք, որ տեղայնացնենք: Գիտեմ, որ մերոնք են պայթեցրել: Շենքը վառվում էր: Արկերից մեկը ընկել էր ռադիոձայնադարանի մեջ, ժապավենները շուտ բռնկվում էին: Անհրաժեշտ էր թույլ չտալ, որ կրակը տարածվի դեպի նկուղային հարկերը:

Լինելով շարժման ծնունդը՝ հեռուստատեսությունը դարձավ դրա խոսափողն ու թիրախը: Կռիվներ եղան ռադիոստուդիայում: Պոլյա նիչկոն եկավ, ստուդիան գրավեց, սկսեց եթեր դուրս գալ: Ուզում էր մեր միջոցով հեռուստատեսություն մտնել, բայց մենք դա թույլ չտվինք: Հեռուստատեսությունը չկարողացան աշխատեցնել, բայց ռադիոն այսպես թե այնպես աշխատեց: Պայթեցնելուց հետո՝ նոյեմբերին, վերանորոգեցինք: Ընդամենը մի ամիս եթեր դուրս եկանք, քանի որ 1991 թվականի նոյեմբերի 23-ից քաղաքը հոսանքազրկվեց: Իսկ 1992 թվականի փետրվարին մնացինք առանց ռադիոյի եւ հեռուստատեսության: Դրա համար որոշում կայացվեց՝ հեռուստատեսությունը տեղափոխել Շուշի: Մայիսի 10-ին ես, Գագիկ Սիմոնյանը, Սվետլանա Կուրչիցկայան, որը մոսկվացի լրագրող էր, մի քանի անգամ եկավ Ղարաբաղ, նկարահանումներ կատարեց եւ Ռուսաստանի հեռուստադիտողին օբյեկտիվ տեղեկություններ էր հաղորդում, թե իրականում ինչ է կատարվում, միասին թռանք Երեւան: Սարսափելի

օր էր, տեղատարափ անձրեւ էր գալիս: Ո՞վ կմտածեր, որ ինքնաթիռը այդ եղանակին կկարողանա վայրէջք կատարել: Ինքնաթիռից տղաներ իջան: Զինվորական հագուստով մեկը մոտեցավ ինձ, բարեւեց: Աչքերիս չհավատացի: Սամվել Շահմուրադյանն էր: Մենք լավ բարեկամներ էինք: Նա Գերագույն խորհրդի պատգամավոր էր: Հարցրի, թե ինչ է անում այստեղ զինվորական հագուստով: Ասաց. «Տղաներին բերել եմ, պետք է գնանք»: Սամվելը Վաղուհասի մարտերից մեկում զոհվեց: Մի ինքնաթիռով գնացինք Երեւան: Ջանհասանում զոհված գյումրեցի տղաների դիակները, դագաղների մեջ դրված, տանում էին: Ինքնաթիռը պիտի շուտ թռչեր, որովհետեւ Աղդամից անընդհատ կրակում էին: Երբ բոլորս սպասումի մեջ էինք, դրսից ինքնաթիռի դուռը թակեցին: Գյումրեցի մի տղա, որ ընկերների դիակներն էր տանում հայրենի քաղաք, ասաց. «Ծո՛, ո՞վ է, տեղ չկա»: Դրսից պատասխանեցին. «Օդաչուն եմ, բացե՛ք, առանց ինձ ու՞ր եք գնում»: Ոտք դնելու տեղ չկար, ինքնաթիռի անձնակազմը ստիպված էր դագաղների վրայով հասնել խցիկը: Հրամանատարը շուռ եկավ դեպի մեզ, ասաց. «Որ մեկիդ էլ ասեմ՝ իջեք, կասեք՝ կարեւոր գործ ունեմ: Պարզ է, որ այդպես է, բայց, խնդրում եմ, մի քիչ հետ գնացեք, որ գոնե կարողանամ ինքնաթիռի քիթը բարձրացնել: Թռիչքի ապահովության ոչ մի երաշխիք չեմ կարող տալ: Գնում ենք, աստված մեզ հետ»: Մինչեւ ինքնաթիռը գետնից պոկվեց, չեմ կարող ասել, թե մեզ հետ ինչ էր կատարվում: Թվում էր՝ ինքնաթիռը անվերջ գնում է եւ չի բարձրանում: Ի վերջո բարձրացանք օդ: Խաղաղ ժամանակ «ՅԱԿ-40» ինքնաթիռը Ստեփանակերտ-Երեւան չվերթը կատարելիս անցնում էր Աղդամը, բարձրություն էր վերցնում, հետ էր դառնում, թռչում: Իսկ պատերազմի ժամանակ ինքնաթիռը, չհասած Ասկերանի սարը, թեքվում էր ձախ, ռազմական օդանավի պես միանգամից բարձրություն էր վերցնում դեպի Շուշի եւ Հայաստանի Հանրապետություն: Բարեհաջող հասանք Երեւան: Սիմոնյան Գագիկի հետ անմիջապես գնացինք հեռուստատեսություն: Մարդիկ չէին հավատում, որ Շուշին ազատագրվել է: Մենք Շուշիի ազատագրման վերաբերյալ նյութ ունեինք: Այդ օրը տեսանյութ պատրաստեցինք, որը եթեր հեռարձակվեց ՀՀ հեռուստատեսությամբ: Ավելի ընդգրկուն տեսանյութ էլ ունեինք, որը պատրաստել էինք 1992 թվի մարտ-ապրիլ ամիսներին: Այդ ժամանակ հեռուստատեսության ղեկավարը Սամվել Գեւորգյանն էր, որի հետ պայմանավորվել էինք նյութը պատրաստել եւ տալ: Հաջորդ օրը պետք է եթեր գնար, բայց չգնաց: Հինգ օր չարչարվեցինք: Չորս հոգով՝ Տիգրան Նաղդալյանը, Ալեքսան Հարությունյանը, Գագիկ Սիմոնյանը եւ ես, մամուլի ասուլիս հրավիրեցինք, թերթերում գրեցինք, որ Շուշիի ազատագրման մասին տեսանյութ ունենք, իսկ

հեռուստատեսությունը հրաժարվում է ցուցադրել: Միայն մայիսի 15-ին նյութը եթեր գնաց:

Բ. - Ի՞նչ եղավ Շուշիի հեռուստատեսության խնդիրը:

Վ.Բ. - Հաղորդումը եթեր տալու հաջորդ օրը ես պիտի վերադառնայի: Բայց մայիսի 15-ին ինքնաթիռը Շուշիից արձակած նրթիռից վառվեց: Շավարշ Վարդանյանը ինքնաթիռի մեջ էր, նա վիրավորվեց, իսկ նկարահանված նյութերը ոչնչացան: Օդային հասնապարհը կտրվեց: Հետո Լաչինը ազատագրվեց, միջանցքը բացվեց, ցամաքային ճանապարհով կապ հաստատվեց Ղարաբաղի ու Հայաստանի Հանրապետության միջեւ: Ես հունիսի 1-ին նոր վերադարձա Ղարաբաղ: Շուշին լրիվ ավերված տեսա, այդ թվում՝ հեռուստաշտարակը: Նկարահանումների գնում էինք ինչով պատահեր: Հեռուստատեսությունը ոչ մի փոխադրամիջոց չուներ: Հեռուստատեսությունը՝ որպես այդպիսին, գոյություն չուներ էլ: Երեւանից մեր գործընկերները եկան, հեռուստատեսության նախկին ղեկավարի փոքր աշխատասենյակում ստուդիա սարքեցինք, որտեղից 1992 թվականի հունիսի 24-ից եթեր հեռարձակեցինք մեր հաղորդումները: Այդ իրողությունը մեծ ոգեւորություն առաջ բերեց: Մարդիկ հավատային՝ ամեն ինչ է, որ վերջացած է: Հինգ-վեց հոգով էինք հեռուստատեսությունը պահում: Երկու տեսախցիկ ունեինք: Նկարահանող խմբերը ներթով գնում էին ճակատ, հաղորդում պատրաստում: Վիրավոր զինվորների տակից արնաթաթախ ներքնակները հանե ցինք, գետում լվացինք եւ բերեցինք ստուդիայում տեղադրեցինք՝ որպես լուսա- եւ հայելամեկուսիչներ ու սկսեցինք եթեր դուրս գալ: Երբ զինվորներին նկարահանում էինք, ասում էին. «Մերոնք երեւի մեզ կտեսնեն»: Այն պայմաններում, երբ վտանգավոր էր անգամ փողոց դուրս գալը, հեռուստատեսության աշխատակիցները շարունակեցին իրենց գործը: Տեսանյութերը նաեւ ուղարկում էինք Երեւան, Երեւանից էլ՝ դուրս, որպեսզի աշխարհն իմանա, թե իրականում ինչ է կատար- վում Ղարաբաղում: 1992 թվականի աշնանը Գեորգի Ղազարյանի, որի հետ լենինգրադցի լրագրող Տանյա Ալիխանովան էր, Դաշուշենի ջո- կատի տղաների, քոլատակցի Հայրոյի հետ մեքենայով գնացինք Նախիջեւանիկի ձորակի գյուղերը, նկարահանումներ արեցինք: Գոռ անունով մի տղա կար Կալինինոյի շրջանից, նա էր մեզ ուղեկցում: Մեր եւ Աղդամի միջեւ չեզոք գոտի էր: Տղաները տարան մի դաշտ, որտեղ խոշոր ճակատամարտ էր տեղի ունեցել: Ամեն մի նկարահանման ժամանակ մենք վախենում էինք ականի վրա պայթելուց: Աստիճանաբար սկսեցինք դրան էլ ուշադրություն չդարձնել: Գոռը տանում էր իր ետեւից՝ պատվիրելով աջ ու ձախ չընկնել: Աշուն էր: Նռան ծառ տեսանք, սկսեցինք նուռ քաղել՝ չմտածելով ականների մասին:

Հասանք չեզոք կոչված վայրը: Մեզ հնարավորություն էր տրվել Աղդամը նկարահանելու: Հաղթանակի պես մի բան էր մեզ համար: Վերեւից նկարեցինք Աղդամը: 1992 թվականի աշնանը առաջին անգամ հանդիպեցի Մոնթե Մելքոնյանին: Այդ հանդիպումը ճակատագրական էր երկուսիս համար, մենք ընկերներ դարձանք: Մեր առաջին զրույցից հետո նա ինձ այնքան գերեց, որ անընդհատ փնտրում էի նրան, գնում նրա հետքերով, որպեսզի նկարեմ, հարցազրույց վարեմ: Մի քանի ամիս տեւեց մեր ընկերությունը: 1993 թվականի հունիսին նա Աղդամի ճակատամարտում զոհվեց: Մոնթեին կառավարության շենքի առաջ հանդիպեցի: Պատրաստվում էին գնալ Մարտունի: Նա այնպես բարեւեց ու հարցրեց՝ ո՞նց ես, կարծես հարյուր տարվա ծանոթներ լինեինք: Գնացինք, շրջեցինք նոր ազատագրված տարածքներով: Այն ժամանակ չգիտեինք՝ ով է Ավո-Մոնթեն: Նկարահանումներ արեցինք, Կուրոպատկինոյում տանկի ֆոնի վրա հարցազրույց վարեցի Մոնթեի հետ: Ասում էր. «Եթե մենք կորցնենք Արցախը, կդարձնենք մեր ժողովրդի պատմության վերջին էջը: Այս կռիվը միայն Արցախի կռիվը չէ, այլ ամբողջ հայ ժողովրդի»: 1993 թվի փետրվարին մի օր Մոնթեն ասաց. «Կուզե՞ք ձեզ տանեմ Աղդամ»: Գեորգի Ղազարյանի հետ էի: Զարմացանք, թե՝ այս ի՞նչ է ասում, Աղդամը թուրքերի ձեռքին է: Մարտունի - Աղդամ ճանապարհով գնում էինք, արդեն հասնում էինք Աղդամ ու մտածում, թե այս մարդը մեզ ուր է տանում: Թեքվեցինք աջ, Մարգիլլու գյուղի վերեւով գնացինք: Տեսնել էր պետք, թե այդ տղաները Ավոյին ոնց էին ընդունում: Այդպիսի սեր ու նվիրվածություն ուրիշ ոչ մեկի հանդեպ չեմ տեսել: Տղաները նրա անունով երդվում էին: Երբ մտանք խրամատ, մեկը ասաց. «Ավո՛, արի մեր եղած-չեղածից մի բան ուտենք»: Ավոն ասաց. «Եղածից դուք կերեք, չեղածից, համարեք, որ մենք կերել ենք»: Թշնամուց մի տանկ էին վերցրել: Տղաներից մեկն ասաց. «Ավո՛, էս տանկը մեզ չե՞ս տա»: Ավոն էլ ասաց. «Տանկ ես ուզում՝ գնա թուրքերից վերցրու, ինձանի՞ց ինչու ես ուզում»: Մեզնից ոչ ոք չգիտեր, որ նրա իսկական անունը Մոնթե է: Երբ մեր առաջին հանդիպմանը՝ հարցազրույցի ժամանակ, հարցրի, թե ով է, պատասխանեց. «Ատիկա կարեւոր չէ, կարեւորն այն է, որ հայը գալիս է իր հայրենիքը պաշտպանելու»: Երկրորդ հանդիպման ժամանակ, միգուցե վստահություն էի ներշնչել, ասաց. «Իսկական անունս Մոնթե Մելքոնյան է, Ավո անունը ստացա, երբ առաջին անգամ գնացի Շահումյան»:

1993 թվականի մարտի 31-ին Գեորգի Ղազարյանի ու բժշկական ծառայության պետ Վալերի Մարությանի հետ մեքենայով գնացինք Դրմբոն, որտեղ հոսպիտալներից մեկն էր տեղակայված: Մարությանը մնաց հոսպիտալում, իսկ մենք խնդրեցինք մեքենան տալ մեզ, որպեսզի նկարահանումների գնայինք: Պուշկին յալը նոր էին վերցրել, մարտի 27-ին, բայց Մարտակերտի հեռուստաաշտարակը ազերիների վերահսկողության տակ էր: Ասացին, որ այնտեղ վիրավոր կա, մեքենայով պիտի գնան նրան բերելու: Ես ու Գեորգին նստեցինք մեքենան ու գնացինք այնտեղ: Ճանապարհին մտանք Դադիվանք: Այն նոր էին ազատագրել: Շտապում էինք, բայց հասցրինք որոշ կադրեր նկարել: Հետո նկարահանումներ արեցինք Կուսապատում: Պուշկին յալում Շոշի տղաներն էին, կապվեցինք նրանց հետ, ասացին, որ վիրավորը այնքան էլ ծանր վիճակում չէ, կարող ենք հիմա չգնալ: Բայց պնդեցինք, որ մեզ տանեն Պուշկին յալ, որպեսզի նկարահանումներ կատարենք: Վարորդն ասում էր. «Չեմ կարող, ինձ խփելու են»: Համոզեցինք: Մտանք Ներքին Հոռաթաղ, նկարեցինք: Բարձրացանք Պուշկին յալ, այնտեղ էլ նկարեցինք: Բարեբախտաբար մեզ վրա չկրակեցին: Այդտեղ մի կետ կար, որտեղից Մարտակերտը երեւում էր: Հրամանատարը Շոշից Կարենն էր, նա Գեորգի Ղազարյանին ասաց. «Մի՛ գնա այդ կողմը, կարող է կրակեն»: Բայց Գեորգին ռիսկի դիմեց, մոտեցավ եւ նկարեց Մարտակերտի համայնապատկերը, որը ադրբեջանցիների ձեռքին էր: Տղաներին նկարեցինք, հարցազրույց վերցրի: Դրանից մի քանի օր հետո Պուշկին յալը ադրբեջանցիները նորից վերցրին: Ապրիլի 1-ին այնտեղ հանդիպեցինք Մոնթեին: Մենք գնացել էինք կապավորների՝ Արթուր Փափազյանի մոտ նկարահանումների: Մոնթեն եկել էր իր ռացիան վերալիցքավորելու: Այդտեղ էլ վարեցինք այն նշանավոր հարցազրույցը, որի ընթացքում Մոնթեն ասաց. «Այս շրջանի ազատագրումը ունի եւ՛ քաղաքական, եւ՛ պատմական, եւ՛ մշակութային հսկայական նշանակություն»: Հարցազրույցը Դադիվանքի ֆոնի վրա էր: Ասաց. «Ուր որ կնայինք, հայկական եկեղեցիներ են»: Այդ օրը զրուցեցինք նաեւ Մարտակերտի ինքնապաշտպանական շրջանի հրամանատար Նորիկ Դանիելյանի հետ, նկարեցինք զինվորներին: Հանդիպեցի նաեւ Սամվել Բաբայանի հետ: Նա չցանկացավ տեսախցիկի առաջ զրուցել: Ասաց. «Հիշու՞մ ես՝ ասում էի, որ Ղարաբաղը Հայաստանին կապող երկրորդ ճանապարհն էլ պիտի ունենա: Խոսքը սրա մասին էր»:

Հիշում եմ իմ հարցազրույցը Վազգեն Սարգսյանի հետ Գորիսում 1993 թվականի փետրվարի 5-ին, երբ նկարահանումների էինք գնացել Գյուլիբերդի, Լաչինի կողմերը: Այնտեղ դրությունը խառն էր, թուրքերը փորձում էին վերագրավել Լաչինը, փակել ճանապարհը: Պատասխանելով իմ հարցերին՝ Վազգեն Սարգսյանը ասաց. «Որպեսզի Արցախը ապահով լինի, այն Հայաստանին կապող երկրորդ ճանապարհը պիտի ունենա»: Այդ երկրորդ ճանապարհը մենք ունեցանք ապրիլի սկզբին: Հետագայում բազմաթիվ նկարահանումներ կատարեցի

տարբեր օպերատորների՝ հիմնականում Բենիկ Ղարախանյանի, Արթուր Ներսիսյանի հետ: 1993 թվականի վերջին եւ 1994 թվականին մի քանի անգամ եղանք Մարտակերտում: 1994-ի փետրվարին գնացինք Տոնաշենի ուղղությամբ: Այն հունվարին ազատագրվել էր: Մեզ ուղեկցում էր Լեւոն Երանոսյանը, որն այդ ժամանակ պարետն էր: Տոնաշենի վերեւից նկարեցինք Մատաղիսը, որը դեռ ազատագրված չէր: Տղաները հարցնում էին. «Այդ տեսագրությունները Երեւան էլ ե՞ք ուղարկելու, այնտեղ է՞լ են ցույց տալու, մերոնք տեսնելու՞ են»: Մեկը ծնողներին էր բարեւում, մյուսը հարցնում էր՝ կարելի՞ է սիրած աղջկաս մի երկու բառ ասեմ: Միրզոյան Ռենալը այդ տարիներին շատ էր գալիս Ղարաբաղ, նյութեր հավաքում «Արցախյան տարեգրության» համար, կարեւոր, հսկայական գործ էր անում: Նյութերը Ռենալի հետ ուղարկում էինք Երեւան, եւ դրանք ցուցադրվում էին հեռուստատեսությամբ: Հաջորդ օրը Մաղավուզի ուղղությամբ գնացինք դարձյալ Մատաղիս գյուղի վերեւը: Այս անգամ մեզ ուղեկցում էր Ֆրունզիկը, որին «պալկովնիկ» էին ասում: Նա կադրային սպա էր: Փետրվարին էր, ձյունը, սառույցը հալչում էին, ճանապարհները ցեխոտ էին: Ֆրունզիկը վարորդի կողքին էր նստած, ես ու Արթուր Ներսիսյանը՝ ետեւի նստարանին: Մեքենան կանգնեցրին, ասացին. «Պարոն գնդապետ, այլեւս չի կարելի մեքենայով գնալ, ականապատված է»: Ֆրունզիկը ասաց. «Քո կարծիքով՝ ես չգիտե՞մ, որ ականազերծված չէ, տղաներին ինչու՞ ես վախեցնում»: Հիմարություն կլինի ասել, թե մենք չէինք վախենում, բայց պալկովնիկը այնքան հումորով անցկացրեց, թե՝ բան չկա, գնում ենք, որ նույնիսկ վախը անցավ: Ցավոք սրտի, մարտկոցները չհերիքեցին, որպեսզի կարգին նկարահանումներ անեինք: Բայց եղած կադրերն էլ, ինչպես նաեւ այդ տարիների բոլոր նկարահանումները այսօր մեր հեռուստատեսության ոսկե ֆոնդն են: Դրանից հետո հաճախակի գնում էինք Մարտակերտ, հատկապես Մեծ շեն, որտեղ մեր հիմնական բազան էր: Այնտեղից տարբեր ուղղություններով գնում էինք նկարահանման: Տղաները Հակոբ Կամարիի, Մաղավուզի ուղղությամբ գտնվող մի խրամատ ցույց տվին՝ լցված ձյունով, ցեխով: Պատմեցին, որ այդ խրամատի համար շատ մեծ մարտեր են եղել, այն ռազմավարական նշանակություն ուներ: Սկզբում թուրքերն են այնտեղ եղել, հայերը վերցրել են՝ թուրքերի դիակները փռելով խրամատում: Հետո թուրքերն են խփել, խրամատը վերցրել՝ այս անգամ հայերի դիակները փռելով այնտեղ: Մի քանի անգամ միմյանց ձեռքից վերցրել են: Եվ երբ մերոնք վերջնականապես խրամատը վերցրել են, տեսել են, որ շերտ-շերտ դիակներ են: Որպեսզի կարողանան առանձնացնել հայերի եւ ազերիների դիակները, ստուգել են, թե ովքեր են թալատված: Մեր տղաներին

հանել թաղել են: Երբ նկարում էինք խրամատը, թուրքերի լեշերը այնտեղ մնացել էին: Ղարախանյան Բենիկի հետ Մատաղիս գնացի 1994-ի ապրիլի 12-ին, երբ արդեն երկու օր էր, ինչ գյուղը ազատագրել էին: Սպասվում էր Թալիշի ազատագրումը: Վաշտի հրամանատարը նախիջեւանցի Լյովան էր, որն էլ մեզ ուղեկցեց դիրքեր: Մեքենայով գնացինք Մատաղիս: Գյուղի վերեւում երեք բարդի կար, հասանք այնտեղ, դրանից հետո ճանապարհը ոտքով շարունակեցինք: Լեւոնը պատվիրեց գնալ ուղիղ իր հետեւից: Նկարահանելով էինք գնում: Բարձրացանք Թալիշը շրջապատող բլուրները: Տղաները արդեն դիրքավորվել էին: Մարտը սկսվեց մոտ ժամը չորսին: Բենիկի հետ տեղից տեղ էինք անցնում, նկարում: Նկարահանման ժամանակ զգացինք, որ թշնամու արձակած արկը գալիս է ուղիղ մեզ վրա: Այդ տեսարանը նկարված է: Լսվում է արկի ձայնը, երեւում է, թե ինչպես է այն պայթում մեզնից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա: Այդ պայթյունից տեսախցիկի օբյեկտիվը փակվում է: Հաջորդ կադրում, երբ արդեն սպիտակ ֆոնը բացվում է, մենք, գլուխներս ոտքերի արանքում պահած, մի կերպ պաշտպանվում ենք: Բեկորները խշշոցով օդի մեջ էին տարածվել: Գնալուց առաջ Մանվել Գրիգորյանը Լեւոնին ասաց. «Եթե այս տղաների հետ մի բան պատահի, ձեռքիցս չես պրծնի»: Նկատի ուներ ինձ ու Բենիկին: Տղաները, մարտով տարված, մոռացել էին մեր մասին: Մի պահ տեսա, որ բլրի վրա մնացել ենք միայն ես ու Բենիկը: Ծվարած կանգնել էինք՝ չիմանալով ինչ անել: Մտածում էինք՝ առաջ գնանք տղաների ետեւից, թե՞ հետ դառնանք Մատաղիս: Տեղանքին ծանոթ չէինք, մութն էլ ընկնում էր: Ձախ կողմի վրա Չայլու գյուղն էր, որտեղ ադրբեջանցիներն էին: Ռացիա չունեինք, որպեսզի հայտնեինք մեր տեղը: Որոշեցինք ետ դառնալ, մեր եկած ճանապարհը գոնե քիչ թե շատ ծանոթ էր: Չայլուից ադրբեջանցիները նկատել էին մեզ, եւ տանկը սկսեց աշխատել երկուսիս վրա: Հիշում էինք, որ ասել էին՝ աջ ու ձախ չանեք, տարածքը ականազերծված չէ, ուղիղ գնացեք, որ չպայթեք: Բայց այդ մասին մտածելու ժամանակ ու հնարավորություն չկար: Աջ կողմում բլուր էր, արկը կպնում էր այդ բլրին, բեկորների խշշոցը օդի մեջ լսվում էր: Վազելով փախչում էինք: Եթե այդ պահին հնարավոր լիներ վայրկենաչափով ստուգել մեր արագությունը, երեւի համաշխարհային ռեկորդ սահմանած կլինեինք: Մոռացել էինք անգամ ականների մասին: Մահը քթերիս տակ էր: Կողմնորոշվելու միակ հնարավորությունը երեք բարդիներն էին: Վազում էինք դեպի ծառերը: Հասանք գյուղ, տեսանք՝ մի զրահամեքենա է կանգնած: Մտածեցինք՝ այդ վտանգից ազատվելուց հետո գերի ենք ընկնելու: Բարեբախտաբար, մեր զրահամեքենան էր: Ուրախությունից ցնծում էինք: Նկարելու

հնարավորություն այլեւս չկար, ո՛չ մարտկոց ունեինք, ո՛չ ժապավեն: Զինվորական հագուստով էի: Անդրավարտիքի գրպանից ուզում էի հանել իմ բլոկնոտն ու գրիչը: Չորս գունանի գրիչ էր, բարոնուհի Քոկսն էր նվիրել: Ուզում էի գրառումներ անել, բայց ոչ ծոցատետրը կար, ոչ գրիչը: Շատ ափսոսացի, որ կորցրել եմ, բավական շատ գրառումներ ունեի:

Փետրվարին Արթուր Ներսիսյանի հետ գնացել էի Ֆիզուլի: Այնտեղ դրությունը խառն էր, 1993-ի դեկտեմբերին ազերիները հարձակում էին գործել: Գնացինք Սամվել Բաբայանի հետ ու նկարահանումներ արեցինք: Այդ ժամանակ հրամանատարը Սեյրան Օհանյանն էր, նրա հետ հարցազրույց ունեցա: Հանգստացրեց՝ ասելով, թե, ճիշտ է, թշնամին որոշ առաջխաղացում ունի, բայց ամեն ինչ կարգին է: Նկարեցինք Արթուր Աղաբեկյանին՝ Հադրութի հրամանատարին: Նա մի շատ հետաքրքիր դեպք պատմեց. «Կարախանբեյլի գյուղի մոտ մարտերից մեկի ժամանակ մի կողմում հայերն են, մի կողմում՝ ազերիները: Թանձր մառախուղ էր, որից օգտվելով՝ ազերիները փորձել են առաջ շարժվել եւ անակնկալի բերել մերոնց: Բայց, կարծես աստծո կամքով, մառախուղը միանգամից ցրվում է, եւ ազերիները հայտնվում են խաղողի այգիների մեջ՝ ուղիղ նշանառության տակ: Մեր տղաները հնձում են նրանց»: Արթուրը տեղը ցույց տվեց, նկարեցինք այդտեղ ընկած թշնամու դիակները: Այդ օրերից շատ տխուր մի պատմություն եմ հիշում: Գեորգի Ղազարյանի հետ պատրաստվում էինք Ֆիզուլիից վերադառնալ: Այնտեղ հոսպիտալ կար: Մարության Վալերին ասաց, որ մեքենայի մեջ մի վիրավոր կա, որին պիտի հոսպիտալ հասցնենք: Վիրավորին միացրած էր կաթիլայինը: Մեզ զգուշացրին, որ երբ նարկոզի ազդեցությունը թողնի, թույլ չտանք, որ շարժումներ անի, այդ կաթիլայինը հանի: Մոտ երկու մետր հասակ ունեցող տասնութ-քսան տարեկան տղա էր: Ճակատից էր վիրավորվել, այն կապած էր: Աչքերը փակ էին: Այդ վիճակում էլ արտակարգ գեղեցկություն ուներ, կարծես Ապոլլոնը լիներ: Ճանապարհները ահավոր վիճակում էին: Մի կերպ հասանք Ստեփանակերտ: Բարձրանում էինք դեպի հուշահամալիրը, տղան սկսեց կտրուկ շարժումներ անել ու փսխել, կարծես խեղդվում էր: Ես ու Գեորգին չգիտեինք ինչ անել, գոնե բուժքույր լիներ մեզ հետ: Վարորդին ասացինք, որ ավելի արագ քշի: Մաքրեցինք փսխածը, նրան բերեցինք հոսպիտալ, հանձնեցինք բժիշկներին: Այնտեղից պետք է ուղարկեին Երեւան, որպեսզի նեյրովիրաբույժը վիրահատի: Իմացանք, որ չէին հասցրել, տղան երրորդ օրը մահացել էր:

Մեխակ անունով մի պայծառ տղա կար, որը հինգերորդ բրիգադում էր ծառայում: Նա համալսարանական կրթություն ուներ, երգում էր,

նվագում: Ես նրան Մեծ շենում եմ տեսել: Պայմանավորվել էինք, որ մարտական գործողությունների ժամանակ Գրիգորյան Մանվելը մեզ համար մեքենա պիտի ուղարկի, նկարահանումների գնանք: Մայիսի 6-ին թե 7-ին մեր ետեւից մի մեքենա եկավ: Թալիշը արդեն ազատագրված էր: Թալիշից վերեւ ադրբեջանական Թափ-կարակոյունլու գյուղն է: Բարձունքների շղթան տանում է մինչեւ Միր - բաշիր քաղաքի վերեւը: Այնտեղից Միրբաշիրը նկարեցինք: Միրբաշիրին խփելով՝ ազատագրում էինք Լենինավանը, Չայլուն, եւ դա ծրագրում կար: Մեզ Մանվելն էր ուղեկցում: Նա ցույց տվեց այն տեղը, որտեղ մայիսի 1-ին՝ մարտի ժամանակ, զոհվել էր Մեխակը: Դրանից առաջ մի ամբողջ գիշեր նստել-զրուցել էինք: Այդտեղ իմացա, որ Մեխակը չկա: Այդտեղ էլ հողին էին հանձնել: Երբ Մանվելի հետ այդ ուղղությամբ գնում էինք, առջեւից մեքենայով նրա թիկնապահներն էին գնում: Տեղանքը ականազերծված չէր, դեռ նոր էին ազատագրել: Մանվելը առջեւից գնացող մեքենային հրամայեց սպասել: Ասաց. «Բոլորդ նստեք մյուս մեքենայի մեջ եւ իմ հետեւից եկեք»: Թիկնապահները թե՝ «Ոնց կլինի, ձեր կյանքի համար պատասխանա- տու ենք»: Բայց ստիպված էին ենթարկվել հրամանին: Մանվելը նստեց «ՈՒԱԶ»-ի ղեկին, մենք նրա ետեւից շարժվեցինք: Իմ կարծիքով՝ դա հերոսական քայլ էր: Այդ օրերին նկարահանումներ ժամանակ հանդիպեցինք Ջեմմա անունով մի կնոջ: Զարմանալի էր պատերազմի այդ թոհուբոհի մեջ կին տեսնելը, որը կարգին շպարված էր, լաչակը կապած: Հարցազրույց ունեցա նրա հետ: Հարցրի. «Պատերազմի ժամանակ է՞լ եք պահպանում ձեր կանացիությունը»: Պատասխանեց. «Կինը միշտ էլ կին է մնում, միշտ էլ պիտի պահպանի իր գեղեցկությունը, եւ հետո՞ ինչ, որ պատերազմ է: Կյանքը ավելի զորեղ է, քան մահը»: Հաջորդ օրը Միրբաշիրի գործողությունները պիտի լինեին: Ուժեղ անձրեւ եկավ, տեխնիկան ցեխի մեջ չէր կարողանում աշխատել: Մանվելն ասաց. «Գնացեք, որ խփելու լինենք, ձեր ետեւից մեքենա կուղարկեմ»: Ի զարմանս մեզ, մի քանի օր հետո զինադադար կնքվեց:

Պատմում է Ռաիսա Ստարամուդ Գրիգորեւնան:

30.10.2005 թ. Հաթերք

Ռ.Ս. - Ես Բրյանսկի մարզի Դուշատինսկի շրջանի Միխայլովկա գյուղից եմ, ծնվել եմ 1933 թվականին: Երբ քսանվեց տարեկան էի, հայկական կառավարու-թյան հրավերով որպես որակի մասնագետ եկա Երեւան, աշխատե- ցի մինչեւ 1964 թվականը: Հետո ամուսնացա հաթերքցի Վիլեն Դանիելյանի հետ: Հիմա ես Երեւանում եմ բնակվում, ու Դադիվանք գյուղը որդուս հյուր եմ եկել: Երբ սկսվեց պատերազմը, հարսս հիվանդ էր, ու ես նրան խնամում էի Հաթերքում: 1991 թվին Ադրբեջանական ՕՄՕՆ-ը Հաթերք մտավ: Բոլորը փախչում էին գյուղից: Որդիս՝ Դանիելը ու ամուսինս վերցրին հրացանն ու պայթուցիկները, գնացին կանգնեցնելու թշնամուն: Առավոտյան օմօնականները շրջապատեցին մեր տունը: Մենք տեսանք տանկեր, զրահամեքենաներ: Ամուսինս ուզում էր թաքցնել զենքը: Հանկարծ լսվեց հրահանգը՝ «Կանգնի՛ր, կկրակեմ»: Մեզ բռնեցին զենքը ձեռքներիս: Տունը խուզարկեցին, զինամթերքով արկղ գտան: Ադրբեջանցին հարցրեց՝ ո՞վ ես, ասացի՝ Դանիելի մայրն եմ: Ասաց՝ դու ավազակի մայր ես: Թքեց ինձ վրա: Ասացի, որ գնալու եմ բողոքեմ: Ծաղրանքով հարցնում է՝ ո՞ւմ ես բողոքելու, ասում եմ՝ Գորբաչովին, պատասխանում է՝ թքել եմ: Լաց եղա: Մենակ մնացի: Մերոնց Ումուդլու տարան: Այնտեղ նրանց ծեծել էին, տանջել: Հետո տեղափոխեցին Միրբաշիր, այնտեղ էլ էին ծեծել, ինչպես շան առաջ՝ մի կտոր հաց են նետել: Հետո Շահբուլաղ էին տարել: Երեսուն հազար ռուբլի հավաքեցինք, որ ետ գնենք մեր գերիներին: Երկու հազարը իսկույն տվեցի, մնացածը տվեցի բարեկամիս, բայց այդ փողերը կորան: Տասը հազար ռուբլի կապեցի գոտուս մեջ ու գնացի Ստեփանակերտ: Այնտեղ շտաբում ես դիմեցի ռուս գնդապետին: Նա կալանավայրերի հետ կապ ուներ, ասաց, որ մերոնց Բաքու են տարել: Ես չհավատացի եւ գնացի Շուշի: Քաղաք չհասած՝ ինձ կանգնեցրեց ռուս զինվորը, նստեցրեց ադրբեջանական ավտոբուսը: Գնացի նրանց շտաբը: Այնտեղ մի ռուս գնդապետ կար: Կարգադրեցին բացել պայուսակս: Ասացին. «Ռուս կանայք են գալիս ու պայթեցնում...»: Գնդապետն

ասաց, որ եթե Վիլենն ու Դանիելը այստեղ լինեին, ապա որդուս բաց կթողնեին, ամուսնուս՝ ոչ: Բաքվեցի հետաքննիչը նրանց տարել էր իր հետ: Որոշեցի Բաքու գնալ: Ոտքով Շուշիից ճանապարհ ընկա: Ասացին, որ ինքնաթիռ չնստեմ, քանի որ փողերս կխլեն ձեռքիցս: Ճանապարհին ավտոբուսը կանգ առավ:

- Ռու՛ս, մեռնո՞ւմ ես հոգնած,- դիմեց վարորդը:

- Մեռնում եմ, եղբայր,- ասացի ես:

- Դե, նստիր, կտանեմ:

Երեք ռուբլի տվեցի, մինչեւ Աղդամի շուկա հասցրեց: Այնտեղից տաքսիով ավտոկայան հասա: Պայուսակիս մեջ Դանիելի կոստյումն էր, կոշիկները եւ ուրիշ ոչինչ: Մոտեցա տոմսավաճառի տաղավարին եւ Բաքվի տոմս խնդրեցի:

- Քանի՞ տոմս ես ուզում:

- Մեկ տոմս:

- Մենակ Բաքո՞ւ ես մեկնում: Ռուս կանայք են վիտում, զենք են տանում...

Նրա կողմը նետեցի պայուսակս ու ասացի.

- Հենց հիմա կբողոքեմ միլիցիային, ու վիրավորելու համար կպատժեն քեզ:

Ճանապարհին ստուգեցին տոմսը:

- Որտեղի՞ց ես գալիս, ռուս կին:

- Աղդամից,- ասացի ես:

- Ո՞վ ունես Աղդամում:

- Որդիս է այնտեղ:

- Ի՞նչ է անում:

- Նա հիմա Աղդամում ամենամեծ մարդն է:

Նրանք խոսեցին իրար հետ ու բաց թողեցին ինձ: Կանգառի ժամանակ գնացի ջուր խմելու: Ետ եկա, տեսա, որ պայուսակս են տնտղել: Շուշիում ռուս գնդապետը հեռախոսահամար էր տվել, ասել, որ միայն այդ համարով զանգեմ: Երեկոյան ժամը իններին Բաքու հասանք: Ես առաջին ագամ էի Բաքվում: Նստեցի կանգառի նստարանին: Մի ռուս կին մոտեցավ, հարցրեց: Պատմեցի:

- Գիտես, մեր տան տերը խիստ մարդ է, եթե իմանա, որ եկել ես ազատելու քո հայ հարազատներին, կսպանի քեզ:

Մի պառավ ռուս կին եկավ ու հարցրեց.

- Որտեղի՞ց ես գալիս:

- Աղդամից,- ասացի,- եկել եմ հին գորգեր գնեմ: Հեռախոսի համար ունեմ:

- Աղդամն իմ հայրենիքն է, ես քեզ կօգնեմ:

Նա զանգեց ու պայմանավորվեց, հետո ինձ ուղեկցեց մետրոյի

կայարան: Ես գտա նրանց: Մարդ ու կին ծերունիներ էին: Կինը հենակներով էր: Ամուսինը ռուս էր, իսկ կինը՝ ինչ-որ արեւմտաեվրոպացի: Նրանք շատ լավ ընդունեցին ինձ: Ես երկու օր ոչինչ չէի կերել, ինձ կերակրեցին: Հենց տեղում էլ քնեցի: Առավոտյան ես նրանց աննկատ փող թողեցի ու գնացի դատախազություն: Կապվեցի քննիչի հետ: Նա ընդունեց ինձ ու ասաց.

- Ոչ ոքի մի ասա, թե ով ես դու: Կարմիր վերնաշապիկով աղջիկ կգա քո ետեւից:

Դատախազության առաջ ամբոխ էր հավաքված, բոլորը գոռում-գոչում էին.

- Ղա՛-ռա՛-բա՛ղ, Ղա՛-ռա՛-բա՛ղ: Ինչո՞ւ են մեզ բերել Մասիսից: Թույլ տվեք վերադառնալ, ինքներս կգնանք ու կգրավենք Ղարաբաղը:

Ոստիկանները մահակներով հարվածում էին նրանց գլխին, բայց նրանք նորից էին բարձրանում, պահանջում հանրապետության գլխավոր դատախազին:

Քննիչը հարցրեց.

- Դու մա՞յրն ես:

- Այո,- ասում եմ,- Դանիելի մայրը:

- Փող բերե՞լ ես:

- Այո,- ասում եմ,- տասը հազար:

- Քիչ է:

- Քսանմեկ հազարը տվել ենք ձեր ադրբեջանցուն, ու կորել է այն:

- Ո՞ւմ եք տվել:

- Տվել ենք Միրբաշիրի բանտի քննիչ Դամիրին:

- Եթե Դամիրին տված լինեիք, նա ինձ կփոխանցեր,- ասաց քննիչը,- հիմա ետ՝ Միրբաշիր վերադարձիր, գտիր քո փողերը, բեր, ես կազատեմ քո որդուն:

Հետո Բաքվում ինձ հայտնեցին, որ կարող եմ հանդիպել որդուս: Սկզբում 40 համարի ավտոբուսով գնացի, բայց ասացին, որ սխալ եմ եկել: Մեկ այլ ավտոբուսով յոթանասուն կիլոմետր ճանապարհ կտրեցի, հասա Շովելյանի բանտը: Ասում էին, որ այն հայերի «մսաղաց» են դարձրել: Ձեռքիս երկու պայուսակ կար: Թակեցի պատուհանը: Պատասխանեցին. «Այդպիսի մարդ չկա մեզ մոտ: Քո որդին ու ամուսինը ավազակներ են, նրանք կրակել են մերոնց վրա»: Ես լաց եղա: Նորից թակեցի պատուհանը, տվեցի իմ հայկական անձնագիրը: Այն դուրս նետեցին: Կրկին թակեցի: Ասացի. «Ձերբակալված-ների մայրն եմ ու կինը, եթե թույլ չեք տալու հանդիպեմ հարազատներիս, ապա սպանեք ինձ այստեղ»: Ուտելիքը փոխանցելու համար վերցրին: Հանդիպեցի նույն քննիչին: Ասում է. «Ես խոստացել եմ օգնել հանդիպել որդուդ հետ: Ամուսնուդ համար չխնդրես»: Տեսնեմ՝ կանգնել է Դանիելը՝ ջղային, նյարդայնացած: Ասում է. «Ինչո՞ւ ես դու եկել, ինչո՞ւ Հայկը չի եկել»: Քննիչն ասաց. «Որովհետեւ եթե հայ տղա գա այստեղ, անմիջապես մերոնք կհոշոտեն նրան»: Նա ձայնագրում էր մեր զրույցը: Ես անձնագիրս ետ պահանջեցի, նրանք արհամարհանքով այն իմ կողմը նետեցին: Ես, լաց լինելով, այն մաքրեցի ցեխից: Քննիչը հետո ասաց, որ ինքն էլ մայր ունի, առաջարկեց իր մեքենայով մինչեւ Ազիզբեկով հասցնել, որը մոտ էր իմ ծերերին: Որոշեցի Օդեսա մեկնել: Այդպես էլ արեցի: Այնտեղ Հայկին պատմեցի ամենը: Հայկը զանգեց Բաքվի դատախազներին, նրանք պատասխանեցին, որ ամեն հայի գլուխը երեսուն հազար ռուբլի արժե: Սակայն գործը տեղից չէր շարժվում: Մենք արդեն ադրբեջանցիներին չէինք վստահում: Հայկն ինձ փող տվեց, ու ես Մոսկվա թռա: Մոսկվայում գնացի դատախազություն: Տասներորդ սենյակ ուղարկեցին: Ոչ ոք չկար: Ասում եմ՝ բարեւ ձեզ: Ոչ ոք չի պատասխանում: Սպիտակահեր մարդ եկավ: Հարցնում է. «Ինչո՞ւ ես եկել»: Պատմում եմ: Ասում է. «Ոչնչով չենք կարող օգնել»: Պատասխանում եմ, որ արդեն շատ բան եմ տեսել, ես արդեն գիտեմ անելիքս. երեք հատ կճարեմ, կնետեմ՝ ուր հարկն է: Ասաց. «Դու ոչինչ չես ասել, ես ոչինչ չեմ լսել»: Հերթապահ միլիցիոների մոտ նստած եմ, դատախազը եկավ ու հարցրեց. «Ո՞վ է Ադրբեջանից եկել»: Ես չպատասխանեցի, քանի որ անձնագիրս հայաստանյան է, իսկ Լեռնային Ղարաբաղը վաղուց դուրս է եկել Ադրբեջանի կազմից: «Իսկ գուցե Լեռնային Ղարաբա՞ղը նկատի ունեք»,- դիմեցի ես: -Այո՛,- ասաց նա: Քանի որ հոգնել էի պատմելուց, տվեցի դիմումս: Ասացին, որ մեկ ամիս հետո կլինի պատասխանը: Ասացի.

- Նրանց պատանդ են վերցրել, ու հասարակ բանտում չեն, շուտով կգնդակահարեն:

- Այո, պատանդներին այնտեղ սպանում են,- վերցրեց դիմումը, շարունակեց,- տես՝ ինչ քաջն է: Վերջերս ձերոնք Հաթերքում մեր զինվորներին ու սպաներին պատանդ են վերցրել, մի՞թե դու այնտեղ չէիր:

- Եթե ես այնտեղ լինեի, ապա հաստատ կմասնակցեի,- ասացի ես:

- Այո,- ասում է,- դու հաստատ կմասնակցեիր: Այսպիսի մարդիկ եզակի են պատահում:

Հաջորդ օրը հայտնեցին, որ գործը քննվում է, արդեն հրահանգ է տրվել քննիչին: Բայց ես չէի հավատում նրանց: Այդ օրերին համագումար էր տեղի ունենում: Դա Գորբաչովից հետո էր: Ինձ պատմեցին մի մարդու մասին, որը դիմումներ էր ընդունում: Նոր դիմում գրեցի: Բայց ասաց, որ ընդմիջման է գնում: Վերցրեց դիմումը, գնաց: Հաջորդ օրը նորից դիմում գրեցի: Ասում եմ, որ թուրքերը նորից են ուզում եղեռն սարքել:

- Դուք այստեղ հանգիստ նստած եք, իսկ նրանք հայերին պատերազմի մեջ են ներքաշում,- ասացի ես:

- Լավ,- ասաց նա,- դիմում գրիր, ես ընթացք կտամ:

Երկու շաբաթից ազատեցին որդուս: Իմ դիմումի համաձայն՝ Հաթերք եկավ պատգամավոր Գալինա Ստարովոյտովան՝ Վազգեն Սարգսյանի հետ: Ետ վերադարձրին մեր բոլոր տղաներին, որոնց ձերբակալել էին: Օդեսայից զանգեցին, ասացին, որ Վիլենն ու Դանիելը Հայաստանի բանտում են: Հայկի հետ Երեւան մեկնեցինք: Մեր գնացքը երկաթգծից դուրս էր եկել: Մի շաբաթ ուշացումով տեղ հասանք: Դանիելին երեքուկես, Վիլենին՝ երեք տարի էին տվել: Ոչ ոք չէր կարող ասել, թե ինչու են նրանք բանտում հայտնվել: Կալանավայր գնացի: Դանիելը մի կերպ էր ոտքերի վրա կանգնում, իսկ Վիլենն իրեն վատ չէր զգում: Ինձ ասացին, որ նրանք պրոֆիլակտիկա են անցնում: Ես եղա «Ղարաբաղ» կոմիտեում: Ասացին, որ այդ հարցով Ներքին գործերի նախարարությունն է զբաղվում: Այնտեղ ինձ պատասխանեցին, որ նրանց բռնել են զենքը ձեռքներին, բացի այդ, մի արկղ պայթուցիկ ունեին տանը թաքցրած: Հարցրի.

- Ո՞վ ես դու ազգությամբ:

- Ես հայ եմ,- ասաց ոստիկանության աշխատողը:

- Չի երեւում, թե դու հայ ես,- ասացի,- իսկ ե՞ս ով եմ ազգությամբ:

- Խոսքից երեւում է, որ ռուս ես:

- Այո՛, ես այն կինն եմ, որը Բաքվի բանտերից ազատել է հայ տղաներին, որտեղ թուրքերը տանջում էին, իսկ դուք նրանց նորից բանտ եք նետել: Հիմա ասեք՝ ո՞վ է մեզանից հայը, ով՝ ոչ:

- Ահ, Դո՞ւք եք այն կինը, որը եղել է Բաքվում, հետո Մոսկվայում: Դե, թույլ տվեք խոնարհվեմ Ձեր առաջ: Խնդրում եմ, մի հուզվեք, հիմա նիստ կանեմ ու կազատեմ ձերոնց:

Երեկոյան որդիս ու ամուսինս տուն եկան:

Պատմում է Ռոբերտ Գեյլը (*ամերիկացի բժիշկ, հումանիստ*):

05.05.1992 թ., Երեւան

Բ. - Պարոն Գեյլ, Ձեր անունը մեզ հայտնի դարձավ Չերնոբիլյան աղետից հետո, երբ Դուք մարդասիրական օգնություն առաջարկեցիք աղետյալներին: 1988 թվականի դեկտեմբերի երկրաշարժի առաջին օրերին Դուք Հայաստանում էիք եւ ամերիկյան իշխանություններին առաջինը զեկուցեցիք իրավիճակի եւ օգնության անհրաժեշտության մասին: Վերջերս Հարավսլավիայում էիք: Երկրորդ անգամ եք Հայաստան այցելում, այս անգամ ի՞նչ առա- քելությամբ:

Ռ.Գ. - Այս անգամ եկա Ղարաբաղի վիճակին ծանոթանալու համար: Բժիշկ Նաջարյանն ասաց, որ վտանգավոր է, բայց ես գիտեմ, որ հենց հիմա է պետք իմ այցելությունը:

Բ. - Ի՞նչ տպավորություն ստացաք Ղարաբաղում:

Ռ.Գ. - Այս հարցը երկու պատասխան ունի: Առաջինը՝ ռազմական գործողություններն են անզեն ժողովրդի դեմ, ինչը հակասում է միջազգային օրենքներին: Պետք է այն անմիջապես արգելվի: Անշուշտ, լավ կլինի, որ խաղաղ բանակցությունների միջոցով լուծվի այս հարցը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ ուժի միջոցով: Երկրորդ պատասխանը վերաբերում է ժողովրդի կացությանը: Ես իմ գաղափարները հայտնում եմ ոչ իբրեւ քրիստոնյա կամ իսլամի հետեւորդ, այլ իբրեւ մարդկային ցեղի անհատ: Հարցի խաղաղ լուծում գտնելու համար պետք է երկու կողմերի հարցերին արդարացի լուծումներ տրվեն: Երկու կետեր կան, որոնք չես կարող վիճաբանության նյութ դարձնել: Առաջին. այս հողը բնակեցված է հայերով, որոնք որոշել են այն երբեք չլքել: Եթե ադրբեջանցիները ծրագրել են հողը խլել, ապա ամեն հայ կպայքարի դրա դեմ: Երկրորդ. Ղարաբաղը Ադրբեջանի վարչական ենթակայության մեջ է, եւ Ղարաբաղից հրաժարվելը կդիտվի իբրեւ սեփական տարածաշրջանից հրաժարում: Աշխարհի վրա շատ կետեր կան, որտեղ նույն կացությունն է: Լուծումը ազատ քվեարկությամբ անկախության ձեռքբերումն է:

Բ. - Ժողովուրդը հանրաքվեով ինքնորոշվել է, ստեղծել իր իշխանությունը, պետությունը:

Ռ.Գ. - Խնդիրը այն ճանաչել տալն է: Այս իշխանությունը պետք է հինգ կամ տասը տարի մնա առանց Հայաստանին միանալու: Սա եւս գիջում է: Ռազմավարական տեսանկյունից ճիշտ չէ հարյուր տոկոսով հակառակորդին հաղթելը: Եթե չկարողանանք գիջումներ անել, արդյունքը շատ վատ կլինի: Եթե երկու երկրներում ավելի ազգայնամոլ ուժերը հաղթեն ու սկսեն մեծ պատերազմը, ապա մեծ դժբախտություն կլինի: Եթե յոթանասուն տարիների ընթացքում երկու ժողովուրդները անընդհատ ձգտել են ազատվել խորհրդային ճնշումից, ապա նման պատերազմով կարող են ժողովրդավարական նվաճումները կորցնել: Որպես հետեւանք՝ կհաղթի Ռուսաստանը:

Բ. - Պարոն Գեյլ, Արցախյան շարժումը ի սկզբանե ժողովրդավարական էր եւ նպատակ ուներ խաղաղ ցույցերի միջոցով հասնելու հարցի սահմանադրական լուծմանը: Հակառակ կողմը որպես դրա դեմ առնելու միջոց տեսավ սադրանքներն ու ժողովրդին պատերազմի մեջ ներփակելը, որը պարտադրված էր արցախցիներին: Թիկունքում ունենալով թուրքական հզոր պետությունը, որը նաեւ պարտադրում է, ասենք, Ռուսաստանին եւս օգնել Ադրբեջանին, խախտել ուժերի որոշակի հավասարակշռությունը: Ի՞նչ կարող է անել արցախցին՝ բացի մինչեւ վերջ պատերազմելուց:

Ռ.Գ. - Պետք է ամեն կերպ արգելել Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի ռմբակոծությունը: Դա կարելի է անել խաղաղ միջոցներով կամ բռնությամբ:

Բ. - Ի՞նչ նկատի ունեք՝ բռնության միջոց ասելով: Ասենք, Ղարաբաղի ուժը չի հերիքում այն ճնշել, եւ պատերազմը անորոշ կձգվի:

Ռ.Գ. - Խոսքս Ստեփանակերտի ռմբակոծությունը դադարեցնելու մասին է: Պետք է ճնշել կրակակետերը:

Բ. - Դուք պատկերացնու՞մ եք նման իրավիճակ այսօրվա Միացյալ Նահանգներում, երբ երկրի բանակը ռմբակոծում, կոտորում է իր ենթակայության տակ գտնվող փոքր ժողովրդին:

Ռ.Գ.- Ոչ, ԱՄՆ-ում՝ ոչ, իսկ Հարավսլավիայում նման բանի ես ականատես եմ եղել:

Բ. - Ղարաբաղից նոր եք վերադարձել, ի՞նչ հիշողություն եք տանում Ձեզ հետ:

Ռ.Գ. - Հայ ժողովրդի դեմ այս ուժի, բռնության գործադրումը Ադրբեջանի կողմից մեր ժամանակներում նախնադարյան ձեւով խնդրի լուծման փորձ է: Որեւէ իմաստուն անհատ նույնիսկ Ադրբեջանում հազիվ թե ցանկանա, որ փոքրիկ երեխաները զոհվեն: Այս խնդրում պետք է առողջ տրամաբանությունը հաղթանակի:

Բ. - Ղարաբաղի կացության մասին Միացյալ Նահանգներում ի՞նչ

միք մտածում, եւ այստեղ գալով ի՞նչ փոփոխություն կրեց այն:

Ռ.Գ. - Այնտեղ մտածում էի, որ քաղաքական սուր վիճակ է ստեղծվել, սակայն, իրականությանը ականատես լինելով, համոզվեցի, որ վիճակն ավելի բարդ է: Գիտեմ, որ հայերը եւս չէին ցանկանա, որ զոհվեն ադրբեջանցի մանուկները:

Բ. - Դուք Հայաստան էիք եկել 88-ի դեկտեմբերին ամերիկյան առաջին ինքնաթիռով եւ ականատես եղաք երկրաշարժի աղետին: Այս անգամ Ձեզ Հայաստան է բերել երկրորդ աղետը՝ արցախյան աղետը: Այս երկու աղետների միջեւ եղած ժամանակահատվածում ի՞նչ փոփոխություններ տեսաք Հայաստանում:

Ռ.Գ. - Հայաստանը հիմա ազատ երկիր է, ինչն ամենակարեւորն է: Կյանքը հիմա շատ դժվար է: Երկու դժբախտությունների տարբերությունն այն է, որ առաջինի դեպքում մարդկայնորեն չէինք կարող օգնել, իսկ երկրորդը մարդու ստեղծածն է, եւ կարելի է լուծում գտնել: Այս իմաստով ես լավատես եմ:

Բ. - Երկու ամերիկացի լրագրողներ, որոնք հաճախ են լինում Բաքվում եւ կապված են ադրբեջանական կողմի հետ, ասել են, թե Բուշին ու նրա վարչակազմին ավելի շատ հետաքրքրում է Թուրքիա - Ադրբեջան - Իրան եռյակը, քան թե Հայաստանը: Ի՞նչ եք մտածում այս առումով:

Ռ.Գ. - Մեծ պետություններին քիչ են հետաքրքրում փոքր ժողովուրդները: Հյուսիսային Աֆրիկայից մինչեւ Տաջիկստան ու Մոնղոլիա տարածաշրջանում իսլամական երկրները քաղաքական աշխարհի ապակայունացման աղբյուր են, որով եւ մտահոգված է ԱՄՆ-ը: Քաղաքական ուժերը այդ հարյուր միլիոնավոր ժողովուրդների համար փորձում են ճիշտ ուղի գտնել իսլամական ազգայնամոլության եւ ժողովրդավարական ուժերի հակամարտության պայմաններում: Կշեռքի նժարներից մեկը Թուրքիան է, մյուսը՝ Իրանը: Ամերիկյան ընդհանուր շահերը այս իրականության մեջ են եւ չէին ցանկանա որեւէ ապակայունացում այս շրջանում: Պատերազմը ապակայունացման աղբյուր է եւ հետաքրքրում է Ամերիկային: Ձեր հարցի առիթով մի պատմություն հիշեցի: Մառ Ցզե Դունին երբ հայտնել են, թե նոր պետություն է ստեղծվել, հարցրել է՝ ի՞նչ ժողովուրդ են, ասել են՝ հրեաներ, պետությունը՝ Իսրայել: Թե՝ ինչքա՞ն են, ասել են՝ երեք միլիոն: Մաոն հարցրել է՝ երե՞ք, ո՞ր հյուրանոցում են ապրում:

Ինքս սիրում եմ հայերին, կապված եմ նրանց հետ:

Բ. - Ի՞նչ ծրագրեր ունեք:

Ռ.Գ. - Կմեկնեմ Լիտվա եւ Մոսկվա, հանդիպումներ կունենամ տեղի բժիշկների, ինչպես նաեւ կառավարությունների հետ ու նրանց կփոխանցեմ Ղարաբաղի իրավիճակի շուրջ իմ խոհերը:

Պատմում է Ալիխանե Մամեն
(Մուսոյան, գրող, 2007 թվականից «Զագրոս» քրդական թերթի գլխավոր խմբագիր):
23.02.2006 թ., Երեւան

Ա.Մ. - Ծնվել եմ Աշտարակի շրջանի Կոշ գյուղում 1948 թվականին: Սովորել եմ տեղի դպրոցում: Ավարտել եմ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի լրագրության բաժինը: Աշխատանքի եմ անցել «Պիոներ կանչ» թերթում, այնուհետեւ՝ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում, հետո՝ «Սովետական գրող» հրատարակչությունում: Եղել եմ Ազգային ժողովի մարդու իրավունքների եւ ազգությունների հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետը: Այնուհետեւ անցել եմ ստեղծագործական աշխատանքի: Ստեղծագործել եմ վեցերորդ դասարանից: Այդ ժամանակ էլ սկսել եմ տպագրվել հանրապետական մամուլում:

Բ. - 1988 թվականին խնդիր կար, պիտի մեկնեիք Լաչին, Քարվաճառ՝ այնտեղ հանդիպելու քրդական համայնքների հետ: Ո՞ւմ հետ խոսեցիք:

Ա.Մ. - «Կարմիր Քրդստան» հասկացությանը հանդիպել եմ մինչեւ 1988 թվականը: Ինձ ավելի շատ պատմաբաններն են մղել դրան, նաեւ մարդիկ, որոնք նախանձախնդիր են եղել ղարաբաղյան հարցի լուծման գործում: «Պիոներ կանչում» աշխատելու ժամանակ ինձ գործուղեցին Գորիս: Գորիսը եւ հարեւան Ադրբեջանի շրջանները համամիութենական սոցմրցության մեջ էին: Իմ գործուղումը համընկավ այդ մրցության արդյունքները ամփոփելուն: Տեղ գյուղում հանդիպեցի Լաչինի պատվիրակության հետ: Այդտեղ առաջին անգամ հանդիպեցի Ադրբեջանում բնակվող քրդերի: Ինձ ուղեկցում էր կոմերիտմիության քարտուղարը եւ Էդիկ Զոհրաբյանի կինը, որը ՀԿԿ կենտկոմի երրորդ քարտուղարն էր: Արդյունքները ամփոփելու ժամանակ սովետական շրջանին յուրահատուկ ավանդության համաձայն՝ խմում էին հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների բարեկամության կենացը, Դեմիրճյանի եւ Ալիեւի, այդ թվում եւ՝ Լեռնային Ղարաբաղի կուսմարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կեւորկովի կենացը:

Զգիտեմ՝ տաքացել էի թե ինչ էր եղել, ասացի. «Բա մեր քուրդ ժողովրդի կենա՞ցը»: Ես դեմքերով, արտաքին հատկանիշներով արդեն զգացել էի, որ քրդերի միջավայրում եմ: Բոլորը անհանգստացան: Կոմսոմոլականներն ու կոմունիստները աշխատեցին ինձ մեկուսացնել եւ բերեցին հյուրանոց: Ուշ ժամ էր: Մեկ էլ իմ դուռը ծեծեցին: Լաչինի թերթի խմբագիրն էր, ասաց. «Քրդերը քեզ սպասում են»: «Ի՞նչ քուրդ»,- ասացի: Նա թե՝ «Ռայկոմի քարտուղարն է, միլպետն է, կոմսոմոլի քարտուղարն է: Նրանք ազգությամբ քուրդ են: Ես էլ եմ քուրդ: Ես գիտեմ, որ դու քուրդ ես»: Գնացի եւ տեսա պատվիրակության քուրդ անդամներին: Կուսշրջկոմի երրորդ քարտուղար Մուսաեւն էր, Հասանովը: Շատ ճոխ սեղան էին գցել: Հետաքրքիր խոսակցություն բացվեց, թե ես ով եմ, նրանք ով են: Այդտեղից սկսվեց մեր բարեկամությունը: Պայմանավորվեցինք, որ դա պետք է գաղտնի լինի: Բայց առավոտյան, երբ Գորիսի կոմսոմոլի շրջկոմում էի, քրդերը մոտեցան եւ սկսեցին ծանոթանալ:

Բ. - Նրանք քրդերեն գիտեի՞ն, խոսո՞ւմ էին:

Ա.Մ. - Չէ, ռուսերեն էինք խոսում: Մարդիկ կային, որոնք քրդերեն խոսում էին: Ես սկսեցի այդ շրջանի պատմությունը ուսումնասիրել: Պատմությունն իմ հոբին էր: Այդ կողմի քրդերի հետ առնչություն չունեինք: Իմ պապերը Թուրքիայից են գաղթել 1918 թվականին: Արյան կանչով ավելի շատ կապված էի Թուրքիայի քրդերի հետ: Այդպես, նրանց հետ սկսվեց մեր բարեկամությունը: Սկսեցի Հայաստանում ներքին կարգով տպագրել ամբողջ գրականությունը: Նույնիսկ Գորիս, որտեղ ոչ մի քուրդ չէր ապրում, քրդական գրականություն բերեցի, որպեսզի քրդերը գան, գրախանութից գնեն: Գրականություն էինք ուղարկում նաեւ Ղարաբաղի գրախանութներում վաճառելու, որպեսզի նրանք իմանան հայ ժողովրդի հետ ունեցած մեր կապերի մասին: Այդպես սկիզբ առավ մի լայն գործունեություն: Սակայն մի բան էլ ասեմ: Զանգեզուրի եւ Լաչինի քրդերի միջեւ կապը ավելի ուժեղ էր, քան ԼՂԻՄ-ի եւ այդ շրջանի քրդերի միջեւ: Առեւտրական, տնտեսական կապ կար, գնալ-գալ կար: Պատահական չէ, որ երբ Լաչինից քրդերը գնացին, զանգեզուրցիք շատ էին ափսոսում, որ իրենց բարեկամները գնացել են:

Քրդստանի մասին ամբողջական պատմություն չկար: Կային մի քանի հեղինակներ, որոնք կցկտուր տեղեկություններ էին հաղորդում, օրինակ՝ Սինայի: Սկսեցի գրի առնել այդ կցկտուր գրականությունը, ինչպես նաեւ Մարիետա Շահինյանի, Նազարովի, մյուս կոմունիստների հուշերում եղած պատմություններն ուսումնասիրել ու ամբողջացնել այդ տարածքի, քաղաքական կամ վարչական միավորման եւ այդտեղի ժողովրդի պատմությունը: Իսկ 1988 թվականին այդ ամենը

գործնական հողի վրա դրվեց, երբ ես քուրդ ժողովրդի անունից դիմում գրեցի Գորբաչովին, Դեմիրճյանին եւ Ադրբեջանի նախագահին: Այդ դիմումը ստորագրեցին երկու հարյուր հոգի, այդ թվում՝ ակադեմիկոս Շաքրո Մուղոյանը, Նադո Մահմուդովը, բժիշկ, դոկտոր Սրին Իբոյանը եւ այլ մտավորականներ: Դիմումը, որը բաց նամակի տեսքով էր, տպագրվեց աշխարհի տարբեր թերթերում: Նույնիսկ գիտնականները, թարգմանիչները այդ դիմումը թարգմանում էին հունարենից, անգլերենից, իսպաներենից, բերում ներկայացնում էին ինձ՝ դիմումի հեղինակին, թե՝ տեսեք, ինչ է տպագրվել:

Բ. - Երբ հանդիպեցիք Լաչինի քրդերին, նրանք չէի՞ն խոսում Ադրբեջանի կողմից ուծացման քաղաքականության վտանգի մասին:

Ա.Մ. - Այդ գիշեր ինձ համար շատ բան պարզվեց: Նրանք բաց խոսում էին, որովհետեւ զգացին, որ ես հայրենասեր եմ, ինչի համար ուրիշ ազգերն էլ են ինձ գնահատում: Նրանք ինձ հետ բացվեցին, թե Հայաստանում ինչ մարդիկ կան: Ավելի շատ մուսուլման քրդերից էին հարցնում, օրինակ՝ Նադո Մահմուդովից, որը փոխնախարար է եղել, Աբդու Ռահմանից, Կնյազ Միրզոեւից, Վարդենիսի թերթի խմբագրից: Նրանք անվանի մուսուլման քրդեր էին, նրանց հետ կապը ավելի ամուր էր, իսկ ես եզդի քուրդ եմ: Նրանց՝ մուսուլմանների մի մասը շիա են, իսկ շիաները եզդիներին համարում են իրենց կրոնական թիվ մեկ թշնամին՝ կապված Ալի Բեխամբարի Հուսեինի սպանության հետ:

Բ. - Եզդինե՞րն են սպանել Հուսեինին:

Ա.Մ. - Ասում են, այդպես համարում են: Իմ մասնակցությունը ղարաբաղյան շարժմանը սկսվեց 1988 թվականին: Երբ հայերի մեջ Ղարաբաղի համար ստորագրություններ էին հավաքում, ես էլ քրդերի մեջ էի ստորագրություններ հավաքում: 1988 թվականի փետրվարի 19-ին ու 20-ին ես արդեն մասնակցում էի շարժմանը եւ ելույթներ էի ունենում ոչ միայն այնտեղի քրդերի, այլեւ թալիշների, եզդիների եւ այն ժողովուրդների համար, որոնք բնակվում էին Ադրբեջանում եւ ենթարկվում էին ճնշումների: Վերլուծության էր ենթարկվում Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների վիճակը եւ նրանց՝ ուծացման եզրին կանգնած լինելու հարցը: Հենց այդ ժամանակ տպագրվեց քուրդ ժողովրդի անունից գրված հայտնի դիմումը:

Բ. - Ինչպե՞ս գնացիր բանակցելու Լաչինում եւ Քելբաջարում:

Ա.Մ. - Քելբաջարում մի այլախոհ ունեինք, բանաստեղծ էր՝ Մահմեդ Շամիրով, որին սովետական շրջանում բռնել էին քրդասիրական շարժում վարելու եւ քրդական դպրոց բացելու հարցը առաջ քաշելու համար: Մենք եկանք, որպեսզի հանդիպենք թերթի խմբագրին: Շամիրովը եկել էր, բայց չհանդիպեցինք: Երկու-երեք անգամ հեռախոսով խոսել էի նրա հետ: Գնացի Լաչին: Աշխատեցին թաքցնել, որ ես քուրդ եմ: Ինձ ուղարկեցին ազգությամբ հայ մի մարդու հետ, որը Լաչինում մեծ հեղինակություն ուներ: Նա բենզինի բաքերի մատակարարողն էր: Նրանց հետ գնացինք, թերթի խմբագիրը այնտեղ չէր: Երկու տեղում էլ ինձ ասացին.

- Դու Բաքվով արի, ոչ թե այս կողմով, որովհետեւ այլ կերպ է ընդունվում:

- Իսկ Բաքուն Կարմիր Քրդստանը կստեղծի՞, կվերականգնի՞:

- Չէ՛:

- Այդ դեպքում ինչո՞ւ Բաքվից պետք է գամ:

- Իսկ հայերը կանե՞ն:

- Հա՛,- պատասխանեցի ես:

Բ. - Դա ե՞րբ էր:

Ա.Մ. - 1988 թվականի մարտին: Եվ ես նրանց մի քանի դեպքեր պատմեցի: Պատմեցի Գորբաչովի մոտ տեղի ունեցած հանդիպման մասին: Այդ հանդիպման ժամանակ քրդական հարցը երկու անգամ շոշափվել էր՝ մի անգամ Վիկտոր Համբարձումյանի, երկրորդ անգամ Վարդգես Պետրոսյանի կողմից: Վիկտոր Համբարձումյանը այն գաղափարն էր առաջ քաշել, որ նրա ընտրողների մեջ կա քուրդ, ով խնդրել է քրդական հարցը բարձրացնել, քրդերի մասին խոսել: Իսկ Վարդգես Պետրոսյանը այսպես է ներկայացրել. երբ ստեղծվեց Ադրբեջանը՝ որպես Խորհրդային Միության պետություն, այն համարվեց ինտերնացիոնալ հանրապետություն: Իրո՛ք, այդպես էր: Բայց ո՞ւր են այսօր քրդերը: Եվ նա քրդերի վիճակագրությունն էր բերել: Զորի Բալայանը ՍՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի ժամանակ ազգային հարցերով պատասխանատուին այսպիսի հարց տվեց. «Դուք հանդիպել եք Ադրբեջանի քրդերին, ի՞նչ եք մտածում այդ մասին»: Հարցը ինչեց հեռուստացույցով: Այդ ժամանակ քրդերի շրջանում կարծիք ձեւավորվեց, որ հայերը բարեկամ ժողովուրդ են: Սակայն նրանք հեռու էին մնում այն պատճառով, որ Ադրբեջանի քաղաքացիներ էին, եւ դավաճան չերեւալու խնդիր կար: Դրանից հետո ես խնդրեցի Նադո Մահմուդովին, որ նա մարդկանց ուղարկի Լաչին եւ Քյալբաջար: Եվ այստեղից ուղարկեցին երկու մարդու՝ Տոսումէ Ռաշիդին (Օզմանյան Տոսում) եւ Ասկարէ Բրոյիդին (Բրոյան Ասկյար): Ասկյարը մնացել էր Գորիսում, Տոսումը գնացել էր Լաչին: Ժամանակները այնքան խառն էին, որ նրան մեքենայով էին բերել Լաչինից: Ես հետագայում իմացա, որ ադրբեջանական ջոկատները եթե չեն մտել այդտեղ, ապա ճանապարհը բաց է եղել: Հայերի համար մի այլ ճանապարհով մշտապես ուտելիք տեղափոխել են: Իհարկե, մի քիչ էլ փող էին տալիս: Մինքենդում ճանապարհ էին բացել եւ հայերի օգնությունը հասցնում էին Ղարաբաղ: Ասկյարը պատմվածք գրեց դրա մասին: Տոսումն էլ

հետագայում հոդված գրեց լաչինյան դեպքերի մասին եւ տպագրեց քրդական թերթերում: Այդ ժամանակ շատ էր շրջանառության մեջ դրվում Լենինի հայտնի հեռագիրը: 1918-1920-ական թվականներին այդ տարածքում ադրբեջանական կռիվների պատճառով ժողովուրդը մատնված էր սովի: Եվ իբր Լենինը Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Նարիմանովին փող է տվել, որպեսզի այն հատկացվի ժողովրդին որպես օգնություն, որ սովից չմեռնեն: Նկատի ունեին քրդերին ու Կարմիր Քրդստանը: Շատ էր խաղարկվում այդ պատմությունը:

Ես Հայաստանը լավ գիտեի, եւ ղարաբաղյան շարժման մեջ ներգրավվելս պատահական չէր: Վարդենիսում երեք քրդական գյուղեր կային: Հիմնական աշխատանքներից մեկն այն էր, որ, որպես ԽՍՀՄ գրողների միության անդամ, զենք հասցրի այնտեղ, որտեղ հարձակումներ էին տեղի ունենում: Դաբաղյան Աշոտ կար: Ես երկար ժամանակ չեմ իմացել, թե ում հետ եմ տարել: Վերջերս մոտեցան ինձ եւ ասացին. «Հիշո՞ւմ եք՝ միասին զենք ենք տարել»: Ես պետք է գնայի եւ կանգնեցնեի Քելբաջարի քրդերին, որոնք այնտեղից հեռանում էին, կամ նրանց հետ հանդիպում ունենայի: Սկզբում մեկ մեքենա էր, որով ես պետք է գնայի: Մարտունու մոտ տեսա, որ չորս-հինգ մեքենա մեր ետեւից գալիս են: Ինձ ասացին, որ այդ մեքենաներն էլ են մեզ հետ, պետք է շատ զգույշ լինեմ, որ կարողանամ անցկացնել: Այդ ժամանակ սահմանամերձ գոտիներում պարետային ժամ էր մտցված: Վարդենիսից Քարվաճառ մտնելիս ես ներկայացա, որ գրող եմ, այդ մեքենաներն ինձ հետ են, գնում եմ ազգամիջյան հարաբերություններ կարգավորելու: Ու այդպես կարողացա անցնել: Անցնելուց հետո ինձ ասացին, որ զենք են տեղափոխել: Մի մասը Կարճաղբյուրում իջեցրինք, մյուս մասը տարանք եկեղեցի: Հաջորդ օրը սկսվեց իմ ակտիվ գործունեությունը քրդական գյուղերում: Սկսեցի նրանց հետ խոսել, որ չհեռանան: Հիմնականում շփոթում էին քրդերին եւ թուրքերին: Դրանք մահմեդական գյուղեր էին:

Բ. - Դրանք Ադրբեջանի քարոզչության ազդեցության տա՞կ էին:

Ա.Մ. - Չէ՛, հիմնականում հայերը սխալ էին ընկալում քրդերին: Երկու կողմում էլ մի զգացողություն կար, ինչի մասին ես հետագայում ե՛ւ ելույթ ունեցա, ե՛ւ տպագրեցի «Հայ դատում» ռուսերեն ու հայերեն, որպեսզի այդ երեւույթները կանխվեին: Շարժման հենց սկզբից տարաբաժանում էին անում՝ քրիստոնյաների եւ մուսուլմանների: Դե, ես եզդի եմ, ոչ մուսուլման եմ, ոչ էլ քրիստոնյա: Հոդված տպեցի, որ ես այդպիսին եմ, բայց չէի ցանկանա, որ ոչ Ադրբեջանում, ոչ մեր Հայաստանում այդ բաժանումը մտցնեն, որովհետեւ Ադրբեջանում մուսուլման ժողովուրդներ են ապրում, որոնք ազգային-ազատագրական շարժման մեջ են, օրինակ՝ թալիշները, լեզգիները, ավարները, թաթերը: Այդ ժամանակվա իմ հաղթանակներից մեկն այն էր, որ ես կարողացա կրոնական խտրականության հարցը հարթակից հնչեցնել: Մեր տարածաշրջանում երկրներ կային, որոնց սրտին մոտ էր հայկական հարցը, եւ այդպես մենք ակամա նրանց վանում էինք: Հենց պարսիկները: Նրանք էլ ադրբեջանցիների հետ խնդիրներ ունեն, ինչո՞ւ պետք է կրոնական խտրականություն դնելու պատճառով պարսիկներին մեզանից վանենք: Ընդհակառակը, նրանք մեր հարցի լուծման մասնակիցները կարող են դառնալ: Պետք է տարածաշրջանում քաղաքական ուժերի հավասարակշռությունը պահպանել:

Ալեքսան Հակոբյանը զանգեց եւ ասաց, որ պետք է գնանք Երասխ: Ըստ ադրբեջանական ռադիոյի հաղորդման՝ իբր Երասխի քրդերին հայերը ոչնչացնում են: Մեզ հետ եկան «Ռիա թազա» թերթի բաժնի վարիչ, քրդերի մեջ հեղինակություն ունեցող Ալի Աբդուռահիմը եւ նրա փեսան, որի մեքենայով գնացինք: Պարզեցինք, որ այնտեղի քրդերի հետ այդպիսի դեպք չի պատահել:

1988 թվականի մարտին գնացի Արցախ: Երբ վերադարձա, դուռը ծեծեցի, բացեց իննամյա տղաս եւ հարցրեց. «Հայրի՛կ, Ղարաբաղը վերցրի՞ր»: Ես հասկացրի նրան, որ Մոսկվան չի տալիս:

Լաչինը գրավելուց հետո բավականին քրդեր էին մնացել: Մի մասը Արցախում էին տեղավորվել, մյուս մասը՝ Գորիսում: Ես եւ Վաքիլ Մուստաֆաեւը, որը «Յակբուն» կազմակերպության փոխնախագահն էր, գնացինք Գորիս եւ հանդիպեցինք նրանց հետ: Եթե մինչ այդ այդ քրդերն ասում էին, որ իրենք ադրբեջանցի են՝ հույս ունենալով, որ Ադրբեջանական պետությունը կկանգնի իրենց թիկունքին, ապա, հայտնվելով Գորիսում եւ Արցախում, ասում էին, որ իրենք քուրդ են: Իհարկե, մենք նրանց առաջարկեցինք մնալ, ասացինք, որ կապահովենք բնակավայրով, բոլոր հարցերում կօգնենք, միայն թե մնան: Ոչ ոք չուզեց մնալ: Լաչինը գրավելուց հետո ադրբեջանական շարժման ղեկավար Էլչիբեյը չհամաձայնվեց նրանց փոխանակել: Այդ քրդերը ասում էին, որ իրենք Ադրբեջանի քաղաքացիներ են, բայց Էլչիբեյը նրանց չէր ընդունում, նրանց համարում էր քուրդ եւ ասում էր, որ քրդերն էլ հայեր են, ինչո՞ւ պետք է հայերին փոխանակի հայերի հետ: Քրդերին տեղավորել էին հիվանդանոցում, մանկապարտեզում: Ղարաբաղում ամեն ինչ անում էին, որ քրդերն իրենց լավ զգային: Այնտեղ ինձ ծանոթացրին մի ծերունու հետ: Նա իր կնոջը սպանել էր ու թաղել, պատրաստվել էր ինքն իրեն սպանել, որ իր կնոջ կողքին թաղեին, սակայն բռնել էին: Նրա մասին նույնիսկ Անդրանիկ Արշակյանն էր գրել: Ես մտածում էի, որ սուտ է այդ պատմությունը: Գնացի, այդ մարդուն գտա, եւ նա բացատրեց, որ անընդհատ ասել են, թե հայերը քրիստոնյա են, կգան, նրանց ավելի դաժան մահվան կենթար-

կեն, քան ինքն է արել: Երբ եկա Հայաստան, մեծ քանակով դեղորայք ուղարկեցի: Թե՛ Կարմիր խաչը, թե՛ Ղարաբաղի մարդիկ օգնում էին ամեն ինչով: Նաեւ հաց ուղարկեցի: Այն ժամանակ Հայաստանում հացը քարտով էին տալիս: Փաստորեն, նրանք ավելի շատ հաց էին ստանում, քան մենք, ինքս: Քրդերին կամաց-կամաց բաց թողեցին, եւ նրանք գնացին: Լաչինը գրավելիս մենք հույս ունեինք, որ քրդերը կմնան, բայց չմնացին: Քրդերը մշտապես ենթարկվում էին արտագաղթի թե՛ Հայաստանից, թե՛ Ադրբեջանից, թե՛ Նախիջեւանից, թե՛ Վրաստանից: Ես ուսումնասիրել էի քրդերի բռնագաղթի պատմությունը: Երբ արդեն բացվել էր Կրեմլի «Սեւ արկղը», ես հույս ունեի, որ Միջին Ասիայի եւ Ռուսաստանի՝ բռնագաղթի ենթարկված քրդերին կարող ենք բերել ու տեղավորել Լաչինում: Ի դեպ, քրդերի նկատմամբ շատ լավ վերաբերմունք ունեին:

Բ. - Նրանք կարո՞ղ էին գալ, ինչո՞ւ չեկան:

Ա.Մ. - Երկդիմի քաղաքականություն կար: Այսպիսի բան էին տարածել. դուք՝ քրդերդ, հայերի եւ ադրբեջանցիների արանքում եք գտնվում, եւ նրանց հակամարտության ժամանակ առաջինը դուք եք վնաս կրելու: Երբ մենք լավ վերաբերմունք ունեինք քուրդ գերիների նկատմամբ, շատ ադրբեջանցի գերիներ ասում էին, թե իրենք քրդեր են: Ես մի տեղեկանք պատրաստեցի, թե որ գյուղում են քրդեր բնակվում եւ ինչ ցեղի քրդեր են կամ ինչ տոհմից են: Քրդեր կային, որոնք անգամ լեզուն չգիտեին, բայց մնացել էր հիշողությունը, թե նրանք որ ցեղի քուրդ են եւ ինչ տոհմից են: Եվ քննելով՝ կարողանում էինք որոշել՝ այդ մարդը քուրդ է, թե ոչ:

Դեռ այդ տարածքները չէին գրավել, գրող Սերո Խանզադյանը զանգել էր կենտկոմ, թե՝ «Մարդ ուղարկեք այստեղ, լեռներում, սարերում կռիվներ են գնացել, ահագին հերոսներ ունենք»: Ես գնացի Գորիս եւ Սերո Խանզադյանին հանդիպեցի, որպեսզի պարզեմ, թե ինչ է կատարվել: Վազգեն Սարգսյանն էլ էր եկել: Սկսվել էր անասնագողությունը: Երբ եզդիները սար էին գնացել, ադրբեջանցիները հարձակվել էին ֆերմաների վրա, որպեսզի անասունները գողանան: Մի քանի եզդիներ, հերոսաբար կռվելով, ասել էին. «Անդրանիկ գյալդի, Ջահանգիր աղա գյալդի»: Եվ անասունները ետ էին բերել: Դա մշտապես էր լինում:

Այդ ընթացքում գրող Մկրտիչ Սարգսյանի հետ շատ ենք քննարկել ղարաբաղյան հարցը եւ հայ-քրդական հարաբերությունները: Մկրտիչ Սարգսյանը մի դեպք պատմեց: Երբ գրողներից կազմված պատվիրակություն էր գնացել եւ հանդիպել Հեյդար Ալիեւի հետ, Ղարաբաղի հարցն էին բարձրացրել: Ալիեւն ասել էր. «Բան չունեմ ասելու, դրանք հայկական հողեր են, ձեր հողն է: Բայց, որպես Ադրբեջանի առաջին

դեմք, որքանո՞վ ճիշտ կլինի, եթե ես տամ: Պատմության մեջ կհիշվեմ որպես ամենավատ ղեկավարը»:

Բ. - Իսկ Ալիեւին որպես ազգությամբ քուրդ ընդունո՞ւմ եք:

Ա.Մ. - Ալիեւին՝ այո՛:

Բնական է, այստեղի բնակչությունը մշտապես մասնակցել է այդ իրադարձություններին, այդ ժամանակ ավելի գլոբալ՝ ԽՍՀՄ մաշտաբով: Գրանցվել էր «Յակբուն» կազմակերպությունը, որի ղեկավարն էր Բաբաեւը:

Բ. - Անունն ի՞նչ էր:

Ա.Մ. - Անունը Սուլեյման էր: Ղեկավարը նա էր, փոխղեկավարը Ռահիմ Մուստաֆաեւն էր: Այդ կազմակերպությունը Մոսկվայում էր հիմնվել: Ինը հանրապետությունների քրդերով էր կազմավորված: Մեծ կազմակերպություն էր: Երկու խնդիր ունեին՝ վերականգնել Կարմիր Քրդստանը եւ այնտեղ բնակեցնել քրդերին, որոնք Խորհրդային Միության տարբեր տարիներին բռնագաղթի են ենթարկվել: Կազմակերպության անդամները հիմնականում նախկին ղեկավար եւ պաշտոնյա քրդեր էին: Բայց այսպիսի հանգամանք կար: Մտավորականության հիմնական մասը Հայաստանում էր ծնվել, կրթություն ստացել, գիտական թեզ պաշտպանել, Հայաստանում էր մկրտությունը ստացել: Դրա համար «Յակբունը» մի քիչ հայամետ քաղաքականություն էր վարում: Բաբաեւը շատ լավ հայերեն գիտեր: Նա գյուղատնտեսական գիտությունների թեկնածու էր: Ես՝ որպես այստեղի համայնքի ղեկավար, նրանց հետ հանդիպումներ էի ունենում ոչ միայն նրանց կազմակերպած ժողովների, ցույցերի ժամանակ, այլեւ առանձին: Այն ժամանակ հարց առաջադրվեց՝ եթե քրդերը անցնեն հայերի կողմը, հայերը փաստաթղթով, պայմանագրով կընդունե՞ն, տեր կկանգնե՞ն քրդերին: Ես ասում էի՝ այո, բայց նրանք իմ ասածը լուրջ չէին ընդունում: Ես աշխատում էի, որ խնդիրը ավելի գործնական, հստակ դրվի: Վերջին անգամ այդ հարցի նախապատրաստական աշխատանքների ժամանակ ինձ հետ էր Ալեքսան Հակոբյանը: Երբ արդեն հարց դրվեց, որ Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ ընկած ճանապարհը բացվի, ես նորից հանդիպեցի նրանց հետ, եւ Հայաստանի ու Սովետական Միության քրդերի հետ Մոսկվայում ցույց արեցինք: Այդ ժամանակ նրանք որոշեցին, որ կաջակցեն Հայաստանին: Նույնիսկ այդ ցույցերից մոսկովյան հեռուստատեսությունը ռեպորտաժներ ներկայացրեց: Երբ այդ տարածքը վերցրինք, Ադրբեջանի բոլոր քրդերը, քուրդ մտավորականները տեղափոխվեցին Հայաստան, այդ թվում եւ՝ Մուստաֆաեւը: Այստեղ էլ մենք ստեղծեցինք «Քրդական ազգային-ազատագրական շարժում» կազմակերպությունը, որի ղեկավարը Մուստաֆաեւն էր: Ես տեղակալն էի: Լաչինը

գրավելուց հետո մենք դե յուրե «Լաչինի Հանրապետություն» հռչակեցինք:

Բ. - Հայաստանում շարժման կողմից ո՞վ էր ձեզ աջակցում:

Ա.Մ. - Կային եւ՛ աջակցողներ, եւ՛ թշնամիներ: Աջակցում էին հիմնականում ԱՍԱԼԱ-ի տղաները, որոնք նաեւ հրամանատարներ էին: Աշոտ Մանուչարյանն էր աջակցում, Ալեքսան Հակոբյանը, հրամանատարներ, գեներալներ, նաեւ՝ դարաբաղցիները, այդ թվում եւ՝ Ռոբերտ Քոչարյանը: Ես նրա հետ երկու անգամ հանդիպում եմ ունեցել: Նա հանդիպումներ էր ունեցել քրդական շարժման այլ ղեկավարների հետ: Մենք մի հարց էլ էինք նախապատրաստել, որը շատ կարեւոր էր: Նախիջեւանի հարցն էր: Ես մինչեւ հիմա ափսոսում եմ, որ դա չլուծվեց: Արդեն ստեղծել էինք բազան, որ Ադրբեջանի վրա հարձակվենք: Բայց այն ժամանակվա ղեկավարությունը, չէի ասի, թե նրանց արածը զգուշավորություն էր, ինձ ասաց, որ այդպիսի բան չի լինելու, վերեւի մարդն է ասում: Վերեւի մարդը Լեւոն Տեր-Պետրոսյանն էր: Ասացի. «Ինձ մի՛ ասեք: Ես այդ իրավունքը չունեմ: Ուրիշներին ասեք»: Նրանք համարեցին, որ ինձ չեն ասել, եւ մյուս քուրդ առաջնորդներին ասացին: Այն աշխատանքը, որ արվել էր Նախիջեւանում, կանգնեց: Արդեն չորս հարյուր զինվորներ կային, զենք-զինամթերք կար:

Սկզբում քրդերը՝ որպես Ադրբեջանի քաղաքացիներ, ջոկատներով շատ էին մասնակցում մարտերին: Աստիճանաբար այդ ջոկատները սկսեցին կազմալուծվել: Վերջին շրջանում, երբ Լաչինը գրավել էին, մի կողմից ադրբեջանցիների մեջ էր հավատը կորել քրդերի նկատմամբ, մյուս կողմից քրդերը չէին ուզում մասնակցել: Դրա համար քրդերը նախքան այդ տարածքները գրավելը՝ երկու-երեք ամիս առաջ, արդեն լքել էին իրենց բնակավայրերը: Շատ քիչ մարդիկ էին մնացել: Խոսակցություն կար, թե այնտեղ քրդական գյուղեր են գրավել: Այդպիսի բան չի եղել: Գրաված տարածքները միայն ադրբեջանական գյուղեր են եղել:

Բ. - Դիմադրություն չի՞ եղել:

Ա.Մ. - Դիմադրություն չի եղել: Նրանք արդեն դուրս էին եկել: Քրդերով կամ մահմեդական քրդերով բնակեցված գյուղերում տեղեկացնելու հարցով զբաղվում էին Քրդական բանվորական կուսակցության անդամները: Երկու գյուղում չէին հասցրել տեղյակ պահել, ինչն էլ այդ գյուղերի բնակիչների համար ողբերգական եղավ: Ովքեր մնացել էին, մենք նրանց բաց թողեցինք, գնացին: Այնպես արեցինք, որ նրանք չընկալվեն որպես ադրբեջանցի:

Ասում են՝ ադրբեջանական գյուղերի քրդերը ուծացվել են: Ես այդ կարծիքին չեմ: Ժամանակին հոդվածներ էլ ենք գրել: Գրավելուց հետո,

երբ տներում շրջում էինք, երեւում էր, որ մարդիկ քրդական կենցաղով են ապրել: Քրդական գրքեր կային, նաեւ ռուսերեն գրքեր, որոնք քրդերի մասին էին պատմում:

Դրանից հետո քրդերը տեղափոխվեցին Աղջաբեդի: Ադրբեջանը ոչ մի օգնություն ցույց չտվեց:

Պատմում է Գառնիկ Իսրայելյանը *(1991-94 թթ. Մարտակերտի հրետանու պետ, պահեստի փոխգնդապետ):*

20.10.2005թ., Մարտակերտ

Գ.Ի. - Ծնվել եմ 1961 թվականին Մարտակերտում:

Պատերազմի ժամանակ հիմնականում եղել եմ հրետանավոր: Այնուհետեւ երկար տարիներ եղել եմ օպերատիվ բաժանմունքի պետ: 1990 թվականից մի տարի ու կես ծառայել եմ նաեւ ութերորդ պաշտպանական շրջանում:

Սկզբնական շրջանում ամենապրիմիտիվ զենքերով էինք գործում: Հետագա ընթացքը ցույց տվեց, որ դրանք պետք է փոխարինենք ավելի հզոր զինատեսակներով: Հետեւաբար, ստիպված եղանք մեր որոշ զինատեսակներ, նկատի ունեմ հրետանային, թաքցնել: Հակակարկտային ջոկատում այն ժամանակ կար քսաներկու միավոր հրանոթ: Հիմնական մասը սովետական բանակի միջոցով տեղափոխեցին այլ տեղեր: Հետագայում՝ պատերազմի ընթացքում, երբ տարբեր տեղերից առգրավեցինք հրանոթները, պարզվեց, որ դրանք տեղափոխել են մեզ հարակից ադրբեջանական շրջաններ՝ դեռ այն ժամանակ հայկական բնակավայրերի խաղաղ բնակչության դեմ օգտագործելու նպատակով: Ինչու՞ եմ դա ասում: Այն ժամանակ՝ 1991 թվականին, դեռ արկ գցելու, խաղաղ բնակչությանը ոչնչացնելու խնդիրը չկար, դա էլ նրանք նախաձեռնել էին: Սկզբնական շրջանում նրանք օգտագործում էին հակակարկտային արկեր, այնուհետեւ հայտնվեցին նաեւ զուտ մարտական արկեր: Մենք ունեինք երեք հրանոթ՝ թաքցրած անտառի մեջ, որոնք վերանորոգելուց հետո պետք է գործածեինք: Վագիֆ Գալստյանը՝ հրամանատարը, դիմեց ինձ եւ միանգամից, առանց դիվանագիտություն անելու, կարճ ասաց՝ չե՞ս ուզում ծառայություն մատուցել հայրենիքիդ: Տեղեկանալով, որ ես զենիթային հրետանու մասնագետ եմ, ասաց, որ ադրբեջանցիներն արդեն հրետանի են գործածում: Ստեփանակերտի վրա Շուշիից եւ ադրբեջանական հարակից գյուղերից ակտիվորեն զանգվածային հրետանակոծություն էր իրականացվում: Նույնը եւ սպասվում էր Մարտակերտին: Արդեն Լենինավանի եւ Կարմիրավանի ուղղությամբ սկսել էին օգտագործել: Պարզ էր, թե ինչ

է սպասվում: 1991 թվականի սեպտեմբերին նախաձեռնեցինք հրանոթների վերանորոգումը, եւ ես սկսեցի աղյուսակների վերամշակումը: Այսինքն՝ անհրաժեշտություն կար այնպես անելու, որ հակակարկտային արկը, որը պայթում է օդում, պայթեր գետնի վրա: Ես նոր էի ավարտել Երեւանի պետական համալսարանի մեխանիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետը: Մաթեմատիկական գիտելիքներն ու տեսական մեխանիկայի իմացությունը բավական օգնեցին: Նաեւ օգտվեցի հակակարկտային աղյուսակներից, որը մոտարկում է կոչվում: Լուծեցի մոտարկման խնդիրը եւ հասա նրան, որ արկը պայթի գետնի վրա:

Բ. - Քանի՞ կիլոմետր էր գցում այդ արկը:

Գ.Ի. - Ես հետագայում պարզեցի, որ կախված արկի տեսակից՝ հեռահարությունը տարբեր է լինում, կարող է հասնել մինչեւ քսանյոթ կիլոմետրի: Բայց հակակարկտայինի հեռահարությունը տասնհինգ կիլոմետր վեց հարյուր մետր էր, համենայն դեպս, հաուբիցից առավել էր: Հաուբիցի հեռահարությունը տասնհինգ կիլոմետր երկու հարյուր է, «Գրադ» կայանքի արկի հեռահարությունը՝ քսան ու հինգ հարյուր:

1991 թվականի դեկտեմբերի 21-ին պայթյունների ձայնից պատշգամբից դուրս նայեցի: «Ալազանը» ինձ բավական ծանոթ էր, որովհետեւ ես խաղաղ նպատակներով համարյա հինգ տարի օգտագործել էի, շփոթել չէի կարող, իրավունք էլ չունեի: Մեջս նամուսի, թասիբի զգացողությունը միանգամից զարթնեց: Առաջնեկս՝ Սրբուհին, վեց ամսական էր, օրորոցի մեջ: Քրտինքը տվեց վրաս՝ ո՞նց թե, իմ երեխայի, իմ ազգի վրա ձեռք բարձրացնեն, այն էլ՝ այդ ձեւով, լկտիաբար: Հագուստ-կապուստս պատրաստ էր, կողմնացույցը, աղյուսակները արդեն կային: Քարտեզով աշխատել գիտեի: Ամեն ինչը պատրաստ էր: Գիտեի, որ պիտի գան իմ ետեւից: Գիշերը տեղադրեցինք Երրորդ սովխոզ կոչվող տեղամասում: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին, երբ ռուսական զորքը դուրս էր եկել Մարտակերտից, սկսվեց ակտիվ հրետանակոծությունը: Առաջին տասներկու արկերը բոլորն էլ հասան իրենց նպատակին: Նրանք ստիպված եղան բանակցություններ վարել: Մինչեւ 1992 թվականի հունվարի 11-ը հրետանին չօգտագործեցինք: Կարճ ժամանակ հետո Վաղուհաս գյուղից ասացին, որ Վարդանի գոմերից թուրքերը հրետակոծել են, դպրոցում մի երեխա ոտքից վիրավորվել է: Անհրաժեշտություն եղավ հրանոթներից մեկը բարձրացնել Աբխազ տեղամասը, որը պետք է օգտագործեինք Չարեքտարի եւ Աղդաբանի ուղղությամբ: Հետագայում՝ Աղդաբանը ազատագրելու ժամանակ, այդ հրետանին օգտագործվեց: Մյուսը տեղակայեցինք Թալիշ գյուղում: Սկզբնական շրջանում հիմնականում հակակարկտայինի աշխատողներն էին ինձ հետ: Հիմնարկը դեռեւս

գործում էր: Ստեփանակերտում պայմանավորվածություն ունեցա, որ ովքեր չեն ուզում մասնակցություն ունենալ հրետանու գործին, նրանց աշխատավարձը չի վճարվի: Արդեն մարտ, ապրիլ ամիսներն էին:

Ժորա Գասպարյանի հետ ծանոթացել եմ Վերին Հոռաթաղում: Այնտեղ հրանոթ ունեինք, կարգավորում էինք, որպեսզի տեղափոխեինք Վաղուհաս ու Ալխաս գյուղեր: Ես իմացա, որ նա բավական բարձր որակի հրետանավոր է, բայց տեղյակ չէ զենիթային հրետանուց: Նա «Գրադ» կայանքի մասնագետ էր: Սովետական բանակում դիվիզիոնի հրամանատար է եղել: Հետո հաուբիցներով մի մարտկոց եկավ Մարտակերտ: Նա մեծ օժանդակություն ցույց տվեց Մարտակերտի շրջանի հրետանու կայացմանը: Շահումյանից մեկ հատ «Գրադ» կայանք բերեցինք, մեկն էլ Ստեփանակերտից բերեցի, մի մարտկոց հաուբից կար, երեք հատ «ԱԿՀ-19», երկու հատ վրան ունեինք: «Գրադ» կայանքը բերելուց հետո կադրերի պահանջ զգացվեց: Գնացինք զինկոմիսարիատ: Պարզվեց, որ հետեւակային ջոկատում երկու հոգի՝ Վիգեն Շիրինյանի որդին եւ Մնացականյան Կարենը, ունակ տղաներ են, եւ առաջարկեցինք նրանց հետեւակից տեղափոխել հրետանի: Ասացին. «Չէ, ամոթ է հետեւակից հեռանալ, բա ի՞նչ կասեն տղերքը»: Հետագայում այդ հանգամանքը լուրջ խնդիր դարձավ: Կարեն Մնացականյանին, որը զոհվեց, «Մարտական խաչի» համար երբ ներկայացրել էին, պատճառ բռնեցին, թե նա հետեւակից գնացել է հրետանի: Կարենը ռուսական բանակում ծառայել էր այդ համակարգում: Նա Կոճողոտի ազատագրման ժամանակ վճռորոշ դեր է կատարել. կրակը կառավարել է, եւ գյուղը բարեհաջող ազատագրվել է: Այդ երեք մարտկոցները հետագայում վերածվեցին դիվիզիոնի, դարձան այսօրվա գործող հրետանու հիմքը: Մենք այդ գործում ներգրավում էինք հիմնականում մաթեմատիկայի մասնագետներին, ինժեներներին, որոնք դարձան բարձրաստիճան սպաներ: Վլադիկ Խաչատրյանը, երբ թուրքերը Չայլուն գրավել էին, եկավ, օգնեց մեզ: Ճիշտն ասած, մի օրվա մեջ երեք սպաներ թողեցին փախան: Ստիպված եղա նոր մարդկանց սովորեցնել: Նրանք փախան հուլիսի տասին, երբ մենք տեղակայված էինք Կիչանում: Ամբողջ գործը մնաց իմ եւ Հարությունյան Գարիկի ուսերին: Հետո Սանասարը, որի ընտանիքը տեղափոխվել էր, եկավ օգնելու: Նրա գալը մեծ աջակցություն էր: Բոլորն էլ գիտեն, թե պատերազմի ամբողջ ընթացքում հրետանին ինչ գործունեություն է կատարել:

Շատ մեծ հաղթանակ եմ համարում Կիչանի ազատագրումը, որը նոյեմբերի 19-ին էր: Նրանք մտան, նույն օրը Իվանյանը, Գասպարյանը եւ ես բարձրացանք Ուլուբաբ տեղամասը, ընտրեցինք նոր հրամանատարական կետ, կատարեցինք հրետանու տեղաշարժը: Ասել,

թե ինչ էր նշանակում Կիչանը մեզ համար, իմաստ չունի: Այն Արցախի հյուսիսային դարպասն էր, դեռ ավելին՝ մնացած գյուղերի հիմնական անցուդարձը Խաչենի կամուրջով էր կատարվում: Իսկ գրավել Կիչանը նշանակում է գրավել Խաչենակամուրջը: Հաջորդ օրը առանց ավտոմատի մի կրակոցի, միայն հրետանիով կարողացանք ադրբեջանցիներին դուրս մղել Կիչանից: Փառք ղազանչեցի տղաներին: Կիչանը գրավել էին, բայց մարդիկ Ղազանչին չթողեցին, դուրս չեկան: Դա եւս մեզ ոգեւորում էր:

Մեծ հաղթանակ էր նաեւ Մարտակերտի ազատագրումը Քարհանք կոչվող տեղամասում: Երբ հրետանային պատրաստությունը այդ տեղանքով պետք է բարձրանար, մեծ նշանակություն ունեցող խրամատներն արդեն խոցված էին: Ճիշտ է, զոհեր ունեցանք, բայց ոչ այնքան, որքան կարող էր, եթե հրետանին չլիներ:

Մարտակերտը ազատագրելու մի քանի փորձեր են եղել: Մի անգամ 1992 թվականի ամռանն էր: Հեռուստաաշտարակի բարձունքն էր, բայց Պուշկեն յալը դեռ չէր ազատագրվել: Մի անգամ՝ 1992 թվականի մարտին 21-ին, գրավել էին: Բայց Հեռուստաաշտարակը ազատագրված չէր: Իսկ վերջին անգամ հունիսի 26-ին էր, երբ Ցորի, Ասկերանի օժանդակությամբ էր, Շուշիի պաշտպանական շրջանի օժանդակությունն էլ՝ աջ թեւից, իսկ մենք մտանք ձախ թեւից: Միանգամից սեղմեցինք: Մենք Քարհանքից Հեռուստաաշտարակ եկանք, նրանք՝ Փափրավանդից: Եվ հատվեցինք: Մի փոքր հատված էր մնացել, թուրքերը ստիպված գիշերը հեռացան: Մարտակերտն ազատագրելու բոլոր փորձերը եթե չէին կատարվում լայն ճակատով, մատնվում էին անհաջողության:

Երբ Հեռուստաաշտարակը մեր ձեռքում էր, ինչ-որ «Գրադ» կայանք նեղում էր տղաներին: Չեմ կարող ասել, թե ճիշտ էր հասցեագրված, բայց այդ ուղղությամբ էին կրակի կառավարումը տալիս, ինչի հետեւանքով մեծ պայթյուն է լինում: Նրանց կողմից կրակը դադարեցվում է: Տարածքն ազատագրելուց հետո պարզվել է, որ արկերով բարձած մեքենա է եղել: Արկը ընկել էր այդ մեքենայի վրա: Մեքենան մինչեւ հիմա այնտեղ է, զորավարժությունների ժամանակ որպես թիրախ ենք օգտագործում: Դրանից վերեւ մի շարք վառված մեքենաներ կան, որոնք փախչող, հեռացող եւ օգնության եկող մեքենաներն էին: Մենք կարողացել ենք թույլ չտալ, որ մեքենաները հեշտ ու հանգիստ հեռանան: Իհարկե, բավականին սխալներ ենք թույլ տվել մեր անփորձության պատճառով:

Բ. - Օրինակ ի՞նչ սխալ:

Գ.Հ. - Հրանոթը դրել ենք ուղիղ նշանառությամբ, բայց պարզվել է՝ այն նախատեսված չի եղել ուղիղ նշանառության համար: Այդպես

Պատմում են Արարատ Ահարոնյանը, սարկավագ Արթուր Ահարոնյանը:

12.10.2005 թ., Գանձասարի վանք

Արթուր Ահարոնյան - Գյուղում անասնագոմեր կային: Ֆերմայի անասնապահները ադրբեջանցիներ էին: Մենք հսկում էինք այդ գոմերը, որ ադրբեջանցիները անասունները չգողանան: 1989 թ. Գառնաքար գյուղի ֆերման քանդել էին եւ անասունները տարել: Կատարվածի մասին տեղյակ պահեց բրիգադիր Մելքումյան Կնյազը: Կոլխոզի նախագահ Բորիկ Հակոբյանը տրամադրեց կոլխոզի մեքենաները: Կոլտնտեսականները մեքենաներով գնում հասնում են Քոլատակ գյուղի սարերը, հրացաններով կրակում թուրքերի վրա: Նրանք փախչում են: Մերոնք էլ անասունները ետ են տալիս ու բերում գյուղ: Դրանից հետո ես գնացել եմ ծառայության խորհրդային բանակում: 1991թ. վերադարձել եմ եւ հենց առաջին օրվանից կանգնել դիրքերում: Այդ ժամանակ, ճիշտ է, պատերազմը հայտարարված չէր, բայց շարժումն արդեն սկսվել էր: Չնայած վնասված է, բայց մինչեւ այսօր պահում եմ մի փողանի որսորդական հրացանը, որով պաշտպանել ենք մեր գյուղը, մեր երեխաներին:

1992 թ. պատերազմը սկսվեց: Մեր դիրքերը գյուղից տասը կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ղազախալի կոչվող վայրում էին: Հերթափոխության օր էր: Կողքիս կանգնած էր հորեղբորս որդին՝ Արարատը: Ադրբեջանցիները կրակում էին, մենք էլ պատասխանում էինք:

Արարատ Ահարոնյան - Ադրբեջանցիները Մարտակերտի շրջանի

բոլոր գյուղերը գրավել էին՝ Առաջաձորը, Գառնաքարը, Ծմակահողը, Վաղուհասը, Հարությունագոմերը, Կոճղոտը, Վերին Հոռաթաղը, Հաթերքը, չհաշված ներքին դաշտավայրային գյուղերը: Եթե մեր գյուղը՝ Վանքն էլ վերցնեին, ուրեմն՝ ամբողջ Մարտակերտի շրջանը նրանց ձեռքում կլիներ: Մենք ուզում էինք Վաղուհասը ազատագրել: Վաղուհաս գյուղի վերեւում մի բլուր կա, որ կոչվում էր Ղլեն քար, այսինքն՝ Բերդի քար: Ադրբեջանցիներն այստեղ ուժեղ դիրքավորված էին: Իսկ մեր դիրքերը Տզամա ղաշ կոչվող տեղում էր: Ձմեռ էր: Մեր գյուղի հրամանատարը Յուրիկն էր, Մարտակերտի հրամանատարը Նորիկն էր: Ղլեն քարը վերցնելու օրը հրամանատար եկավ Արամ Պողոսյանը՝ Սերժիկ Աբրահամյանի հետ, որն այդ ժամանակ մեր վաշտի հրամանատարն էր: Իմ հերթապահության հինգերորդ օրն էր: Սերժիկն ասաց, որ վաղը առավոտյան, պատրաստվենք հարձակման: Պետք էր հավաքել կռվող տղերքին: Ստեփանակերտի երրորդ խումբն էլ եկավ օգնության: Ղլեն քարը ուժեղ դիրք էր: Բոլոր կողմերից կրակում էին: Դիրքերի մեջտեղի տարածքի ճղակոտոր ծառերը էլեկտրական սյուներ էին հիշեցնում: Առավոտ շուտ տղաները անցան հարձակման: Հարձակումը հաջողվեց: Տղերքը Ղլեն քարը վերցրին: Իջանք Վաղուհաս, ազատագրեցինք, բայց չկարողացանք պահել, ետ եկանք: Ադրբեջանցիները ուժեղ տեխնիկա ունեին:

Արթուր - Մենք հրաման չունեինք Վաղուհասը վերցնելու: Քանի որ Ղլեն քարը հեշտությամբ վերցրինք, բլուրից միանգամից իջանք գյուղ: Ադրբեջանցիք փախչում էին, մենք էլ հետեւներից կրակելով մտանք Վաղուհաս: Զարդախաչ գյուղի գետալանջից թուրքերը կրակում էին: Մենք պատրաստ չէինք գյուղը պահելուն: Ստիպված էինք ետ քաշվել Ղլեն քարի բարձունքը: Այնտեղ մնացինք երկու օր: Ադրբեջանցիները հեշտությամբ մտան գյուղ:

Արարատ - Ղլեն քարում Ստեփանակերտի երրորդ վաշտը մեզ ահագին օգնեց:

Արթուր - Զարմանում էին, որ մենք խրամատներ չունենք: Քանի որ նրանք տափաստանում էին կռվել, միշտ խրամատներ էին փորել: Իսկ մեր խրամատը ծառն էր, քարը: Ժայռի վրա ի՞նչ խրամատ, ո՞նց փորես: Ստեփանակերտի վաշտի հրամանատարը կապվում է Գրադի ժորայի հետ եւ ասում, որ մինչեւ տասնհինգ րոպեն գյուղը վերցնեն: Հինգ տանկի դեմ կռվող անձնակազմ էր պետք, քանի որ տեսել էին՝ Վաղուհասում հինգ ադրբեջանական տանկեր են կանգնած: Մինչեւ կես ժամը Ստեփանակերտի վաշտից յոթ հոգանոց անձնակազմի մեծ մասը, համարյա բոլորը վիրավորվել էին ադրբեջանական ականանետների բացած կրակից: Խրամատից կռվելուն սովոր՝ չէին կարողանում թաքնվել, պաշտպանվել: Ստեփանակերտի վաշտի հրամանա-

տարը ջղայնացած գալիս է Կարմիր քար, որ Վաղուհասից Վանք տանող ճանապարհին է, «Ուրալ» մեքենայի վարորդ Արտուշ Չիլինգարյանին ստիպում, որ գա, իրենց հետ տանի: Արտուշը բացատրում է, որ ինքը այդպիսի հրաման չունի եւ պարտավոր է մնալ իր տեղում: Բայց վախեցնում են, զոռով նստեցնում մեքենան, ստեփանակերտցիներից մեկն էլ նստում է ղեկի առաջ, եւ վիրավորներին տեղափոխում են Վանք գյուղի շտաբը:

Ղլեն քարը հետ ենք տալիս, գալիս հասնում Տգամա դաշի բլուրը: Մենք «ԼՍԻԿ» գնդացիր ունեինք, որը չկարողացանք մեզ հետ տանել: Այն մնաց ադրբեջանցիներին, քանի որ այդ ժամանակ քանդելու հավաքել չգիտեինք, տասը հոգով հենարանի վրա դրած էինք տեղափոխում: Հաջորդ օրը հիսուն հոգով Ղլեն քարը հետ վերցրինք:

Արարատ - Մեր անձնակազմը շատ ուժեղ էր, ապրեն, քաջ տղերք էին: Ադրբեջանցիները գիշերը խրամատներ էին փորում տանկի ճանապարհը անանցանելի դարձնելու համար: Մեր տանկը ընկավ ծուղակի մեջ: Բարձրացել էր նրանց խրամատի վրա, եւ աջ կողմի թրթուրը օդի մեջ էր պտտվում: Այդ վիճակում Բաղդասարյան Սարմենը, որ հրետանու ուղղորդող էր, տանկը աշխատեցրեց: Տանկը նշանառության տակ էր: Նույնիսկ կրակեցին, բայց չկպավ: Առաջ գնացինք: Վաղուհասը վերցրինք: Հասանք Գետավան: Մշակված ռազմավարություն չունեինք: Կռվելը խաղի պես բան էր դարձել: Տասնյոթ-տասնութ տարեկան ջահել տղաներ կային, որ արդեն մի տարի կլիներ, ինչ կռվում էին, համարձակ էին դարձել, հասկանում էին կռվի տակտիկան:

Մենք դիրքավորվել էինք Վերին Հոռաթաղից այն կողմ՝ Խոյի տեղամասում, Կոճղոտի վերին սարերում, մեր գյուղից քիչ վերեւ գտնվող Քաչալ բլուրի վրա: Ես վաշտի հրամանատարն էի, հորեղբորս տղան՝ Արթուրը, ինձ հետ էր: Հետախույզ էր, «Лесной брат» էինք ասում, ամեն ծառի, քարի տեղը գիտեր:

Հոռաթաղ գյուղում էինք: Այնտեղ մի սալ քար կար: Դրան էլ «տելեվիզոր» էինք ասում. այդտեղից շրջակա բոլոր գյուղերը երեւում էին: Ադրբեջանցիների շտաբը Հարությունագոմերում էր: Սալ քարից մի երկու օր հետեւեցի: Գյուղում հանդիսությունների տուն կար: Այդտեղ էին քնում, արթնանում, դուրս էին գալիս, լվացվում, գնում նախաճաշելու, շարք կանգնում: Մոտ երկու հարյուր հոգի կլինեին: Տանկիստների հրամանատարը Ալբերտն էր: Գնացինք Սալ քարի մոտ, ցույց տվեցի, բացատրեցի ադրբեջանցիների «ռեժիմը», ու տես՝ ինչ խաղ խաղացինք գլխներին: Տանկը քշում ենք նրանց շտաբին մոտ, փողը ուղղում այնտեղ, որտեղ առավոտյան ռազմահավաքն են անում: Քանի որ տանկը լազերային ճառագայթներով է կրակում, խանգարող

ծառերը, թփերը կտրեցինք: Հենց ռազմահավաքը սկսեին, պիտի կրակեինք: Իսկ երբ նկատեին, թե որտեղից ենք խփում, տանկն արագ կտեղափոխեինք բլուրի վրա: Ադրբեջանցիները կկրակեին սխալ ուղղությամբ, առանց իմանալու, որ տանկը նախկին տեղում չէ: Հաջորդ օրը՝ առավոտյան, մշակած ծրագրի համաձայն՝ հենց ադրբեջանցիները ռազմահավաքը սկսեցին, հրետանու ուղղորդող Սարմենը հինգ հատ բեկորային կրակեց եւ տանկը փախցրեց պայմանավորված տեղը: Ադրբեջանցիները կրակ բացեցին տանկի նախկին ուղղությամբ: Իսկ մենք բլուրից հետեւում էինք: Մարտակերտից մեքենաներով գնան զոհվածներին ու վիրավորներին տեղափոխելու: Խառնաշփոթ իրավիճակ էր ստեղծվել: Ասում եմ. «Սարմեն ջան, տեսնո՞ւմ ես, թե ինչ է կատարվում: Դե մի չորս հատ էլ հիմա խփիր»: Խփեց, ու տանկը այդտեղից էլ փախցրինք ծորը: Մեր գնդի հրամանատար Նորիկը իմացավ, զանգեց տղաներին, շնորհավորեց: Թուրքին պիտի խաբես: Ասում են՝ ադրբեջանցիները շատ են, նրանց ղեկավարները նավթ են ինճառում, դոլար սարքում: Բայց դա ոչ մի նշանակություն չունի: Այն ժամանակ չկարողացան մեզ հաղթել ու երբեք չեն հաղթի: Մենք կռիվ ենք ուզում: Աստված չտա: Կռիվը վատ բան է: Բայց միշտ պատրաստ ենք նորից պաշտպանելու մեր հողը:

Արթուր - Գնում, հասնում ենք Գետավան գյուղ: Ձմեռ էր: Ուտելիքի հարցում շատ էինք դժվարանում: Ադրբեջանցիները Չափար գյուղի ներքեւում էին՝ ճանապարհի վրա: Հորեղբայրս միշտ կողքիս էր: Որոշեցինք գնալ հետախուզության: Յոթ հոգով իջանք: Տեսնենք՝ խրամատ են փորում: Գազի սալօջախ էր գցած՝ հետեւն էլ բաց: Փոխադարձ կրակոցներ սկսվեցին: Ադրբեջանցիները փախան, մենք՝ նրանց ետեւից: Սոված էինք: Գնացել էինք նրանցից, մեր խոսքով ասած, ուտելիք հայթայթելու: Տեսնենք՝ տանկի շարժիչը գործի դրին: Սկսեցինք կրակել: Նրանց թվաց՝ զինված հարձակում ենք սկսել: Բայց մենք ընդամենը յոթ հոգի էինք ու կրակում էինք ավելի շատ ինքնապաշտպանության նպատակով: Կրակ բացեցին մեր ուղղությամբ:

Արարատ - Ես էդպիսի բան կինոյում էի տեսել: Կրակում էին մեզ վրա, բայց ոչ մի հատ չէր կպնում: Փամփուշտները ոտքերիս արանքից թռչում էին: Արթուրը ջահել տղա էր, ամուսնացած չէր: Ես նրա համար շատ էի անհանգստանում: Ասում եմ՝ ա՛յ տղա, պառկի՛ր: Աբրահամյան Սերժիկը պառկեց, Արթուրն էլ նրա ոտքերի հետեւում տեղ գտավ: Ես թռա, անցա ճանապարհի տակը: Պարզվում է՝ ադրբեջանցիք դիրքավորված մեզ սպասում էին: Ասում եմ. «Սերժի՛կ, թուրքերը մեզ սպասում են: Բա մեր հետախույզներն ո՞ւր են»: Ասաց. «Նրանք ասել են, որ ճանապարհն ազատ է»: «Ո՞նց է ազատ,- ասացի,- տեսա՞ր, թուրքը փախավ, մտավ ծառի հետեւը: Հենց այդ պահին ադրբեջանցիները

սկսեցին կրակել գնդացրով: Պառկել էինք ձյան ու ցեխի մեջ: Ցուրտ էր: Հիշեցի այն խոսքը, թե կռվում հաղթում է ոչ թե նա, ով ուժեղ է, այլ նա, ով ռազմական խորամանկություն ունի: Մենք շատ մոտ էինք թուրքերին, հիսուն մետր էլ չկար: Ասում եմ. «Սերժի՛կ, սրանք մեզ էստեղ կկոտորեն»: Բաց դաշտ էր, փախչելու տեղ էլ չկար: Նրանք կրակում էին է՛լ գնդացիրով, է՛լ ականանետով, է՛լ ավտոմատով: Տանկի մասին էլ չեմ խոսում: Մի պահ դադարեցրին կրակը: Ռուսերենով բարձր գոռում եմ. «Սերգե՛յ, դու ձախ թեւից հիսուն մարդ վերցրու, Իգո՛ր, դու էլ՝ քսան հոգի աջ թեւից, ես էլ դիմացից եմ գնում: Պահել միայն ողջերին: Չկրակե՛լ: Նրանք մեզ կենդանի են պետք»: Էդ ասելս էր: Ու տեսնենք՝ թուրքերը Չափարի գերեզմանոցի մոտով գլխապատառ փախչում են: Կապվեցի մեր ականանանետ հրետանավորների հետ, ասացի, որ մի քանի արկ խփեն, որպեսզի թուրքերը արագ շարժվեն: Նրանք էլ ապրեն, շատ դիպուկ խփեցին: Մենք մտանք Չափար: Տեսնում էինք՝ ոնց են ադրբեջանցիները տանկերով փախչում դեպի Հաթերք: Սերժիկն ասաց «Քո ռուսերեն սուտ խոսելը մեզ փրկեց»: Չափար տանող ամբողջ ճանապարհը ականապատված էր: Տղաները զգուշությամբ լարերի վրայով անցնում էին: Ես ու Սերժիկը առջեւից էինք գնում: Հանկարծ տանկ նկատեցի, փողն էլ մեր կողմն էր ուղղած: Ենթադրեցինք, որ տանկը թողած՝ փախել են: Մոտեցանք: Իսկապես դատարկ էր: Բայց տանկի բեռնախցիկից դուրս հանած եւ լյուկը մտցրած լար կար: Մտածեցի՝ ականապատված է: Ես սովետական բանակում տանկիստ եմ եղել: Նայեցի, սովորական լար էր, քաշեցիհանեցի: Առաջ գնացինք: Տեսնենք՝ մի ամբողջ ավտոբազա է կանգնած՝ քանի-քանի «ԿԱՄԱԶ»-ներ, «ՈՒԱԶ»-ներ: Ամբողջը թողել-փախել էին: Մտանք Չափար: Գյուղի խոհանոցներում՝ լիքը ուտելիք: Կապվեցինք Մորուք Ռաֆոյի հետ ու տեղեկացրինք, որ Չափարը ազատագրված է: Ռաֆոն ասաց. «Տղե՛րք, ասում են՝ Չափարում թաքնված գումարտակ կա, նրանց բազան էլ դպրոցի տակ է, զգույշ մնացեք»: Մենք հենց դպրոցի մոտ էինք: Դպրոցը շրջապատեցինք, բոլոր կողմերից կրակ բացեցինք: Մարդ չկար: Սերժիկը նորից կապվեց Ռաֆոյի հետ. «Ռաֆո՛, Չափար գյուղը վերցրել ենք, հիմա դպրոցի բակում նստած քեֆ ենք անում»: Դեռ խոսքը չվերջացրած՝ թուրքերը Հաթերքից «Գրադի» արկերով կրակ բացեցին դպրոցի վրա: Ասում եմ. «Սերժի՛կ, ի՞նչ արեցիր, ինչո՞ւ ասացիր, որ դպրոցի մոտ ենք»: Թուրքերը չգիտեին, որ տղերքը արդեն Հաթերք են մտնում: Գործերը հաջող էին առաջ գնում: Վերջը, հասանք Թալիշ:

Արթուր - Միշտ հորեղբորս տղայի հետ եմ եղել: Նրա բացակայության ժամանակ ես էի դասակն առաջ տանում: Մի ուրիշ հորեղբոր որդի էլ ունեինք՝ Մանվել Ահարոնյանը: Պետք է անցնեինք հարձակման: Մանվելը, որ միշտ ավտոմատով էր կռվել, պնդում էր, թե ինքը պիտի գնդացիրը վերցնի: Հասկանալի է՝ ուզում է կռվի մեջ մտնել: Հակառակորդը աշխատում է առաջին հերթին գնդացրորդին սպանել, քանի որ գնդացիրը մի քանի ավտոմատի հզորություն ունի. Հորեղբայրս՝ Ահարոնը, որ մեր հրամանատարն էր, ինձ ուղարկեց Մանվելի հետ՝ որպես նրան օգնական: Ես ինքս նրան մենակ չէի թողնի, նա գնդացիրն անգամ լիցքավորել չգիտե: Կռիվն սկսվեց: Մի քանի անգամ կրակեց, ժապավենը վերջացավ: Չգիտեր՝ ինչպես վիրացնել: Ահավոր իրավիճակ էր ստեղծվել, թուրքերը ուժեղ կրակ էին բացել: Ես ժապավենը մտցրեցի, լիցքավորեցի, սկսեցի կրակել: Մանվելի վրա ջղայնացել էի, որ գլխից մեծ գործեր է բռնում: Կրակը դադարեց: Ճանապարհը բացելով՝ առաջ էինք գնում: Ժայռի վրայից կրակում էինք ադրբեջանցիների վրա, նրանք փախչում էին, մենք նրանց հետեւից առաջ էինք շարժվում: Հաթերքով մտանք, հասանք Սարսանգի ջրամբար: Կանգնած էինք կամրջի ծայրին, հանկարծ մյուս կողմից մի «БМП-2» եկավ ու կրակ բացեց մեզ վրա: Փաստորեն, կամրջի մի ծայրին մենք էինք կանգնած, մյուս ծայրին՝ թուրքերը: Իրիկնադեմ էր: Որոշեցինք երեք հոգով՝ ես, մեր գյուղացի Ասրյան Նորիկը եւ Մանվելը, քանի որ գնդացիրը նրա մոտ էր, գնալ «БМП-2» -ի մոտ հետախուզության: Մոտեցանք մեքենային: Նրանք կրակեցին: Մանվելը ծնկից վիրավորվեց: Նրան մեքենայով տեղափոխեցին Ստեփանակերտի հիվանդանոց: Մենք մնացինք տեղում: Առավոտ շուտ արթնացա: Ես գյուղի տղա եմ՝ որսի սիրահար, եւ միշտ առավոտները շուտ եմ արթնացել, անտառում շրջել՝ որսի տեղը իմանալու համար: Այդ օրն էլ շուտ էի արթնացել: Մեկ էլ տեսնեմ՝ մի թուրք վազեց, փախավ ու թաքնվեց թփերի հետեւում: Ձեռքին զենք չէի տեսել, բայց ապահովության համար մեր տղաներից մեկի՝ Ավանիսյան Վիտյայի հետ թաքնվեցինք: Մտածեցինք՝ միգուցե ձեռքին նռնակ կա կամ զենքը թաքցրել է թփերի հետեւում: Մեր դիմաց ժայռակտոր կար: Այդտեղից մի սեւամորթ մարդ դուրս եկավ: Ադրբեջանցու նման չէր: Ոտաբոբիկ էր: Ցած գցեց «РДК» գնդացիրը, բայց կրծքին նռնակ կար: Հետո պարզվեց, որ Դաղստանից եկած դարգին էր: «БМП-2» -ի ուղղորդող է եղել: Ծուղակի մեջ էին ընկել, մեքենան թողել էր ու իր հրամանատարի հետ փախել: Վիտյային ասում եմ, որ ինքը մոտենա, իսկ ես նշանառության տակ վերցնեմ ու ճակատին խփեմ: Ասում է. «Ես վախենում եմ, դու մոտեցիր»: Մենք հայերեն խոսում ենք, դարգինը դողում է: Մոտեցա, հրացանի կոթով վզին խփեցի, ընկավ: Ձեռքերը հետեւից կապեցի: Հա՛մ խփել էի, հա՛մ էլ մեղքս գալիս էր: Դողում էր: Բերեցինք մեզ մոտ: Զանգեցին գնդի հրամանատար Նորիկ Դանիելյանին, տեղյակ պահեցին: Իմացավ, որ ես եմ դարգինին

բերել, տասը օր արձակուրդ տվեց: Այդ տղան խոստացավ, որ հաջորդ օրը՝ երեկոյան, կգնա ու բարձունքի տակ գտնվող կամուրջը կպայթեցնի: Ասում էր, որ միասին գնանք, թուրքերի դիրքը փակենք ու կոտորենք: Ես չէի վստահում, մտածում էի՝ կտանի մեզ կոտորել կտա: Արձակուրդիս հաշվին գնացի Ստեփանակերտ: Ես հեռակայում էի գյուղատնտեսական ֆակուլտետում: Երբ վերադարձա, պատմեցին, որ դերգինը կատարել է իր խոստումը. կամուրջը պայթեցրել է, նաեւ ռազմավարական նշանակությամբ կարեւոր տեղեր ցույց տվել: Դրանից հետո առաջ ենք գնում, վերցնում ենք Մեծ Շենը, Մաղավուզը: Մի քանի ամիս մնացինք Մաղավուզի տակի բլրին, որին Կղզի են ասում: Մաղավուզը վերցնելիս շատ զոհեր տվեցինք: Վաղ առավոտյան զոհերին հանելիս կրծքից վիրավորվեցի: Մի ամբողջ տարի թեւս թուլացած էր, չէր աշխատում: Դրանով էլ իմ պատերազմն ավարտվեց: 1994 թվի հունվարի 6-ին վերադարձա եւ սկսեցի ծառայել եկեղեցուն:

Արարատ - Մի բլրի վրա ադրբեջանցիները ուժեղ դիրքավորված էին: Գումարտակի հրամանատար Խալաստոյ Ագոն ասաց, որ առավոտյան բլուրը պետք է վերցնենք: Պատերազմում այդպես է, կհաջողվի՝ կվերցնենք: Ընտրեցինք ամենալավ կռվողներին: Առավոտ շուտ Յանշաղ գյուղի ուղղությամբ անցանք հարձակման: Մենք չգիտեինք, թե կոնկրետ որ գյուղն ենք վերցնում: Չորս կողմը սարեր են ու լեռներ: Մեր տղաներն էլ արծիվների պես էին հաղթահարում բարձունքները, մարտաֆիլմերի ռեմբոների պես մագլցում էին լեռները: Նրանք Օմարի գագաթի վրա էին: Օմարը վերջին գագաթն է: Մինչեւ այդտեղ հասնելը գրավելու շատ դիրքեր կային: Ես չեմ չափել, բայց ասում են՝ Օմարից մինչեւ Կիրովաբադ ութսուն կիլոմետր է: Ադրբեջանցիները նկատեցին մեզ: Ունեցած զենքի բոլոր տեսակներով կրակում էին: Մենք պատասխանում էինք ավտոմատով: Տղերքից մեկն առաջարկեց, որ շարունակենք կրակել, մի քանի հոգով իջնեն բլուրի տակ, խաբուսիկ ձեւով շրջանցեն, նրանց դիրքերի թիկունքից կրակ բացեն: Հինգ հոգով իջան: Կոճղոտից տղաներ կային, Հաթերքից, Հարությունագոմերից, Ստեփանակերտից: Ապրե՛ն, լավ էին կռվում: Հասան բլրի տակ, նռնակները նետեցին: Գոռում էին՝ ուռա՛, տղե՛րք, խփե՛ք: Մենք էլ մեր տեղից էինք գոռում՝ ուռա՛: Բարձրացանք բլրի գագաթը: Ադրբեջանցիները արջային շարժումներով ընդհանուր ճանապարհով փախչում էին: Հետո իմացանք, որ այդ ճանապարհը Յանշաղից գնում հասնում է Կիրովաբադ: Շարունակում էինք կրակել, արդեն փամփուշտը չէր հասնում նրանց հետեւից: Ահագին զինամթերք էին թողել: Ոչ մի զոհ չենք տվել, մի հոգի էր վիրավորվել, բայց շատ ծանր: Մինչեւ հիմա հիշում եմ այդ

տղային: Փամփուշտը աչքից մտել էր եւ առանց ուղեղը վնասելու գլխից դուրս եկել: Ձեռքն էլ արկի պայթյունից էր կտրվել: Մինչեւ հիմա ապրում է այդ տղան: Հաջորդ օրը հանգիստ մտանք Յանշաղ: Լենինականից ութ հարյուր զինվորներ եկան: Ադրբեջանցիների նախավերջին դիրքն էինք վերցնում: Դրանից հետո ճանապարհն ազատ կլիներ մինչեւ վերջին դիրքը: Թուրքերը մեզ նկատեցին: Գետ էր հոսում: Գետի ափի մի խրամատում պառկել էինք, չէինք կարողանում գլուխներս բարձրացնել: Թուրքերն անընդհատ կրակում էին երեք ավտոմատներով ու մի գնդացրով: Յանշաղի անասնապահական ֆերմայի պատի վերջում նրանց խրամատն էր փորած: Յաշայի որդին՝ տասներեք տարեկան Հակոբյան Աշոտը, որ տասներկու տարեկանից կռվում էր, տեղից վեր կացավ, թե՝ հիմա տեսեք՝ ինչ եմ անում: Գոռում ենք՝ ա՛յ երեխա, հետ արի: Չլսեց: Աշոտ երեխաս դուրս թռավ խրամատից, գետը անցավ, մտավ ֆերմայի պատի հետեւը: Այնտեղից երկու նռնակ գցեց նրանց խրամատի մեջ, ինքը թռավ պառկեց: Երբ նռնակները պայթեցին, կանգնեց նրանց խրամատի առաջ ու գոռաց. «Տղե՛րք, եկաք, պադրաստը՛ն, չորսնը՛ն, չորսն էլ ստակալը՛ն»: Ուզում էր, որ գնդացիրը տանք իրեն: Ասում էր. «Ավտոմատները՝ ձեզ, ինչ ուզում եք, արեք, բայց գնդացիրը պիտի իմը լինի»: Համոզեցինք, ձեռքից վերցրինք, բոլորն էլ տվեցինք զինապահին: Զարմանալի էր տասներեք տարեկան տղայի համարձակությունը եւ արած գործը: Հիմա նա չկա: Պատերազմից հետո մեր հերոս պատանին մահացավ: Յանշաղը գրավեցինք: Իլյիչի տղաները չորս գերի էին բռնել: Աշոտը դրանց քացով խփում էր ու աչքի տակով մեզ նայում: Ասում էինք. «Թխե՛, թող սերտդ հուվանա, արխային թխե՛ տահանց»: Օրվա կռիվը վերջացած էր, պատրաստվում էինք վերջին դիրքը վերցնել: Հոգնած պառկել, ծխում էինք: Շուրջբոլորը ձյուն էր ու ցեխ: Այդ պահին Հակոբյան Դավիթը ձայն տվեց. «Տղե՛րք, բլուրից կրակում ե՛ն»: Իսկապես, կրակում էին, բայց գյումրեցի տղերքը բլուրից իջնում էին: Դավիթի ձեռքին «СФД» կար, որի վրա հեռադիտակ է լինում: Վերցրի: Նայում եմ՝ ոչ ոք չկա: Գյուղից քիչ վեր՝ գետի մյուս ափին, ֆերմայի մոտ, մեր տղերքն էին՝ Հայրապետյան Էդիկը, Ասրյան Աշոտը, Խալաստոյի Երվանդը: Դավիթն ասաց. «Գնամ տղերքի մոտ, տեսնեմ՝ ինչ է կատարվում, ով է կրակում, ինչ խառնաշփոթ է»: Հինգ որպե՛ս անց գալիս է Դավիթին խփելու լուրը: Աշոտն ասաց, որ Հակոբյան Դավիթին չե՛ն խփել, այլ իմ հորեղբոր տղա Դավիթին ե՛ն խփել: Բարձր տեղ էր: Էլ չնայեցի, թռա, մտա գետը. դուրս եկա ու Դավիթին ընկած գտա: Շրջեցի: Արդեն մահացել էր: Սրտին էին խփել: Ընկնելիս թիկունքից կրակել էին: Ամբողջ մեջքը ծակծկված էր: Դավիթը որբ էր, մայր չուներ: Նրան տարանք գյուղ: Հաջորդ օրը Օմարի բարձունքը

վերցրինք: Հետո ետ եկանք, հասանք Թալիշ: Կռիվը դադարեց:

Մի անգամ գնացել էինք Նարեշտար գյուղը՝ իմանալով, որ ազատագրված է: Առաջին օրը երեք հոգով գնացինք, գյուղով մեկ շրջեցինք: Մարդ չկար, բայց կենդանիներ կային: Հավ էինք բռնում, տանում մեր դիրք՝ Ղազախալի, եւ երեկոյան եփում, ուտում: Տղաներից մեկը գնում է Վանք եւ իր բարեկամներին ասում, որ Նարեշտարում թուրք չկա, ազատ է, անասուններ կան, գնան հավաքեն, գյուղ բերեն: Գյուղացիները ձիերով իջնում են Նարեշտար: Վանքից մինչեւ Նարեշտար տասնհինգ կիլոմետր է: Մեր դիրքից մինչեւ Նարեշտար էլի տասնհինգ կիլոմետր է: Հերթական անգամ յոթ հոգով իջանք: Տղաներից մեկը՝ Գրիգորյան Լյովան, որ հիմա հաշմանդամ է, մի ոտքը չկա, այն ժամանակ վարորդ էր, մեզ հետ եկավ մեքենայի ակ եւ մի բաք բենզին բերելու: Հետը զենք չվերցրեց: Երբ հասանք Նարեշտար, գյուղի բլուրների վրա մարդիկ տեսանք: Վաղու - հասցիք էին: Վաղուհասի կողմից էին մտել Նարեշտար: Հասանք դպրոցի տակը, վերեւից կրակեցին: Մտածեցի՝ հայերն են: Մի երկու անգամ ի պատասխան կրակեցի, որ հայեր ենք: Զրուցելով եկանք-հասանք դպրոցի տակի փոքրիկ ձորը: Առջեւից ես էի գնում: Նկատեցի, որ մի քանի հոգի գալիս են: Շրջվեցի, համազգեստների վրա լուսնի նշան տեսա: Ձայն տվեցի՝ տղե՛րք, թուրքերը: Մեր եւ նրանց միջեւ հեռավորությունը երկու մետր էր: Կրակեցին: Տղերքը թռան ձորը: Տղերքից Վալերիկը չհասցրեց ձոր հասնել: Մի ծառի հետեւում թաքնվեց: Մենք առանց կրակելու, թաքնվելով փախչում էինք: Ճանապարհը ես գիտեի, տղաները իմ հետեւից գալիս էին: Մտածում էի, որ Վալերիին կամ խփել են, կամ վիրավորել, կամ գերի վերցրել: Ադրբեջանցիք մեր տեղը հստակ չգիտեին: Ձորը, որտեղով փախչում էինք, շատ խորն է, վերեւից հնարավոր չէ որեւէ բան նկատել: Նռնակներով առանց նշանառության խփում էին ձորի մեջ: Մեր տղերքից երկու հոգի էինք երիտասարդ՝ քսան-քսաներկու տարեկան, մյուսները քառասուն տարեկան կլինեին: Նրանցից մեկը փախչելիս ավտոմատի փամփշտակալներն իր փամփուշտներով, քանի որ ծանր է եղել, գցել էր գետը: Ձղայնացել էի, ասացի. «Որ տեղ հասնենք, հարցնեն՝ քեզ հանձնված զենք-զինամթերքը որտե՞ղ է, ի՞նչ ես անելու, ասելու ես՝ գցել եմ ջո՞ւրը: Ամոթ է, վախենում էիր կրակել, տայիր ինձ, ես կրակեի»: Հասանք մեր սահմանին, տեսանք՝ հրամանատարները՝ խմբեր կազմած, պատրաստվում են դիրքերը տեղափոխել Նարեշտարի վերեւը: Զգուշացրինք, որ ադրբեջանցիք այնտեղ զինվորներ եւ «ԵՄՊ-2» ունեն: Պատմեցի ինչ որ պատահել էր եւ այն, որ Վալերիին կորցրել ենք: Հրամանատարն ասաց, որ Վալերին մեզանից շուտ է տեղ հասել: Պարզվում է, որ նա, ծառի հետեւում թաքնված, հարմար

պահի դուրս է գալիս, իրեն գցում մի փոսի մեջ, հետո նորից դուրս գալիս, փախչում, ընկնում մի ուրիշ փոս: Այդպես հասնում է մի տեղ, որտեղ ձիու հետքեր է տեսնում: Հասկանում է, որ այդտեղով անցել են վանքեցիք, եւ ինքը մոտ է դիրքերին: Այդպես կարճ ճանապարհով հասնում է դիրքեր:

Պատմում է Ֆելիքս Քոռլեյը (լրագրող, Լոնդոն): 15.03.1992 թ., Ստեփանակերտ

Բ. - Դուք հինգերորդ անգամ եղաք Ղարաբաղում: Ի՞նչն է Ձեզ մղում այս թեժ օրերին Ղարաբաղ այցելել:

Ֆ.Ք. - Ես գալիս եմ միշտ մի մտահոգությամբ՝ ինչպես օգնել Ղարաբաղի ժողովրդին, որի համար դժվարին ժամանակներ են: Ես բարոնուհի Քոքսի հետ բերեցի «Միջազգային քրիստոնեական համերաշխության» ուղարկած դեղորայքը: Որպես լրագրող գրում եմ ղարաբաղյան իրավիճակի մասին եւ ձգտում եմ Արեւմուտքի մարդկանց, հատկապես անգլիացիներին բացատրել, թե ինչպես են ապրում մարդիկ եւ ինչ խնդիրներ ունեն:

Բ. - Եվ Ձեր գրածները հետաքրքրու՞մ են Արեւմուտքի հանդեսներին ու թերթերին:

Ֆ.Ք. - Նրանց հետաքրքրում է, երբ ես գրում եմ, թե ինչպես են ապրում նկուղներում, ռմբակոծության տակ, որ ջուր չկա, ուտելիք չկա: Մարդիկ ուզում են ավելի շատ բան իմանալ: Զգացվում է նրանց կարեկցանքը: Ես ոչ միայն ինֆորմացիա եմ հաղորդում, այլեւ ձգտում եմ, որ կարեկցեն եւ ցանկանան օգնել:

Բ. - Ձեր վերջին երկու այցելությունների արանքում մեկ ամիս է անցել: Ի՞նչ փոփոխություններ եք նկատել:

Ֆ.Ք. - Ինձ թվում էր, թե Ստեփանակերտ քաղաքից ոչինչ չի մնացել: Բայց տեսա, որ վնասված տների մեծ մասը կանգնած են իրենց տեղում: Հիմա հունվարի համեմատ քիչ են կրակում: Սակայն «Գրադ»-ի կործանիչ ուժը անհամեմատ մեծ է «Ալազան»-ի ուժից: Ես գիշերում էի մի նկուղում, որին մոտիկ պայթեց «Գրադ» կայանքի արկը: Սարսափելի է, երբ գիտես, որ քեզանից ոչ հեռու փլվում են տները եւ մեռնում են մարդիկ: Հիվանդանոցում ամեն օր դիակներ են ավելանում: Միայն մարտի 12-ին է խաղաղ օր եղել Ստեփանակերտում: Այդ օրը ոչ ոք չի զոհվել: Դա եզակի, հրաշալի օր էր, բայց գիտենք, որ արցախյան ուրիշ գյուղեր ու քաղաքներ են ռմբակոծվում: Հաջորդ օրերին կրկին զոհեր եղան:

Բ. - Դուք արդեն լավ գիտեք ղարաբաղցիներին, նրանց երկիրը: Ինչպիսի՞ն եք տեսնում Ղարաբաղի ապագան:

Ֆ.Ք. - Չնայած զոհերի թիվը մեծ է, բայց կարծում եմ, որ ղարաբաղցիները լավ են կռվում եւ գիտեն, թե ինչի համար են կռվում: Զենքն ու փամփուշտը քիչ է ադրբեջանցիների ունեցածի համեմատ, բայց դրանք շատ ավելի լավ են օգտագործում: Ես կարծում եմ, որ ղարաբաղցիք կշահեն այս պատերազմում: Դրա կանխանշաններից էր հենց Խոջալու ավանի գրավումը: Շուշիից ամեն օր ռմբակոծում են Ստեփանակերտը, Շոշն ու Քարինտակը: Դա էլ երեւի պատերազմի վերջը կլինի, կամ ադրբեջանցիները կսկսեն ուղղաթիռներով ռմբակոծությունները: Դա մի ահավոր սպանդ կլինի: Բայց ես ավելի լավատեսորեն եմ տրամադրված:

Բ. - Ադրբեջանական զանգվածային լրատվամիջոցները ամեն օր պնդում են, որ հայերը ագրեսիա են սանձազերծել: Դուք համաձա՞յն եք դրան:

Ֆ.Ք. - Ես համոզվել եմ, որ հայերը միայն պաշտպանվում են: Իսկ Խոջալուի վրա գրոհը պաշտպանական նպատակ ուներ:

Բ. - Դուք անընդհատ բարոնուհի Քոքսի հետ եք ճանապարհորդում, մեկ թարգմանիչ եք, մեկ օգնական, ու, երեւի որպես լրագրող, կողքից էլ եք նայում: Ինչպե՞ս կբնութագրեիք բարոնուհու գործունեությունը:

Ֆ.Ք. - Նա անձնապես կապվեց արցախահայության հետ: Շատ է մտահոգված Ղարաբաղի, նրա բնիկ ժողովրդի ճակատագրով: Տարբեր երկրների խորհրդարաններում իր ելույթներով ձգտում է պատմել ողջ ճշմարտությունը:

Բ. - Դուք եւս կապվել եք Ղարաբաղին ու երեւի արդեն պահանջ եք զգում գալ, տեսնել ու գրել: Ի՞նչ ծրագրեր ունեք:

Ֆ.Ք. - Իրոք, ղարաբաղյան հարցն Արեւմուտքում հանգամանորեն ներկայացվելու կարիք ունի, եւ ես պետք է այս ուղղությամբ շարունակեմ իմ աշխատանքը: Երբ նկուղում պաշտպանվում էինք ռմբակոծություններից, արցախահայերը ինձ հարցնում էին՝ ի՞նչ ճակատագիր կունենա Ղարաբաղը: Չնայած արցախցիները տառապում են, կարծում եմ, որ հայերը կհաղթեն այս պատերազմում:

Բ. - Ուրեմն՝ հարցի լուծումը ռազմական ուժի միջոցո՞վ եք տեսնում:

Ֆ.Ք. - Ցավոք, բոլոր միջնորդությունները գեղեցիկ խոսքեր են ու իրականությունից շատ են հեռու: Մնում է ապավինել սեփական ուժին:

Պատմում է Մկրտիչ Տոնոյանը (*«Ազգային լեգեոն» ջոկատի մարտիկ*): 01.02.2006 թ., Երեւան

Մ.Տ. - «Ազգային լեգեոն« ջոկատի առանձնահատկությունն այն է, որ համարվում է երիտասարդական ջոկատ: Այն կազմավորվեց 1989 թվականի վերջին, 1990-ի սկզբին: «Ազգային լեգեոն» ջոկատին անդամագրվել ցանկացողները 14-15 տարեկաններն էին: Կազմավորվելուց հետո ջոկատի անդամները պետք է անցնեին ուսուցման փուլը:

Այդ շրջանում ստեղծվեց նոր հասարակական կազմակերպություն, որը կոչվեց ՄԵՄ՝ Մարմնակրթական երիտասարդական միություն: Այն մի քանի երիտասարդական կազմակերպությունների միավորում էր: ՄԵՄ-ը ստեղծվեց Հայ ազգային երիտասարդական միության, «Ակունք» երիտասարդական կազմակերպության, «Երիտասարդ պահպանողականներ» միության, «Սողոմոն Թեհլերյան» միության միաձուլումով: Այն կուսակցական պատկանելություն չուներ: «Ակունք» կազմակերպությունն այն ժամանակ քաղաքի գլխավոր դատախազության նախկին շենքի առաջին հարկում էր: Ղեկավարը, եթե չեմ սխալվում, Արշակ Սադոյանն էր: Այդ պահին հրամանատար չկար, առաջնորդողը Արմանն էր: Նա հիմա ռեժիսոր է: Անցած տարի «Ոսկե ծիրան» փառատոնին նրա նկարահանած վավերագրական ֆիլմը հաղթել է: «Սողոմոն Թեհլերյան» միությունը բաղկացած էր տասնմեկ հոգուց: Այդ միությունից ՄԵՄ-ին միացան հիմա արդեն ճանաչված երգիչ Դավիթ Ամալյանը, Էդգար Խաչատրյանը: «Երիտասարդ պահպանողականներ» միության նախագահը Արտեմ Ալեքսանյանն էր, փոխնախագահը՝ Արման Զոհրաբյանը: Ես տասնվեց տարեկան էի: Այդ ժամանակ Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի ուսանող էի: Մենք մոտեցանք Սմբատ Հակոբյանին, որպես շարժման ղեկավարի՝ նրան խնդրեցինք մեզ ուղարկել մարտի դաշտ: Ջոկատը «Ազգային լեգեոն» կոչվեց անցած դարասկզբին ստեղծված եւ Պողոս Նուբար փաշայի կողմից ֆինանսավորված «Արեւելյան լեգեոն» ջոկատի պատվին, որի նպատակն էր

ազատագրել Հայաստանը՝ սկսելով Կիլիկիայից: Մեր ռազմական կրթությամբ զբաղվեցին «Աֆղանական խորհրդի» անդամները: Սմբատ Հակոբյանը աֆղանական պատերազմի մասնակիցներից կազմված ջոկատի հրամանատարն էր, իսկ մարտական գծով պատասխանատուն Միհեր Չախոյանն էր: Առաջին հայտնի մարտերից մեկը Մեղրիի շրջանի Նյուվադի գյուղի ազատագրումն էր: Մենք համարվում էինք Աֆղանստանում կռված տղաների ջոկատի «ճտերը»: Այդ ջոկատից զոհվեց Կարեն Ավետիսյանը, որը նոր էր վերադարձել աֆղանական պատերազմից: Մեր առաջին ռազմարշավը եղավ Վայքի ուղղությամբ: Այդ ժամանակ մեզ առաջնորդում եւ ուսումնական գծով ղեկավարում էր Վարդան Ստեփանյանը՝ Դուշման Վարդանը: Աֆղանցիների նախկին վարչության պետը գեներալ Ուդոն էր՝ Ռոմիկը, եւ Բոյով Գեւորը: Հետագայում հրահանգիչ նշանակվեց աֆղանական պատերազմի մասնակից, ռուսական բանակի հատուկ նշանակության դպրոցն անցած Լեւոն Գեւորգյանը, որն այսօր հայտնի է Մասիսի Լյովա անունով: Նա Հայաստանի պարաշուտային սպորտի եւ ձեռնամարտի հավաքականի մարզիչն էր, պարաշուտային ռազմամարտի սպորտի վարպետի կոչում ուներ: Ուսումնավարժական փուլերն անցնելուց հետո լավագույններից լավագույնները պետք է գնային պատերազմ: Երկու օր պատրաստվելուց հետո «Էրեբունի» օդանավակայանից մեկնեցինք Ղարաբաղ: Մեզ հետ եկավ նաեւ մի բենդեր՝ Սերգեյ անունով: Նա զենք ուներ, բայց ոչ մի ջոկատ նրան չէր վերցնում իր կազմի մեջ՝ կասկածելով, որ նա կարող է լրտես լինի: Պարզվեց, որ նա Աֆղանստանի պատերազմի մասնակից է: Սմբատը որոշեց նրան էլ վերցնել մեզ հետ: Հրամանատարը Սմբատ Հակոբյանն էր, մարտական գծով հրամանատարը՝ Լեւոն Գեւորգյանը: Մեզ հետ էին նաեւ «ՄՈՒԾ» ջոկատի անդամներից մի քանի հոգի: Այդ ջոկատը բաժանվել էր մի քանի մասի, խոսքը Վոժդ Մուշեղի ՄՈՒԾ-ի մասին է: Նրանց շտաբի պետը Գերոյան Հովոն էր, որը Ռուսաստանից էր եկել: Նա Երրորդ մասի շուկայի տնօրենն էր, փոխտնօրենը Ղազարյան Մուշեղն էր: Մեզ՝ այսպես ասած «ճտերի» հետ մեկնեցին նաեւ նրանք: Ես նռնականետողի օգնականն էի, եւ տեսուչ էր նշանակված Կարեն Գեւորգյանը: Նա բավական երիտասարդ էր, բայց անցել էր պատրաստվածության ռուսական հատուկ նշանակության դպրոցը, Լագոդեխիի ուսումնական կենտրոնում էր ծառայել եւ մասնագիտացել էր արտասահմանյան զենքերի եւ ֆոտոհետախուզության գծով: Ուղղաթիռն իջավ Քոլատակ: Այնտեղ մեզ մեքենայով սպասում էին: Տեղավորվեցինք թափքում եւ գնացինք Ստեփանակերտ: Մութ էր, երբ տեղ հասանք: Քաղաքն այդ ժամանակ հրետակոծում էին: Մալիբեյլուն, Կրկժանը նոր էին ազատագրվել: Պատրաստվում էին

Խոջալուի հարձակմանը: Մենք համարվում էինք հետախուզական նշանակության խումբ:

Տեղ հասնելու հաջորդ օրը մենք մասնակցեցինք Խոջալուի հետախուզման աշխատանքներին՝ Նորագյուղի կողմից: Պահ էր լինում՝ խումբն ըստ հրամանի կիսվում էր, մի մասը գնում էր Կրկժանի կողմից Շուշիի հետախուզությանը: Որքան հիշում եմ՝ այդ ժամանակ խոսում էին, որ առաջինը պետք է Շուշին վերցնեն, հետո՝ Խոջալուն: Հետախուզությունը կատարվեց մեր հրահանգիչ Կարեն Գեւորգյանի հետախուզական մեթոդների համաձայն: Նա իր պրոֆեսիոնալ լուսանկարչական ապարատով հետախուզվող տարածքում լուսանկարներ էր անում, այնուհետեւ դրանք տպվում էին 40x50 չափսի ֆոտոթղթերի վրա, փակցվում պատին, եւ ստացվում էր մեծ բնանկար: Արդյունքում տարածքը պատկերացնելը շատ ավելի հեշտ էր լինում: Նորագյուղում հետախուզող խումբը ենթարկվեց ադրբեջանական «Կրակադիլ» ուղղաթիռների գրոհին: Զոհեր եւ վիրավորներ եղան: Որոշ ժամանակ անց սկսեցին նախապատրաստվել Խոջալուի գործողությանը: Ստեփանակերտում գտնվելու չորրորդ թե հինգերորդ օրը տեղափոխվեցինք Դուշման Վարդանի ղեկավարած ջոկատի շտաբը: Երբ պետք է սկսվեր Խոջալուի գործողությունը, մենք մի ամբողջ գիշեր անցկացրինք դրսում՝ Հասանաբադ տանող ճանապարհի խաչմերուկում: Գործողությունը սկսվեց երկու օր հետո: Վերջում իմացանք, որ Դուշման Վարդանի հրամանատարությամբ շարժվելու ենք օդանավակայանի ուղղությամբ: Գիտեմ, որ բանակցություններ են եղել Ստեփանակերտի սովետական N366 զորամասի հետ՝ գործողությանը մասնակցելու շուրջ: Խոջալուի գործողությանը մասնակցող սովետական զորամասի հրամանատարի անունը Ժենյա էր: Նա մեզ հորդորեց գործողությունը սկսել գիշերը, որպեսզի կարողանա օգնել մեզ եւ լուսաբացին հասցնի իր տեխնիկան ետ քաշել, որ ոչ մի տեղ չերեւա: Եթե չեմ սխալվում, տասներեք տեխնիկա է մասնակցել՝ «БТР», «БМП-1», «БМП-2»... իսկ տանկ չի եղել: Մեզ հետ օդակայանի ուղղությամբ երկու տեխնիկա է եղել: Որոշվեց, որ ուղիղ կեսգիշերին՝ ժամը տասներկուսին, գործողությունը պետք է սկսվի: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ հարձակումը պետք է սկսվեր այսպես. 20-40 տոննա ամունալ պետք է դրվեր մի վագոնի մեջ, որը ժամը տասնմեկն անց կեսին, կամ տասներկուսից տասնհինգ պակաս պետք է հրեին, ինքն իրեն գնար Խոջալու: Երկաթգիծն անցնում էր նոր կառուցվող թաղամասի կողքով: Հետախուզությունը ցույց էր տվել, որ նրանց հիմնական ամրությունները՝ երկաթբետոնե հրամանատարական կետերը՝ բլինդաժները, եւ ամրացված կրակակետերը այդ ուղղությամբ են կառուցված: Դուշմանն էլ, Լեւոնն էլ լավ գիտեին

տարական պաշտպանական մարտավարությունը, եւ հենց այդ մեթոդով՝ գետնի տակի սեկցիաներով էին կառուցված Խոջալուի ամրությունները: Գնացքի շարժվելուց հետո երեք հաուբիցներ տարբեր ուղղություններով պետք է կրակեին Խոջալուի վրա: Մենք Հասանաբադի խաչմերուկի վրա էինք, եւ վագոնը մեր առջեւով անցավ: Թե չէին դրել, թե դրել էին եւ չէին հասցրել միացնել, ամեն դեպքում գնացքն առանց դետոնատորի գնաց եւ չպայթեց: Մենք սպասում էինք պայթյունի ձայնին: Երբ սովետական զորամասից բերած զրահատեխնիկայի տղաները հարցրին, թե ինչ վագոն անցավ, Դուշմանը պատասխանեց, որ ամունալով բեռնված վագոնն էր, որը պետք է պայթի: Նրանք փախան: Բայց վագոնը չպայթեց: Դրանից հետո որոշվեց ուղարկել երկրորդ վագոնը՝ բեռնված երկու-երեք տոննա ամունալով, որպեսզի գնա հասնի նախորդ վագոնին եւ պայթի՝ իր հետ պայթեցնելով եւ առաջինը: Սխալ հաշվարկների պատճառով ծրագիրը չհաջողվեց: Ժամը տասներկուսն անց կես էր, հրաման եղավ՝ առաջ գնալ: Առջեւից գնում էր Դուշման Վարդանը, տեխնիկան մեր ետեւից էր գալիս՝ ըստ գիշերային մարտ վարելու ձեւի: Մեզնից եւ դաշնակցականների տղաներից բացի՝ նաեւ Ղարաբաղի կամավորական ջոկատներից մեկն էր: Մենք գնում էինք առջեւից՝ որպես առաջնային դետ: Նռնականետողը Ղազարյան Մուշեղն էր, որը նշանակված էր թիկունքի պետ, բայց բոլորը մարտի գնացին: Խավարի մեջ ամեն ինչ արվում էր մոտավորապես: Երեւանից բերել էինք գիշերային հեռադիտակ, որից օգտվում էր Դուշմանը: Մենք դիրքավորվեցինք աջ թեւի վրա, որտեղ փորված էր խողովակաշար անցկացնելու համար: Այդ մասում ներքեւից ճանապարհը հատող, մարդու հասակով մեկ տրամագիծ ունեցող խողովակ կար: Աջ կողմի սարերից մեր գնդացիրն ու տեխնիկան, որ ավելի մոտ էին նրանց դիրքին, սկսեցին աշխատել: Գիշերային կռվի տակտիկայի համաձայն՝ բացեցինք առաջին՝ խուճապի մատնող կրակահերթը, որպեսզի նրանք պատասխանեն, եւ մենք ճշտենք նրանց տեղը: Մեր ուղղությամբ առաջխաղացում չկար, երեւի օդանավակայանի ուղղությամբ լավ էին պաշտպանված: Արդեն վիրավորներ կային, որոնց չորս-հինգ հոգի հանում էին մարտի դաշտից: Նրանց պետք է հսկեր պահակախումբը, որն իր տեղում չէր: Ամենավերջում գալիս էին Ստեփանակերտի բուժաշխատողները: Առաջին վիրավորներին հանողները դիրքավորվեցին ճանապարհը հատող խողովակի մոտ գտնվող տարածքում, որտեղ ես էի նշանակված, որպեսզի գիշերային հեռադիտակով հետեւեմ ընթացքին ու տեղյակ պահեմ: Բերեցին Ղարաբաղի կամավորականների ջոկատի վիրավորներին, եւ երկու հոգի մնացին նրանց հետ: Զեւավորվեց հետախուզական խումբ՝ մեր

ջոկատի հրահանգիչ Կարեն Գեւորգյանի գլխավորությամբ: Խմբում գնդացրորդ Բաբայան Ռուբիկն էր, Դաշնակցության տղաներից Արամը, եւ Մասիսի «աֆղանցիներից» մի հոգի: Խողովակով անցավ փողոցի մյուս կողմը: Մթության մեջ պետք է շարժվեին Խոջալուի կողմը: Այդտեղ էին նրանց ամրությունները՝ դետերը, որոնց տեղը մենք մոտավորապես գիտեինք: Պետք է այդտեղ ազդանշան դնեինք, որպեսզի տեխնիկան կրակեր այդ ուղղությամբ: Երբ խումբն արդեն վերադառնում էր հետախուզությունից, այն երկու հոգին, որոնք մնացել էին վիրավորների կողքին, խողովակի միջից ձայներ լսելով, առանց իմանալու՝ ովքեր են, անմիջապես կրակում են խողովակի մեջ: Վիրավորվեց Կարեն Գեւորգյանը եւ տասը ժամ անց մահացավ: Մենք թաքցրինք, որ Կարենը մերոնց գնդակից է մահացել, որպեսզի խուճապ չառաջանա: Խոջալվում, եթե չեմ սխալվում, տասներեք զոհ է եղել, որից հինգ կամ վեց հոգին են ադրբեջանցիների գնդակից զոհվել, մնացածը՝ նման պատահական դեպքերից: Ըստ երեւույթին, մերոնք դեռ վարժ չէին մարտավարության մեջ: Լուսանում էր, երբ Կարենին մյուս վիրավորների հետ ուղարկեցին: Կռիվը շարունակվում էր, եւ Ժենյան՝ ռուս հրամանատարը, անընդհատ զգուշացնում էր, որ աղջամուղջը բացվելուն պես իր տեխնիկան ետ է քաշվելու: Արդեն լուսադեմին՝ ժամը վեցին, ռուսական տեխնիկան ետ քաշվեց: Խոջալուն ընդհանուր առումով գրավված էր: Երեւում էին վառվող տների բոցերը, ազդանշան-կրակոցները: Ռադիոկապով էլ ասացին: Ժամը ութի կողմերը մտանք, օդանավակայանի շենքը գրավեցինք: Ուշադրությամբ զննել էինք նաեւ նրանց պատրաստած երկաթբետոնե ամրությունները: Գիտեինք, որ ադրբեջանական դրոշը օդակայանում է դրված: Պետք է այդ դրոշը փոխեինք: Մեր դրոշը Լալայան Մուշեղի մոտ էր: Մոտեցանք, այդ տարածքը նայելուց, ռազմական լեզվով ասած՝ «պրաչոսկա» անելուց հետո, երբ համոզվեցինք, որ անվտանգ է, որոշեցինք դրոշը փոխել: Ինչքան գիտեմ, մի ճանապարհ բաց էին թողել, որպեսզի այդ կողմից բնակչությունը դուրս գա, եւ դիմադրությունը կատաղի չլինի: Իսկապես, տարածքը լքված էր: Այնտեղ զենքեր կային, որոնց նույնիսկ ծանոթ չէինք: Դուշմանը, որ կռվել էր Աֆղանստանում, ճանաչեց «ԱԿՀ»-ը եւ մյուս զենքերը, որոնք տեղում թողել փախել էին, չնայած հիմնականում զինամթերքը տարել էին: Դրոշը փոխեց Էդգար Խաչատրյանը: Ադրբեջանական դրոշը հիմա Ղազարյան Մուշեղի մոտ է: Երբ լուսացավ, պարզվեց, որ մեր դրոշը հակառակ ուղղությամբ ենք կախել: Մեկը նկատողություն արեց, թե՝ դա արդեն Ուրուգվայի դրոշն է: Երկրորդ անգամ փոխեց Բաբայան Ռոբերտը: Արդեն վստահ էինք, որ Խոջալուն մերն է: Եկան պահեստային ուժերը: Մենք՝ որպես գրոհայիններ, պետք է արդեն ետ

դառնայինք: Ետդարձի ճանապարհին ամրություններից՝ դզոտներից, կրակում էին: Պարզվեց, որ վեց ադրբեջանցի թաքնվել էին այդտեղ: Մենք անցել էինք, ու նրանք հայտնվել էին մեր թիկունքում: Նրանք բավականին լավ էին կռվում, զգացվում էր, որ մարտական փորձ ունեն: Նրանք կապ չունեին եւ երկու ելք ունեին՝ կռվել մինչեւ մահ ու գերեզման կամ հանձնվել: Այնքան զինապաշար, ինչքան տեսել էինք ադրբեջանցիների մոտ, հնարավոր չէր երազել անգամ: Նրանք հետաքրքիր տակտիկա էին բռնել, եւ այդ ուղղությամբ մենք հարյուրից ավելի մարդ ունեինք: Այդ ժամանակ էլ ահագին զոհեր եղան: Նռնականետի հարվածից երկու հոգի իմ աչքի առաջ մահացան: Պետք էր նրանց վնասազերծել: Նրանք ունեին նռնականետ, գնդացիր եւ այնքան փամփուշտ, որ մենք գլուխներս չէինք կարողանում բարձրացնել: Որոշեցինք նռնակներ նետել: Ծինությունը բավականին ամուր էր կառուցված: Նռնակներն ընկնում ու պայթում էին, բայց ադրբեջանցիներն անվնաս էին մնում: Դուշմանը մի փորձ արեց: Օդակայանից վերցրած զինամթերքի մեջ ամունալի փաթեթներ կային, տասներկու հատը մի խմբաբաժին էր կազմում: Դրա մեջ դրեց նռնակի պայթուցիչը եւ նետեց այնտեղ, որպեսզի ուժեղ պայթյունից նրանք կոնտուզիա ստանան, շշմեն, եւ կարողանանք մի բան անել: Պայթյունն իսկապես արդյունք տվեց: Կարողացանք մոտենալ: Պարզվեց, որ նրանք խորամանկություն էին արել. իրենց մահացած ընկերներին հարմար տեղավորել էին, իրենք նրանց թեւի տակից կրակում էին: Մենք, փաստորեն, մահացածներին էինք կրակում: Դուշմանը եւ Գեւորգյան Լեւոնը երկու կողմերից մտան ամրության մեջ, որը գետնի տակ էր՝ պատված երկաթբետոնով: Մեր նետած նռնակներից մեկը ընկել էր փոսի մեջ եւ չէր պայթել: Դուշմանն ու Լեւոնը մտան փոսի մեջ, չորս հոգուն գերեվարեցին: Նրանցից մեկն ուզել էր չպայթած նռնակը պայթեցնել, չէր ստացվել: Մենք տեսանք, որ Լեւոնը դուրս թռավ փոսից, հետո նորից ետ ցատկեց՝ անցած վայրկյաններից հասկանալով, որ նռնակը չի պայթի: Նրանցից երկուսը շեկ էին եւ, կարծեմ, ազգությամբ լեզգի էին: Մյուս երկուսին մեծ դժվարությամբ գերի պահեցինք, քանի որ իրենց սպանված ընկերների համար վրեժխնդիր էին ուզում լինել: Ինչ-որ անգլիացի ժուռնալիստներ նկարում էին: Դուշմանը մոտեցավ նրանց, տեսաերիզը վերցրեց նրանց ձեռքից եւ տվեց ղարաբաղցիներից մեկին: Այդ տղան տեսաերիզը ջարդեց, ժապավենը պոկեց: Իսկ թե որտեղից էին հայտնվել ժուռնալիստները, չգիտեմ: Նրանք նկարել էին նաեւ «Արաբոյի» մարտական գործողությունները Բալուջայում:

Երկու օր անց մեր ջոկատը Դաշնակցության տղաների հետ գնաց Բաղարա: Դիմացը թուրքական գյուղ կար, որտեղից անընդհատ

ռմբակոծում էին գյուղը: Տվյալներ կային, որ պետք է հարձակվեին Բաղարայի վրա: Մենք գնացել էինք հարձակմանը հակահարված տալու: Ամբողջ գիշեր մարտական պատրաստվածությամբ սպասել ենք: Որոշված էր, որ եթե նրանք չանցնեն հարձակման, լուսադեմին մենք ենք հարձակվելու: Ծրագիրը կանգնեցվեց, եւ մեզ ետ կանչեցին Ստեփանակերտ, քանի որ Խնածախի դպրոցի շենքում տեղակայված էր ռուսական ռազմակայանը, եւ հարկավոր էր այն ուժով առգրավել: Գնացինք: Այնտեղ տասնութ հատ տեխնիկա կար: Նրանց հրամանատարությունն ասել էր, որ հարձակման դեպքում իրենց կողմից ոչ մի կրակոց չպետք է լինի: Իսկ մեր սցենարի համաձայն՝ մենք պետք է մտնեինք եւ վախեցնեինք: Այդպես էլ արեցինք: Շենքից ահագին զենք հանեցինք: Թողել էինք միայն նրանց անձնական համարներով զենքերը: Զենքերը թափեցին տարբեր տեղերում: Խոջալուի գրավման ժամանակ դեպի Աղդամի շրջան տանող ճանապարհը, որը շրջանցում էր Ասկերանը, բաց էինք թողել, որպեսզի բնակչությունն անցնի այնտեղ: Ադրբեջանի կողմից նրանց վրա կրակել են: Ոչ ոք չի անցել Աղդամ: Բոլորը հետ են փախչել: Բնակչությունը՝ կանայք եւ երեխաներ, ստիպված փախել են սարերը: Երկու օր մնալով սարերում եւ անտառներում՝ բոլորի ոտքերը ցրտահարվել էին: Այն վիճակն էր, որ մսերը թափվել էին, ոսկորներն էին երեւում: Երբ մենք Խնածախում էինք, մոտավորապես քսան հոգու բերել էին մեր զորանոցը: Երբ եկանք, տհաճ հոտ էր տարածված: Վեճ եղավ, թե ինչու են նրանց բերել-լցրել այդտեղ: Պարզ դարձավ, որ տարբեր ջոկատների մոտ մեծ քանակությամբ գերիներ են ընկել: Որպեսզի նրանց չսպանեն, բանակցություններ եղան: Սննդի հարցը վատ էր: Հացը թեփով էին թխում: Բենզինի խնդիր էլ կար: Պայմանավորվեցին, որ դիակներին ու ողջ մարդկանց փոխանակեն հացի եւ բենզինի հետ: Բայց այդ գերիները մի օր մնացին մեզ մոտ: Յուրաքանչյուր զինվորի մի բաժին սնունդ է հասնում: Դուշման Վարդանը շատ էր սիրում խտացրած կաթ: Բոլորս էլ շատ էինք սիրում, բայց դրա քանակը սահմանափակ էր: Դուշմանը խտացրած կաթը եւ պահածոյացված մսից համով կերակուրները բաժանեց գերի կանանց ու երեխաներին: Մահացածներից մեկի՝ Կամոյի հայրն էր եկել, որ սպաներ գերիներից մեկին: Այդ մարդը շատ լավ թուրքերեն էր խոսում, գերիներն էլ լավ հայերեն էին խոսում: Դանակը թեւի տակ թաքցրած՝ մոտեցել էր իբր ինչ-որ բան հարցնելու: Հանկարծակի հանեց դանակը: Տեսանք, թույլ չտվեցինք: Հետո նրանց փոխանակեցին:

Բ. - Իսկ ի՞նչ կարծիք ունես անգլիացի լրագրողների նկարահանած ֆիլմի մասին, որտեղ ադրբեջանցիներին կոտորելու տեսարաններ են ցուցադրվում:

Մ.Ս. - Դա նկարահանվել է ադրբեջանական տարածքից, երբ նրանք կրակ էին բացել իրենց իսկ փախստականների վրա: Բացի այդ, նրանք չէին կարող մեր կողմից նկարել, եւ մեր տարածքում դիակ չի եղել: Խոջալուն գրավելու օրը ջարդ չի եղել: Բայց հաջորդ օրը, երբ գնացել ենք Բաղարայի ուղղությամբ, Խոջալուի միջով ենք անցել: Փողոցներում դիակներ կային, որ նախորդ օրը չեն եղել: Փաստորեն, նրանք սպանվել էին ոչ թե կռվի կամ գրավման ժամանակ, այլ փախուստի, Նախիջեւանիկի սարերից ետ դառնալիս:

Մենք Շուռնուխում էինք: Վազգեն Մանուկյանը եւ Սմբատ Հակոբյանը մտերիմ հարաբերություններ ունեին: Սմբատին պատմել էր պաշտպանության նախարարի պաշտոն ստանձնելու առաջարկության մասին եւ ասել, որ ուզում է գնալ Ղարաբաղ ու դիրքերին նախապես ծանոթանալ: Խնդրել էր, որ Սմբատը ուղեկցի իրեն: Մենք Շուռնուխից վերադարձել ենք հունիսի 17-ին: Գորիսի վաշտում տեսանք «Արաբոյի» տղաներին: Դրանից հետո նրանք գնացին Լենինական եւ անհայտ կորան: Մի քանի օր պատրաստվեցինք, որ Վազգեն Մանուկյանի հետ ճանապարհվենք Ղարաբաղ: Հունիսի 27-ը կամ 28-ն էր, որ պատրաստվեցինք եւ ճանապարհ ընկանք: Մինչեւ օգոստոսի 10-ը մենք մնացել ենք Ղարաբաղում: Ղարաբաղ գնալիս կային ուղեկցողներ, մարդիկ, որոնք այն ժամանակ ուրիշ դիրքում էին, հիմա՝ այլ: Նրանք բիզնեսի մարդիկ էին եւ հանցագործ աշխարհի հեղինակություններ: Նրանցից ոմանք մեր ջոկատին ֆինանսով սնուցողներից էին: Մեկը Սամվելն էր՝ Զեյթունի շուկայի տնօրենը: Նա քանաքեռցի տղա էր, Խելառ Սամո էին ասում: Շարժման ամենասկզբից Սամոն այդ ամեն ինչի մեջ էր: Նա սպանվեց հանցագործ աշխարհի ինտրիգների պատճառով, հենց իր աշխատավայրում: Սամոն իր մեքենայով էր՝ առանձին անձնակազմով: Ուղեկցողների մեջ էր Մայիսը: Նա Կասկադի մոտ գտնվող կոմիսիոն խանութի հիմնադիրն էր, որը առաջիններից մեկն էր քաղաքում: Նրան Բուղա Մայիս էին ասում: Հետագայում նա Բուլղարիա գնաց: Բոլորը իրենց մեքենաներով էին՝ «Նիվա»-ներով: Այդ ժամանակ «Մահապարտներ» խումբը դեռ չէր կազմավորվել, բայց Վազգեն Սարգսյանի հայտարարությունն արդեն եղել էր:

Սեպտեմբերին նորից գնացել էինք Ղարաբաղ, մեզ հետ տարանք նաեւ Կոմանդոսին: Վազգեն Մանուկյանը շտաբում ներկայացրեց նրան: Սամվել Բաբայանն էլ էր այնտեղ: Սեղան բացեցին: Իսկ առաջին ուղեւորության ժամանակ ուղեկցողների մեջ էր նաեւ Նեմեց Ռուբոն՝ Ռուբեն Հայրապետյանը: Մենք նրա «Մերսեդեսում» էինք: Գերոյան Հովն էր մեզ հետ եւ Սմբատ Հակոբյանը: Ճանապարհին հանդիպում էինք տարբեր ղեկավար անձանց, օրինակ՝ Խոլյունց

Միշային, որ Գորիսի, հետո Սյունիքի միլպետն էր: Հասանք Ղարաբաղ: Մեկ օր մնացինք հյուրանոցում: Խմբեր առանձնացվեցին տարբեր գոտիներ նայելու նպատակով: Առաջին հերթին գնացինք Մարտակերտը նայելու:

Բ. - Ընդհանուր քանի՞ հոգի էիք:

Մ.Ս. - Մենք հինգ մեքենայով էինք, յուրաքանչյուր մեքենայում չորս հոգի մարդ կար: Ընդհանուր եղել ենք քսան հոգի: Մեր հիմնական նպատակը դիրքերի անվտանգությունն ապահովելն էր, ճանապարհները հսկելը: Առաջին երկու-երեք օրերը Վազգեն Մանուկյանը հանդիպումներ ունեցավ Սամվել Բաբայանի, Սերժ Սարգսյանի հետ: Առաջին հերթին Մարտակերտ գնացինք, որովհետեւ դրությունն այնտեղ թեժ էր:

Բ. - Վազգեն Մանուկյանը նախարարության պատասխանատո՞ւն էր:

Մ.Ս. - Նա դեռ նախարար չէր, բայց, եթե չեմ սխալվում, օգոստոսի կեսերից նրա հրամանն արդեն կար: Մենք առաջին ուղղությամբ գնացինք: Չլդրանը նոր էր ազատագրվել: Այնտեղ հանդիպեցինք Սամվել Շահինյանին՝ իր ջոկատով: Ավելի ուշ նա դարձավ «Ազգային պետություն» կուսակցության ղեկավարը: Նրանց «Հատուկ նշանակության խումբ» ջոկատի մարտական գծով հրամանատարը Վարդանով Վովան էր: Վարդանով Վովան այն գիտակ զինվորականներից էր, որը սկզբունքորեն իր ջոկատի նոր անդամներին մարտի դաշտ տանելուց առաջ նախ մարզում էր: Նա բավականին ճանաչված էր, որովհետեւ Պաշտպանության կոմիտեից ստացած բոլոր լուրջ հրամանները բարեխղճորեն կատարել էր: Դրանից հետո գնացինք Հոռաթաղ, Մոխրաթաղ, որտեղ դեռ մարտերը շարունակվում էին: Մի տեղ ուղիղ ճանապարհից պետք է շեղվեինք եւ անտառով գնայինք: Մեզ պետք է ուղեկցեր Մարտակերտի գնդի տղաներից մեկը: Նա ճանապարհին ուղղաթիռ տեսավ եւ ասաց, որ իրեն իջեցնենք, ինքը վազի-գնա դիրքեր, տեղյակ պահի: Գնալուց առաջ ասաց, որ ճանապարհին ուղեփակոց կա, այնտեղ մեզ կասեն, թե որ ուղղությամբ մտնենք: Ճանապարհին ուղեփակոց չկար: Մենք գնացինք ասֆալտապատ ճանապարհով: «Մերսեդեսը» չկար, «Նիվա»-ներով էինք: Ես, Սաքոն, որ նշանառուի զենքով էր, Սամվել Շահինյանը եւ Վազգեն Մանուկյանը նստած էինք մի մեքենայում, որը վարում էր Նեմեց Ռուբոն: Սմբատը ամենավերջին մեքենայում էր ու կասկածել էր մեր վերցրած ուղղության վրա: Լավ է, որ մեր շարասյան վերջին մեքենան ճանապարհին մերոնցից մարդ էր նկատել եւ ասել, որ «նախարարը գնաց թուրքերի մոտ»: Իսկ մեզ դիմացից թուրքերը ձեռքով էին անում: Հաշվի առնելով, որ շարասյունը խախտվել է, Վազգենը

կանգնեց, որ մյուսները հասնեն մեզ: Երկու-երեք հարյուր մետր հեռավորության վրա մարդիկ էին մեզ մոտենում, ձեռքով անում: Ռացիան միացրինք, Սմբատին ասացինք՝ մերոնք կանչում են: Սմբատն ասաց, որ դրանք ադրբեջանցիներ են: Փորձեցինք ետ դառնալ: Նրանք կրակեցին: Փախցրինք Վազգեն Մանուկյանին եւ Սամվել Շահինյանին, փրկեցինք գերությունից: Ետ դարձանք դիրքեր, որտեղ մնացինք երեք օր: Ցերեկները Վազգեն Մանուկյանը իջնում էր: Ամառ էր, մոծակները շատ էին, հոտերն արագ տարածվում էին: Դիրքերից մեկի կողքով անցնելիս հրամանատարներից մեկը մեզ տարավ անտառում եղած կոտորածները ցույց տալու: Այդ տարածքը նոր էին վերցրել: Չգիտեմ՝ այդ տեսարանը նկարահանվե՞լ է, թե՞ ոչ, բայց արժեր նկարել, որովհետեւ այդպիսի կադրեր նույնիսկ ֆիլմերում ցույց չեն տալիս: Հագուստի ծվեններ էին կախված ծառերից: Զարդը մարդիկ չէին արել: Տեխնիկայով էին մտել: Թուրքերի կողմից գրաված հայկական գյուղերից ժողովուրդը փախել էր: Պատսպարվելու համար մտել էին անտառ: Իմացել, եկել էին, եւ այդ ամբողջ կոտորածը եղել էր: Շատ շոգ էր, մարտերը դեռ շարունակվում էին: Վարակը կանխելու նպատակով մեծ փոս էին փորել եւ դիակների մի մասը թաղել: Չգիտեմ, թե կոտորածների վերաբերյալ պաշտոնական ինչ տվյալներ կան, բայց իմ տեսած փոքրիկ հատվածում ութսունից ավելի դիակ կար: Չեզոք գոտի պետք է բարձրանայինք: Ճանապարհն անընդհատ գնդակոծության տակ էր, վառվում էր: Արկերը բարձունքի կատարին չէին հասնում կամ անցնում էին: Վազգեն Մանուկյանը որոշեց մեքենայով բարձրանալ դիրքեր: Ճանապարհին բլրի ետեւից՝ մեր մեքենայի դիմացից, ութսուն-հարյուր մետր հեռավորությունից ադրբեջանական երկու ուղղաթիռներ դուրս եկան: Մեքենան անմիջապես կանգնեց, դուրս եկանք, փախանք: Մենք Վազգեն Մանուկյանի թիկնապահներն էինք: Նրա համար զրահաբաճկոն կար: Տվեցինք, որ հագնի, չէր հագնում, ուզում էր ինձ հագցնել, թե՝ իմ երեխայի տարիքին ես: Այդպես էլ չհագավ: Ձեռքին փոքրիկ ավտոմատ կար: Ընկել էինք ծուղակի մեջ: Կրակոցներ եղան, մինչեւ տեղյակ պահեցին, թե ինչ է կատարվում: Կրակը շեղեցին, ուղղաթիռները գնացին այդ ուղղությամբ: Մենք վերադարձանք հյուրանոց:

Կարմիր շուկայի ճանապարհով գնացինք Հադրութի, Մարտունու ուղղությամբ: Հադրութում հանդիպեցինք այսօրվա գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանին: Այն ժամանակ նա դեռ հանրահայտ չէր: Նա հարցրեց, թե կցանկանա՞նք բանակում ծառայել: Մենք ասացինք, որ չէինք գնա: Ասաց, որ կամավորականը չի ուզում բանակ գնալ: Ասաց նաեւ, որ պայմանագրային գումարտակներ ստեղծելու գաղափարը պետք է իրագործել: Այդ ամենի մասին շատ լավ գիտե

Հակոբյան Սմբատը: Նա է նշանակվել հրամանատար, բոլոր փաստաթղթերը նրա անունով էին: Նույնիսկ վիճելի հարցեր կային՝ մենք «Արծիվ-3»-ն ենք, թե «Արծիվ-4»-ը: Վերադարձանք օգոստոսի 10-ին: Սմբատը կարողացել էր մեր ջոկատի համար զորամասի կարգավիճակ ձեռք բերել: Մերը «75.128» զորամասն էր, բայց հաստատված չէր: Մեր հարցը, փաստորեն, մնաց օդի մեջ: Մեզ միացավ նաեւ Գուբերնատոր Սամոն՝ իր տղաներով: Մասիսցի Լյովան Մասիսում առանձին հավաք արեց: Արդեն հոկտեմբերի 8-ին մենք մտանք մայրաքաղաքային գունդ: Առանձին զորանոցներ վերցրինք: Մեր ջոկատում համարյա բոլորս երեւանցիներ էինք, բայց տուն չէինք գնում, մնում էինք այդտեղ: Հոկտեմբերի 12-ին շարժվեցինք մինչեւ Կոռնիձոր: Մենք գնացինք Լաչինի հյուսիսային շրջանի գյուղերից մեկը՝ Աշաղի Ֆարաջան գյուղը, հետո՝ Սասյան գյուղը: Այդ տարածքը ազատագրել եւ հսկում էին Սովետաշենի տղաները՝ Աշոտ Պետրոսյանի հրամանատարությամբ: Մեզ ընկավ Ղուշչուլար գյուղը, եւ Գյուլիբերդի ուղղությամբ բոլոր դիրքերը մենք վերցրինք: Մոտավորապես երեք-չորս կիլոմետրանոց հատված էր: Աջ թեւի վրա «Արաբո» ջոկատի տղաներն էին եւ լենինականցիները: Հրամանով՝ մենք այնտեղ գնացել էինք որպես «Արծիվ-4» գումարտակ: Դիրքերը բաժանվեցին: Մենք դիրքավորվեցինք Գյուլիբերդի ուղղությամբ, քանի որ մարտական փորձ ունեինք: Առաջին գիծը մերն էր՝ «Ազգային լեգեոնինը»: Մենք, փաստորեն, փոխարինեցինք Սովետաշենի տղաներին: Հետո Ասպետի դիրքն էր: Նրանցից հետո երրորդմասցի տղաներն էին, իսկ ամենավերջում՝ դեպի բլրաշարի վերջը, որտեղից սկսվում էր Մուրադխալի գյուղը, սիսիանցիների դիրքերն էին՝ Գուբերնատորի հրամանատարությամբ: Գյուլիբերդի ուղղությամբ անցկացրած տասնհինգ օրերի ընթացքում համոզվեցինք, որ օդուժը նրանցն է: Ըստ երեւույթին, նրանց համար դրանք կարեւոր դիրքեր էին, որովհետեւ մի շաբաթ անընդմեջ, օրական երեք-չորս անգամ նրանց կողմից հարձակում էր լինում: Մենք չէինք կարող ծավալվել, որովհետեւ հակահարձակման դեպքում ավելի շատ տարածք կվերցնեինք, որը չէինք կարողանալու պահել: Մեզ պետք էր, որ Հայաստանի կողմից եւ աջ թեւից իջնեին: Ձախ թեւի վրա՝ Հադրութի սարերի տակը, Լենինականի Վարդանչիկի դիրքերն էին: Նա այն տեղից մեզ ականանետով էր կարողանում աջակցել: Հետո երկու հատ առանց արկերի տանկեր եկան: Դրանք ավելի շատ խանգարում էին, որովհետեւ երեվում էին, եւ ադրբեջանցիները մտածում էին, թե մենք լուրջ զինված ենք: Այնինչ, այդ տանկերով ոչինչ անել չէինք կարող: Հետո մենք էինք մտածում այդ տանկերի մասին, թե՝ ունենք-չունենք՝ մի հատ տանկ ունենք, այն էլ խփել են: Սկզբում մենք մոտավորապես երկու հարյուր

հիսուն հոգով էինք գնացել, բայց հետո այդ թիվը ճիշտ կիսով չափ կրճատվեց: Առաջին ամսվա գումարը՝ երեք հազար ռուբլի, կանխավճար տրվեց: Լեւոնը վերադասավորեց դիրքերը՝ հաշվի առնելով անընդհատ հարվածի տակ գտնվող դիրքերը: Նշեց հատուկ տեղերը, որտեղ հնարավոր էր բլինդաժներ փորել: Նոսրացրեց, որ իրար գլխի չլինենք, մի մասին էլ իջեցրեց որպես պահեստային ուժեր: Երեք հարյուր կիլոմետրանոց հատ վածում մնացել էինք ութսուն հոգի: Նա ասաց, որ կարող ենք քառասունհինգ հոգանոց խմբերի բաժանվել եւ այդ տարածքը պահել: Մի քանի հոգի, որոնք փորձ ունեին, մշտական պետք է մնային այդտեղ, որպեսզի ներկայացնեին փոփոխությունները: Մնացածիս՝ որպես պահեստային ուժերի, իջեցրեց: Դա շատ ճիշտ տակտիկա էր, որովհետեւ այդ տասնհինգ օրվա ընթացքում մենք ոչ մի զոհ չենք տվել, ութ հոգի վիրավորվել են: Ուժեղ հարձակումներից մեկի ժամանակ նրանց տանկը անցել էր մեր թիկունքը: Մենք հայտնվեցինք շրջափակման մեջ: Կենտրոնում՝ Լաչինում, հրամանատարը Գզողլյան Ֆելիքսն էր: Մեր Հակոբյան Սմբատն էլ զենք-զինամթերք ստանալու հարցով գնացել էր Լաչին: Գեւորգյան Լեւոնը գյուղում՝ բազայում էր: Բայց նա, իմանալով, թե ինչ դրության մեջ ենք հայտնվել, արանքը ճեղքելով եկավ եւ մեզ հետ հայտնվեց շրջափակման մեջ: Թիկունքում հայտնված տանկի դեմ մեր տանկը ոչինչ չէր կարողանում անել: Նրանց հեռավորությունը, ընդհանուր առումով, չորս հարյուր մետր էր: Բայց կիրճի՝ անհարթ տարածության պատճառով նրանք իրար լավ չէին տեսնում: Մեզ փրկում էր այն, որ տանկը, մեզ շատ մոտ լինելով հանդերձ, ներքեւում էր, իսկ մենք վերեւում էինք, եւ ոչ թնդանոթը, ոչ գնդացիրը այդքան չէին բարձրանում, որ մեզ խփեին: Բայց արդեն տանկի գոյությունը ադրբեջանցիներին ոգեւորում էր: Տանկի ետեւից նոր տեխնիկա էր գալիս, ու նաեւ զորքը: Կարող եմ ասել, որ առաջին հարձակումը եղել է սիսիանցի տղաների վրա, եւ որ նրանք շատ լավ էլ կռվել են: Թողել-գնացել են հիմնականում երրորդմասցի տղաները: Նրանք ջոկատի տղաներ չէին, եկել էին պայմանագրային գումարտակներ ստեղծելու հայտարարությունով: Բայց Գերոյան Հովիկի հրամանատարության տակ գտնվող երրորդ մասի տղաները մնացին: Փորձեցին նռնակով խփել տանկին, չստացվեց: Մեր Լեւոն Գեւորգյանը որոշեց ուրիշ կերպ հախից գալ: Չորս հոգով՝ Լեվոնը, ես, սիսիանցի Ներսեսը եւ եւս մի հոգի, գնացինք տանկի ուղղությամբ: Լեւոնի մարտավարության ձեւերից մեկն այն էր, որ նա թույլ չէր տալիս՝ մենք իրենից առաջ անցնենք: Ասում էր. «Ինձ համար այդ պահին միեւնույնն է՝ ով է իմ դիմացից գալիս՝ հա՞յ, թե՞ թուրք, ես կխփեմ, որովհետեւ այդ ընթացքում ես մտածելու ժամանակ չունեմ»: Նա անընդհատ կրակում էր, շարտում

իր պահեստատուփերը: Մենք պետք է հասցնեինք մեր կրակա-հերթերով նրան աջակցել՝ մինչեւ նա նոր պահեստատուփ կդներ: Այդ տակտիկայով ահագին մոտեցանք տանկին: Ասաց, որ մեր բացած կրակահերթերով թույլ չտանք, որ ադրբեջանական հետիոտնը գա: Մեզանից մեկը գնդացիր ուներ, երկուսը՝ ավտոմատ, մյուսը՝ նռնականետ: Զորքի ուղղությամբ կրակում էինք, սիսիանցիներն էլ կարողանում էին պահել: Տանկը արդեն անցել էր սիսիանցիների դիրքը: Հարմարեցրեց, հենց տանկի լյուկը բացվեց, վազեց տանկի վրա եւ նռնակը գցեց մեջը: Թռավ տանկի վրայից, տանկը պայթեց, սկսեց վառվել: Այդ տանկը այդպես վերացավ: Մյուս տանկին խփեցին ձեռքի հակատանկային նռնակով: Տանկի շղթան կտրվեց: Գիշերը քաշեցին, տարան: Նրանց այդ հարձակումը ղեկավարում էր ինչ-որ գնդապետ: Իսկ մենք այդ պահին, կարծես, լքված էինք, ինքնուրույն պետք է մեր գլխի ճարը տեսնեինք կամ պետք է դիրքերը թողնեինք, գնայինք: Տղաներով ուխտեցինք, որ ինչ էլ լինի, չպետք է թողնենք դիրքերը: Երդվեցինք եւ մնացինք: Մի մասը հետ էր գնացել, հետո նորից եկավ: Ուկրաինացի Սերգեյը եկավ, միացավ մեզ: Լեւոնը գնաց այդ գնդապետի ուղղությամբ: Նա առանց նայելու, վազելով գնում էր: Մենք պետք է նրան մեր տեսադաշտում պահեինք եւ ծածկեինք: Մի պահ կորցրինք նրան, առաջ գնացինք: Նորից տեսանք նրան հեռվում: Նա մենակ էր մնացել: Այդ մասը ծառաշատ չէր, բայց շատ փշոտ թփեր կային: Տղերքով թաքնվելով իջանք գոգավորության վրայով այնպես, որ միմյանց տեսադաշտից չկորցնենք: Տեսանք, որ Լեւոնը շրջափակման մեջ է: Նրան տեսանք հանձնվելիս: Երբ ադրբեջանցիները զգացել են, որ Լեւոնի փամփուշտները վերջացել են, միտումնավոր չեն կրակել, որպեսզի գերի վերցնեն: Նրան անմիջապես մոտենում է գնդապետը, որը կարծել էր՝ Լեւոնը մարտական լուրջ փորձ ունի, ու որոշել էր անձամբ ղեկավարել մարտը: Լեւոնի զենքի վրա փողատակի նռնականետ կար: Արգելված էր այն պահել, բայց Լեւոնի մոտ այն միշտ լինում էր: Այդ պահին հիշում է դրա գոյության մասին: Ադրբեջանցիները տեսնում էին, որ նրա պահեստատուփը գետնին գցած է, ու վտանգ չէին զգում: Տասը մետր էր մնացել, որ գնդապետը մոտենար Լեւոնին, երբ նա կրակում է գնդապետի փորին: Մենք կրակով շարունակեցինք: Լեւոնը պառկեց, ադրբեջանցիները փախան: Մոտեցանք գնդապետին: Նրա պայուսակը կողքից կախված էր, որտեղ ամբողջ այդ շրջանի գենպլանն էր: Դա լավ ավար էր: Հավաքեցինք զենքերը: Լեւոնը պոկեց գնդապետի ուսադիրները: Ուզում էինք նույնիսկ դիակները քաշել-բերել, բայց այդ անելու համար պետք է օգնող ուժ կանչեինք, քանի որ վտանգավոր էր, շատ էինք հեռացել մեր դիրքերից: Այդպես էլ չհասցրինք դիակները բերել, որովհետեւ

դիշերը ադրբեջանցիները տարել էին: Մի շրջան կար, երբ ադրբեջանցիները շատ արագ կազմակերպում էին դիակները տանելու գործը: Ամեն ինչ հանձնեցինք: Արդեն օրվա վերջում Սմբատ Հակոբյանը եկավ-հասավ մեզ: Մենք Սմբատին դեռ ոչինչ չէինք հայտնել: Լյովան երեսը արյունով ներկել էր: Սմբատը Ղուշչուլարից գնդակոծության տակ վազելով էր եկել: Իմացել էր, որ մատակարարումը կտրվել է, տղերքի կեսը ետ են եկել: Պատմում էր. «Երբ ասացին, որ դիմադրությունը շարունակվում է, ես ասացի՝ իմ տղաներն են այնտեղ, եթե ես այնտեղ չլինեմ, ամոթ ինձ: Թողել եմ բոլոր գործերը, եկել եմ ձեզ հետ լինեմ»: Նա երեք-չորս օր մնաց մեզ հետ, մինչեւ ամեն ինչ կարգավորվեց, վերադասավորվեցինք՝ նոր գնաց: Մեր տղերքի մի մասը իջավ, մի քանիսը մնացին, որպեսզի նորեկներին ծանոթացնեն տեղանքին: Մնացողների մեջ նաեւ ես էի: Սմբատը մեր գումարտակում խիստ էր դրել խմելու եւ ծխելու հարցը: Խմելու համար շատ խիստ պատիժների էին ենթարկում: Մեկ օր մնալուց հետո Լեւոնը եկավ, որ մեզ տանի: Պարզվեց, որ երկրորդ օրն էլ պետք է մնանք: Լյովան շատ լավ թուրքերեն էր խոսում: Նա ռացիայով կապվել էր ադրբեջանական կապի պետի հետ, պարզվել էր, որ նա Լյովայի բանակային ընկերն է: Լյովան չէր ասել, որ հերթափոխություն է լինելու: Ասել էր, թե իբր զոհեր կան, պետք է նրանց դիակները թաղենք: Պայմանավորվել էր, որ, որպես զինվորների հանդեպ ունեցած հարգանքի նշան, երկու կողմերն էլ կազմակերպեն իրենց զոհերի թաղումը եւ վերադասավորեն ուժերը: Բայց յուրաքանչյուր մետրի վրա արկերի բացած փոսերից հասկացան, թե ինչ է կատարվել: Քարից շատ բեկոր կար: Նա ցուցումներ տվեց նաեւ զորքը ճիշտ տեղակայելու վերաբերյալ: Ինքնահավանությունից էր երեւի, որ նրան կոպտեցին, թե՝ գնա՛, դու մեզ մի ասա՝ ինչ անենք: Բայց այդ օրն էլ մնացինք: Նա զգուշացրեց նաեւ, որ խմելը լավ բանի չի բերելու: Մեզ մոտ շատ ծանր քաշ ունեցող զենքեր կային՝ «ДШК», «КПВД», «СГК»: Շատ դժվար էր դրանք տեղափոխելը: Չորս-հինգ կիլոմետր՝ մինչեւ Ղուշչուլար տանող հատվածը, այդ ամբողջ զենքը, «ДШК»-ն, որի միայն մարմինը քառասուն կիլոգրամ է, մենք մեր ուսերի վրա տարանք: Ուզում էին «Ուրալ»-ով տանել, բայց Լեւոնը խորհուրդ չտվեց: Մինչեւ ձորը իջնելը պետք է դաշտով անցնեինք: Լեւոնն ասաց, որ դա վտանգավոր է: Մենք գնացինք Կոռնիձոր: Մեզ ասացին, որ երկու օր պետք է սպասենք, մինչեւ Լաչինի գլխավոր հրամանատարը՝ Գզողլյան Ֆելիքսը, եւ գեներալը գան, մեզ շնորհավորեն, Գզողլյան Ֆելիքսն իր կողմից հինգ ոչխար է բերում մեզ համար մատաղ անելու, որ զոհեր չենք տվել, նաեւ անհատական նվերներ պետք է ընդունենք: Երկու հարյուր հիսուն հոգուց վաթսուն-յոթանասուն հոգի մարդ էինք վերջում

մնացել, բայց զոհեր չէինք տվել: Այդ գիշեր մեր հանձնած տեղից ութ զոհ բերեցին: Ասացին, որ կռիվ է եղել: Լեւոնն ասաց, թե ինքը կարող է երդում ուտել, որ կռիվ չի եղել, այդ տղան պայմանավորվածությունը չէր խախտի: Հինգ օրը դեռ չէր անցել: Հետո պարզվեց, որ գիշերը «Ուրալ»-ով փորձել են բարձրանալ դիրքը: Հաշվի չէին առել, որ ճանապարհը շատ քարքարոտ էր: «Ուրալը» շուռ էր եկել, տղաները մահացել էին: Փաստորեն, այդքան զոհի հետ տեխնիկան էլ կորավ, մեքենան էլ: Բայց մեզ ուղարկեցին Շուռնուխ, քանի որ այնտեղ ուժեր էին պետք, մենք էլ այդ տարածքին լավ ծանոթ էինք:

1992 թվականի մայիսի սկզբին կայացավ մեր ջոկատի երկրորդ ռազմական ելքը: Մենք գնացինք Շուռնուխի ուղղությամբ: Շուռնուխը գտնվում էր ՄՀՕՁ-ի տղաների հսկողության տակ, եւ մենք պիտի համագործակցեինք նրանց հետ: Շուռնուխում մնացինք մեկ ու կես ամիս, պիտի մասնակցեինք Շուշիի օպերացիային: Ղափան-Գորիս ճանապարհին՝ Աղբուլախի խաչմերուկում, թշնամին դարան էր դրել: Նրանք շարժական դիրք ունեին, եւ տրանսպորտ էր ընկել ծուղակը: ՄՀՕՁ-ի տղաները գնացել էին օգնելու, բայց իրենք էլ էին ընկել ծուղակը: Կատար սարին կիսակառույց հեռուստաաշտարակ կար, այնտեղ մշտական դիտակետեր չկային, մենք եւ ադրբեջանցիները՝ ով շուտ հասցներ, նա էլ տեղավորվում էր: Ղափան-Գորիս ճանապարհից բացի կար նաեւ այլընտրանքային ճանապարհ. Տաթեւով կամ Շուռնուխով Կատարից իջնում էին Աղբուլախ գյուղ եւ չէին շարունակում, դուրս էին գալիս Չայգամի խաչմերուկ, այնտեղից՝ Ղափան: Բայց այդ ճանապարհով բոլոր եղանակներին հնարավոր չէր երթեւեկել, եւ երբեմն ռիսկ էին անում գլխավոր ճանապարհով անցնել: Ադրբեջանցիները ճանապարհի որոշակի հատվածը ականապատել էին: Զգում էին, որ այդտեղով անցնում են, ուստի՝ դարան էին սարքում՝ հիմնականում գերի, պատանդ վերցնելու նպատակով, որովհետեւ ռազմական մեքենաները այդ ճանապարհով չէին անցնում: Այդ ժամանակ մարտի մեջ մտանք: Տարածությունը մեծ էր, եւ խառը վիճակ էր ստեղծվել: Օդուժին օգնության կանչեցինք: Երկու «ՄԻ-8» ուղղաթիռներ եկան, բայց երեւի կոորդինատները սխալ էին հասկացել, մեզ վրա կրակեցին ու հեռացան: «Նուրսերով» ու գնդացրով էին խփում: Բարեբախտաբար, ոչ մի կորուստ չունեցանք: Մեր խմբի մի մասը մնացել էր անտառի գոգավորության մեջ: Այնտեղից դուրս գալը վտանգավոր էր, որովհետեւ որոշ հատված բացատ էր եւ գտնվում էր Վերին Ջիբիխլի գյուղի բարձունքներում, եւ գյուղից շատ լավ երեւում էր այդ տարածքը: Ադրբեջանական գյուղում կային երկու հրանոթ, որոնք ինտենսիվ աշխատում էին: Մի ականանետ հենց ճանապարհի կողմն էր ուղղված, որով կարողանում էին գնդակոծել

նաեւ Շուռնուխը: Մենք այդ ժամանակ տանկ չունեինք, մեր ունեցածը ՄՀՕՁ-ի «ԵՄՊ»-ն էր եւ «Բ/Մ»-ը՝ դեսանտային մեքենան, որոնք նման կռվի համար որպես հրետանի չէինք կարող օգտագործել: Գիշերը ռայները բարեհաջող դուրս եկան այդտեղից, իսկ Գորիսի ղեկավարությունից մարդիկ եկան եւ ավետեցին, որ Շուշին ազատագրված է: Առավոտյան շարժվեցինք Կոռնիձորի ուղղությամբ, որպեսզի անցնենք Լաչին՝ նպատակ ունենալով այնտեղ հանդիպել Ղարաբաղից եկող ուժերին: ՄՀՕՁ-ի տղաներն էին, էլի ջոկատներ կային, որոնք իրենց նախաձեռնությամբ էին եկել, որպեսզի Կոռնիձորի ուղղությամբ մտնեն Լաչին, Գորիսի միլպետն էր՝ Խոյլուսց Միշան, որի դիրքը պարզ չէր, համ մեզ չէր թողնում անցնել, համ էլ մեզ հետ էր: Մեր տեխնիկան թաքնված էր: Մենք մի ռազմական մեքենայով ու «Վիլիսով» էինք: Պիտի կարողանայինք նաեւ վերեւից տեսնել, թե Լաչինում ինչ է կատարվում: Մինչեւ կեսօր սպասելուց հետո տեսանք, որ Լաչինի վերեւի հատվածում ընդհարում է: Օդում լուսածրային փամփուշտներ նկատեցինք: Գլխի ընկանք, որ մերոնք հասել են այնտեղ: Ռադիոկապը լավ չէր գործում, ենթադրություններ անելով մինչ առաջ շարժվում, թեեւ ասացին, որ վերեւից էլ թույլ չեն տալիս ռահմանն անցնել եւ գնալ Լաչին: Ջոկատներ եղան, որ ասացին, թե ամեն գնով պիտի գնան տղաներին օգնելու, որովհետեւ վերեւից արդեն այրվող տներն էին երեւում: Որոշվեց, որ հիմնական ճանապարհով՝ Տեղ գյուղով չգնան, ուրիշ կողմով գնան եւ Զաբուխում միանան այդ ճանապարհին: Հասանք Լաչին: Այն պատկերն էր, որ ոչ մի կռիվ, ճակատամարտ տեղի չի ունեցել, ընդամենը երկու դիակ նկատեցինք: Լաչինն ամբողջությամբ դատարկված էր: Ասացին, որ հակառակորդը վեց զոհ է տվել: Լաչինի կենտրոնում հանդիպեցինք Ղարաբաղից եկող հիմնական ուժերին: Իմացանք, որ առաջնորդներից մեկը Դուշման Վարդանն է: Նրան հանդիպեցինք այդտեղ եւ որոշեցինք գնալ Ղարաբաղ:

Մի երկու անգամ գնացել ենք էյն գյուղը՝ տեղի ուժերին օգնելու: Մեր հիմնական նպատակը Շուռնուխում հետախուզությունն էր, նաեւ քարտեզի վրա պիտի նշեինք մեր նկատած նոր կետերը: Հետախուզությունը ղեկավարում էր Լեւոն Գեւորգյանը, իսկ ես, քանի որ նկարիչ էի, քարտեզագրողն էի: Սահմանապահ զորքերի վարչությունից գալու էին Շուռնուխի գիծը ստուգելու: Վարչության պետը Գրիգոր Գարեգինիչն էր, որն իր համհարզի՝ Ալեքսանդր Մելքոնյանի հետ էր: Շուռնուխն, ըստ էության, հանգուցային կետ էր, եւ մտածում էին ուղեկալներ դնելու մասին: Ղեկավարությունից հաճախ էին մարդիկ գալիս, այդ թվում՝ Ներքին զորքերի հրամանատար Վահան Հարությունյանը: Մենք նրանց ուղեկցում էինք, հասնում էինք մինչեւ Փասի

գլուխը: Գրիգոր Գարեգինիչը երկու օր մնաց: Ցույց տվեցինք հետախուզության տվյալները: Մոտ քսան օրից Մելքոնյանը զեկուցագիր ներկայացրեց եւ ցանկություն հայտնեց դառնալ Շուռնուխի ուղեկալի պետ, ինչը պաշտոնի իջեցում էր: Լաչինից հեռուստացույց էինք բերել, որով միայն ադրբեջանական ալիքներ էինք որսում: Լեւոն Գեւորգյանը թարգմանում էր Էլչիբեյի ելույթները, ասում էր, որ ռազմատենչ հայտարարություններ է անում: Սմբատ Յակոբյանը փորձում էր ամեն ինչ անել, որ Գորիսի վաշտից կամ Երեւանից ականանետ, հրանոթ հասնեն այդ գոտի: Լուր հասավ, որ հարձակումը սկսվել է, Շահումյանի ուղղությամբ որոշ հատվածներ ընկել են: Եվ մեր, եւ ՄՅՕՋ-ի ուժերը քիչ էին, բայց այդ կողմից էլ էինք հարձակում սպասում: Ուժերի անհեթեթ բաժանում կատարվեց. անտառապատ տարածքում յուրաքանչյուր երեք-չորս կիլոմետրի վրա չորս հոգի էին: Ուզում էինք նրանց գալու մասին իմանալ: Անձրեւոտ գիշեր էր: Ամբողջ գիշեր Ալեքսանդր Մելքոնյանի հետ անցկացրինք Կատարի հեռուստաաշտարակի տակ: Լուսադեմին օգնական ուժերը միացան մեզ: Մի քանի օրից Շուռնուխից դուրս եկանք, երբ այնտեղ լրացան ինքնապաշտպանական ուժերը: Գնացինք Գորիսի վաշտ, այնտեղ հանդիպեցինք «Արաբոյի» տղաներին: Պատրաստվում էինք ադրբեջանցիներին հակահարված տալ եւ անցնել լայնամասշտաբ հարձակման ամբողջ ճակատային գծով՝ հարյուր քսան կիլոմետր: Պիտի հարձակվեինք Վերին Ջիբիխլի գյուղի դիրքերի վրա եւ այդ գյուղը վերցնեինք: Այնտեղ էր նաեւ Գորիսի վաշտը՝ Միշայի հրամանատարությամբ: Նրանք պիտի հարձակվեին Շուռնուխի բլրի ետեւում գտնվող Մազրա եւ Սեյթազ գյուղերի ուղղությամբ: Նախարարությունից ներկայացուցիչ էր եկել, հրետանու մայոր էր, պիտի օգներ կազմակերպել հրետանու աշխատանքները: Մեզ միացավ մի տանկ ու «ԲՄՊ»: Անձնակազմում բոլորը ռուսներ էին, որոնց, հավանաբար, վարձել էին: Եվ իսկապես արդյունավետ աշխատեցին նման պայմաններում, եթե հաշվի առնենք, որ ամբողջ մարտական լրակազմը չկար: Նախնական հետախուզական աշխատանքները կատարելու ժամանակ գործին ծանոթանալու եկավ գեներալ-լեյտենանտ Գուրգեն Դալիբալթայանը: Մենք նրան ուղեկցեցինք մինչեւ Կատարի բարձունքը: Սիսիանի գումարտակն էր, Երրորդ մասի գումարտակը՝ Գերոյան Հովիկի գլխավորությամբ: Ունեինք մեկ հատ 120 մմ տրամաչափի ականանետ, որը Սուքիասյան Սուքիասն էր աշխատեցնում. նա Մերգելյան ինստիտուտի գիտաշխատող էր: Գիշերը՝ ժամը մոտավորապես երկուսին-երեքին, հասանք Կատար: Մինչեւ գյուղ հասնելը պիտի յոթ-ութ կիլոմետր անտառով անցնեինք, շրջանցեինք գյուղը եւ հետեւից անմիջապես կախվեինք նրանց

դիրքերի վրա: Մեր տանկը տեղավորվեց Ջիբիխլիի գլխավոր ճանապարհի դիմաց: Այնտեղ տեղադրեցինք նաեւ հրանոթը: Մեր հրանոթը հանդիպակաց մասից պիտի կրակեր Ջիբիխլի գյուղի երեք հրանոթների կետի վրա եւ վերացներ դրանք: Աղջամուղջին սկսվեց հարձակումը: Հրանոթի առաջին կրակոցից վիրավորվեց հրետանու ղեկավարը, որը, աչքը օբյեկտիվին դրած, ասել էր՝ կրա՛կ, ու լռվել-մնացել էր: Առավոտից երեկո կռիվը տեւեց: Այդ ընթացքում հրանոթը ընդամենը երկու-երեք անգամ հասցրեց կրակել, մինչեւ լռվածքից հանում էին պարկուճը: Տանկը հասավ մեզ օգնության եւ փորձեց աշխատել որպես հրետանի, սակայն նրանց հրետանին շատ ակտիվ էր աշխատում: Վիրավորներ եղան: Խաչմերուկից, որտեղ մեր հրանոթն էր դրված, վերեւի մասով ճանապարհ էր գալիս դեպի Ջիբիխլի: Այնտեղ, ինչպես եւ Շուռնուխի հատվածի բոլոր ճանապարհներին հակատանկային ականներ էին դրված: Բայց քարտեզին ոչինչ նշված չէր, եւ չգիտեինք էլ, թե ով է տեղադրել, միայն մեկին գիտեինք, այն էլ մահացել էր: Իսկ հակահետեւակային ականները դրել էր ՄՅՕՋ-ից Մոսիկյան Էդոն՝ Ֆիթիլ Էդոն, որը սակրավոր էր եւ գիտեր իր դրած ականների տեղը: Չիմանալով, թե ականները որտեղ են տեղադրված՝ տանկը եւ զրահամեքենան առջեւից գնացին, որ մտնեն գյուղ: Տանկը ապահովության համար ճանապարհից մի քիչ ձախ թեքվելով գնաց: Նպատակը ադրբեջանցիների հրետանին վերացնելն էր, բայց չկարողացան: Այդ գործը մնաց մեզ: Լեւոն Գեւորգյանը նախաձեռնեց վնասազերծման աշխատանքը: Հինգ-վեց հոգով գնացինք այդ ուղղությամբ: Ես նռնականետն էի վերցրել: Լեւոն Գեւորգյանը գրեթե միայնակ արեց ամբողջ աշխատանքը: Մի քանի ադրբեջանցու խփեց, ադրբեջանական դրոշով զինվորական բաճկոնը հագավ, ադրբեջաներեն խոսելով ու մյուսների ետեւից վազելով գնաց: Բլինդաժում գտնվողներին բոլորին սպանեց, հրանոթների փակաղակների տակ նռնակներ դրեց ու դրանք փչացրեց, որովհետեւ չգիտեինք՝ դրանք մեր ձեռքին մնալու են, թե ոչ, մանավանդ որ, լուրեր էին հասնում, թե կռվի մյուս հատվածներում անհաջողություններ ենք ունենում: Գործողությունը հաջողությամբ ավարտեցինք: Օրվա երկրորդ կեսին գյուղն ազատագրված էր: Գյուղի ժողովրդի մի մասը փախել էր, մոտ երեսուն մարտիկ էր եղել գյուղում, տասնհինգ դիակ գտանք: Մենք ութ վիրավոր ունեինք: Նրանցից Զավենը Գորիսում մահացավ, նա «ԲՄՊ»-ի մեջ էր, որը ճանապարհին ականի վրա պայթեց: Տեղեկություններ ստացանք, որ Սեյթազի ու Մազրայի ուղղությամբ մեր ջոկատները անհաջողություններ են ունեցել: Մինչեւ ուշ գիշեր մնացինք գյուղում, չէինք ուզում լքել, քանի որ այն ամենակարեւոր հատվածն էր համարվում, գտնվում

էր բարձունքի վրա եւ իշխող դիրք ուներ: Գիշերը մառախուղը տեսանելիությունը փակեց: Ձայներ էին լսվում: Հասկացանք, որ հակառակորդը զորք է կուտակում Ներքին Ջիբիխլի գյուղում, որը երեք կիլոմետր հեռու էր այդտեղից: Սեյթազը մեր թիկունքում էր: Եթե մնայինք այդտեղ, շրջափակման մեջ էինք հայտնվելու: Հրաման եղավ, որ դուրս գանք: Դիակները եւ վիրավորներին վերցնելու փոխարեն՝ նախընտրեցինք զինամթերքը վերցնել: Ահագին ծանր հետեւակային զենքեր ունեինք: Նահանջի ճանապարհը շատ դժվար էր: Մութ էր, մառախուղ, ձյունը շատ խորն էր: Երբ հասանք չեզոք գոտի, որը թեեւ ավելի շատ նրանց իշխանության տակ էր, զենքը թաղեցինք ձյան տակ ու հասանք Ծուռնուխ: Առավոտյան Լեւոն Գեւորգյանը խմբին ոտքի հանեց, որ գնանք հետախուզության եւ զենքերը ետ բերենք: Լեւոնը, մեզնից առաջ անցնելով, տեսավ, որ թուրքերը դեռ չեն վերադարձել գյուղ, բայց Ներքին Ջիբիխլիում ահագին ուժեր են կուտակված եւ պատրաստվում են հարձակման: Մեր վերցրած երկու գերիները լեզգի էին, վիրավորվել էին: Պատմեցին, թե ինչպես են բռնի կերպով իրենց բերել այդտեղ: Լեւոնը թույլ չտվեց սպանել նրանց, քանի որ ամբողջ կռվի ընթացքում նրանց ավտոմատը բացարձակապես չէր կրակել, չէին կռվել, դա իրենց կռիվը չէր: Լեւոնը վիրակապ դրեց, կերակրեցինք, խնամեցինք: Ուզում էինք մեզ հետ բերել, բայց չկարողացանք: Երբ իմացան, որ իրենց թողնելու ենք, ասացին. «Կամ զենք տվեք, ինքներս մեզ սպանենք, կամ դուք սպանեք, թե չէ գայլերն են գալու ուտեն»: Գյուղի ժողովուրդը լրիվ չէր փախչել, բայց Լեւոնը թույլ էր տալիս, որ գնային: Առաջին գիծը ինձ էր հանձնված: Ինքնաշեն «ԱԿՀ»-ով այդ ուղղությամբ կրակում էինք: Նկատեցի, որ հարյուր մետր ներքեւ մարդիկ էին հավաքված: Լեւոնը հրաման տվեց՝ «Չկրակե՛ք, եթե խաղաղ բնակիչներից են, թող գնան»: Ադրբեջաներեն խոսելով՝ մի կնոջ կանչեց: Կինը մոտեցավ: Լեւոնը գյուղերից ինչ զինամթերք գտել էր, բարձել էր էշի վրա, դուրս հանել: Կնոջը խնդրեց վիրավորներին էշով իրենց հետ տանել: Կինը չէր համաձայնվում: Լեւոնը հայհոյեց, թե՝ «Քսան տարեկան տղա է, ձեզ համար եկել է, ինչու՞ չեք օգնում»: Կինը ասաց. «Թույլ տուր, գնամ իմ ունեցվածքը բերեմ»: Լեւոնը թողեց, բայց նա ինչ-որ պատահական գնդակից մահացել էր: Հաջորդ օրը գնացինք մեր թաղած զենքի ետեւից: Կասկա ծելի բան նկատեցինք, Լեւոնը մեզ ուղարկեց, ինքը ոտքը կախ գցեց՝ տեսնելու, թե ինչ է կատարվում: Որոշ ժամանակ անց նշան- ներով օգնության կանչեց: Մոտեցանք: Նա դիրքավորվել էր, կրակեց, ու հայի ձայն լսեցինք: Փաստորեն, լսել էին, որ այդ տարածքը գրավված է, եկել էին թալանի, հանդիպել էին ադրբեջանցիների ու մոլորվել: Այդ տղան, բարեբախտաբար, չմահացավ: Նրան վիրակապեցինք ու

տեղափոխեցինք Գորիս: Ասացին, որ մի քանի օրից գործողությունը կրկնվելու է: Զինամթերքի լրացուցիչ պաշար ստացանք, հետախուզությունը շարունակվեց: Ծուռնուխը կրակի տակ ընկավ: Վերադարձանք Երեւան: Հետո գնացինք Մալխալաֆի ուղղությամբ, որտեղ էական մարտեր չեն եղել: 1993 թվականի հունվար-փետրվար ամիսներին ենք այնտեղ եղել: Մեզ փոխարինելու եկան Կիրովականի ու Լենինականի «երկրապահ» կազմակերպության տղաները: Ընդհարում եղավ ունեցած զենք ու զինամթերքի համար, մեզնից դիրքը չընդունեցին եւ վերադարձան: Մենք սահմանված ժամկետից երկար մնացինք: Վազգեն Սարգսյանը հաշտեցրեց, եւ նրանք մեզ փոխարինեցին: Մալխալաֆում եղանք նաեւ 1993-ի ապրիլից մինչեւ հուլիս: Մեր հիմնական նպատակն էր պատրաստվել լայնամասշտաբ հարձակմանը: Այդ ժամանակ հետախուզության նպատակով եկել էր Մոնթեն՝ իր ջոկատով, ու բազավորվել «Նովոստրոյկա» կոչվող հատվածում: Մերը 2-րդ դիրքն էր, զառիթափի գլխին էր գտնվում, ելնել-բարձրանալը դժվար էր: Դիմացը մեծ կտրվածք էր, եւ անմիջապես ադրբեջանցիների բարձունքն էր: Ձախ թեւի վրա՝ ներքին զորքերի աջ կողմում, Հակառու գետն էր, դիմացը՝ Կոռնիձորը: Մեզ միացավ «Արծիվ-17» գումարտակը՝ Թամրազյան Արթուրի հրամանատարությամբ: Երրորդմասցիների ջոկատն էր, «Աղբյուր Սերոբ» ջոկատը, էլի մի քանի ջոկատներ՝ յուրաքանչյուրը հինգ-վեց հոգուց բաղկացած, իրենց դրոշներով «Արծիվ -17» գումարտակի անվան տակ միացան: Նախապատրաստական աշխատանքների ժամանակ Մոնթեն մոտ երկու շաբաթ համագործակցեց մեզ հետ: Այդ անգամ էլ մեր ուղղաթիռներից երկուսը ադրբեջանցիների փոխարեն մեզ խփեցին ու գնացին: Եվ հենց օդուժին օգնության կանչելու կարիք էր լինում, ասում էինք՝ գործ չունեք, դրանց մի կանչեք: Հավանաբար ուզում էին այդտեղից շուտ հեռանալ, կոորդինատները խառնում էին: Մեկ այլ տեղից կարող էին նրանց սխալ կոորդինատներ տալ, բայց Լեւոն Գեւորգյանը քարտեզագրության մասնագետ էր: Ծփոթելը հեշտ էր, քանի որ ադրբեջանցիների եւ մեր տեխնիկան ու համազգեստը նույնն էին, բայց մենք հագուստների վրա լեյկոպլաստից խաչեր էինք սարքում:

Մալխալաֆից հետո մեզ ուղարկեցին Մարտակերտ, քանի որ այնտեղ կռիվներն ավելի թեժ էին: Այնտեղ իմացանք, որ մեր զորամասը լուծարվել է, դարձել է հինգերորդ բրիգադայի երկրորդ գումարտակ՝ Լեւոնի հրամանատարությամբ: Այդ օրը գիշերեցինք Մեծ Շենում: Հաջորդ օրը հասանք Մաղավուզ: Այնտեղ գումարտակը բաժանվեց երկու թեւի, մի խումբը ելավ Մաղավուզի բարձունքները կռիվներին մասնակցելու, մյուս մասը՝ Պուշկին յալի ուղղությամբ՝

«Բերդ-2» կոչվող բարձունքը: Նման ինտենսիվ գնդակոծում տեսել էինք Գյուլիբերդում, պարզապես այնտեղ ականանետ չէր աշխատում, թաքնվելը հեշտ էր: Իսկ Պուշկին յալի բարձունքում՝ սարի գլխին, հարթ տարածություն էր: Դիրքերի մի մասը մերն էր, սարի մյուս մասը ադրբեջանցիներինի ձեռքին էր: Նրանք աշխատեցնում էին, կարծեմ, «Ավգանկա» տեսակի ականանետներ: Մեր երեսուն հոգանոց խումբը երբ օգնության գնաց, դեռ վերջին մարդը չէր մտել խրամատ, արդեն մեկ երրորդին կորցրինք, բոլորն էլ՝ արկերից: Այդտեղ վիրավորվեց այդ հատվածի հրամանատարը՝ Ապերը, գեներալ Մանվելի աներ-ձագը: Յուրաքանչյուր մեքենա, որ տասնհինգ-քսան օգնական զինվոր էր բերում, մոտավորապես այդքան էլ դիակներ ու վիրավորներ էր տանում: Մեր մյուս խմբից լուր չունեինք: Տեղյակ պահեցինք, որ գնում ենք միանալու մեր տղաներին: Գնացինք Մաղավուզի բարձունքները: Լեւոնը թույլ չտվեց գիշերը այդտեղ մնալ, մեզ պահեց բլրի ետեւում, ասաց, որ վաղը նորից հարձակում է լինելու, ուզում են հակա-հարձակման գնալ: Օրը չորս-հինգ անգամ նրանք մեծ քանակով, օդուժով, հրետանիով հարձակման էին անցնում: Այդպիսի դաժան կռիվ դեռ չէինք տեսել, նույնիսկ նրանք զենքեր էին օգտագործում, որոնք մեզ անծանոթ էին: Լեւոնը ռազմական բարձր գիտելիքներ ուներ, նա էր ծանոթացնում: Այդտեղ առաջին անգամ իմացանք «Շառափ» տեսակի արկերի մասին, որոնք օդում պայթում էին, եւ ասեղների նման կրակ էր թափվում: Մեր տեխնիկան, զինամթերքը քիչ էին, միայն սնունդից չէինք բողոքում: Հաջորդ օրը անցանք հար-ձակման՝ Հակոբ Կամարի գյուղի ազատագրման համար: Այդ շրջանի ընդհանուր հրամանատարը մարտունեցի Արսենն էր՝ Մեդվեդը, նրա տեղակալը Ջերմուկի Համոն էր: Ես սովորական հրաձիգ էի: Մեր հրետանին չէր կարող նորմալ աշխատել, քանի որ կռիվը դիրքերին մոտիկ էր: Նրանց հրետանին նույնպես չէր աշխատում: Այդ պահին «ԱԿՀ»-ը ամենահարմար զենքն էր, ես տիրապետում էի եւ, Լեւոնի հրամանով, սկսեցի դրանով աշխատել: Մինչեւ երեկո որոշ հատվածներում հաջողություն ունենալով՝ մեր հիմնական ուժերը իջել էին գյուղ: Գիշերեցինք առաջին պատահած տանը: Հաջորդ օրը դիրքերը վերադասավորեցինք, եւ մարտը շարունակվեց: Հակառա-կորդի կողմից հինգ-վեց տանկ աշխատում էր, դրանից բացի՝ հարյուր քսան միլիմետր տրամաչափի ականանետներ, հաուբիցներ եւ այլն: Հակոբ Կամարիի ուղղությամբ էին աշխատում, բայց գործողությունը ընդհանուր բնույթ ուներ: Մենք Հակոբ Կամարիի ձախ թեւի բար-ձունքներից տեսնում էինք, թե «Բերդ-2» դիրքում ինչ է կատարվում: Գյուղը ամբողջությամբ մերը դարձավ մի շաբաթ հետո: Մոտ մեկ շա-բաթ գյուղի մի մասը մեր ձեռքին էր, մյուս մասը՝ նրանց: Գյուղից դուրս

գալիս փոքրիկ կիրճ կար, երկու բլուրների արանքով ճանապարհն էր անցնում: Աջ կողմում մեր՝ Մասիսի գումարտակն էր, իսկ ձախ կողմում Երեւանի գումարտակն էր՝ Գժի՝ Արայիկի հրամանատարությամբ: Նա շատ լավ կռվող էր: Այդ ուղղությամբ նաեւ Հոկտեմբերյանի տղաներն էին: Մի քիչ վերեւ դիտակետ վերցրինք: Լեւոնը հինգ հոգու՝ «Ազգային լեգեոնի» մարտիկներին, թողեց այնտեղ: Մեր ունեցած երկու «ԱԿՀ»-ը պիտի հասցնեինք Հակոբ Կամարիի դիրքեր: Մեր եւ ադրբեջանցիների միջեւ տարածությունը այնքան քիչ էր, որ անգամ նռնակներով էինք կռվում: Հակառակորդը անընդհատ փորձում էր հակահարձակման անցնել: Մեր դիրքը բարենպաստ չէր, փորձում էինք աջից ու ձախից ավելի հարմար դասավորվել, բայց չէր ստացվում: Նրանց տանկերը անընդհատ խփում էին գյուղի վրա: Մեզ եւս երկու տանկ եկան օգնու-թյան, բայց ակտիվ մարտի չէին մասնակցում, քանի որ դիրքը հարմար չէր: Մեր ջոկատում կային զինծառայողներ եւ ավելի փոքր տարիքի տղաներ: Մանվել Գրիգորյանը հրաման ուներ՝ զինծառայողներին դիրքեր չտանել: Մենք փաստաթղթերով Լուսակերտի զորամասի զինծառայողներ էինք: Մեզ ասացին այլընտրանքի մասին. դա պարե-տային վաշտն էր, պիտի անատոմիկում պահակ լինեինք կամ այլ գործ անեինք, բայց նախընտրեցինք կռվել: Թիկունքի ուժերը նույնպես բարձրացան «Բերդ-2» դիրքեր, որպեսզի կարողանայինք դիմադրել: Հակառակորդի ճնշումը շատ ուժեղ էր: Թիկունքի պետը՝ Առաքել Առաքելյանը, զոհվեց: Դա նրա առաջին մարտն էր: Իրենից փոքրերին դուրս էր հանել այդտեղից, ինքը նռնականետով դուրս էր եկել տեխնիկայի դեմ ու կրակել, զրահամեքենան էլ նրա վրա էր կրակել՝ գլխին: Այսինքն՝ փորձել էր միայնակ պահել այդ հատվածը եւ տղաներից ում հնարավոր էր՝ ազատել: Շատ կորուստներ ունեցանք: Խրամատները ահավոր վիճակում էին, այնքան արկեր էին թափվել, նույնիսկ կարող է վիրավորներին չնկատեին, եւ այդպես էլ մնային հողի տակ ու մահանային: Անգամ նրանց դուրս հանելու համար մարդ չկար, քանի որ հրամանով բոլորը՝ եւ՝ թիկունքը, եւ՝ հետախույզները, դիրքեր էին բարձրացել: Տասը-տասնհինգ օր հետո մենք գերհոգնած վիճակում էինք, աֆֆեկտի տակ: Մի քանի անգամ փորձեցինք մեր դիրքը Հակոբ Կամարիում բարելավել:

Մեկ-երկու անգամ Լեւոնի հետ հետախուզության գնացինք: Դրանցից մեկի ժամանակ Լեւոնը, քանի որ աֆղանական կռիվներին ծանոթ էր, կրակելու ձեւից որոշեց, որ մեր դեմ մոջահեդներ են կռվում: Նրանք նռնականետներով էին եւ ամբողջ այդ տարածքը գնդա-կոծության տակ էին պահում ու շատ լավ էին կրակում, անգամ փայտե սյուները խփում-գցում էին ճանապարհի վրա: Լեւոնը, որքան հնա-րավոր էր, մոտեցել էր: Առաջին կրակոցից թեթեւ վիրավորվեց: Մի

վիրավոր մոջահեդի էին բերել, որը փորձել էր ինքնասպանություն գործել: Մանվելի հրամանով՝ վիրահատեցին նրան: Մոջահեդները ընդհարվել էին ադրբեջանցիների հետ, որ իրենց առաջ են ուղարկում: Որոշ ժամանակ անց այդ ամբողջ տարածքը գրավեցինք: Թեժ կռիվներ ու բավական շատ զոհեր եղան նաեւ ադրբեջանցիներ կողմից: Ես օրական 200-300 «ԱԳՀ»-ի արկ էի ուղարկում դիմացի հատվածի վրա: Նրանք բոլորը ջահել էին, երեւի զորակոչ էր եղել, բոլորը միանման հագնված էին, անփորձ: Հետախուզության գնալիս տեսանք, որ ամեն հարձակումից եւ իրենց կորուստները քարշ տալուց հետո ավտոբուսներից հսկայական քանակությամբ զինվորներ են իջնում ու վազելով գալիս հավաքվում գոգավորության տակ: Այդ ընթացքում ում հասցնում՝ խփում էինք, մյուսները հասնում էին գոգավորության տակ, որ կուտակվեն ու ամբողջ ուժով հարձակվեն մեզ վրա: Այլ հետախուզական տվյալներով՝ մեր մի բրիգադայի դեմ նրանք երեք բրիգադա են հանել: Հակոբ Կամարին դեռ լրիվ չէր ազատագրվել: Մաղավուզի կողմից մտել, դուրս ենք գալիս դեպի Մատաղիս: Այդ հատվածում դիրքերը շատ անհարմար էին, խառն էին, որն էր մերը, որը նրանցը՝ դժվար էր որոշել: Լույսը բացվեց, տեսանք՝ մոտ երկու հարյուր մետր ներքեւ տանկ էր կանգնած: Ուրախացանք, քանի որ մենք մի տանկ ունեինք ու հինգ-վեց օր էր՝ սպասում էինք երկրորդին: Տանկի վրա մարդիկ կային նստած: Ուզում էինք իջնել՝ տանկիստների հետ ծանոթանալու: Հանկարծ կրակոցներ եղան: Գժի տղաներից մեկը նռնակ գցեց, բայց պարաշյուտը չբացվեց: Մյուսը շատ մոտ տարածությունից՝ տասը մետրից նռնականետով խփեց, բայց դա էլ չպայթեց: Պարզվեց՝ ադրբեջանցիների տանկն էր, որի անձնակազմը ռուսներ էին, տանկի վրա նստած գնդացրորդը նույնպես ռուս էր: Այնքան հարբած էին, որ շփոթվել, եկել էին այդտեղ: Համ մենք թույլ տվինք, որ մտնեն, համ իրենք չգիտեին, թե ուր են եկել: Ռուսը դուրս եկավ, սկսեց ռուսերեն հայհոյանքով մեր տղաներին հրաման տալ, մերոնք էլ մտածում են, թե մենք ռուս հրամանատար չունենք, սա ո՞վ է: Ու կռվից ամեն ինչ պարզ դարձավ: Տանկը ուզում էին տղաները վերցնել, վրանով ուզում էին փակել, բայց աշտարակը պտտվում էր, տղաներն ընկնում էին, չէին կարողանում գրավել: Մոտ վազեցինք: Մեր տանկի հրամանատարը Սպոն էր, «Կռիլո-4» տանկն էր նրա հրամանատարության տակ: Տանկը բարձրացավ, նրանց տանկին խփեց, բայց այդպիսի հրաման չուներ: Նա միշտ էլ առանց հրամանի էր գործում՝ համ նկատողություն ստանալով, համ պարգեւատրում: Նա Մանվելին վաղուց՝ դեռ Գետաշենի կռիվներից էր ճանաչում, դրա համար էլ Մանվելը կուլ էր տալիս: Խփեց, տանկի մի հատվածը վնասվեց, բայց նրանք մի քիչ ետ էին գնացել, ու կռիվը սկսեց

թեժանալ: Լեւոն Գեւորգյանը բարձր տեղում դիտակետ ուներ, որտեղից ուղղորդում էր, թե ես «ԱԳՀ»-ով որտեղ խփեմ: Լեւոնին դիպուկահարը նկատում ու խփում է: Լեւոնը ձեռքից վիրավորվեց, իսկ Ջերմուկի Համոն ոտքից վիրավորվեց: Փաստորեն մենք մնացինք առանց հրամանատարի: Համոն ծանր էր վիրավորվել, իսկ Լեւոնի ձեռքը վիրակապեցին ու հոսպիտալից ուղարկեցին, որ այդ ամբողջ գծին տիրություն անի: Նա այն տղաներին էր իր հետ վերցնում ու առաջ գնում, որոնց հետ պարապել էր, իր լեզուն լավ էին հասկանում: Մթության մեջ ահագին առաջ գնացինք: Երբ հասավ իր ասած ժամանակը, երբ օգնության պիտի գնայինք նրան, նա արդեն ետ եկավ, ասաց. «Գնացե՛ք, այնտեղ մի տասը հոգի պիտի լինեն, ես երկու-երեք գենք վերցրել եմ, մնացածը գնացեք դուք բերեք, դիակներն էլ հետո կհավաքենք»: Մեր կողմից էլ բավական շատ զոհեր եղան: Երբ մութն ընկավ, ու գնացինք նրանց բերելու, մեքենայի թափքը լցվել էր, զոհվածների վրա էլ վիրավորներին էինք պառկեցնում: Լեւոնը իր հաշվարկի մեջ չէր սխալվել, վստահ էր, որ ում խփել է՝ ընկել է: Տասը ադրբեջանցու դիակ էլ այդ մասից վերցրինք: Երկու օր սպասեցինք, տեսանք՝ չեն գալիս նրանց ետեւից, փոքր փոս կար, նրանց դրեցինք մեջը ու մակերեսորեն ծածկեցինք, որ հնարավոր լինի այդտեղից հանել: Որոշ ժամանակ չկարողացանք այդտեղից առաջ գնալ: Հակոբ Կամարիից Մատաղիս թեքություն է իջնում, որտեղ ադրբեջանցիները, հավանաբար, պաշտպանության երկրորդ գիծն էին փորել: Այդ գիծը վերցրինք մեր ձեռքը, հողը պարզապես մի կողմից մյուս կողմը լցրինք: Մի քանի օր այդտեղ մնացինք ու ամբողջ ուժով առաջ գնացինք՝ հասնելով Մատաղիսի բարձունքներին: Այնտեղ մի քանի կետեր ունեինք: Առաքելի զոհվելուց հետո «Բերդ-2» դիրքը հանձնվեց Մարտակերտի գնդին: Ռացիայով լսում էինք, որ վեճ է ծագել Մանվելի ու նրանց միջեւ: Խոսք կար, որ Միրբաշիրի գործողությունը պիտի լինի: Որոշվեց առանձնացնել գրոհայինների գումարտակը, որի հետ պարապմունքները անցկացրեց Լեւոն Գեւորգյանը: Եռամսյա գինակոչիկներից ընտրվեց չորս հարյուր հոգի: Միայն գիտեինք, որ մենք Կիրովաբադի ուղղությամբ ենք գնալու, անցնելու ենք Թարթառը, միանանք «Եղնիկներին» ու շարունակենք ճանապարհը: Մեզ նոր «ֆագոտներ» բերեցին, տեխնիկան թարմացվեց: Մատաղիսում մենք հիմնականում դիրքերում էինք լինում: Մեզ իջեցրին, լողացրին ու պատրաստեցին Վազգեն Սարգսյանի գալուստին: Բաղնիք կար, ցանկացողները լողանում էին, բայց ով մի անգամ լողանում էր, հիվանդանում էր: Մարտ ամիսը համեմատաբար խաղաղ էր անցել, որովհետեւ ամենակարեւոր բարձր կետերը վերցրել էինք: Այդ հատվածում մեզ բաժանում էր Թարթառի կիրճը: Նրանց դիրքերը

ամբողջությամբ Արեգա սարի գլխին էին: Տարածությունը հեռու էր, հրազենի համար անպիտան, աշխատում էին խոշոր տրամաչափի գնդացիրները: Հակառակորդը հակահարձակման էր պատրաստվում: Ես «ԱՐՀ»-ով փորձնական կրակում էի՝ իմանալու համար նրանց դիրքերը: Բայց երկու-երեք պայթյուն էր լսվում, ենթադրում էինք, որ այդտեղ ականապատված դաշտ է, շղթայով գնում է:

Ապրիլի 10-ին Մատաղիսի գրավման օպերացիան էր: Լեւոն Գեւորգյանը գրոհայինների հրամանատարն էր, ասաց. «Ես ճակատից չեմ մտնի»: Ռուս սպաներ էին նայել, նախնական հաշվարկներում խոշոր կորուստների մասին էին նշել: Իսկապես, այն դիմացից գրավելը շատ դժվար էր: Ջրամբարի վրայի կամուրջը պիտի անցնեինք, բարձրանայինք վերեւ: Գիտեմ, որ դա եղել է Լեւոնի ծրագրով, նա պիտի գրոհը տաներ: Լեւոնը շատ զգույշ էր, վախը վերածվում էր զգուշության: Տվյալներ ունեինք, որ ադրբեջանցիները պատրաստվում են դեսանտային գումարտակ իջեցնել: Առանձին հանվելու էր հակադեսանտային պաշտպանություն՝ ջոկատներ, որոնք պետք է թիկունքում մնային: Նրանք քիչ էին՝ ամեն գումարտակից տասը հոգի: Ապրիլի 8-ին գրոհայինների գումարտակը՝ մոտ չորս հարյուր հոգի, Լեւոնի հրամանատարությամբ դուրս եկավ: Ըստ ծրագրի՝ պիտի Տոնաշենի կողմով անցնեին, շրջանցեին, փորձեին թափանցել թիկունք եւ անցնել Արեգասարի ետեւը: Երկու օրվա ճանապարհ պիտի անցնեին: Ցույց էինք տալու, թե դիմացից ենք ուզում հարվածել, բայց գրոհայինների գումարտակը պիտի ետեւից մտներ եւ Արեգասարը վերցներ: Դա Լեւոնի ծրագիրն էր, եւ նա արեց: Նա շտաբի պետի՝ Հրաչի հետ վիճեց, թե՝ դիմացից մի՛ մտեք: Մեզ թողեց հակադեսանտային պաշտպանության համար, բայց երբ սկսվեց հարձակումը, Հրաչը մեզ տարավ հարձակվելու Մատաղիսի կողմից: Կռիվը այդտեղ ղեկավարում էր Ջերմուկի Համոն՝ ոտքը դեռ վիրավոր, գիպսի մեջ: Մինչեւ հասանք այնտեղ, Համոյից իմացանք, որ տղաները, որոնք Հրաչի հրամանատարությամբ անցել են կամուրջը, ահագին զոհեր են տվել: Ամենաշատ զոհ այդտեղ ենք տվել, քանի որ ականապատված էր, լարերով փոխկապակցված ականներ էին դրված: Նրանք հեռու էին գնացել, լարը քաշել էին, որ պայթեցնեն, բայց տարբեր տեղերից 10-12 հատ միանգամից պայթել էին: Տասնյոթ հոգի զոհվել էին: Հրաչը մահացավ, Հոկտեմբերյանի գումարտակի հրամանատարը՝ Լեւոնը եւս զոհվեց: Իսկ Արեգասարը մեր գրոհայինները գրավեցին՝ տալով տասներեք վիրավոր: Մեզ մեքենաներով տարան, որպեսզի բարձրանանք Արեգասար ու միանանք Լեւոնին: Հասանք վերեւի այն հատվածը, որտեղ դիրքերը վերցրել էին: Շտապօգնության մեքենաները համարյա բոլորը ականների վրա

պայթեցին, եւ չէին հասցնում վիրավորներին հանել: Երբ մեքենայով բարձրացանք եւ զինամթերքը դատարկեցինք, պիտի մթության մեջ առաջ գնայինք ու միանայինք Լեւոնին, առջեւից գնացողները պայթեցին ականների վրա: Հետախույզներից մի քանի հոգի կենդանի մնացին: Որոշեցինք այդ ուղղությամբ չգնալ: Չհասկացանք էլ, թե ում հրամանն ենք կատարում, ռացիան էլ փչացել էր, չէի կարողանում կապվել Լեւոնի հետ: Վերադառնալիս մեր «ՈՒԱԶ»-ը պայթեց ականի վրա:

Պատմում է Աստվածատուր Պետրոսյանը ***(1991-92 թթ. Երկրապահ Զինապարտների ջոկատների կենտր. շտաբի պետ, 1993-2000 թթ. ՀՀ ՊՆ փոխնախարար, այժմ՝ ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր): 09.22.2005 թ., Երեւան***

Ա.Պ. - Երբ ղարաբաղյան շարժումը սկսվեց, ես աշխատում էի «Ալմաստ» գործարանում: Իգոր Մուրադյանի օրոք «Ղարաբաղ» կոմիտեի ինֆորմացիոն բաժնի աշխատակիցն էի, համակարգում էի համագործարանային ինժեներների խումբը: Երկրաշարժից հետո ռազմական գործողությունների շրջանն էր սկսվել: Այդ ընթացքում հանրապետության տարբեր շրջաններում եւ մայրաքաղաքում ձեւավորվեցին ջոկատներ: Գերագույն խորհրդի նոյեմբերի 22-ի նիստից հետո, երբ պարետային ժամը սկսվեց, հասկացանք, որ պետք է անցնենք զինված պայքարի: Գաղտնի խմբեր էին գործում: Զինված էին սովորական «ահաբեկչական» զենքերով՝ ինքնաշեն նռնակներով, ատրճանակներով, կային մեկ-երկու ուսումնական ավտոմատներ: Ինքներս էինք մեր գործարանում հնարում տարբեր տիպի զենքեր՝ ավտոմատներ, կարաբիններ եւ այլն: Սկզբում դրանց գործածության կարիքը չէր զգացվում: Ղարաբաղցիներն էլ էին այդ ընթացքում պատրաստություն տեսնում, հատկապես Ախալքալաքի ճանապարհով զենք փոխադրելու ուղղությամբ: Մտածում էինք ենթասպաներին մեր կողմը գրավելու, պահեստից գաղտնի զենքերը հանելու մասին այնպես, որ հայ սպաներին վտանգի չենթարկեինք, նրանց նույնիսկ ապահովության երաշխիք էինք տվել: Հոկտեմբերյանի իններորդ ամրացված շրջանի գումարտակի հրամանատարի տեղակալը Հայկազ Բաղմանյանն էր, նա նոր էր կապիտանի կոչում ստացել: Հոկտեմբերյանի «Տիգրան Մեծ» ջոկատի տղաների՝ Ռուբոյի, Խաչիկի, Կորյունի, մյուսների հետ պայմանավորվեցինք, որ ոչ մի կրակոց չլինի: Գիշերը մեքենաներով ահագին զինամթերք, նույնիսկ հակատանկային «ֆագոտ» տիպի հրթիռներ տեղափոխեցինք Նաիրիի շրջան:

Ես այդ շրջանի կոորդինատորն էի: Այնպես էինք թաքցրել, որ հետագայում խորհրդային զորքերը չկարողացան գտնել: Դրա համար, բնականաբար, սկսեցին մեղադրել հայ սպաներին: Հայկազը անհանգստացած եկավ, թե՝ ի՞նչ պետք է անեմ: Միասին գնացինք Վազգեն Սարգսյանի մոտ, որը Գերագույն խորհրդի հանձնաժողովում էր: Այդ ժամանակ դեռ նոր էին երեսուն շրջանների ջոկատները ստորագրություններով մտել Գերագույն խորհրդի ենթակայության տակ, նոր էր ձեւավորվել կենտրոնական շտաբը: Քանի որ Հայկազ Բաղմանյանը զինվորական գործից շատ լավ հասկանում էր, Վազգենը նրան ուղարկեց Ալիկի մոտ՝ նրա առաջադրանքները կատարելու, իսկ մի տասը օր հետո պատվիրեց գնալ Մարտակերտ՝ Վագիֆին օգնելու:

Բ. - Ի՞նչ ջոկատներ էին կազմավորվում այդ ժամանակ:

Ա.Պ. - Կոռնիձորում «Կոռնիձոր» ջոկատն էր, բայց տղաների մեծ մասը Երեւանից էին: Հրամանատարը Արայիկն էր, սկզբում ուջանցի Նորայրն էր, որը զոհվեց: Չաուշի ջոկատն էր, որտեղ ութ-ինը հոգի էին ընդամենը: Ուջանցի տղաներից Համլետն էր, Թալինից Կամոն, Հայդուկն էր եւ այլն: Երասխում կազմավորված ջոկատը ղեկավարում էր Վարդան Հովակիմյանը, որը ծնունդով Վայքից էր: Այդ ջոկատը հետագայում Մարտինը ղեկավարեց, իսկ ջոկատը կոչվեց Վարդանի անունով: Երասխի մյուս ջոկատի ղեկավարը Վազգեն Սարգսյանն էր, որի հետ Երեւանից շատ տղաներ էին գնացել: Վայքում ջոկատ կար, Մաթեւոսյան Սամվելն էր այնտեղ: Եղեգնաձորի ջոկատից Խաչիկն էր, Արամը: Բոլոր շրջաններում էլ ջոկատներ էին կազմավորվել: Սահմանամերձ գրեթե բոլոր տարածքներում՝ Վայքում, Եղեգնաձորում, Գորիսում, Կոռնիձորում, Իջեւանի շրջանում գողություններ շատ էին լինում: Մինչ այդ Մերգելյան ինստիտուտի տղաները որոշել էին Շուռնուխ գյուղը վերականգնել: Սկզբում դա շարժման հետ ոչ մի կապ չուներ, բայց ինքնըստինքյան ձեւավորվեց «Մերգելյան» ջոկատը: Այդ ջոկատում Մխիթարյան Սերգեյն էր, Շուռնուխի Վահանը... Էջմիածնում Ռաֆոն ու Մելքոնյան Գագիկը առանձին ջոկատներ ունեին: Ռաֆոյին փոխարինեց Մանվելը: Շիրակի դաշտի բոլոր ջոկատները ղեկավարում էր Վարդանյան Միքայելը: Խնդիրներ ու հակասություններ էին լինում, երբ մի շրջանում մի քանի ջոկատներ կային, եւ դրանք պետք է մի հրամանատար, կոորդինատոր ունենային: Բայց, միեւնույնն է, յուրաքանչյուրն իր խնդիրն ուներ: Անիի ջոկատը ղեկավարում էր Մուշեղը, Աշոցքինը՝ Նորիկը: Սպիտակում կազմավորված առաջին ջոկատի հրամանատարը Միդոն էր: Սկզբում բոլորին շտաբի պետ էինք ասում, այլ ոչ թե հրամանատար: Զինվորական մտածողություն չկար, ամեն ինչ շատ ավելի էմոցիոնալ-քաղաքական բնույթ էր

կրում: Արագածում Մացոն էր, հետո Ավոն գնաց որպես Ապարանի վաշտի հրամանատար: Չորս հոգով՝ Սողոմոնյան Մացոն, Ավոն, Լյովան, Սեյրանը, Իջեւանի շրջանում՝ Բերքառատի մոտ, գերի ընկան եւ վեց ամիս Շուշիի բանտում մնացին: Ապարանում Ֆեդյան էր, Ռազմիկը, Մյասնիկը, Աշխարհիկը, Վաչիկը, որը հետո հրամանատար դարձավ: Արմավիրում Սմբատն էր՝ Հոկտեմբերյանի Սմբո էինք ասում, Կորյունը (մեկը «Տիգրան Մեծ»-ից էր, մյուսը՝ ՀՀՇ-ից), Ռուբոն, որն անհայտ կորած էր համարվում, բայց դիակը գտանք, բերեցինք հայրենիք, Պարգեւն էր այդ ջոկատում: Պռոշյանի ջոկատի հրամանատարը սկզբում Գագոն էր, հետո՝ Կարոտը, հետո՝ Պետոն: Նաիրիի շրջանում բոլոր գյուղերը պարտադիր իրենց ջոկատները պետք է ունենային: Զովունիում Խաչիկն էր հրամանատարը, որն իմ փոխարեն դարձավ Նաիրիի շրջանի շտաբի պետը, երբ ես նշանակվեցի Կենտրոնական շտաբի պետ: Մեր շրջանում՝ Նոր Հաճնում, դրվեց ռազմական տեխնիկայի առաջին արտադրությունը՝ ավտոմատների, կարաբինների՝ «АКС»-ի փամփուշտներով: Սաշիկը, Բաբիկը արտադրության ղեկավարներն էին: Սաշիկը հետո նշանակվեց Գորիսի շտաբի պետ: Էդիկ Թորոսյանը առաջին զոհն էր: Նռնակի փորձարկումից երեք հոգի վիրավորվեցին, Էդիկը մահացավ: Շատ լավ տղա էր, ինժեներ էր, հետմահու «Արիության մեդալ» շնորհվեց նրան, նրա անունով վաշտ ձեւավորվեց: Դրա հիմքի վրա հատուկ գնդում ձեւավորվեց Քասախի վաշտը, որը սկզբում ես էի ղեկավարում, հետո՝ Վարդանյան Ժիրայրը: Նա էլ էր ինժեներ: Բոլորը հիմնականում բարձրագույն կրթություն ստացած մարդիկ էին: Վարդենիսում երկուերեք ջոկատ կար, ինչն էլ բախումների տեղիք էր տալիս: Բախումներ էին լինում, ասենք, Բեգլարյան Սամվելի եւ Նորոյի կամ Շառոյան Գարիկի միջեւ: Այստեղ կոորդինատորը պետք է կարողանար ճիշտ ընտրություն կատարել, համապատասխան մարդկանց նշանակեր հրամանատարի պաշտոնում: Այդ ընթացքում ես եղել էի բոլոր շրջաններում, բայց հիմնականում հաստատվեցի Նոյեմբերյանում: Այնտեղ էլ ծանոթացա Վազգեն Սարգսյանի հետ: Նա էլ, տեսնելով, որ տարբեր վայրերից եկած ջոկատները չեն կարող հաշտ լինել, ինձ նշանակեց Նոյեմբերյանի շրջանի կոորդինատոր, քանի որ ես հասցրել էի մտերմանալ բոլորի հետ, եւ իմ միջամտությունը կօգներ գործին: Նույնը Ստեփանավանում էր: Վարդանյան Միքայելի ջոկատն էր, ԱԻՄ-ի ջոկատը, Պողոսյան Նորիկի, բռնցքամարտիկ Սամսոն Խաչատրյանն էր եկել տասներկու սպորտսմենների հետ: Վազգենը Ֆիզկուլտուրայի ինստիտուտն էր ավարտել, նրանք էլ որոշել էին գալ, Վազգենին խնդրել, որ իրենք էլ ջոկատ ստեղծեն: Այդ ժամանակ բոլորը ուզում էին զենք ունենալ, բայց մենք այդքան հնարավորություն չունեինք:

Միայն մեր գյուղից հազար ութ հարյուր հոգի էին հավաքվել, բայց քսան-երեսուն կտոր զենք հազիվ կարողացանք ճարել: Ընտրությունը, թե ում զենք տանք, Ռուբիկն էր կատարում: Նա Հեռավոր Արեւելքում Չինաստանի հետ բախումների ժամանակ հետեւակային գնդում էր ծառայել: Ռուբիկը որոշում էր այսպես՝ սա հետեւակային չի եղել, այլ շինարար կամ մեկ այլ մասնագետ, ուրեմն՝ նրան չենք տա: Ես մի քիչ այլ կերպ էի մոտենում հարցին, օրինակ՝ առաջարկում էի, թե այս մեկը շատ լավ ինժեներ է, մեզ անպայման պետք կգա: Մեծ պայքար էր գնում առաջինը նշանակվելու համար: 1993 թվականի մարտի 3-ին ես եկա Երեւան: Ստեփանավանում Համլետն էր, Կարմիրում՝ Վիտալին, որը դեսանտային է եղել: Ասում էին՝ թող Տոլիկը ղեկավարի, Համլետը մեծ է: Բայց Համլետը այնպիսի կազմակերպչական ջիղ ուներ, իսկ այս դեսանտնիկը ի՞նչ պետք է աներ: Նա էլ գալիս էր որպես սովորական զինվոր: Ստեփանավանի Հրաչը Նոյեմբերյանում վիրավորվեց, մի աչքը կուրացավ: Նրան՝ որպես դեսանտայինի, ուղարկում են թշնամու բանակից զինվոր բերի, որպեսզի հետո փոխանակենք մերոնց հետ: Նա մենակ է գնում, տղաները չեն օգնում, ասում են, թե ինքը ձեւը գիտե, Հրաչն էլ գլուխ էր գովել, թե միայնակ կարող է անել դա: Մի քանի թուրքի իսկապես գերի էր վերցրել, ութ կիլոմետր ճանապարհ էր գնացել, Սեյրանլուից բերել, բայց ճանապարհի կեսից արդեն ուժերը չէին հերիքել, եւ բաց էր թողել նրանց: Հասկացանք, որ դասակները պետք է հստակ կառուցվածք ունենան: Կազմեցինք, թղթի վրա գծեցինք, նույնիսկ ծիծաղում էինք, թե՝ ուր է տանկը, ուր է նռնակաձիգը: «Ղարաբաղ» կոմիտեն Վազգեն Մանուկյանն էր ղեկավարում, հյուսիսային ուղղությունը՝ Վանո Սիրադեղյանը: Վանոյին ներկայացրի նման իրավիճակի անհեթեթությունը, առաջարկեցի ժողով անել, որոշել, թե որ ջոկատի հրամանատարը ում պետք է նշանակել: Ես մեկ առ մեկ գրանցել էի անուն-ազգանունները, մասնագիտացումը, ստացած զենքի տեսակն ու քանակը: Ասացի, որ պետք է կանոնադրություն ստեղծել, եւ բոլորը ստիպված կլինեն ենթարկվել այդ կանոններին՝ անկախ նրանից, թե որ ջոկատից են: Շահինյան Սամվելն ասաց, որ ինքը նման մի կանոնադրություն գրել է, բայց ոչ ոք չի ուզում նույնիսկ կարդալ: Առաջարկեցի այն քննարկել, ստեղծել շտաբի պես մի բան, որ բոլոր հրամանները մի տեղից արձակվեն: Համաձայնության եկանք: Բոլոր տեսակի մեքենաները եւս կենտրոնացվեցին մեկ տեղում, որովհետեւ շատ էին պատահում դեպքեր, երբ ջոկատի հետ կապ չունեցող մեկը գալիս, ուրիշի անունով ներկայանում էր, մեքենան վերցնում: Հաճախ հիմնարկի պետերն իրենք էին թալանով զբաղվում: Որեւէ ջոկատից մեկին կանչում էին, գրություն վերցնում, որ նա մեքենան տարել է, հետո նրանք այդ մեքենան Ստավ-

ղոպոլում կամ մեկ այլ տեղ վաճառում էին: Զենքերի արտադրությունը եւս կենտրոնացվեց մեկ տեղ: «Ղարաբաղ» կոմիտեի ռազմական թեւը, Միացյալ ուժերի շտաբի տղաները, Նավասարդյան Աշոտը, մոտ յոթանասուն ջոկատների հրամանատարներ հավաքվեցին եւ որոշեցին ստեղծել մի համակարգիչ խորհուրդ: Խոսեցին Վազգեն Մանուկյանը, Վազգեն Սարգսյանը: Ապրիլի 3-ին ստեղծվեց Ռազմական խորհուրդ, որը բաղկացած էր յոթ-ութ հոգուց: Մեկը արտադրության գծով ղեկավար էր, մյուսը՝ տրանսպորտի եւ այլն: Ռազմական խորհուրդը գաղտնի էր, դեռեւս խորհրդային իշխանության շրջանն էր: Մտածում էինք՝ ինչպես կոչենք Կենտրոնական շտաբը: Սերգեյ Առաքելյանի առաջարկով այն կոչվեց Երկրապահ զինապարտների կենտրոնական շտաբ: Շտաբի պետ նշանակեցին ինձ: Հրամանատարը Վազգեն Սարգսյանն էր: Մենք պետք է հավաքագրեինք եւ որակավորեինք ջոկատներին: Այսինքն՝ պետք է գնայինք բոլոր շրջանները, ըստ ցուցակի՝ հանդիպեինք մարդկանց հետ, տեսնեինք՝ ինչ զենքեր ունեն, ավելացնեինք դրանք կամ պակասեցնեինք: Եվ այդպես սկսվեց ջոկատների ատեստացիան: 1990 թվականի ապրիլի 3-ից հետո մենք մտածում էինք, թե ինչպես պետք է անցկացվեն մայիսյան տոնակատարությունները, արդյո՞ք եռագույնով, քաղաքական հարցեր կլինեն, թե ոչ: Նույն օրը ես վերադարձա Նոյեմբերյան: Մեր հարյուր հիսուն հոգանոց ջոկատը մնացել էր այնտեղ: Շառոյան Գարիկին նշանակեցինք հրամանատար: Ալավերդիում Սեյրանը դարձավ ջոկատի հրամանատար, Վանաձորում չկարողացանք որեւէ մեկին տեսնել հրամանատարի պաշտոնում: Եվ որոշ ժամանակ անց այդ ջոկատները՝ «Նժդեհը», ԱԻՄ-ի ջոկատը, «Զորավար Անդրանիկ» ջոկատը, ստորագրություններով մտան Կենտրոնական շտաբի կազմի մեջ: Լոռեցի տղաներ կային, զենք չունեին, չատեստավորեցինք: Բայց նրանց մեջ լավ տղաներ կային: Սպիտակի եւ Արագածի ջոկատները հարմար գտան միասին գործել, քանի որ զենքի եւ այլ խնդիրներ կային: Ապրիլի 15-ին ինձ ուղարկեցին Գետաշեն: Այնտեղ օդային հանգույցների կոորդինացման խնդիր կար: Այդ օղակը Վազգեն Սարգսյանը ամենակարեւորն էր համարում: Խոջալուի օդանավակայանը դեռեւս գործում էր, բայց արդեն փակվելու եզրին էր: Ամեն մի թռիչք պետք է բանակի հետ համաձայնեցվեր: Պետք է ստուգեի՝ մեր ատեստավորած ջոկատներն են գնում Ղարաբաղ, թե՞ ինչ-որ պատահական մարդիկ: Ես վերադարձա եւ զեկուցեցի Գերագույն խորհրդի նախագահին, որ Գետաշենին վտանգ է սպառնում: Գետաշենում էին գտնվում Սպիտակի, Վահան Զատիկյանի ջոկատները, «Արաբոն»: Թաթուլ Կրպեյանն էր այնտեղ, Հրազդանի Հրաչը: Նրանք հաշտ չէին միմյանց հետ: Հրաչը

կռիվ էր տալիս, թե դպրոցում Սասունցի Դավթի փոխարեն Թաթուլի անունն են երգում: Բայց երեխաները երգում էին որպես հերոսի, որպես իրենց սիրած ուսուցչի, հպարտանում էին, որ իրենց ուսուցիչն էլ է մասնակցում շարժմանը: Իսկ Թաթուլն ասում էր, որ Հրաչի դեմ ոչինչ չունի: Թաթուլին պայթեցման լարեր էին պետք, տվեցի, Հրաչը նեղացավ, Հրաչին ականներ բերեցի, Թաթուլը նեղացավ: Հետո երբ հասկացան, որ բոլորին ամեն ինչ հավասարաչափ եմ բաժանում, շատ զարմացան: Թաթուլն ինձ ասաց, որ բանակցությունների համար տասնհինգ հազար ռուբլի է պետք: Ես շորերս փոխեցի, ոստիկանի շորեր հագա՝ իբրեւ թե Ռոստովից եմ: Ժուկովն էր եկել: Խոսում ենք, որ ժողովուրդը մեղք է, վիճակը դժվար է: Թաթուլը դուրս եկավ, որ կաշառքը տա, չէին վերցրել: Ասացին. «Մենք պայմանավորվածություն ունենք, որ Գետաշենին ձեռք չտանք»: Բայց ես չէի հավատում նրանց խոսքին, որովհետեւ գնալիս ասացին, որ զորքը հանելու են այդտեղից: Երեք տների արանքում տեղակայված կայազոր էր՝ մի փոքր վաշտ: Նույն օրն ասաց. «Իջեւանի ճանապարհը փակվել է, գնա այնտեղ, տես՝ ինչ եք անում»: Առաջին հարձակումով Բաղանիս-Այրում գյուղը վերցրինք:

Բ. - Երկու Վազգենների հարաբերությունները ինչպե՞ս էին:

Ա.Պ. - Բոլոր հիմնական, կարեւոր որոշումները կայացնում էր Վազգեն Մանուկյանը: Բայց մայիսից, երբ ամեն ինչը կոորդինացվեց եւ ռազմական խորհուրդ ստեղծվեց, ռազմական գործի ղեկավարումը նա ամբողջությամբ հանձնեց Վազգեն Սարգսյանին, իսկ Վանոյին ու Լեւոնին ասաց, որ չխառնվեն այդ գործին: Միայն արդյունաբերությանը վերաբերող հարցերի մասին իրեն պետք է զեկուցեին: Այդ ոլորտը նա էր ղեկավարում: Կոորդինատոր նշանակեցին Արթուրին ու Արտավազդին: Ես երկու տեղակալ ունեի: Տնտեսական գծով տեղակալը Արթուրն էր, մյուսը Մահտեսյան Մանվելն էր, որը ջոկատները զինելու խնդրով էր զբաղվում: Զենքի հսկողությունը Պաշտպանության կոմիտեի՝ Վազգեն Սարգսյանի իրավասության ներքո էր: Շտաբի պետը այդ ժամանակ Գուրգեն Դալիբալթայանն էր: Երբ Պաշտպանության կոմիտեն ձեւավորվեց, ես Նոյեմբերյանում էի: Մեր առջեւ խնդիր էր դրված Իջեւանի կողմից խփել եւ թշնամու ուշադրությունը շեղել, որ Շահումյանի, Գետաշենի ուղղությամբ հարձակում չգործեն: Ես տեղյակ չէի, որ Գետաշենը ընկնում է: Գաղտնիք պահելու իմաստով ասեմ, որ «Օպերացիա կոլցոյի» գլխավոր շտաբի Ռուսաստանի ներկայացուցիչների արխիվներում նայել եմ, թե ովքեր էին մասնակցում գործողությանը: Անունները հիմա չեմ տա, բայց մեր կողմից ընդգրկված էին շրջանի մասշտաբով շատ բարձր դեմքեր: Ի՞նչ տարբերություն, ասենք, Յուխարի Աքսիբարի սովխոզի նախագահն է,

թե՞ Նոյեմբերյանի այսինչ սովխոզի տնօրենը: Սովետական սովխոզներ էին: Այսինքն՝ համագործակցում էին, երկուսն էլ կուսակցական էին, նույն գաղափարն էր: Դրանով «Կոլցոն» կարողացավ կայանալ եւ ուժեղ հարված հասցնել մեզ: Այլապես 4-րդ եւ 7-րդ բանակները այդքան գործ չէին անի, որովհետեւ այն իրավունքները, որ 4-րդ բանակին տրված էին, 7-րդ բանակին տրված չէին, այսինքն՝ 4-րդ բանակը կարող էր անարգել մտնել իր տարածքից դուրս: «Կոլցոյի» ներս ընկած աղեղը հսկելու իրավունք ունի 4-րդ բանակը, դուրս ընկած աղեղը հսկելու իրավունք չունի 7-րդ բանակը: Մենք 7-րդին ստիպում էինք անել, բայց ի՞նչ դուրս եկավ: Նրանց ասացին՝ «ճամպրուկներդ կապեք, գնացեք»: Մենք էլ թե՝ այս ինչ հերոսություն արինք, տանկը վերցրինք... Գեներալ Ստարիկովը այդքան մարդասեր չլիներ, բոլորիս կգյուլլեր, կպրծներ: Խնդիրը այլ կերպ էր դրված: Նույն բանակը չէ՞: Եվ նույն բանակից պահանջում էինք, թե՝ ռուս զինվորներ, դուք կրակեք ադրբեջանցիների վրա: Հետո ես գեներալ Մուժիկովի հետ ծանոթացա: Ես այդ ժամանակ գնացի Շահումյան: Խնդիրներ կային, որ նրանց օդուժը օգտագործենք թշնամու կրակակետերը վերացնելու համար: Զենքն ու փողը մեզանից էին: Այսինքն՝ ես «Ֆագոտի» փողը տալիս եմ, դու փամփուշտ չես ծախսում: Արդեն չկար սովետականի խնդիրը: Մուժիկովը ինձ հետաքրքիր մի դիպված պատմեց: «Կովկասի ավիացիայի հրամանատարը թշնամաբար էր տրամադրված: Ասում է՝ հետախուզական թռիչքի եմ ուղարկում Շահումյան. վերջապես ի՞նչ է կատարվում: Այն օդանավն են խփում, որը ուզում է ձեզ օգնել: Եվ դա Աֆղանստանի պատերազմի մասնակից իմ ընկերն է: Մեջն էլ փոխգնդապետի են խփում: Այդ խփողին էլ ազգային հերոսի կոչում եք տալիս»: Ես էլ ասում եմ՝ այդ մարդը ճիշտ է, գնում եմ վրեժ լուծելու: Նստում եմ առաջին ուղղաթիռը, գալիս, Շահումյանը տակն ու վրա եմ անում: Մեղրյան Շահենը դրսում կանգնած էր: Այնտեղի հրամանա-տարն է դավաճանել, կամ ականներն են բացել Գետաշենի հար-ձակման համար: Հեքիաթներ են դրանք: Եթե մտածեինք, որ ռազմա-վարական ոչ մի դիրք չէր գրավվում, ու այդ ուժը պետք էլ չէր, գոնե Շահումյանը պիտի պահեինք: Եթե խելքներս գլխներիս լիներ, այդ բանը չէինք անի: Գնում, մտնում էինք փոսերը: Վերին շենը, Հայբարիսը թողած՝ Մարտունաշենում էինք դիրքեր դնում: Գետաշենի ջոկատներից մեկի հրամանատարը Սիմոնն էր: Գնացել եմ դիրքերը՝ ցեխակոլոլ («հուշարձանի», «լճի» դիրքեր կային), ինձ ասում են՝ դու մի բարձրացիր, դու հրամանատար ես: Բայց ուզում էի ամեն ինչ իմ աչքով տեսնել, թե ով որ դիրքում է: Տեսնեմ՝ փոսի մեջ են դիրքավորվել, արկը գալիս, ընկնում է գլխներին: Մարդկանց ողջ պահելու փոխարեն՝ հուշարձանն

էին պահում: Վահան Զատիկյանի հետ դիրքերը փոխեցին: Սիմոնը գնաց պատրաստություն տեսնելու: Տեսեք՝ հյուրասիրության ինչ հոգեբանություն է: Հեռադիտակով նայում էինք: Մեր ուղղությամբ անընդհատ կրակում էին: Վահանն էր, Հակոբը, որը զոհվեց: Կարաբիևի երկու փամփուշտ մեր գլխի վրայով անցան: Նայում ենք՝ մարմնեղ մի մարդ՝ դույլն ու մի պարկ ձեռքին, կանաչի է քաղում: Թշնամու թիկունքում է, կրակողները ներքեւում են: Գնացել էր թշնամու ինքնաթիռի տակ, որը կարող էր պայթեցնել: Գնաց քաղեց, ոչ մեկին վնաս չտվեց: Մինչեւ վերջ նայում էինք: Արդեն չէինք մտածում խփել, պատասխան տալ: Խփեինք, կարող է բացահայտվեր, մի բան լիներ: Թող կրակեն, փամփուշտը սպառվի: Էշի պես կրակում էին: Բարձրացանք դիրքերը նայելու, տեսանք՝ սապոգներով, ցեխակոլոլ: Ասում է. «Էս բանջարը սարքել եմ, խի՞ չեք գալիս մի բաժակ բան խմեք»: Ասում ենք. «Ա՛յ մարդ, սպասիր, այստեղ կռիվ է, գործ ունենք»: Թե՝ «Գիշերվա ժամը 12-ին ի՞նչ կռիվ, եկեք հաց կերեք, էսքան չարչարվել եմ»: Ասացի. «Սիմո՛ն, որ անցար թիկունքը, հրացանը, նռնակը ձեռքիդ, ինչի՞ չգցեցիր»: Ասում է. «Գցեի, որ ի՞նձ վնաս տայի»: Ասում եմ. «Ախր այդ ինքնաթիռը մենք ման էինք գալիս, որ օգուտ բռնենք, խփենք: Գետնի վրա էր, կարող է՞ր խփել»: Ասաց. «Դրա մեջ ի՞նչ կար, բայց ի՞նչ օգուտ դրանից, եթե հինգ հոգի էլ ավել մեռնեն մեջը: Դեմ առ դեմ չխփե՞ս, որ տեսնես՝ ում ես խփում»: Անցնում էինք Գետաշենի միջով, կանայք օրհնանքով մոտենում էին Վահանին: Էնքան կաթ էին ուղարկել նրան, որ չէր իմանում՝ ինչ անի, այդքան գինվոր էլ չուներ, որ գոնե նրանք խմեին: Ասում էր. «Գոնե մածուն, պանիր սարքեք կամ ուղարկեք Թաթուլին, մյուսներին»: Ասում էին. «Նրանց ուղարկել ենք, կարեւորը՝ դուք կերեք, խմեք, մեր աչքի առաջ հիմա էս բաժակից խմեք»: Ահա, այսպիսի ժողովուրդ էր: Առավոտյան ժամը հինգին արթնանում, սկսում էինք վազել: Սամսոնը ըմբշամարտիկ էր, մեզ կանչեց, որ տեսնենք, թե ինչպես է պարապում գինվորների հետ: Հարթ տեղ չկար, լրիվ թեքություններ էին, իսկ նա գնացել առաջին դիրքում՝ հարթ տեղում, գինավարժություններ էր անցկացնում, որտեղից անհավանական էր կենդանի դուրս գալը: Ահա, այսպիսի բաներ էին լինում: Հանկարծ մի հոգի պակասեր, ժողովուրդը մտածում էր, թե Գետաշենը հանձնում են: Մարդիկ էլ կային, որ գիշերցերեկ պառավների հետ նստած բամբասելուց բացի ոչինչ չէին անում, անպիտան մարդիկ էին: Սիմոնը ձիեր էր պահում, բայց այնտեղ ձի պահելու տեղ էլ չկար: Պետք էր դրանց կերակրել, ազատ տարածությունում բաց թողնել: Սիմոնն էլ ասում էր, թե ձիերը իրենց ճանապարհը, արածելու տեղը գիտեն, իրենք այդպես գնում, հասնում են մինչեւ Խանլար, ետ գալիս: Խոտի դեզեր էր ճանապարհին սարքել:

Ցուցադրաբար ձիով գնում-գալիս էր: Նույնիսկ մեզ բանակցությունների տարավ մի օր: Ձիով գնացինք, «БМП»-ով եկանք: Գետաշենում մեր առաջին ուրախությունը եղավ Հատուկ գնդի գալը: Բայց վատն այն էր, որ այդ գունդը արդեն հրամանի տակ էր, հրաման տվեցին՝ պետք է ետ գնար, բայց ես կարող էի հրաման տալ, եւ այդ ջոկատը ետ չգնար: Գնում, համոզում էի, որ հրաման տային՝ այսինչ տեղը գրոհել: Ինձ ասում էին. «Քո ի՞նչ գործն է, դու, ասենք, հետախուզության խնդիր ունես, գնա դրանով զբաղվիր»: Ջոկատներ կային, որ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս չէին ուզում կռվել, իսկ այդպիսիները ինձ պետք չէին: Երբ Երկրապահ զինապարտների կենտրոնական շտաբը ստեղծվեց, Վազգեն Սարգսյանը մի գիշերվա մեջ 305-րդ որոշումը գրեց եւ տարավ Վազգեն Մանուկյանին ներկայացրեց: Նա էլ հաստատեց: Դրանից անմիջապես հետո ժողով արեցինք Ամերիկյան համալսարանի շենքում: Կենտրոնական շտաբը այնտեղ էր տեղակայված: Վազգեն Մանուկյանը կառչած էր այն մտքից, որ շվեյցարական տարբերակով ազգային գվարդիա ստեղծենք: Բայց ոչ մեկի գլխում չէր տեղավորվում, թե ինչպես կարելի է զենքը տուն տանել, փակի տակ դնել, պլոմբն էլ տալ Վազգենին եւ միայն նրա թույլտվությամբ զենքը գործածել: Մի խոսքով, անցանք պրակտիկ գործի: Զինապարտների կենտրոնական շտաբը Քաղպաշտպանության շտաբի մոբիլիզացիոն բաժնի հիման վրա ստեղծվեց: Մյուս շրջաններում նշանակեցի քաղպաշտպանության շտաբի պետեր, ասենք՝ ջոկատի հրամանատար Ռաֆոյին՝ Վայքի շտաբի պետ: Գնում է, որ Մելքումովը վիզա դնի, Շիրխանյանը ստորագրի, վիզա չի դնում, ասում է, որ կրթություն չունի, նրանցը ստորագրել եմ, սրանը չեմ ստորագրի: Ասում եմ. «Բոլորն էլ շտաբի պետեր են, քո ի՞նչ գործն է՝ Ռաֆիկը կրթություն ունի, թե ոչ, դու ստորագրի՛ր»: Տեսանք, որ չի ստորագրում, սկսեցինք մենք անօրինական ստորագրել: Այսինչ շրջանում ազատում էին շտաբի պետի կաբինետը, այդ մարդիկ նստում էին: Բայց նրանք էլ գործ չէին անում, գոնե գործ անեին, նրանց կնշանակեինք: Հազարից մեկն էր համընկնում, որ քաղպաշտպանության շտաբի պետը եղել է նույն երկրապահի պետը: Քսաներկու հրաման եղավ, եւ այդ շտաբի պետերը դարձան Հատուկ գնդի վաշտերի հրամանատարներ: Այսինքն՝ 1990 թվականի սեպտեմբերին Հատուկ գունդը որ ստեղծեցինք, գրեթե բոլոր շտաբի պետերը նշանակվեցին վաշտի հրամանատարներ: Այդ նույն երկրապահ ջոկատը եկավ ատեստացիայի, որակավորում անցկացրինք, մեկ ու կես ամիս պահեցինք, եւ նոր միայն դարձան Հատուկ գնդի վաշտի հրամանատար: Բայց երկրապահ ջոկատների շտաբերը պետք է պահպանվեին, որովհետեւ մի մասը ուզում էր բանակ մտնել, մի մասը՝

ոչ: Առանց ջոկատի ամբողջության, առանց աշխարհազորայինի պաշտպանության՝ հնարավոր չէր: Դրա համար էլ երկրապահ ջոկատներին մինչեւ 1995 թվականը պահել ենք: Բանակի գոյության պայմաններում գալիս էին, զենք էին ստանում: Չգիտեմ՝ որտեղից, ինչ ճանապարհով էինք ֆինանսական հարցերը ձեւակերպում, բայց այդ հրամանը գրվում էր, աշխարհազորը զինվում էր ու գնում սահման: Պետական զենք, նաեւ աշխատավարձ էր ստանում աշխարհազորը: Ժամանակավոր պայմանագիրը յուրաքանչյուր անձի հետ չէինք կնքում, ցուցակով էինք անում: Հանկարծ որ մեր գործերը ստուգեն, կասեն՝ ինչու՞ եք անօրինական զենք կամ փող տվել:

Բ. - Կարելի՞ է ասել, որ Ղարաբաղում ավելի շուտ ջոկատներից անցան բանակային համակարգի, քան ՀՀ-ում:

Ա.Պ. - Ոչ, բանակային համակարգին գրեթե միաժամանակ անցան, բայց ջոկատները պահում էինք: Ղարաբաղում էլ կային ջոկատներ, որոնք չէին մտնում պաշտպանական կառույցների մեջ: Ղարաբաղի պաշտպանական շրջանների կառուցվածքը կազմակերպվեց: Ասենք՝ Արկադի Տեր-Թադեւոսյանի գնալը: Խնդիր էր դրված՝ պիտի զինվորական լինի: Նույնը Շահումյանը, Ֆելիքսի գնալը: Գնում, այսքան զենք էինք ուղարկում, տանում իջեցնում, անձամբ հանձնում: Իջեցնում էին, ասենք, Հաթերք, ստորագրում էին՝ Սերժից սկսած, այդ օրը կարող էր, ենթադրենք, Օնիկը՝ Հաթերքի հրամանատարը, ստորագրեր: Բենզինը իջեցնում էինք Քոլատակ: Արդեն գիտեինք մեր կետերը: Զենքերը ստանում էին: Համարակալված գրված էր, թե կոնկրետ որ ուղղությամբ, որ ամրացված շրջանն է գնում: Նրանցից պատասխան էր ստացվում, թե ում անունով են գրանցված այդ զենքերը: Հետո նոր ինքնապաշտպանական շրջանի հրամանատարը պիտի պատասխան տար: Մինչեւ զինվոր չէր լինում, զենք չէինք տալիս: Այդքան զենք էլ չունեինք: Նույն շրջանային կառուցվածքը մեզ մոտ էր: 1990 թվականին ամեն մի շրջան ուներ իր հրամանատարը: Եթե առաջ գալիս էին եւ իրենք էին որոշում, թե որտեղ կռվեն, արդեն առանց այնտեղի հրամանատարի չէին կարող: Ենթադրենք հարյուր հոգու վերցնում եւ գնում էի որպես ջոկատ կամ գումարտակ, Հատուկ գնդի գումարտակը անցնում էր կենտրոնական շտաբի, ասենք, Վարդենիսի կամ Նոյեմբերյանի շտաբի պետի տրամադրության տակ, անկախ նրա կոչումից՝ նրան էր զեկուցում: Սահմանամերձ բոլոր շրջանները համարենք պաշտպանական շրջաններ: Քսաներկու շրջան էր. այստեղ՝ Արմավիրը, Ապարանը, Քասախը, Էջմիածինը, Հրազդանը, Մարտունին, Աշտարակը: Հիմնական շրջանները, սահմանամերձ շրջաններից բացի, վաշտեր կազմեցին, որոնք սահմանին չէին: Բայց ոչ բոլոր շրջաններն էին կարող վաշտ կազմակերպել: Այդ

ջոկատները փորձ ունեին, դրանց հիմքի վրա Հատուկ գնդի վաշտերը պայմանագիր կնքեցին պետության հետ, ստացան զենք, հագուստ ու դարձան գումարտակի վաշտեր: Յոթ վաշտերը երեւանյան էին կոչվում, դրանք երեւանամերձ շրջանների վաշտեր էին, իսկ մնացածը՝ սահմանային: Սրանք ունեին ինքնապաշտպանական շրջաններ, իսկ նրանք մեկ գումարտակի տեսքով գնում էին օգնության եւ անցնում էին այնտեղի վաշտի հրամանատարի ենթակայության տակ: Եթե գնդի հրամանատարը չէր տեղափոխվում այնտեղ, վիճելու խնդիր չկար: Որովհետեւ նա էր տիրապետում շրջանին:

Բ. - Բայց այստեղից խելքը գլխին մեկը, ասենք, Ազգալդյանը գնում, ենթարկվում է Վագիֆին, ով՝ որպես զինվորական, շատ սահմանափակ էր:

Ա.Պ. - Խնդիրը այդպես էր: Օրինակ՝ երբ Լեոնիդ Ազգալդյանին ներկայացրին «Մարտական խաչի» համար, Սամվել Բաբայանն ասաց, որ նա իր զինվորը չի եղել: Նա չէր ուզում բանակ մտնել, բանակից դուրս էր: Բանակցությունն էլ Վագիֆի հետ էր ընթանում: Ես նրան կանչել եմ մի քանի անգամ, Սերժն է կանչել, բայց նա համոզմունքով ասում էր. «Ես բանակ չեմ մտնի, ես զինվորական չեմ»: Նույնը ասում են «Խաչակիրների» Կարոյի մասին, որ չի ցանկացել մտնել բանակ: Հովսեփին ես ստիպեցի, որ բանակ մտնի: Լեոնիդից հետո նա տասնհինգ-տասնվեց տարեկան տղաների հետ էր պարապել: Տասնչորս տարեկաններ էլ կային, օրինակ՝ Մանչը: Դրանից հետո Հովսեփը ընդունեց մեր առաջարկը: Հայկազը, որ Վագիֆի փոխարեն էր նշանակվել, հասկանում էր, ասում էր. «Այս ուժը չտանես, նրանք պիտի մնան թիկունքում, վարժվեն, մեծանան»: Բայց եկավ մի պահ, երբ այդ տղաները, հատկապես տասնյոթ-տասնութ տարեկանները, խնդրեցին: Բայց դա շատ վտանգավոր էր: Ետեւից կրակ, առաջից կրակ, Մարտակերտ, հուլիս ամիսն է: Հովսեփը եկավ, ասաց. «Տասնութ հոգու ես տանեմ, ես պատասխան կտամ»: Ասացի. «Եթե մի հոգի զոհվի, պատասխա՞ն ես տալիս»: Ասաց՝ այո՛: Գրոհի ժամանակ եկան, ասացի. «Որ այդպես է, դուք հեռավորությունը ինտերնատիվով կկանգնեք, հեռավորությունը զենքից»: Հրաշալի տիրապետում էին զենքերին: Տվեցի «АКС» եւ «Ֆագոտ»: Գրոհի ժամանակ առաջին «БМП»-ն խփեց այդ երիտասարդ զինվորներից մեկը: Ոգեւորվեցին, մի հատ էլ տանկ խփեցին: Դրանից հետո Հովսեփը վախեցավ, որովհետեւ կրակը եկավ հենց այդ ուղղությամբ: Մի քանի հոգի թեթեւ վիրավորվեցին: Հովսեփը եկավ գույնը գցած, թե՝ երեխեքին տուր, տանեմ թիկունք: Ասացի. «Մենակ եմ մնացել, նո՞ր ես ասում»: Բայց տարավ: Մի անգամ մեզ վերահաս վտանգից փրկեց Ռազմիկ Պետրոսյանը: Կարաչինարի ուղղությամբ թուրքական տանկ էր ճեղքել, մտել: Գնում էր ուղիղ Ռազմիկի վրա: Մոտիկ էր, չէր կրակի, աշտարակում էլ մարդ չկար, կափարիչը փակ էր: Ռազմիկը կողքից թռավ տանկի վրա, քիչ էր մնում ընկներ շղթաների վրա: Երբ մեզնից ցեխ էր ուզում, գլխի չէինք ընկնում, թե ինչի համար է ուզում, ասում էինք՝ նռնակ չկա՞, որ ցեխով ես տանկի դեմ կռվում: Ցեխը քսեց, տանկը միանգամից կանգնեց, չէր տեսնում, որ կողմն է, թշնամին որ կողմից է գալիս: Լյուկը, ամեն ինչը փակեց ու կանգնեց: Դիմացը այդքան զինվոր կար, կսպաներ բոլորին, ճեղքել էր արդեն: Բախտներս բերեց, քանի որ հետեւակը չեկավ: Սովետական ժամանակները չէին, որ հարյուր հոգու զոհ տաս, ինչ է թե՝ տանկի հետեւից վազես: Ետեւից դուրս եկավ: Հակատանկային նռնակ էլ կար մոտը, գցեց աշտարակի վրա, ինքը մտավ տակը, որ բեկորները իրեն չկպչեն: Աշտարակը պայթեց: Երեք հոգուն էլ գերի վերցրեց:

Ջոկատների թղթապանակների պատճենները ես մինչեւ հիմա պահում եմ: Յոթ հարյուր հոգի Ճահուժյանում էին: Մասիսի «Անդրանիկ» ջոկատն էր, «Արաբո» ջոկատը, Նոյեմբերյանի ջոկատը, Հատուկ գունդը ամբողջությամբ, մի գումարտակ, հրամանատարը Սամվել Եղիազարյանն էր, Համոն էր վաշտի հրամանատարը, Աշտարակի վաշտն էր այնտեղ, Կարոտի ջոկատն էր, Պոռշյան սովխոզի տղաներն էին՝ տասնութ հոգի: Դաշնակ Անդոն էր միշտ լրակազմը բերում, որ ես կարողանայի ուղարկել: Հովակիմյան Վարդանի ջոկատն էր այնտեղ, «Տիգրան Մեծ» ջոկատը: Անընդհատ իրար կողքի էին Արմենը, Խաչիկը, Սարգսյան Տիգրանը, որ զոհվեց, հրաշալի տղա էր: Կենտրոնական շտաբից ուղարկում էինք կոորդինատորներ: Ով գնում էր, ետ չէր գալիս: Ամարասի Արթուրին էլ վերջին անգամ որ ուղարկեցինք, ետ չեկավ: Խաբեց ինձ, թե զենքի հետ գործ չունի, հավատացյալ է դարձել: Ասացին, թե տասը օր է՝ Պարգեւ սրբազանի մոտ է: Օդակայանում բռնեցի, ասացի՝ էս ի՞նչ ես անում: Կոմանդոսին ասացի. «Էս ինչու՞ հետ չես ուղարկել»: Ասաց. «Նա իմ հետախույզն է»: Այդպես շատերը գնում, հետ չէին գալիս: Մի Արմեն ունեինք, Խոջալուի կոորդինատորն էր, Ջանհասանում հերոսաբար զոհվեց, մենակ՝ յոթ թուրքի շրջափակման մեջ, նռնակով իրեն պայթեցրել էր: Խարբերդի գերեզմանոցում է թաղված: Այդ տղան գնաց, որ զենքը հանձնի, ետ գա: Բայց Ծուշիի օպերացիային ո՞նց չմասնակցեր: Ետ չեկավ: Մայիսի 4-ն էր: Վազգենն ասաց. «Այս անգամ Դալիբալթայանին կտանես, կներկայացնես: Նրա ոտքը խերով է: Նայիր՝ չկռվեն, Կոմանդոսի հետ հարցեր կարող է լինեն»: Ասացի՝ չեն կռվի: Բայց իմ ճանապարհը այնպես էր, որ Սերժ Սարգսյանը եկավ, դիմավորեց վերջին զենքերը, ուրախությունից մոռացավ ինձ տանել: Մնաց Ֆելիքսի մեքենան: Ասացի. «Ես գնում եմ Կոմանդոսի մոտ: Ուղիղ գնանք, էլ ինչու՞ ենք

գնում, Սերժիկը ներկայացնի»: Տասը հատ էլ «БКТ» գնդացիր էի տարել այդ օրը, ինչին սպասում էին: «БМП-2» ունենք, արկ չունենք, չլինի՝ կռիվը չենք սկսում: Առաջին անգամ հարցը լուծվում է: Լենինականից Միքայելը «БМП-2»-ը բերեց: Վրաստանից էր բերել: Ղարաբաղում 120 միլիմետր տրամաչափի նռնականետ կար, բայց արկ չկար: Իսկ դա ամենալավ զենքն էր: Սերժը իր նպատակին հասավ: Քանի՞ կիլոմետր է մինչեւ Շուշի: Բայց չէինք մտածում, որ Շուշիի օպերացիան նաեւ Ասկերանն է, Մարտակերտը, Հադրութն է՝ Կարմիր շուկայով, Խծաբերդը: Չորս կողմից խփում էին, որ Շուշին թուլացնեն: Աշտարակի տղաները զանգում էին, թե՝ մեզ ուղարկում է Ասկերան, մենք եկել ենք Շուշին ազատագրենք, կամ բողոքում էին, թե իրենց ուղարկում են Ջանհասան կամ Քյոսալար: Շուշիի օպերացիայի ժամանակ մի քանի ունիկալ բան արեցինք: Հարյուր վաթսուն արկ ուղղաթիռի «Նուրս» ուղարկեցի Գորիս, որ Խոյլունց Միշան պահի. մոտիկ է, անհրաժեշտության դեպքում հարմար է այնտեղից վերցնելը: Նախքան այդ Բալահովիտի պահեստներից երկու ուղղաթիռ լցրինք, ուղարկեցինք այնտեղ, որ կարող է ամեն վայրկյան մի բան պատահի, չկարողանանք ուղղաթիռը թռցնել: Եվ ուղղաթիռները պիտի մնային այնտեղ: Խոյլունց, դու Խոյլունց: Ասաց. «Ոչ ոքի չասես, դու համաձա՞յն ես այս ծրագրին»: Ասացի. «Ի՞նչ ծրագիր»: Ասաց. «Սրանց ուշադրությունը մի քիչ շեղենք, մի քիչ Լաչինի վրա կրակեն, մի քիչ էս կողմի»: Ինչքան այդ կողմում գյուղեր կան, անունը տվեց: Ասացի. «Հո խելագա՞ր չես, ի՞նչ ես ասում, սպասիր, ես գամ»: Մտածեցի. «Եթե ասում է մի քիչ կրակենք, ուրեմն՝ կրակել են, ես գիտեմ իմ կադրերին»: «Արաբոյի» տղերքին վերցրի, թռա: Որպեսզի երկու անգամ չգնամ ու գամ, որոշեցի նրանց տանել Գորիս, մանավանդ որ սիրահարված էին Դավիթ բեկին: Գրոհները այնտեղից միշտ լավ էին ստացվում: Որտեղից վատ էին ստացվում, այնտեղ չէին գնում: Ասացին՝ «Դավիթ բեկի» տղաներին էլ վերցրու: Ճանապարհը թեքեցինք, եկանք: Մի մասին պահեցի օդանավակայանում, նաեւ Նաիրիի, Հրազդանի ջոկատների տղաներին, որոնք փորձ ունեին, ուղղաթիռով մաղում էին, իջնում շշպռում, դուրս գալիս: Այդպես իջել են Նոյեմբերյան, Իջեւան, Շամշադին: Ես իջել եմ, ժողովուրդը տեղյակ չի եղել, գռռացրել եմ, նորից նստել եմ ուղղաթիռը, ետ եկել: Համոն էր, Գեղամը, Նիկողոսյան Ստեփանը, Էրիկը, որ թռիչքներն արել են: Գնացինք, տեսնենք՝ մի ուղղաթիռ է գալիս. «լեւի» ուղղաթիռ է, թե թուրքի՝ չգիտեմ: Համոյի հետ էի, տեսնեմ՝ Շուռնուխի վերեւով խփելով, մաքրելով գալիս է: Կարծում ենք՝ թշնամու ուղղաթիռ է, այնքան մոտ էր խփում սահմանին: Մի վայնասուն բարձրացավ: Ռացիայով լսում էինք: Կապվեցին իրար հետ՝ Ստյոպ, Պետրոսյանն եկել է, դուրս արի: Դուրս

նկան, ասացի՝ ձայն չհանեք: Եկա Գորիսի օդանավակայան, հարցրեցի, թե Միշան որտեղ է: Ասացին, որ Միշան Խնձորեսկում է: Գնացի Խնձորեսկ, տեսնեմ՝ Միշան ու «Տիգրան Մեծի» Արմենը թեւ թեւի տված, երգելով գալիս են: Հեռադիտակով Տոդի կողմից լրիվ նայել եմ, թե ինչքան վնաս են տվել: Չէին էլ հասկանում, թե ում մեքենան է: Ասում են. «Ալիկն էլ ասում ա՝ հլա սպասիր, ղեկավարության հետ համաձայնեցնենք»: Այդ խոսքը լսում եմ, մյուս կողմից իջնում եմ, ասում. «Ձեռքերդ վե՛ր, երկուսդ էլ: Դուք «Նուրս» հրթիռները ինչի՞ վրա էիք կրակում, գիտե՞ք, որ ուղղաթիռը ընկել է»: Թե՝ ի՞նչ ուղղաթիռ: Ասացի. «Նիկողոսյան Ստյոպը ընկել է, խփեցին թուրքերը»: Գույները գցեցին: Սա շուռ եկավ Արմենի կողմը. «Բա որ ասում էի՝ ավանտյուրա է»:

Կային ջոկատներ, որոնք հայտնի չէին, նրանց մասին չէին ասում: Սիսիանի Աշոտի ջոկատը: Աշոտը շատ հետաքրքիր, արկածային տիպ էր: Նա ու Ազոյան Հովիկը տարբեր էին: Ազոյանը մեծ էր, իր խորհուրդներով նրանց տաքարյունությունը տեղն էր գցում: 1993 թվականին՝ Քելբաջարի օպերացիայի ժամանակ, Նարեշտարով պիտի մտնեինք, հետո անցնեինք Վանք գյուղի ներքեւը: Գնում եմ, Բաբայան Սամվելի հետ խոսում, պայմանավորվում, որ Սիսիանի տղաների առաջադրանքը փոխենք: Սրանք ուզում էին, որ մի երկու օր ուշ գրոհենք: Այդ գյուղում մի դավաճան կար, որին դեռ «Մահապարտների» ժամանակներից գիտեի: Ընկել էին նրա ազդեցության տակ ու չորս-հինգ օր հետո պիտի գրոհեին: Առաջադրանքը փոխվեց: Նույն օրը պիտի գրոհեին: Երեկոյան տղաները տրամադրված չէին: Այնտեղ տարբեր ջոկատներ կային, հարյուր քսան հոգի էին: Գիշերը շարեցինք նրանց, ասացինք, որ առաջադրանքը փոխում ենք, «այստեղ մենք չենք հրամայում, Պաշտպանության կոմիտեի հրաման կա, դուք չեք որոշում, առավոտյան՝ ժամը 6-ին, պետք է վերցնենք Նարեշտարը»: Ասաց. «Միայն Նարեշտա՞րը, ինչի Նարեշտարը վերցրած չի՞», Ազոյան: Ասում է. «Չէ՛, մեզ դաչաղի տեղ են դրել: Ո՞նց ենք վերցրել: Հլա վերեւները վերցրած չի, ներքեւները վերցրած չի»: Դու մի ասա՝ մի անգամ մտել, դուրս են եկել: Առավոտ շուտ գրոհը սկսվում է: Ես գնացի Դրմբոն, երեկոյան ետ եկա: Այդ ուղղությամբ Մոնթեին հանդիպեցի: Գիշերային օպերացիայի խնդիր կար: Սամվելն ասել էր, որ Մոնթեից միայն ես կարող եմ ուզել, թե՝ դու տվել ես, դու էլ ուզիր, մի վեց հատ հավաքենք, գիշերը Պուշկին յալում մի բան անենք: Այսինքն՝ պլանավորված բան կար: Գիշերը քարտեզը նայեցինք: Հրամանատարները եկան: Այդ ժամանակ դեռեւս Ռեմիկն էր, Յուրան: Չափարի ուղղությամբ Արշոն էր մի գումարտակի հրամանատարը, բայց Յուրայով էր որոշված, շտաբի պետ էր: Հետախուզությունը վերցրել էր

իր ձեռքը, որ մասնակցեր օպերացիային: Խորհրդակցությունը վերջացավ, որոշվեց, որ Պուշկին յալի ուղղությամբ գրոհենք: Բայց ոչ ոք չի ուզում գնալ Պուշկին յալ, ոնց որ Շուշիի ժամանակ Քելբաջար չէին ուզում գնալ: Բայց եթե Պուշկին յալը չպահեինք, Քելբաջարի հարցը ո՞նց կլիներ: Վերադարձա եւ գնացի Աշոտենց մոտ: Աշոտը կռվի մեջ էր: Մինչեւ գնացի Նարեշտարի գծի մոտ, Հովիկը եկավ: Ազոյանը հարցրեց՝ ո՞նց է: Ասաց. «Ամեն բան լավ է, բայց ես սրիկաները մեզ դաչաղի տեղ են դրել»: Ասում եմ. «Էդ ո՞նց են, է՛, դաչաղի տեղ դրել»: Ասում է. «Պլետներն առած՝ մեր ավտոմատների դեմ ձիերը քշում են: Պլետներով՝ հու՛յ, հա՛յ: Կարող է ձեռքներին էլ ատրճանակ կա, չենք տեսնում: Մեզ լրիվ դաչաղի տեղ են դրել»: Հարցրի. «Բա ի՞նչ արիք»: Ասաց. «Ձիերը ափսոս էին, ինչի՞ կրակեինք: Ձիերը վերցրինք: Տեսանք, որ պլետներով մեր կողմն են գալիս, թոկը գցեցինք, տակը ականներ դրեցինք: Ձիերը ականների վրայով չէին գնում, սրանք ընկան, ականը պայթեց, ձիերը թոկերը կտրեցին, անցան վրայով»: Չորրորդ օրը պիտի գրոհեին: Ժայռերի տակով մտան: Այնտեղ թունել կա: Անցել էին սահմանը: Ոչ ոք չգիտեր, թե սիսիանցիները որտեղ են: Ռադիոկապն էլ ընդհատվել էր: Որ մտան հաթերք, ոչխարների հոտը այս կողմ եկավ, նոր իմացանք, թե որտեղ են: Հերոսական գործ էին անում Սիսիանի տղաները: Եթե ուրիշ ջոկատները բողոքում էին, հետո գնում ստուգում էինք, ապա Սիսիանի տղաները երբեք չէին բողոքում: Պուշկին յալ գնալու ուրիշ դեպք էլ պատմեմ: Սրանք հերոսաբար գնացին, բայց ուրիշ բան էլ եղավ: Այդ ջոկատը զինաթափված է եւ գրանցված որպես դավաճան: Լավագույն զենքերը տվեցինք: Հարյուր երեսուն հոգու անուն էին տալիս, վերջում երեսունը եկան: Կարմիրի սահմանն էին ուզում գնալ: Այդ երեսուն հոգին ասացին՝ մենք ամեն տեղ էլ կգնանք: Նրանց հավաքել էինք Ալաշանում, որ պիտի գնան: Ադմիրալ Սամոյի ջոկատն էր, Սերժիկի «Արծիվ-24»-ն էր, եւ սրանց ջոկատը: Շարեցինք, որ առաջադրանք տանք գիշերային օպերացիայի համար: Նրանք արդեն տեղանքը լավ գիտեին, գնացել-եկել էին, հերթապահություն էին արել: Ասացին, որ իրենց կոշիկները պատռված են, բայց նոր էին շոր ստացել: Սամվելին ասացի՝ կոշիկ չունե՞ս: Նույն րոպեին կոշիկ տվեց: Մեկը ասաց՝ շորս է պատռված, մյուսը՝ գոտիս, մեկն էլ ասաց՝ ես հիվանդ եմ: Շոր ու կոշիկ տվեցինք: Հիմա էլ պատճառ բռնեցին, թե զենքերը լավը չեն: Նոր ավտոմատներ էին, ասացին՝ բուլղարական են: Սամվելին ասացի՝ սովետականը չունե՞նք: Դրանք էլ տվեցինք: Ասացին՝ նռնակներ չունենք, նռնակներ էլ տվեցինք: Ամեն ինչ տվեցինք: Եկանք խորհրդակցելու, որ քսան ջոկատները մնում են այստեղ, որ ուղարկենք Չափար, քառասունը՝ Պուշկին յալ: Քսան հոգին եկան, որից տասը իբր հիվանդ էին: Հրամա-

նատարը ասաց. «Տղաները հրաժարվում են, ուզում եք՝ դավաճան գրեք»: Ասացի. «Այստեղ ստորագրիր, որ դու դավաճան ես: Հիմա չեմ զինաթափում: Գնում ես Ստեփանակերտ, ներկայանում Սերժ Սարգսյանին, զենքերը թողնում: Այնտեղ ուրիշ ջոկատներ կան, զենքերը նրանց կտան: Ես ստորագրում եմ այս փաստաթուղթը: Հանկարծ չփորձես չներկայանալ, հետդ էլ մարդ եմ դնում»: Գնաց, զենքը՝ մինչեւ վերջին փամփուշտը, հանձնեց, «դավաճան» գրության տակ ստորագրեց ու եկավ Հայաստան: Այդ մարդիկ այդ տեսակն էին: Ասացի, որ ես Չափար ուրիշ մարդ կուղարկեմ: Գնացի Ռոլանդ Քելեշյանի ջոկատից՝ «Արծիվ-28»-ից, քսան հոգու վերցրի, ուղարկեցի Չափար՝ Արշոյին օգնության: Վազգեն Մանուկյանը օպերացիայից առաջ եկավ Չափար, մեծ ալյումինե բաժակով գարուխով ճաշ տվեցինք: Այդ տղաները ականներ էին դրել մեր ետեւից: Հետո հայտնաբերեցինք այդ խումբը: Ստեփանակերտցի Սամվել Կարապետյանը, որը գումարտակի հրամանատար էր, նրանց դրած ականից զոհվեց: Մենք անցանք, մեր ետեւից տանկը անցավ, ականը պայթեց: Երկու անգամ նույն նախարարի ոտքերի տակից ականը հանեցինք: Անցել ենք այդ կողմով, մինչեւ ետ եկել՝ դրել էին: Ես ու Դալիբալթայանը կանգնած էինք, Ամարասի Արթուրին ասացինք. «Դու իջիր ներքեւ, տեսնենք՝ ինչ ես մտածել հետախուզության համար»: Քյալբաջարի ուղղության մասին եմ ասում: Նկարահանեցինք այդ պահը, ետ եկանք: Հող էր լցված ճանապարհի վրա: Հետախուզությանը տվեցինք, այդ մարդկանց գտանք: Բայց ահագին վնաս տվեցին: Ռադիոկայանը գտանք, թե ոնց էին կապ պահպանում թշնամու հետ:

Սա ճիշտ կոորդինատներ է տալիս, թե այսինչ ավտոմատը գցել են, փախել: Մի կազակ ունեինք, շատ լավ տղա էր: Նա ռացիայով լսում է ամեն ինչ, ասում. «Ո՞նց թե, փախչու՞մ ես, կխփեմ»: Այսինքն՝ մերոնք դուրս էին գալիս մերոնց դեմ: Ասում ենք. «Քեզ ո՞վ է իրավունք տվել այդ ալիքը մտնել, դա հետախուզության ալիքն է, դուրս արի այդտեղից, միայն ես իրավունք ունեմ մտնելու»: Կազակի անունը Ռենարտ էր:

Բ. - Մեր բերած կազակների խմբի՞ց էր:

Ա.Պ. - Այո, այդ նույն խմբից էր: Ռենարտը դուրս է գալիս դրանց դեմ: Լավ է, այդ պահին ես կարողացա կապվել Ռենարտի հետ: Հենց Սլավիկին է խփում: Թուրքերն իջել են ավտոմատների ետեւից, ինքը տեղյակ չի: Ու արդեն Սլավիկը դրել է, որ դրանց վերցնի, համ էլ խփի: Այդ օպերացիան մանր-մունր ստացվում է: Այդ պահին Ռենարտին ռուսերեն ասում եմ՝ ես եմ ասել, որ ավտոմատները դնեն ջրի մեջ: Այսինքն՝ ավտոմատի «պազիվնոյ» կար: Ասացի. «Խակեիստները այդտեղ են, որ գան ականապատեն, այդ ավտոմատների ետեւից են գա-

լիս»: Ռենարտը, եթե այդ պահին թողնեին, մաղում էր, որովհետեւ ինքն էր առաջինը տեսել: Լավ է՝ լսեց, չարեց: Ասացի. «Ո՞վ է այդ պահին եղել քեզ մոտ, ո՞վ է իմացել այդ գաղտնիքը, գոնե պիտի տեսնի չէ՞, որ ավտոմատը ընկած է ջրի մեջ»: Բայց ինքը չէր լսողը: Սա էլ չմատնեց, թե ով է իրենց ջոկատի հրամանատարը: Երկրորդ շարժը ո՞նց իմացանք: Ինձ ասացին, որ նա հաղորդում է: Ապատեղեկատվություն ենք տալիս, որ իբր վեց հոգու ուղարկում ենք, որ ցորենը քաղեն, հաց չկա արդեն: Հրամանատարներն էլ են գնում: Տղերքը վերեւում էին: Ասացի. «Բոլոր հրամանատարները գան ցորենը քաղելու: Դու էլ կգաս, Յուրա՛»: Թե՝ ոտքս ցավում է: Ասացի. «Կոմբայնը բերենք հնձելու համար: Կոմբայնը առաջ կգցենք, մենք մի երկու տեղ կհնձենք, կոմբայնը չի կարող ամեն տեղ մտնել»: Սա՝ «Հա, հեսա գալիս եմ»: Ասացի. «Տղե՛րք, ոչ մեկդ չգնաք, մեխանիզատորին ասեք, թող կոմբայնը կանգնեցնի, իբր թե խոտ է քաղում, ինքը իջնի, հանկարծ մեջը չմնա»: Նարեշտարի «Գրադը» ուղիղ կոմբայնի առաջ էր: Տասը-տասնհինգ րոպե հաշվել էին, որ մենք այնտեղ կլինենք, արդեն ցորենի արտը հնձելուց կլինենք: Ինքն էլ առանց նայելու ճամփի վերեւից ասում է. «Տղչնի ցելին խփի՛ր, կոմբայնի առաջից են գնում»: Ռացիան բռնեցին: Դաշտը լրիվ վառվեց: Գնացինք Սամվելին, Սերժիկին ասացինք, որ այսպես է: Այն ժամանակ գնդակահարության օրենքը նոր էր ընդունվել: Ասացին՝ մի բան էլ բռնեք, նոր: Բռնեց, բերեց, Դանիելյան Նորիկը գնդակահարեց: Մինչեւ հիմա ասում են, որ Նորիկին Յուրայի եղբայրներն են խփել Բալուջայի մոտ:

Բ. - Բայց ասում են՝ ուրիշ կերպ է եղել. միասին նստած հաց են կերել, այդտեղ խփել են, բերել գցել մեքենայի մեջ:

Ա.Պ. - Բա ասում են, թե նռնականետով են խփել, Սամվելի վրա էին գցում:

Բ. - Չէ, ավտոմատով կրակոցներ են եղել:

Ա.Պ. - Երկրապահի համագումարին մասնակցեց, վարչության անդամ ընտրվեց: Դրանից մի տասնհինգ օր առաջ երեխեքին կնքել էինք, մյուռոնից հանելուց ես էի, ինքն էր, Մորուք Ռաֆոն, Ագոն: Տեր Հովհաննեսի հետ գնացինք: «Մահապարտների» երեխեքի կեսին կնքեցինք, կեսին էլ բերեցինք, որ Դադիվանքում մեռոնահան անենք: Հետո եկանք Դրմբոն, մատաղ արեցինք: Նորիկն էր մորթում: Քելբաջարի խալիներից էր, թե ինչ, փռել էինք տակներս: Չգիտեմ՝ ով էր, եկավ, ասաց. «Այդ խալին տակներիցդ հանեք: Այս խալին որտեղ տանում են, վատ բան է պատահում: Ո՞վ է բերել: Ձեզանից մեկին այս քանի օրում մի բան է պատահելու»: Ռաֆոյին հարցրի, թե ով է բերել: Ասաց. «Չգիտեմ, գյուղից բերած կլինեն»: Նորիկն ասաց. «Որ էդպես է, եկեք այս կողմ, կանաչների մեջ նստենք: Այսօր խփվենք, թե տասը օր

հետո, ի՞նչ տարբերություն»:

Ռաֆոյին սկզբում որպես թիկունքային գիտեինք: Բայց տեսել եմ կռիվների մեջ: Նա շատ էր ետ գալիս, Սլավիկն էր մնում հիմնականում: Ղարաբաղի ջոկատները որ սկսեցին կազմավորվել տեղացիներից, այդ ժամանակ շատ օգուտ տվեց: Ագիտացիա էր անում, ասում էր, թե որտեղից ինչ կարող ենք ճարել: Շատերին ճանաչում էր: Օրինակ՝ ասում էր, որ գնում ես, քանի հոգու կարող ես տանել, ենթադրենք, Փառախլուի ջոկատ: Մեկ առ մեկ կարողանում էր անուններով իմանալ: Բայց որ գնում, մի բան անում, գալիս էր: Հետո Սամվելի հետ վիճել էր: Ինքը վաշտի հրամանատարությունից ազատված էր, արդեն մեզ հետ էր գալիս: Ես գնացել եմ Հոռաթաղ՝ նրանց տուն: Տանն ինչ եղել է, բերել է, գինվորներին հասցրել Քյալբաջար: Ճիշտ տեղ հասցնելու ճանապարհներն էր ցույց տալիս:

Բ. - Նրան հիմնականում խանգարում էի՞ն:

Ա.Պ. - Մեր կողմից հիմնականում ընդունվում էր, Հայաստանի ջոկատները ընդունում էին նրան: Երբ մտավ Հատուկ գունդ, արդեն նորմալ իր պարտականությունները կատարեց: Շրջանների մարդկանց մեջ մի ներքին հակադրություն կար: Մարտակերտի Յուրան, Նավթալյան Արմենը միշտ կոնֆլիկտ ունեին կենտրոնի հետ:

Բ. - Կորուստները Լենինավանում, մյուս տեղերում կապում են հրամանատարության հետ:

Ա.Պ. - Նորիկը Ջանյաթաղում աչքի ընկավ: Յուրան էր երեք գծերում հրամանատարը: Այնտեղ Վագիֆը զոհվեց: Հայկազը նշանակվեց շտաբի պետ: Հայկազը այդ տարիներին նույնպես բողոքում էր բոլորից: Անընդհատ ասում էր՝ ես դուրս գամ, գնամ: Համոզում էի, թե՝ դու մնա դեռ: Ասում էր՝ այսպես կռվել չի լինի, ոչ տուն ունեմ, ոչ ընտանիք: Մարտակերտը ամենադժվար տեղն էր, բայց ով ընկնում էր, պատճառներ էր փնտրում, որ դուրս գար: Մարտակերտում չկար այն ցայտուն հրամանատարը, որ ամեն ինչ իր ձեռքը վերցներ: Եթե մարտակերտցիները չէին ուզում, որ հայաստանցիները հրամանատար լինեն, ապա Նորիկն ուզում էր, որ Երեւանից գան, օգնեն իրենց: Նորիկը, որի կրթությունը մի քիչ տեղն էր, սկսեց կապ հաստատել լրագրողական աշխարհի, բարեգործական կազմակերպությունների հետ: Երկրապահների համագումարում շատ գաղափարական ելույթ ունեցավ: Չէինք սպասում: Լրիվ հասունացել էր, ինքնակրթությամբ էր դրան հասել: Մոտ երեսուն րոպե խոսեց առանց նախօրոք գրելու: Վարչության անդամ ընտրվեց: Առաջարկություն եղավ, որ նրան տեղակալ ընտրենք, տեղակալների մեջ մի դարաբաղցի լինի: Ասաց, որ ինքը այդքան ժամանակ չունի: Երբ երկրապահները, ասենք, Վազգենը ասում էին՝ «արի, դաչայում քնիր», դա հակասում էր ներսի կանոն-

ներին: Միքայելը Արարատյան դաշտի հրամանատարն էր, Լենդրուշը՝ Թալինի, նրանք, Աբոն մոտիկ էին որպես սասունցի, ինչ-որ տեղ լեգենդ էր: Լենդրուշը եկավ, հարցրեց, թե ուր է Վազգենը: Ասացի՝ չկա: Ասաց. «Բա բան ըմ չի լինի՞ խմենք»: Վազգենը այդ օրը տուն չեկավ: Պառկեց ու Վազգենի անկողնում քնեց, ինչը ես ինձ թույլ չէի տա: Ասաց. «Վազգենն ուրտեղ ա քնում, գյադա»: Ասացի՝ այնտեղ: Ասաց. «Դե, ես կեթամ, էնտեղ կքնեմ»: Կոշիկներով էլ քնեց: Առավոտյան Վազգենը եկավ, ասաց. «Էս ո՞վ է քնած»: Ասացի՝ Լենդրուշն է: Ձայն չհանեց: Մի ադյալ վերցրեց, գնաց պատշգամբում ցեմենտի վրա քնեց: Այդ նույն ձեւի, ենթադրենք, Նորիկն էր իր համար: Բերեց, ասաց՝ այստեղ դու պիտի քնես: Նրանք էլ մտածեցին, թե Նորիկին ուր բերին, բարձրացրին: Առավոտյան ելանք, ասինք. «Ի՞նչ կա, ի՞նչ ես վերցնում, արի այստեղից ստացիր, գնա»: Ամեն ինչ տվեցինք, գնաց: Բայց ես նրան ասացի՝ զգուշացի՛ր: Առանց Սամվել Բաբայանի այսպիսի օպերացիա անելը ես չեմ պատկերացնում: Սամվելը բոլորի հոգեբանությունը լավ գիտեր:

Պատմում է Ռազմիկ Պետրոսյանը

(1970 թ. Ստեփանակերտի «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի մարզիչ, 1988 թ. ԼՂ «Կռունկ» կոմիտեի անդամ, 1988-1990 թթ. Արցախի Ազգային խորհրդի անդամ, ԼՂ կամավորական ջոկատների շտաբի պետ, 1990-1995 թթ. ՀՀ ԳԽ պատգամավոր, 1992-1998 թթ. «Ցոր» գնդի շտաբի պետ, 1999-2003 թթ. ԼՂՀ ՆԳ նախարարի տեղակալ, գնդապետ):

11.11.1990 թ. Ստեփանակերտ:

Հունվարի 18-ին՝ ժամը 15-ն անց 45 րոպեին, ութսուն հոգի՝ զինված, դիմակներ հագած, վազքով հայտնվեցին ստադիոնում: Ինձ մոտ ստեփանակերտցի մի փականագործ էր եկել, աշխատանք էր խնդրում: Ասացի, որ դա սեզոնային գործ է, մարտ ամսին գա, մի բան կճարենք: Ես միայն ոտնաձայներ լսեցի, ու դեռ խոսքս չավարտած՝ ոլորեցին թեւերս: Փոխգնդապետը ցատկեց դեպի ինձ, մազերիցս բռնեց ու ետ քաշեց, ձեռնակապանք հագցրին: Երկու հոգի էլ փականագործի ձեռքերը այնպես թափով ոլորեցին, որ խեղճ մարդու ձեռքը ջարդվեց:

- Շտապ օգնություն կանչե՛ք, - դիմեցի զինվորներին:
- Մի անգամ էլ ձեն հանես, կգնդակահարեմ,- կարճ ավտոմատի ծողը քունքիս սեղմելով՝ չարացած ասաց զինվորը:

Հաշվապահի տեղակալ Օֆելյա Գրիգորյանը, այս ամենը տեսնելով, ուշագնաց է լինում: Ստադիոնի պահակ Բենիկն ու կինը՝ Ռայան, եւս ուշագնաց են լինում:

- Ես Հայրենական Մեծ պատերազմի մասնակից եմ,- ասաց տնօրենի տեղակալ Սերգեյ Սագյանը:
- Замолчи, увю, сука - սաստում է սպան:
- Ո՞ւ ր են նռնակները, որտե՞ղ են զենքերը,- դիմում են ինձ:
- Ի՞նչ նռնակ, ի՞նչ զենք,- ասում եմ ես,- ես չգիտեմ, թե ինչի մասին է խոսքը:

Սեղանին նռնակ էր դրված, որը երեխաներն էին գտել ու ինձ մոտ

բերել: Սկսեցին քանդել, ապա պահարանները շրջել, ամեն ինչ շուռ տալ: Չգիտեի, թե ովքեր են: Սպան ռացիայով կապվեց ու հաղորդեց, որ ոչինչ չեն գտել: Պարզ լսեցի պատասխանը.

- Ищите, твою мать!

Ռաշիդ Մանգասարյանին, որը ստադիոնի հանդերձարանում լոգանք ընդունելու էր եկել, ձերբակալեցին եւ ինձ հետ ֆուտբոլի դաշտում իջած ուղղաթիռի մեջ խցկեցին, յոթ զինվորների ուղեկցությամբ տարան: Խոսակցությունից հասկացա, որ ՊԱԿ-ից են: Ուղղաթիռի պատուհանից ցած նայեցի ու տեսա ծովը: Մտածեցի, որ Կասպիցն է: Իջանք Սումգայիթի Նասոսնի օդակայանում: Ինչ-որ ամբոխ էր հավաքվել: Երկու զինվոր թեւերիս տակ մտան ու վազքով տարան:

- Գուցե զուգարան գնամ,- ասացի ես:

- Нет, ...твою мать! - պատասխանեց զինվորը:

Ինքնաթիռ նստեցրին: Ուրիշ յոթ զինվորներ նստեցին: Երեքը միջինասիացիներ էին, մեկը օսեթ էր, երեքը՝ ռուսներ:

- Լավ եք պրծել, մեզ հանձնարարել էին թույլ չտալ, որ ձեզ հոշոտի ամբոխը:

Երկու ժամ մեր ինքնաթիռը չէր թռչում: Ռազմական ինքնաթիռներ էին իջնում, որոնք անընդհատ դեսանտայինների էին բերում՝ Բաքվի 1990-ի հունվարյան ապստամբությունը ճնշելու: Վերջապես շարժվեց մեր ինքնաթիռը: Չորս ժամ տեւեց թռիչքը: Կրասնոդար հասանք: Ձեռքիս օրացույց կար՝ Նժդեհի նկարով: Հետեւի մասում գրեցի՝ «Ինձ Կրասնոդար են տարել», տասը ռուբլիանոցի հետ տվեցի օսեթ զինվորին՝ խնդրելով, որ հեռագիր ուղարկի եղբորս: Բանտախուց գցեցին: Երկու օր դուռը չէին բացում: Դուռը թակեցի:

- Ինչո՞ւ եք ինձ ձերբակալել,- դիմեցի ես:

- Որտեղի՞ց ես,- հարցրեց ձայնը:

- Լեռնային Ղարաբաղից:

- Լռի՛ր, բոզ, Բաքվում մերոնց կոտորում են, դուք էլ եք մարդասպան:

- Հա՛ց տվեք,- պահանջեցի ես:

Մենախուց տեղափոխեցին: Նեղ սենյակ էր, ու միայն մետաղյա աթոռին կարող էի նստել: Հաջորդ օրը տարան բանտ, նետեցին 28-րդ խուցը: Աշխարհում ինչքան ճանճ կար, ասես այդ բանտում էին հավաքվել: Բայց այստեղ զուգարանակոնք ու մետաղյա քնելատեղ կային: Սկսում եմ ճանճ սպանել: Քաջ Նազարին հիշեցի: Ինքս ինձ ծիծաղում էի: Սոված էի: Երեկոյան դռան ճեղքը բացվում է:

- Որտեղի՞ց ես:

- ԼՂԻՄ-ից:

- Ազգանունդ:

- Պետրոսյան:

Տասնութ տարեկան տղա էր: Պիջակս ծալում, գլխատակիս եմ դնում, փորձում քնել: Հինգ րոպեից ավելի մի դիրքում չէի կարողանում մնալ: Ողջ մարմինս ցավում էր: Տասնութամյա տղան չորրորդ օրը թերթի մեջ փաթաթած ուտելիք է նետում դռան ճեղքից: Բացում եմ: Տասը հատ «Պրիմա» գլանակ էր, մի կտոր հաց, թղթին գրված էր՝ «23-րդ խուց, Ռաֆիկ Կրասնոդարից»: Ծխում եմ, հացն ուտում: Հինգերորդ օրը նոր փաթեթ նետեցին: Մի տուփ «Պրիմա» էր, շաքար, կոնֆետ, հաց, թղթի կտորին գրված էր՝ «27-րդ խուց, Ռուբիկ Թբիլիսիից: Գրիր, թե ինչու ես նստել»: Հաջորդ օրը նոր փաթեթ է գալիս՝ «Էդիկ՝ Սոչիից» գրությունով: Հինգերորդ օրը բանտային սնունդ են սկսում տալ: Տասնհինգերորդ օրը՝ երեկոյան, հրամայում են՝ հավաքվի՛ր: Քյուրդամիրցի թուրք էր: Ամեն օր գալիս, հայհոյում էր հայերի հասցեին, սպառնում, որ տասնհինգ տարի են տալու ինձ: Նա ինձ քսան հոգանոց մի խուց է գցում: Քրեական հանցագործներ էին: Բացում եմ կապոցը, մի քանի րոպեում վերջանում է հայ տղաների ուղարկած ուտելիքը: Մեկը դիմեց. «Ինչո՞ւ այդ ամենը տվեցիր, քեզ էտապ են տանելու, դու հասկանո՞ւմ ես, թե ովքեր են սրանք»: Թեյով չիֆիր է սարքում, որը տրամադրություն է բարձրացնում, մյուսները անաշա են ծխում՝ իրար փոխանցելով, սեղանի շուրջը նստածները թղթախաղով են տարված, տարվողը գուլպաները կամ ներքնաշորն է հանում տալիս, եթե ոչինչ չունի, գդալով հետույքին են խփում: Թուրք բանտապահը կարծում էր, թե ինձ քրեականները կծեծեն: Նա անցքից հետեվում էր: Ի վերջո, կանչեց. «Պետրոսյա՛ն, դուրս արի, քեզ ուրիշ տեղ ենք տանում»: Վրացի տղաներն ասացին. «Ռազմի՛կ, մի՛ գնա, այդ թուրքը գլուխդ կուտի»: Հոմոսեքսուալիստների խուց տարավ: Այստեղ «23-ից» Ռաֆիկն էր, որ ասաց. «Ռազմի՛կ, զգույշ մնա, չխառնվես դրանց հետ»: Մի քանի հոգի բանտախցում մերկ էին ման գալիս ու անընդհատ առաջարկություն էին անում: Ռաֆիկը ծեծում էր դուռն ու սպառնում. «Քեզ կախելու եմ, ստոր արարած, այդ տղային հանի՛ր այստեղից»: Ավագ բանտապահը բացում է դուռը, հարցնում. «Ի՞նչ է պատահել»: «Ռազմիկին տարեք այստեղից»,- պահանջում է Ռաֆիկը: Թուրք բանտապահին նախատում են, ինձ տանում իմ հին բանտախուցը: Ժամը 12-ին բոլորին դուրս են հանում, մի-մի կտոր սեւ հաց են տալիս, նստեցնում «Սեւ ագռավ» մեքենան ու տանում կայարան: Վագոնի խցում տասը հոգի էինք: Ավագ լեյտենանտը բարձրաձայն կարդում է մեր անձնական քարտերը: Այստեղ հանդիպում եմ Ռաշիդին:

- Ստեփանակերտի՞ց ես,- դիմում է ավագ լեյտենանտը,- ես Ստեփանակերտի գնդում եմ ծառայել, 1988-ին այնտեղ էի: Սիրում եմ

հայերին:

Մի ամբողջ օր ոչ հաց են տալիս, ոչ հետաքրքրվում մեզանով: Կարճ հագած, կիսամերկ աղջիկներ բերեցին: Տղաները կատաղած հանում են առնանդամները, ճաղերից դուրս հանում դեպի աղջիկները, ոռնալով սերմը դուրս թափում: Կալանավոր աղջիկներն ամաչում էին տղամարդկանց խցերի առջևով զուգարան գնալ:

Իմացանք, որ մեզ Արմավիր են տանում: Երբ գնացքը տեղ հասավ, կատաղած շների ուղեկցությամբ տարան դեպի «Սեւ ագռավ» մեքենաները: Մեքենայի մեջ տեղ չկար: Երես երեսի էինք խցկված: Ռաշիդին ստիպեցին, որ տեղավորվի: Չէր կարողանում: Կատաղած շանը բաց թողեցին նրա վրա: Ստիպված էր տեղավորվել: Հարեւան խցում քսան տեղ էր, սակայն շների օգնությամբ խցկեցին քառասունհինգ հոգու: Ծունչներս կտրվում էր: Մինչեւ կայարան կես ժամվա ճանապարհ էր: Տեղավորեցին Թբիլիսի-Ռոստով գնացքի հատուկ վագոնի խցում: Ութ հոգի, խուցը անաշայի ծխով լցված... Երկու ժամը մեկ ստուգումներ էին անցկացնում: Ամեն անգամ հետանցքն էին ստուգում՝ հո որեւէ բան չկա՞ թաքցրած այնտեղ: Ռոստովից տանում են Նովոչերկասսկ: Ուղեկցողներից մեկը թուրքմեն էր, մյուսը՝ ուզբեկ: Հարցնում եմ.

- Ժամը քանի՞սն է:

- Արգելված է, ծխախոտ տուր:

- Իսկ ծխախոտ ուզելը չի՞ արգելվում:

- Քո գործը չի, տու՛ր:

Նովոչերկասսկում դոշակ, բարձ, ափսե, գդալ տվեցին: Զարմացանք: Բոլորից նույն ասեղով արյուն վերցրին: Հետո մերկացրին, ռուս կինը ծայրը կեռ լարով բացում էր հետանցքն ու ստուգում: Նա հիմնականում թմրանյութ, թեյ կամ փող էր փնտրում: 33-րդ խուցն են նետում, որտեղ միայն մարդասպաններ են, ռեցեդիվիստներ: Քարածուխ էին վառում: Ծուխը լցվել էր սենյակը: Մի կտոր բետոն գտա ու ջարդեցի պատուհանը, որ շնչելու օդ գա: Ահավոր գլխացավ սկսվեց: Տարան լոգանք ընդունելու: Բոլորիս մի անվտանգ ածելի տվեցին, որ սափրվենք: Դուրս եկանք արյունոտված դեմքերով: Երրորդ օրը տարան զրույցի: Քննիչը ՊԱԿ-ից էր:

- Որտեղի՞ց գենքը, ի՞նչ էիր անում Մանասի շենում, Շահումյանում:

- Ոչինչ չգիտեմ,- պատասխանում էի ես:

Հատուկ երկար ու նեղ պատժախուց են մտցնում, որի պատերով սառը ջուր էր հոսում: Հանում եմ թիկնոցս ու սկսում թռչկոտել: Չորս ժամից կրկին հարցաքննության են տանում:

- Զենքը քո՞նն էր:

- Ոչ:

Կրկին պատժախուց են մտցնում: Երեկոյան ուղեկցողը դժգոհ ասաց. «Ես դրանց... այս կարցերում երկու ժամից ավել պահելու իրավունք չունեն, իսկ քեզ վեց ժամից ավել են պահել»: Երեք օր անընդհատ կրկնվեց նույնը: Բանտապետին նամակ գրեցի, որ առանց իմ փաստաբանի ոչ մի հարցի չեմ պատասխանի: Բանտապետի հանձնարարությամբ՝ ինձ ուղեկցող կապիտանը մնում է հարցաքննությանը: Երբ նա մի պահ դուրս է գալիս, ՊԱԿ-ի քննիչն ասում է. «Լսիր, գիտե՞ս, թե որտեղ ես գտնվում, սա Նովոչերկասսկի բանտն է, ոչ ոք այստեղից դուրս չի եկել: Դու պետք է խոստովանես ամեն ինչ»: Կրկին պատժախուց են նետում: Տեղափոխում են 49-րդ խուցը: Պատուհանի փոխարեն վանդակ կար: Դրանք թիթեղներ էին՝ ընկույզի չափ անցքերով, որով պետք է լույս թափանցեր: Երբ գիշերը խցում խոսում էին, կատաղած հովվաշունը նետվում էր դեպի դուռը, թաթերով հենվում դռանն ու բամբ ձայնով այնքան հաչում, որ քնելն այլեւս անհնար էր լինում: Թերթը կամ ռադիոն այդտեղ ընդունված չէին: Ինձ մոտ մի հայ տղայի են բերում: Գիշերը հարեւան սենյակից լսվում էր ձայնագրող մագնիտոֆոնի խշրտոցը: Հարեւանս պրովոկացիոն հարցեր էր տալիս: Ասացի՝ ես ոչինչ չգիտեմ: Ութ օր հետո նորից կանչեցին: Կարծում էի՝ արդեն բաց են թողնում: Սակայն հայտնեցին, որ մեղադրվում եմ 220-րդ հոդվածով՝ զենք պահելու համար, որի դեպքում հինգ տարի ազատազրկում է սպասվում: Առաջարկեցին ստորագրել թուղթը: Հրաժարվեցի: 145-րդ քննչական խուց են տեղափոխում: Մի հիսունամյա մարդու են բերում ինձ մոտ: Գիշերը նա անընդհատ քորում էր մարմինը: Ոջլոտած էր: «Ես մեղք չունեմ,- ասաց նա,- բռնաբարելու համար են ձերբակալել»:

Առավոտյան քննիչն ասաց. «Եթե խոստովանես, որ զենքը քոնն է, քեզ լավ խուց կտեղափոխենք»: Հրաժարվում եմ: Սկսել էին երիկամներս ցավել: Բժիշկ են կանչում: «Այս մարդուն տեղափոխեք այստեղից»,- պահանջում է հարեւանը: Հարեւանիս ողջ մարմնին կանաչ նյութ են քսում: Ոջիլները դեպի ինձ են շարժվում: Ամբողջ գիշեր հավաքում եմ ոջիլները, լցնում լուցկու դատարկ տուփի մեջ: Մինչեւ վաթսուն ոջիլ էի հավաքել: Չգիտեմ էլ՝ ավելի շատ ոջիլ հավաքող եղել է՞, թե չէ: Բողոք եմ գրում: Բանի տեղ չեն դնում: Երրորդ օրը սկսում եմ ծեծել հարեւանիս: «Թուղթ գրիր, որ քեզ սպանելու եմ»,- ասում եմ ես: Երկու ժամից ռետինե մահակներով զինված պահակախումբ է ներս մտնում: «Ինչո՞ւ ես ծեծում նրան»,- հարցնում են: Հանում եմ լուցկու տուփն ու ցույց տալիս: Սպան աչքերին չի հավատում: Այրում են նրա անկողինը, ախտահանում ամեն ինչ: Նոր հարեւան են բերում՝ ազգությամբ լեզգի: Սա իբր մտերմանում է, սկսում խոսք քաշել: 145-րդ խուց ստեփանակերտցի տղաների են բերում՝ օնկոլոգիական

բաժանմունքի գլխավոր բժիշկ Ռոբերտ Խաչատրյանին ու միսկոմ-բինատի աշխատող Ռաֆիկին: Ռոբերտը ֆիդայական երգեր էր երգում ինձ համար: Կրկին 49-րդ խուց են տեղափոխում: Հետո եղբայրս՝ Զարմիկն է գալիս: Սպորտային համազգեստ, ծխախոտ ու թերթեր է բերում: Քննիչ Պրոկոպենկոն վերսկսում է քննությունը:

- Օգնի՛ր ինձ,- դիմում եմ նրան:

- Եթե ՊԱԿ-ը ձեռք քաշի քեզանից, կօգնեմ: Այդ բոլոր փորձարարությունները նրանք են անում:

Բանտապետը եղբորս ասում է, որ դիմի քննիչի օգնությանը, թե՝ նա լավ մարդ է, կօգնի: Մի քանի օր հետո քննիչն ասում է. «Ես Ստեփանակերտ եմ գնում, մի քանի մարդու պետք է հարցաքննեմ, եթե ամեն ինչ կարգին լինի, պաշտպանիդ էլ կբերեմ ու կազատեմ քեզ»:

Տասը օր հետո վերադառնում է ու հայտնում. «Ոչինչ չի հաստատվում, քեզ Ստեփանակերտ են տանելու»:

ՊԱԿ-ի մարդիկ ասացին, որ բանտում Ադրբեջանի ժողճակատից տղաներ կան, որոնք ուզում են զրուցել ինձ հետ: Պատասխանում եմ, որ ես չեմ ուզում հանդիպել նրանց հետ:

Մարտի 10-ին թեյ բաժանողը թուղթ է բերում. «Ռազմիկ, ընկերդ եմ, ազատվում եմ, գրիր՝ ինչ անեմ, գենքերը որտեղ տեղափոխեմ, ում ինչ ասեմ»: Թղթի մյուս երեսին գրում եմ. «Ոչ մի գենքի տեղ չգիտեմ, ինձնից ոչինչ մի հարցրեք»: Բանտային վերջին օրը մի քսանհինգ տարեկան տղայի են բերում ինձ մոտ, որը գժի դեր էր խաղում, գիշերը չէր թողնում քնեմ:

- Գիշերը սպանելու եմ քեզ,- սպառնում էր նա:

- Ինչո՞ւ են քեզ բռնել,- հարցնում եմ:

- Չորս գնդացիր ունեմ, քարհատ եմ աշխատում, արի վաճառեմ քեզ:

- Ինձ ոչ մի զենք պետք չի:

Գիշերը հանկարծ կառչում է կոկորդիցս: Ոտքով հարվածում եմ: Պահակախումբը ներս է մտնում:

- Ես 9-Բ-ն եմ, գիշերը պիտի սպանեմ սրան,- ասում է ռուս երիտասարդը:

- Լսե՛ք,- դիմում եմ պահակախմբին,- ես կարող է սպանեմ սրան:

Գիշերը ինքս եմ նախահարձակ լինում: Ավելի լավ է ամեն ինչ շուտ լուծվի, որովհետեւ կեսգիշերին քնած ժամանակ կարող է խեղդել ինձ: Նրա աղմուկից պահակախումբը բացում է դուռը:

- Հիմա ի՞նչ է եղել:

- Նա էլ է 9-Բ, սպանելու է ինձ,- ասում է հարեւանս:

Մարտի 12-ին՝ առավոտյան, հրամայում են՝ հավաքվի՛ր:

Նովոչերկասսկի Ներքին գործերի բաժին են տանում, պատժախուց

նետում: Խցում Ադրբեջանի ժդանով (հնում՝ Բայլական - խմբ.) քաղաքից մի ադրբեջանցի կար, որը երկու ռուսի էր սպանել: Նա բռնցքամարտիկի կեցվածք է ընդունում, սկսում օդում հարվածներ տեղալ, թռչկոտել, սպառնալ:

- Ադրբեջանցի՞ ես,- հարցնում է նա:

- Չէ, դարաբաղցի հայ եմ:

- Ամոթ չե՞ք անում, մեր երեխաներին ու կանանց եք մորթում, բռնաբարում:

Բացատրում եմ շարժման էությունը: «Բա ինձ ասել են, որ իբր հայերն են ամեն ինչ արել Ղարաբաղում»,- ասաց:

10-րդ խուցը խոնավ էր, հատակին մկներ էին վխտում: Քանի որ անկողին չկար, գետնին էի պառկում: Օրական մեկ բաժակ ջուր, մի կտոր հաց էին տալիս: Իսկ շաբաթ օրերին ոչինչ չէին տալիս:

Ճաշին մի տասնութ տարեկան ռուս տղայի են բերում, նստեցնում կողքիս: Նա ասաց, որ ծնողները ուտելիք եւ փող են ուղարկել: Տասանոց թղթադրամը խնամքով փաթաթեց ցելոֆանի մեջ, կուլ տվեց, որ բանտում դուրս հանի, տա ոստիկանին՝ մի տուփ թեյի դիմաց: Ես գիտեմ, որ խորհրդային իշխանության ժամանակ պարենի հանձնումը բանտարկյալներին, ձերբակալվածներին ընդունված երեւույթ էր, իսկ ահա այս խառը տարիներին մարդը արհամարհված է: Ժամը հինգն անց կեսին խոզի լակ բերեցին, մեջը՝ ձկան գլուխ: Հետը սեւ հաց էին տալիս, որը պետք է սեղմես, ջուրը քամես, ջեռուցիչի վրա չորացնես, երրորդ օրը փորձես ուտել: Երեկոյան վարսակով շիլա էին տալիս, որը ոչ ոք չէր ուտում: Այդ ամենը հաջորդ օրը տաք ջրի մեջ խառնում էին, ճաշին որպես «առաջին» մատուցում:

Ութերորդ օրը երիկամի նոպա սկսվեց: Սուր ցավին դժվար էր դիմանալ: Բժիշկն անտարբեր էր: Խնդրեցի շտապ օգնություն կանչել: Բժիշկը հայ էր, Սաշա Գրիգորյան, նա սուր նոպա ձեւակերպեց՝ ոստիկաններին սպառնալով, որ եթե մի բան պատահի, ապա իրենք պետք է պատասխան տան: Բժշկական կոնսիլիումը հաստատեց հայ բժշկի ախտորոշումը: Ստեփանակերտի Ներքին գործերի վարչությունից երեք հոգի եկան, կապեցին ձեռքերս, տեղափոխեցին Ռոստով, ապա Թբիլիսի, որտեղից ուղղաթիռով հասցրին Ստեփանակերտ: Սկզբում որոշել էին Շուշի տանել: Սակայն որոշվում է հիվանդության պատճառով դատախազի սանկցիան հետաձգել: Նախ Ստեփանակերտի հիվանդանոց են տեղափոխում, ապա Էդուարդ Ղուկասյանն ինձ Երեւանի հիվանդանոց է տանում:

Պատմում են Նադիր Օսմանովը եւ Շաքիր Վելիեւը (ադրբեջանցի ռազմագերիներ):

21.06.1992թ., ԼՂՀ Ներքին գործերի հետաքննչական ժամանակավոր մեկուսարան, Ստեփանակերտ

Նադիր Օսմանով (ծնվել է 1966 թ., Ադրբեջանի ազգային բանակ է զորակոչվել 1992 թ. մայիսին որպես հրասայլի մեխանիկ-վարորդ).

Բ. - Ինչու՞ ես կռվում:

Ն.Օ. - ...

Բ. - Մինչ զորակոչվելը ի՞նչ էիր մտածում պատերազմի մասին եւ հիմա՝ ի՞նչ:

Ն.Օ. - Չէի ցանկանա բանտում լինել: Ես պատերազմել չեմ ուզում: Մեզ ուժով են զորակոչել ու Ղարաբաղ բերել:

Բ. - Իսկ ինչպե՞ս գերի ընկար:

Ն.Օ. - Սրխավենդ գյուղում շրջապատման մեջ ընկանք: Ես ուզում էի փախչել:

Բ. - Գիտե՞ս, որ դասալիքներին գնդակահարում են:

Ն.Օ. - Գիտեմ: Բայց ուրիշ ելք չունեի: Տանկը հրկիզվել էր: Ծրագրված էր հունիսի 15-ին գրավել Կիչանն ու Սրխավենդը, հետո անմիջապես շարժվել Մարտակերտի ու Ստեփանակերտի վրա: Գործողությունը տապալվեց, մեր զորամիավորումը շրջապատման մեջ ընկավ:

Բ. - Տանկում ովքե՞ր էին ընկերներդ:

Ն.Օ. - Բաքվեցի ռուսներ, դաղստանցիներ: Նրանք կամավոր են եկել կռվելու:

Բ. - Ինչքա՞ն են վճարում:

Ն.Օ. - Ես չհասցրի ստանալ, բայց ասել էին՝ չորս հազար երկու հարյուր ռուբլի:

Շաքիր Վելիեւ (ծնվել է 1971 թ. Կիրովաբադում (Գյանջա), Ասկերանի մարտերում վիրավորվել է, գերի ընկել).

Բ. - Գիտեի՞ր, թե ինչի համար ես պատերազմում:

Շ.Վ. - Բանակից ազատելու համար հիսուն հազար ռուբլի էին ուզում: Դիմեցի հորս, բայց այդքան փող չունեինք: Կարծում եմ, որ պատերազմին իմ մասնակցելը հիմարություն էր:

Բ. - Կամավորներին ինչպե՞ս են վարձատրում:

Շ.Վ. - Վարձկաններինը գիտեմ: Հատուկ զորամաս են ստեղծել, Թարթառի գումարտակ է կոչվում: Յուրաքանչյուրը ամսական քսան հազար ռուբլի է ստանում: Գումարտակը պատժիչ դեր ունի, կանգնում է երկրորդ գծում եւ գնդակահարում մարտի դաշտից փախչողներին ու նահանջողներին:

Պատմում է Սուրեն Գալստյանը ***(1993-1994թթ. գումարտակի հրամանատար):***

10.02.2006 թ., Երեւան

Ս.Գ. - Ծնվել եմ Մարտակերտում 1970 թվականին:

Շարժման առաջին օրերից, երբ սկսեցին կազմակերպել Մարտակերտի ինքնապաշտպանությունը, ընդգրկվեցի այդ ջոկատներից մեկում՝ «Ազատագրական բանակում»: Ջոկատի «Արցախ» ճակատի հրամանատարը Վլադիմիր Բալայանն էր, իսկ ընդհանուր հրամանատարը՝ Լեոնիդ Ազգալդյանը: Մի քանի պատճառներ կային, որ ես ընդգրկվեցի հատկապես այդ ջոկատում: Ջոկատը ավելի շուտ զորամիավորում էր, կար ընդունված կարգուկանոն՝ չծխել, չխմել եւ այլն: Կարգապահության դրվածքը հրապուրիչ էր: Լեոնիդի հետ Երեւանում եմ ծանոթացել, Վլադիմիրի հետ՝ Մարտակերտում: Լեոնիդը եւ Վլադիմիրը լրացնում էին միմյանց: Լեոնիդի խելքը, «դուխը», Վլադիմիրի մարտունակությունը շատ կարեւոր դեր ունեին: Այդ ժամանակ ես Երեւանի Ճարտարապետաշինարարական ինստիտուտն արդեն ավարտում էի: Պատերազմն օր օրի թեժանում էր: Ես գնացի Ղարաբաղ: Մինչ այդ՝ ստորագրություններ հավաքելիս, նույնպես ակտիվ եմ եղել: Այդ ժամանակ ես տասներորդ դասարանում էի սովորում: Մեր շրջանում լիդերը Շիրինյան Վիգենն էր: Ինստիտուտն ավարտելուց հետո եկա Վլադիմիրի մոտ: Նա, կարելի է ասել, արդեն կայացած ջոկատ ուներ: Իմ մուտքը ջոկատ սկսվեց ամենաներքեւի շարքից՝ առավոտյան մարզումներից, եւ այլն: Անընդհատ սպասում էի, թե երբ պետք է գա այն օրը, որ ինձ ասեն՝ այս ավտոմատը քոնն է: Վերջը, արժանացա դրան: Հետո դեպքերը սկսեցին շատ արագ ծավալվել: Ղարաբաղում պատերազմը թեժանում էր: 1992 թվականի ամռանը Վլադիմիրը զոհվեց Չայլուի խրամատներում:

Բ. - Ինչպե՞ս է զոհվել Վլադիմիրը:

Ս.Գ. - Ես նոր էի սկսել մասնակցել մարտերին: 1992 թվականի հունիսի 9-ին էր, Չայլուի ներքեւի դիրքերում: Ես Վլադիմիրի կողքին էի: Տարբեր ասեկոսներ կան նրա զոհվելու պատմության շուրջ, իբր

հայի ձեռքի գործ է: Բայց դեպքը այսպես է եղել: Սպասում էինք մութն ընկնելուն, որ մենք հակառակորդի դիմացի դիրքերը գրավենք: Լավ հիշում եմ՝ Վլադիմիրը ծիծաղելով ասում էր. «Եկել՝ եկել ենք, դիմացի դիրքերը վերցնենք, թե չէ՝ չայլվեցիք պանիկյոր են, այդ դիրքերը գրավենք, որ մեզ էլ նեղություն չտան»: Այդ օրը նա շատ բարձր տրամադրություն ուներ: Խրամատի մեջ էինք, որը մի քիչ բարձր էր: Մեր հրետանին ամբողջ օրը աշխատում էր, նա հեռադիտակով ուղղորդում էր: Երեկոյան պետք է առաջ գնայինք: Ցերեկ էր: Հակառակորդի արկից Վլադիմիրը ընկավ: Գլխի կեսը չկար: Հետո չէինք կարողանում նրա դիակը հանել: Տանկիստը Օհանյան Խոսրովն էր՝ բժշկի տղան: Նա «БМП»-ով եկավ, մենք կարողացանք Վլադիմիրի դիակը հանել, դնել «БМП»-ի մեջ, տանել համեմատաբար թիկունքային մաս: Եթե հնարավոր լիներ ինչ-որ կերպ պահել դիրքերը, կանեինք: Ոչինչ հնարավոր չէր անել: Լավ կոտրվեցինք: Այդ օրը միայն Վլադիմիրը զոհվեց: Բայց նա ոչ միայն մեզ համար, այլեւ ամբողջ շրջանի, ամբողջ Ղարաբաղի համար ոգեւորող ուժ էր: Նրա մահը շատ ծանր տարանք: Մեզ դիրքերում փոխարինելու եկավ Նավթալյան Արմենը՝ մոտ քսան տղաների հետ, եւ Ներսիսյան Սլավիկը՝ ոստիկանների ջոկատից մոտ տասնհինգ տղաների հետ: Մենք դիրքերից դուրս եկանք: Վլադիմիրի մահը շատ ծանր էր նաեւ Լեոնիդի համար: Ուղիղ տասներկու օր հետո՝ հունիսի 21-ին, Լեոնիդը զոհվեց:

Բ. - Լեոնիդի զոհվելու հետ կապված ի՞նչ կարող եք ասել:

Ս.Գ. - Լեոնիդի զոհվելու պահին ես նրա կողքին չեմ եղել: Նրա կողքին Պավլիկն է եղել, վարորդը: Հետագայում, երբ ես գումարտակի հրամանատարն էի, Պավլիկը թիկունքի պետն էր: Նա ազնիվ տղա է, ես վստահում եմ նրան եւ հավատում նրա ասածներին: Փաստորեն, Լեոնիդի մահվան միակ կենդանի վկան Պավելն է:

Բ. - Օրինակ՝ Գիրոն ասում էր, որ ադրբեջանցիների հետախուզական խումբ է նկատվել, եւ Լեոնիդի մահը նրանց հետ հանդիպման հետեւանք է եղել:

Ս.Գ. - Ես էլ եմ կարծում, որ այդպես է եղել: Կարելի է տարբեր պատմություններ հորինել՝ նկատի ունենալով Լեոնիդի սկզբունքները, դիրքը: Գաղտնիք չէ, որ կենտրոնական իշխանություններին ձեռք չէր տալիս Լեոնիդի սկզբունքայնությունը: Բայց ես գտնում եմ, որ հակառակորդն է նրա մահվան պատճառը, ինչ-որ տեղ նաեւ Լեոնիդի անուշադրությունը: Չէր կարելի մեքենայով մտնել այդ տարածքը: Հրամանատարական այդ վրիպումը նրա համար կյանք արժեցավ: Հակառակորդը շատ ակտիվ էր: Շահումյանի եւ Մարտակերտի շրջանների նահանջից հետո կարիք զգացվեց ավելի լուրջ մոտենալու հարցին: Դրված էր լինել-չլինելու խնդիր: Առաջացավ բանակա-

շինության հարցը: Լեոնիդից հետո Ղաշանց Գարիկն էր հրամանատարը, հետո՝ Սասունը: 1992 թվականին նրանք գնացին Սարատով: Նրանք շատ լավ, կարգին տղաներ էին, ուղղակի այդ մարդկանց նյարդերը մինչեւ վերջ չդիմացան: Իգորը դարձավ հրամանատարը, վիրավորվեց, հետո՝ Գիրոն՝ Գրիգոր Միրզոյանը Աղաբեկալինջ գյուղից, որը նույնպես վիրավորվեց: Սասունը զոհվեց: Դրանից հետո ես էի հրամանատարը: Այդ փոփոխությունները շատ արագ էին կատարվում: Մեր ջոկատը՝ «Ազատագրական բանակ» միավորումը, ուներ իր կարգ ու կանոնը: Մենք ուզում էինք անկախ մնալ, բայց արդեն հնարավոր չէր: 1993 թվականի փետրվարին հրամանով մտանք բանակ որպես մոտոհրաձգային գումարտակ: Աշխատավարձ էինք ստանում, վառելանյութ: Գումարտակի հրամանատարը ես էի: Գիրոն գնաց Ամերիկա, որոշ չափով ապաքինվելուց հետո շարք վերադարձավ: Նրա փորձը, հեղինակությունը շատ պետք էին մեզ: Նա գումարտակի հրամանատարի տեղակալն էր, բայց մեր միջեւ տարբերություն չկար, մենք ընկերական հարաբերություններ ունեինք:

Ինձ համար ամենահիշվող գործողությունը Սարսանգի գրավումն էր: Շատ ծանր վիճակ էր ստեղծվել: Ահագին զոհեր, վիրավորներ ունեինք: Հիմա գումարտակի մարտական կազմում մոտ հինգ հարյուր հոգի պետք է լինեն: Իսկ այն ժամանակ եւ՝ Հադրութում, եւ՝ Մարտակերտում հարյուր հոգին գումարտակ էին համարվում: Տասնյոթ հոգով գետը կտրում, անցնում ենք թիկունք: Հաթերքի կողմից անցանք, հասանք Ումուտլու, որտեղից մինչեւ Սարսանգի ջրամբարի ետեւի մասը ոտքով ենք գնացինք: Այնտեղ էր Հաթերքի Բարմենը, որը քաղաքացիական շորերով էր: Ասացի. «Բարմեն, պատգամավոր մարդ ես, ինչ գործ ունես, ավտոմատը ձեռքիդ՝ եկել ես այստեղ»: Ասաց. «Սուրի՛կ, ամեն ինչ խառնվել է իրար»: Մի քանի օր հետո այդ տղան զոհվեց: Շատ լավ, ազնիվ տղա էր: Ջրամբարի երկայնքով հակառակորդի դիրքերն էին: Մենք տեղավորվել էինք նրանց ետեւի կողմում: Ամեն ինչ ասես ափիս մեջ լիներ. նրանց բոլոր շարժումները երեւում էին: Գնդացրորդին համապատասխան տեղում էինք տեղավորել, դիպուկահարին իր օգնականների հետ՝ իր տեղում: Տասը հոգի ինձ հետ էին: Յուրաքանչյուր երկու հոգին մեկ կապի միջոց ուներ: Այդ հարցերը լավ էին ապահովված, եւ դա Լեոնիդի շնորհիվ էր: Մենք տեխնիկայով ապահովված էինք, կարողանում էինք դրսի կազմակերպությունների միջոցով ժամանակակից բոլոր սարքավորումները բերել տալ:

Բ. - Հովսեփ Հովսեփյանը որտե՞ղ էր:

Ս.Գ. - Հովսեփն այդ ժամանակ Վարդենիսի գնդի հրամանատարն էր: Ինչպես Վլադիմիրի տեղը ես էի մնացել Մարտակերտում, այնպես

էլ՝ Լեոնիդի տեղը Հովսեփը: Հետո նա Վարդենիսում դարձավ զորամասի հրամանատար, իսկ ես Ղարաբաղում էի: Այդպես մեր հարաբերությունները քիչ-քիչ սառչում էին: Բայց աշխատում էինք պահել ավանդական դարձած կապը: Գործողությանը մասնակցում էր Օգանով Սամոն, երրորդ գումարտակի հրամանատար Սամոն էր, որը զոհվեց: Նրանք մոտ հարյուր հոգի կլինեին: Ռազմիկ Պետրոսյանն էլ էր այնտեղ: Ես չէի կարող բոլորին տեսնել, բայց ռացիայի մեջ նրանք են եղել, Սեւանի Չոլի տղերքն էին, Նավթալյան Արմենն էր Ասլանյան Սերժիկի հետ՝ իրենց տղաներով: Աջ կողմում երկու հարյուր հոգուց ավելի մարդ կար: Նրանց ձեռքին տասը ռացիա էր աշխատում: Այդքան էլ ինձ մոտ կար, բայց մենք ընդամենը տասնյոթ հոգի էինք: Հետագայում՝ իրավիճակի վերլուծությունից հետո, ոչ ոք չէր հավատում, որ մենք տասնյոթ հոգով ենք եղել: Գնդացրորդը ղազանչեցի Մարտիկն էր: Ասացի.

- Տեսնու՞մ ես գլուխը դուրս հանածին:

- Հա՛:

- Խփի՛ր, տու՛ր գլխին:

Խփեց: Մի քանիսը վիրավորվեցին: Յուրաքանչյուր վիրավորին երեք հոգով էին դուրս հանում: Դիրքերից ահագին մարդ պակասեց: Դիպուկահարը Լեւոնչիկն էր, ասացի.

- Լեւոնչի՛կ, տեսնո՞ւմ ես գլուխը դուրս հանածին:

- Հա՛:

- Դե գործ արա, ի՞նչ ես նայում:

Այդպես մոտ տասնհինգ-քսան մարդ այդ դիրքերից պակասեցին: Հրետանու Ժորայի հետ խոսեցի.

- Դյա՛դ Ժորա, հարյուր հիսուներկու միլիմետրանոցով՝ տասը մետր աջ, տասը մետր ձախ:

- Արա, Սուրի՛կ, դե սպանեցիք: Կարո՞ղ է ձեզ թվում է՝ ավտոմատով եմ խփում:

Սանոյին, որ իմ ուսանողական ընկերներից էր, պատվիրում էի այնպես, ասես ռեստորանում ենք.

- Սանո՛, մի հատ խփիր, մնացածը նույն փողով կրակիր, որ շեղում չլինի:

Սանոն «Գրադ» կայանքով «Ե-21» էր խփում: Այդպես մոտ երկուերեք ժամ աշխատեցինք: Թշնամու զրահամեքենան լռեց: Միանգամից առաջ գնացինք, ինչը հինգ րոպե տեւեց: Մեր սեղմելուց հետո, երբ հակառակորդը փախավ, աջ կողմի համար, որտեղ կուտակված էին մեր հիմնական ուժերը, հեշտացավ առաջ գնալը: Սարսանգի օպերացիան ճիշտ նույնն էր, ինչ հայտնի Գերանբոյի գումարտակի գործողությունները, որ ցուցադրվում էին Ալեքսանդր Նեւզորովի «Шестьсот

секунд»-ում: Ամեն ինչ նույնն էր, ուղղակի մեր մարտը չի նկարահանվել, մենք միայն պատմում ենք: Ես այն համարում եմ մեր կլասիկ գործողություններից մեկը: Կարող եմ ասել նաեւ մեր ռազմավարությունը: Մեզ համար ավելի հեշտ էր լեռնային մասում կռվելը: Փորձում էինք անցնել թիկունք, հակառակորդին խուճապի մատնել եւ նրանց դիրքերը գրավել: Այդ դեպքում մարտը ամենաշատը տեւում էր տասը րոպե: Եթե երկարում էր, ապա մենք զոհ էինք տալիս, դժվար գործընթաց էր լինում, կամ դադար էինք տալիս, հետո շարունակում: Եթե հինգից տասը րոպեում այդ օրվա ճակատագիրը չէր որոշվում, լուրջ խնդիրներ էինք ունենում: Այդ գործողությունը համեմատաբար հեշտ անցավ: Հակառակորդի քանակական առավելությունը չէր զգացվում սարերում: Բայց 1994 թվականից, երբ իջանք դաշտային մասը, շատ ծանր մարտեր էին լինում:

Բ. - Մի քիչ ետ գնանք: Ինչպե՞ս իրականացվեց Աղդաբանի գործողությունը:

Ս.Գ. - Այդ գործողության ժամանակ ես Երեւանում էի: Բայց կարող եմ ասել, որ այն Լեոնիդի դասական գործողությունն էր: Այն առաջինն էր, որ, որպես ռազմական օպերացիա, կայացավ Մարտակերտում:

Բ. - Իսկ ինչպե՞ս ընթացավ հետախուզությունը, որի հիման վրա էլ եղավ օպերացիան՝ այդպես շեշտակի, առանց զոհերի:

Ս.Գ. - Մեր ջոկատի հետ կապված լեգենդների, հաջողության գաղտնիքը այն է, որ մինչեւ չէինք իմանում, թե մեր առջեւում ինչ կա, ոչ մի մետր առաջ չէինք շարժվում: Ավելորդ մարդ չունեինք զոհելու:

Բ. - 1992 թվականի ամռանը այն գործողությանը, որ Մարտակերտից երեք ուղղություններով պետք է հաջողությամբ կայանար, բայց տապալվեց, դուք մասնակցո՞ւմ էիք:

Ս.Գ. - Այդ օպերացիան եղավ մինչեւ Մարտակերտը հանձնելը՝ հունիսի քսանութին: Մենք մոտավորապես երկու հարյուր հոգի էինք. Ասկոլկայի մի դասակն էր, Ժիրոյի գումարտակն էր, Ցեղակրոն Հակոբն էր՝ իր երեսուն տղաների հետ, մոտ վաթսուն մարդ մենք էինք: Հրամանատարը Ղաշանց Գարիկն էր: Վլադիմիրն արդեն զոհվել էր: Մենք հոգեբանական շատ ծանր շրջանում էինք, եւ այն ընտրությունն էր, թե ով պետք է ջոկատում ստանձնի լիդերությունը: Մեր բոլոր ակտիվ տղաները՝ Գիրոն, Պետրոսյան Արմենը, ես, մասնակցում էինք: Շատ անիմաստ օպերացիա էր: Մեզ ուղարկեցին Մաղավուզի գերեզմաններից, որտեղից ոտքով իջել ենք մինչեւ Մատաղիս, այդտեղից էլ գիշերը Ղահինլարի ֆերմայից բարձրացել մինչեւ Թալիշի վերեւը՝ Սոնա յալ: Այդտեղ պետք է մարտ լիներ: Մտանք: Կարճ տարածությունից մարտ էր: Խառը կրակոցներ եղան: Մենք անիմաստ զոհեր տվեցինք, Արարատը՝ Թալիշի ջոկատի հրամանատարը, կորավ:

Արարատին ես ու Գիրոն հանեցինք, տվեցինք Թալիշի տղերքին: Հետո տղերքը ասում են՝ զոհվել է, եւ թողնում են այնտեղ: Երկու-երեք օր հետո Արարատը հայտնվում է վիրավոր: Մոտ քառասուն օր չի կարողանում խոսել, հետո ուշքի է գալիս: Սողալով դուրս է եկել Արարատը: Կարող եմ ասել, որ դա մեր խայտառակ օպերացիաներից մեկն էր: Մեջտեղի գծով «Արաբոյի» տղերքն են եղել՝ մոտ ութսուն հոգի: Հրամանատարության թուլությունն էր պատճառը, որ միանգամից ութսուն մարդ կորցրին մարտի դաշտում: Նման բացթողումների, թուլությունների համար հարկավոր էր խիստ պատժել: Գիտեք, որ պատասխանատուներին չպատժեցին: Աջ կողմից Կարմիրավանի Ցաշան էր: Մեր վիճակը ծանր էր, շատ սարսափելի վիճակում էինք: Ադրբեջանցիները Մատաղիսում նստած էին: Մենք Տոնաշենի վերեւից էինք մտել Մատաղիս, քսանհինգ-երեսուն կիլոմետր հեռավորությամբ թիկունքում էինք: Ետ դառնալիս Տոնաշենի վերեւի կամրջով ենք անցել, գետի մյուս կողմից, որովհետեւ Մատաղիսն ամբողջությամբ ադրբեջանցիների ձեռքում էր: Մոխրաթաղցի Սուրիկը զոհվեց: Մենք յոթ վիրավոր տվեցինք: Սուրիկին Մոխրաթաղի տղաները պետք է օգնեին: Ես ոչ բոլոր տղերքին էի ճանաչում, քանի որ տասներորդ դասարանն ավարտելուց հետո Երեւանում եմ սովորել: Կարելի է ասել՝ երեւանցու կարգավիճակով էի Ղարաբաղում: Բայց Սուրիկի դիակը մինչեւ վերջ չորս հոգով՝ ես, Գիրոն, Արմենը, Սասունն ենք տարել: Դիակը ահավոր ծանր էր: Կապել էինք երկու մահակների վրա, այդպես քարշ տալով բերել: Տոնաշենում մեզ Հովսեփը դիմավորեց: Փաստորեն ի՞նչ կատարվեց այդ շրջանում: Մարտակերտի համարյա բոլոր ջոկատների հրամանատարները զոհվեցին: Հենց այդ օրը Կարմիրավանի Ցաշան, Ջանյաթաղ գյուղից Սամոն զոհվեցին: Մարտակերտի հրամանատարական կազմը չկար: Ընդհանուր հրամանատարը Կոմանդոսն էր: Նախքան Կոմանդոսը՝ Դաշնակ Ագոն էր՝ Կարապետյան Արկադին: Բոլորն էլ այնտեղ էին՝ Գզողլյան Ֆելիքսը, գեներալ Հարությունյանը, Դալիբալթայանը, կապի պետը՝ Փափազյան Արթուրը: Ահագին ուժեր կային, բայց, ցավոք, ոչ մի կոորդինացիա չկար: Կոմանդոսը բոլորին ծեծում էր: Մի քանի թիկնապահներ ուներ: Մարդիկ աշխատում էին նրա հետ չշփվել: Շատերը չէին ուզում անգամ շտաբ մտնել: Այդպես չէր կարելի: Մարդկանց հենց այնպես կորցնում էինք: Անկառավարելի իրավիճակ էր՝ ինքնահոսի թողած: Ի՞նչ կատարվեց: Փախուստ: Իրոք, բոլորը փախան: Ես կոնկրետ Մարտակերտի մասին եմ խոսում: Շահումյանի մասին ես չեմ խոսելու, որպեսզի տղաները չնեղվեն: Պատերազմում կան ինչպես հարձակում, այնպես էլ նահանջ հասկացողությունները: Նահանջն էլ օպերացիա է: Ես կցանկանայի նահանջ տեսնել, բայց չեղավ:

Զոհվածների մեջ էր նաեւ Վագիֆը, որ ինքնապաշտպանության ջոկատների հրամանատարն էր: Շտաբի պետ էր նշանակված Բաղմանյան Հայկազը: Հայկազի ներկայությունը մեր կողմից դիտվում էր իբրեւ բանակաշինության էլեմենտ: Ղարաբաղի տղաների համար Հայկազը այն մարդն էր, ում միջոցով կարող էին պահել կապը Երեւանի հետ, տեղ հասցնել խնդիրները, ինչ-որ բան ստանալ այնտեղից: 1992 թվականի հուլիսի 4-ին Մարտակերտը հանձնվեց: Վերջին մարտը հուլիսի 3-ին էր, Կուկլեն յալում՝ չհասած Արեւձոր, ձախ կողմում: Հրամանատարը Գիրոն էր: Ծանր մարտ էր: Ադրբեջանցիները այդ օրը պետք է մտնեին Մարտակերտ: Մեկ օր կարողացանք պահել, որպեսզի ժողովուրդը կարողանա դուրս գալ: Հուլիսի 4-ին Մարտակերտում բնակչության մոտ քսան-երեսուն տոկոսն էր մնացել: Այդ օրը դուրս եկան: Դիրքեր էինք դրել, պահում էինք, հակառակ դեպքում Մարտակերտում խաղաղ բնակչության մեծ թվով զոհեր կտային: Այդ օրը ծանր մարտ եղավ, եւ՛ հակառակորդի, եւ՛ մեր կողմից մեծ կորուստներ եղան: Պետրոսյան Արմենը տեխնիկա խփեց:

1992 թվականի վերջն էր, շատ զոհեր էինք տալիս: Մեր ջոկատում ընտրություն արեցինք եւ տասնհինգ հոգանոց խումբ առանձնացրինք: Որոշեցինք փոխել մարտավարության ձեւերը, ձեռք բերել ավելի լուրջ զենքեր, ուղղաթիռով մտնել թիկունք, այնտեղից աշխատել: Նոր ալիք առաջացավ: Սկսեցինք ավելի շատ տեղ տալ տեխնիկայի առկայությանը: Սամվել Բաբայանը կապվեց, թե՝ Սուրի՛կ, ուզում ենք Մարտակերտը վերցնել: Ասացի. «Շատ լավ կլինի: Ես ինքս մարտակերտցի եմ: Դա մեծ նվեր կլինի ինձ համար, մարտակերտցիների համար: Ուզո՞ւմ ես լավություն անել, սկսիր Քելբաջարից: Քելբաջարի հարցը լուծենք, հետո ինչքան կարողանանք՝ կիջնենք Մարտակերտ»: Սամվել Բաբայանի առաջարկը ոգեւորիչ էր: Պաշտպանական շրջանի հրամանատարը Դանիելյան Նորիկն էր: Մենք Ստեփանակերտում էինք, մեր հիմնական բազան այնտեղ էր տեղակայված: Որտեղ խնդիր էր լինում՝ մենք այնտեղ էինք, տվյալ տեղի գլխավոր հրամանատարի ռեզերվն էինք: Քանի որ ծանրաբեռնվածությունը Մարտակերտի շրջանում էր, ավելի շատ այդ ուղղությամբ էինք գնում:

1993 թվականի փետրվարին սկսվեց հարձակողական փուլը: Այդտեղից մեր հաջողությունները սկսվեցին: Մի քանի ուղղություններ կային: Մեր հիմնական ուղղությունը Գանձասարն էր: Այդտեղից ճանապարհ կա, որ տանում է Կարմիր քար, Ղլեն քար, Տգամա ղաշ: Հետո հասանք Վաղուհաս, Գետավան:

Բ. - Այսինքն՝ ձեր ջոկատը Վաղուհասի մարտերին էլ է մասնակցել:

Ս.Գ. - Իհարկե, հենց մենք ենք մտել: Վաղուհասի գրավումը մեր դասական օպերացիաներից էր: Մասնակցում էին նաեւ ռուսները.

Ժենյան էր՝ չորս-հինգ հոգու հետ: Ինձ համար կասկածելի էր այն, որ Ժենյային ինձ հետ էին դրել: Սկզբում չէի վստահում նրան:

Բ. - Կազակներ կայի՞ն:

Ս.Գ. - Այդ օրը կազակներ չկային: Ժենյայի այդ օրվա գործողությունները ինձ վրա մեծ տպավորություն թողեցին: Շատ գրագետ աշխատեցին: Սասունը դեռ ողջ էր, ասացի. «Սասու՛ն, մենք իզուր ենք այդ մարդկանց կասկածում: Մարդիկ նորմալ իրենց գործը արեցին»: Հակատանկայինի Վալերան էր մեր ուղղությամբ: Շատ ծանր ուղղություն էր: Սկսեցինք Վանք գյուղից եւ մինչեւ Գետավանի կամուրջը գնացինք:

Բ. - Այդ ուղղության պատասխանատուն Ամարասի Արթու՞րն էր:

Ս.Գ. - Արթուրը 1993 թվականի ամռանը ընդհանուր գործողությունների պատասխանատուն էր: Բայց այդ ժամանակ Արթուրը Գրադ Ժորայի տեղակալն էր, հրետանավոր էր: Արթուրը ոգեւորող ուժ ուներ:

Վաղուհասի գործողությունը այսպես էր: Հասանք Կարմիր քար, որի Ղլեն քար կոչվող տարածքը մոտ ութ հարյուր մետր էր, բաց դաշտ էր: Հարկավոր էր այդ մասը վազելով անցնել, շատ վտանգավոր տեղ էր: Հակառակորդը դիրքավորված էր Վաղուհասի վերեւի բարձունքում՝ Ղլեն քարում: Եթե այն գրավեինք, ապա Վաղուհաս գյուղն իր դիրքերով կլիներ մեր հսկողության տակ: Դա մեր երկրորդ գրավումն էր: Մի անգամ էլ էինք մտել, հետո դուրս եկել, չենք կարողացել պահել: Ամռանը, երբ Ամարասի Արթուրը այդ ուղղությամբ էր, Գիրոն էր մեր ջոկատի հրամանատարը: Այդ օրը Գիրոն վիրավորվեց, Սամվել Շահմուրադյանը զոհվեց, աշտարակցի Էդիկը, որը փոքր ջոկատով եկել էր, վիրավորվեց: «Արծիվ» գումարտակներն էլ էին այնտեղ: Փաստորեն, մեր ջոկատը երեք անգամ՝ մի անգամ Գիրոյի, երկու անգամ իմ հրամանատարությամբ գրավել է այդ տարածքը: Այդ դասական օպերացիան երրորդ գրավումն էր: Այդ ծանր ճանապարհով հասցրել եմ տանել «Т-72» տանկ եւ «БМП-2»: Ղլեն քարի ուղղությամբ լեռնաշղթա կար: Այդտեղ թաքցրել եմ այդ երկու զրահատեխնիկան, տանկը՝ աջ կողմում, զրահամեքենան՝ ձախ կողմում: Մինչ այդ ես Վաղուհասում չէի եղել: Վաղուհասցի Ժյուլվեռն կար: Հարկավոր էր տարածքը իմացող մեկը, որպեսզի ուղեկցեր: Վաղուհասից հինգ-վեց հոգի մարդ կային այդտեղ:

Բ. - Վաղուհասի ջոկատները կայի՞ն: Երկու ջոկատ ունեին:

Ս.Գ. - Վաղուհասը գրավելիս եղել են ընդամենը հինգ-վեց վաղուհասցիներ՝ Ժյուլվեռնի գլխավորությամբ: Գուցե մյուս ուղղություններում են եղել՝ Խալաստոյ Ագոյի կամ Օգանովսկու մոտ: Օգանովսկին եւ Իլյիչը միասին էին: Կիչան - Առաջածոր - Դրմբոն

ճանապարհի վրա նրանք էին աշխատում: Ժյուլվեռնը ծանոթացնում էր տարածքին: Ես քարտեզին տեղյակ էի եւ ինձ համար հեշտ էր տեղանքում կողմնորոշվելը: Ինստիտուտում աշխարհագրությանս գնահատականը հինգ էր: Սկսում ենք օպերացիան: Բաց դաշտ էր: Իսկ բաց դաշտում կռվելը շատ դժվար է: Բաց դաշտով ութ հարյուր մետր վազելը հեշտ չէ: Մեկ գնդացրորդը կարող էր մեզ պահել: Ճիշտն ասած՝ տեխնիկայի հրամանատարներին չէի վստահում, քանի որ նրանք անմիջապես իմ ենթակայության տակ չէին: Իմ տղաներից մեկին ռացիայով նշանակում եմ «БМП-2»-ի մոտ, մյուսին՝ իմ ռացիայով, տանկի մոտ: Մենք էլ սկսել էինք առաջ գնալ: Նրանց խնդիրը այն էր, որ պետք է կրակեն այնքան, մինչեւ հակառակորդի ու մեր միջեւ հարյուր մետր տարածություն մնար, եւ այդ ընթացքում հակառակորդը չկարողանար գլուխը բարձրացնել: Մինչեւ վազելով մեր բարձրանալը՝ տեխնիկան աշխատել է: Այդ ընթացքում մենք ոչ մի անգամ չենք կրակել: Մնացած հարյուր մետրը մենք սկսեցինք ավտոմատներով կրակել: Այդ ութ հարյուր մետր առաջ անցնելը տեւել է մոտ տասը րոպե: Հակառակորդին հերթական անգամ խուճապի մատնեցինք: Հիմնական ոգեւորող ուժը մեր տղաներն էին: Տպավորություն թողեց Ժենյան: Նռնականետով մի քանի արկ խփեց: Նա ավելի պատրաստված էր, Աֆղանստանի պատերազմին մասնակցել էր: Հետագայում խոսակցություններ եղան, որ այդ տղային մերոնք լավ չեն վարձատրել, անցել է հակառակորդի կողմը: Քելբաջարի գործողությանն էլ միասին էինք: Այդպես է, երբ մեկ-երկու անգամ փորձելուց հետո տեսնում ես, որ միասին մասնակցելը հաջող է ստացվում, ուզում ես մյուս գործողություններին էլ միասին լինել: Արդեն առաջանում է «սպայկա» հասկացողությունը, «невербальное общение», երբ իրար հետ առանց երկար խոսելու հաջողվում է գործողությունը: Այդպես, գրավեցինք Վաղուհասի վերեւի դիրքը՝ Ղլեն քարը: Այդտեղից իջանք Գետավան տանող ճանապարհի կամրջի մոտ, որը պայթեցրել էին, եւ դիրք դրեցինք: Եթե չեմ սխալվում, այդ կամուրջը չորս-հինգ ամիս առաջ՝ ամառվա գործողությունների ժամանակ, նահանջելիս Ամարասի Արթուրն էր պայթեցրել: Այդ օրը մենք այնքան հոգնած էինք, բայց ասացի, որ մինչեւ մեր մեքենաները՝ «Ուրալ»-ը, «ՈՒԱԶ»-ը, Դրմբոնի ավտոճանապարհով չգան, մենք այստեղից ետ գնացողը չենք: Փաստորեն, մենք դիրքը գրավել, հասել էինք ասֆալտե ճանապարհին եւ սպասում էինք, որ Դրմբոնի խաչմերուկից կապ տան, որ ճանապարհը արդեն մերն է: Նրանք մեկ-երկու օր ուշացրին: Մենք ստիպված էինք այդքան տեղը ոտքով ետ գալ:

Բ. - Մարտակերտի գրավմանը ինչպե՞ս եք մասնակցել:

Ս.Գ. - Մարտակերտի գրավումն էլ մեր շատ հիշվող գործողություններից է: 1993 թվականի հունիսի 26-ին, 27-ի լույս գիշերը մտել ենք: Յոթ հարյուր ութսուներեք մետր բարձրություն ունեցող հեռուստաաշտարակի՝ Աղդարայի ուղղությամբ մենք էինք: Շատ ծանր ուղղություն էր: Այնտեղ պատ կար: Այդ պատով մենք պետք է բարձրանայինք: Մեզանից ձախ «Խաչակիրներ» ջոկատն էր՝ Քահքեջյան Կարոյի հրամանատարությամբ, որը սփյուռքից էր՝ Սպիտակ արջ ծածկանունով: Կարոն այդ օրը զոհվեց: Կարոյից ձախ Մորուք Ռաֆոն էր, Խալաստոյը, նրանցից ձախ՝ Իլյիչը: Հեռուստաաշտարակի բարձունքի վրա այդ չորս ուղղություններն էին աշխատում: Պատերազմի ժամանակ ընդունված էր մեկը մյուսին խաբելը, մանավանդ, բարձր հրամանատարը՝ իր ենթակային: Նորիկը կապվեց, թե՝ Սուրի՛կ, Սպիտակ արջը արդեն իր դիրքերը գրավել է, դուք ուշացնում եք, առաջ գնացեք: Ես Կարոյին տեսնում էի, նա ինձանից հինգ հարյուր մետր ձախ ուղղությամբ էր: Մենք կապի մեծ հնարավորություն ունեինք, լսում էի ոչ միայն այն եթերը, որն օգտագործում էինք այդ պահին, այլեւ այն ամենը, ինչ կատարվում էր: Կապի պետը զեկուցում էր կատարվածի մասին: Մեզ խաբել հնարավոր չէր: Նորիկը Սպիտակ արջին էլ կապվեց, թե՝ Խալաստոյը արդեն իր դիրքը գրավել է: Խալաստոյին կապվեց, թե՝ Իլյիչը իր դիրքը գրավել է: Խաբում էր, որ առաջ տանի: Նորիկի ձեւերից էր: Ընդունված ձեւ էր, բայց սխալ: Դրա պատճառով մենք շատ զոհեր ենք տվել: Ես տեսնում էի, որ Կարոն առաջ չի գնացել: Նորիկի համար հեշտ էր չորս-հինգ կիլոմետր հեռու գտնվող հրամանատարական կետում նստել, հրաման տալ, թե՝ գնացե՛ք: Մենք էլ հո հարիֆ չենք՝ ամեն ասած անենք: Մենք էլ էինք փորձում միասնական թիմ ունենալ: Բանակը հենց միասնական հրամանատարությունն է, որին պետք է ենթարկվել: Բայց եթե հիմար հրաման է, ես չեմ պատրաստվում այդպիսի հրամանին ենթարկվել: Գուցե դրանից տուժենք, բայց ես ինձ երջանիկ եմ զգում, որ գոնե մի մարդու կյանք փրկել եմ: Մեջներիս միամիտը լոսանջելեսցի Կարոն էր: Ու նա առաջ է գնում: Մենք նրա մարտը տեսնում էինք: Նա անձնուրաց գործողություններ կատարեց: Նրա տղաներից մեկը կորավ, յոթ-ութ ժամ հետո գտնվեց: Մենք դադար էինք տվել: Կարոն գործողությունները սկսեց: Հետո նրա ձայնը կտրվեց: Հասկացանք, որ Կարոն այլեւս չկա: Մենք գիտեինք, որ նա հինգ հարյուր մետր կամ մեկ կիլոմետր հեռու է մեզանից, բայց նրան չէինք տեսնում, որ կարողանայինք օգնել: Կարող էին մեզ վերեւից քարով էլ խփել: Ամենածանր ուղղությունը մերն էր: Դադար էինք տվել: Մի քիչ ձախ էինք քաշվել: Կարոյի զոհվելուց մեկ-երկու ժամ հետո բարձրացել ենք Կարոյենց ուղղությամբ, որը նույնպես շատ ծանր ուղղություն էր համարվում: Մեզանից առաջ այդ ուղղության վրա են

եղել Ասկերանի տղաները՝ Վիտոյի գլխավորությամբ, Օգանով Սամոն, Ցորի տղաներն էին: Նրանք ահագին զոհեր էին տվել: Հետո պայմանավորվեցինք, որ մենք ենք անցնելու այդ ուղղությամբ, նրանք գնալու են Պուշկեն յալի վրա աշխատեն: Ինձ համար զարմանալի էր, որ երբ դադարից հետո բարձրացանք այդ ուղղությամբ, ոչ մենք աշխատեցինք, ոչ ադրբեջանցիները: Ընդմիջումից՝ ժամը երկուսից հետո ուժեղ հրաձգություն է սկսվում: Քիչ-քիչ առաջ ենք գնում: Արդեն մութն ընկնում էր: Թուրքերը խուճապի մեջ էին: Մեր հրետանին լավ էր աշխատել, նրանք ահագին վիրավորներ, զոհեր էին ունեցել: Այդ ամբողջ օրվա ընթացքում տեւած հարձակման լարվածությանը ադրբեջանցիները չդիմացան: Նրանց դիմադրությունը թուլացել էր: Բարձրանալու ընթացքում լուրջ դիմադրության չենք հանդիպել: Փաստորեն, մեր ջոկատը բարձրացել է Սպիտակ արջի ուղղությամբ: Երբ մենք վերեւում էինք, ադրբեջանցիների մոտ մի հատվածը բաց էր մնացել: Սկսեցինք կողքի հարվածներով խփել հեռուստաաշտարակի ուղղությամբ: Մեր բարձրանալուց հետո Մորուքը, Իլյիչը իրենց ուղղություններով բարձրացան: Հակառակորդը փախուստի դիմեց: Մենք գնացինք նրանց հետեւից, խփեցինք: Տեսնում էինք, թե ինչպես են վազում: Նրանք քիչ էին: Այդ պահին մենք ավելի շատ էինք, եւ նրանք հոգեբանորեն չդիմացան: Երբ տեղ հասանք, տանջված էինք, քաղցած: Ադրբեջանցիները իրենց համար թեյնիկով տաք թեյ էին պատրաստել: Չհասցրին խմել: Այդ թեյը մենք խմեցինք: Մեր տղաներից մեկը՝ Ղուկասյան Արայիկը, մասնագիտությամբ իրավաբան էր: Իմիջիայլոց ասեմ, որ մեր «Ազատագրական բանակ» ջոկատի ուժը նաեւ նրանում էր, որ հիմնական հրամանատարական կազմը բարձրագույն կրթություն ուներ: Արայիկի մոտ սալյուտի ատրճանակ կար: Արդեն մութ էր: Հեռուստաաշտարակի վրա հրավառություն արեցինք: Բաբայան Սամվելը շնորհավորեց, դրանից մենք ոգեւորվեցինք: Տեսնենք՝ աջ կողմից՝ Պուշկեն յալից, Ցորի տղերքն են առաջ գալիս: Օգանով Սամոյի ու Պետրոսյան Ռազմիկի գլխավորությամբ Պուշկեն յալը գրավել էին: Որոշեցինք միանգամից մտնել Մարտակերտ: Բայց քանի որ տղերքը շատ էին հոգնած, մենք որոշեցինք առաջնահերթ զինամթերքի եւ ուտելիքի խնդիրները լուծել: Կապվեցի կարմիրավանցի Ցաշայի հետ (նրա զոհվելուց հետո իր երեխան ծնվեց): Գիրոն նրանց հետ էր մնացել: Գիրոյին ասացի, որ իր հետ յոթ-ութ տղաների բերի որպես պահեստային ուժ, ինչպես նաեւ զինամթերք եւ ուտելիք: «ՈՒԱՉ»-ով եկան մինչեւ Շորբուլաղի քարհանքի խաչմերուկը: Ճանապարհի վրա մի տեղ կար, որը ստուգված չէր: Գիրոն ինձանից հարցրեց, թե ինչ անեն: Ասացի, որ «ՈՒԱՉ»-ը բարձրանա այդ ճանապարհով անցած տանկի հետքերով:

Մութ էր: Վարորդը սխալվեց եւ տանկի հետքից շեղվեց: Գիրոն մեքենան կանգնեցրեց, կապվեց, թե՝ «Սուրիկ, շեղվել ենք, չենք կարողանում տանկի հետքերը գտնել»: Ասացի. «Թող տղերքը դուրս գան, դու էլ հետները, ոտքով եկեք, թող վարորդը այդ ամեն ինչը բերի»: «Ֆագոտի» սարքավորում էր, երկու հատ «ֆագոտի» արկ, ահագին զենք-զինամթերք: Տղերքը Շորբուլաղի քարհանքի խաչմերուկից մինչեւ հեռուստաաշտարակ՝ մոտ երկուսուկես-երեք կիլոմետր, ոտքով են եկել: Տղերքի՝ մեքենայից իջնելուց երկու-երեք րոպե հետո մեքենայի պայթյունի ձայնը լսվեց: Լավ է, որ գոնե այդ յոթ հոգին փրկվեցին: Կեսգիշերին գնացինք, չէինք կարողանում վարորդին գտնել: Հաջորդ օրը՝ ցերեկը, կարողացանք գտնել: Տղերքի մի մասն արդեն մտել էր Մարտակերտ: Ես ուզում էի, որ դիրքերում մարդ մնար, որովհետեւ Մարտակերտում դիրք պահելն անիմաստ էր: Հիմա մտածում եմ՝ կարող էինք համբերել, այդ պահին «ՈՒԱՉ»-ը չկանչել, վարորդը կարող էր ուշադիր լինել, տանկի հետքերից չշեղվել: Դե, պատերազմը իր օրենքներն ունի, առանց զոհերի ոչ մի հաղթանակ չի լինում: Մեր ջոկատից Գալստյան Ցաշան դարձավ Մարտակերտի գրավման զոհը: Նրա վեց երեխաները մնացին որբ: Եվ զոհերը միայն հաղթանակով են արդարացվում: Մտանք Մարտակերտ: Արայիկին թողեցինք որպես ավագ, մենք գնացինք Դրմբոն: Մարտակերտն ականապատված էր: Զգուշացրել էինք, ծանոթացրել անվտանգության կանոններին, բայց դարձյալ դեպքեր տեղի ունեցան: Մեր «Ուրալ»-ը մոտ քսան տղաներով պայթեց: Զոհ չունեցանք, բայց տասնհինգ հոգի վիրավորվեցին, ինչը մեզ համար մեծ կորուստ էր: Այդ դեպքը Մարտակերտի գրավման մյուս օրն է պատահել: Մարտակերտի գրավումը մեզ վրա շատ ծանր նստեց:

Բ. - Հետո գնացիք Քելբաջարի ուղղությամբ:

Ս.Գ. - Երբ սկսեցինք ընդհանուր հարձակումը մեր տարածքները ետ գրավելու համար, Պուշկեն յալը գրավեցինք: Ընդհանուր հրամանատարը Ավոն էր՝ Մոնթեն: Առաջին անգամ էր, որ տեխնիկայի առկայությամբ Մարտակերտում օպերացիա արեցինք: Այն ժամանակ մենք չէինք տեսել, որ տասը հատ զրահատեխնիկա՝ հինգ տանկ, հինգ «БМП», աշխատեն: Ճիշտն ասած՝ դա մարտունեցիների շնորհքն էր: Ավոն նշանակված էր Պուշկեն յալի գրավման ուղղության հրամանատար: Աջ ուղղությունը իմն էր: Ինձանից ձախ Նավթալյան Արմենն էր: Մենք համարյա իրար հետ բարձրացանք: Մի քիչ ձախ, որը Խալաստոյի ուղղությունն էր, Դուշման Աշոտն էր: Դրանից ձախ՝ Թազա խաչի ուղղությամբ, Իլյիչն էր: Այդ օրը բարձրացանք Պուշկեն յալ, մի քանի օր պահեցինք: Հետո իջանք, հանձնեցին:

1993 թվականի մարտի սկզբին մեր դիրքերը այսպես էին

դասավորված՝ Մոխրաթաղ, Մաղավուզ, Հոռաթաղի վերեւը՝ Դամիրլու, Սիրունության աղբյուրագլուխ, Հայրունաձիալ կոչվող բարձունքը՝ ութ հարյուր հիսունչորս մետր բարձրությամբ: Փաստորեն, Մարտակերտից մի գիծ հետ էինք:

Մոտ չորս ամիս՝ մարտից մինչեւ հունիս, սառեցրինք, հետո մեր ուժերով տեղափոխվեցինք, որպեսզի սկսենք Քելբաջարի գործողությունը: Հիմնական ուղղության՝ Գետավան - Չարեքտար - Քելբաջար ճանապարհի հրամանատարը Ավոն էր, բոլոր ուժերը նրան էին ենթարկվում: Մենք բարձրացանք Աղդաբան, Չայղուշան ուղղությամբ, քանի որ այդ տարածքները մեզ ծանոթ էին: Աղդաբանն ու Չայղուշանը գրավելուց հետո մեր խնդիրն էր՝ իջնենք Աղդաբանի եւ Չարեքտարի խաչմերուկը, Չարեքտարի թիկունքի ճանապարհը կտրենք, որպեսզի հակառակորդը սնուցում չստանա, եւ Ավոյի ուղղությունը՝ Գետավանից Չարեքտար, նորմալ աշխատի: Մենք մեր գործը գերազանց կատարեցինք: Կորցրինք Հակոբյան Սասունին: Նա իմ մանկության, դպրոցական եւ ուսանողական տարիների ընկերն էր: Մենք մի սենյակում ենք ապրել: Ինձ համար շատ ծանր էր Քելբաջարի գրավումը: Քելբաջարի գրավման հետ կապված դեպքերը շատերն իրենց են վերագրում, բայց հիմնական մարտը այսպես է եղել՝ մենք փակել ենք ճանապարհը, Ավոյի ուղղությունը նորմալ աշխատել է: Մի ուղղության վրա էլ եղել է Սիսիանի Աշոտը: Նրանք Վանք, Նարեշտար գյուղերի ուղղությամբ են մտել: Նրանք նույնպես փայլուն աշխատել են: Զոհեր են ունեցել: Նորիկի տեղակալը՝ Աշոտը, նույնպես այդ ուղղության վրա էր: Վարդենիսի կողմից Հովսեփն է աշխատել: Մեր տանկիստը եւ Վալոդիկը ընդամենը յոթ հատ արկ են խփել, եւ մտել ենք Քելբաջար: Մեր ուղղության վրա են եղել Ադմիրալ Սամոն՝ իր ջոկատով, Հրազդանի Լաերտը, Միսոն՝ Ծաղկաձորի տուրիստական բազայի տնօրենը: Ապրիլի 1-ին առանց որեւէ կրակոցի մտնում ենք Քելբաջար: Քելբաջարում տիրություն անողները շատ էին: ՀԱԲ-ի հրամանատարը՝ Վասիլյան Ռազմիկը, Քելբաջարի գրավումից հինգ օր հետո հավաքեց յոթ-ութ հրամանատարների՝ ինձ, Նորիկին, Հովսեփին, սեղան բացեց՝ շամպայնով, աղանդերով: Մենք այն ժամանակ այդպիսի բաներ չէինք տեսել: Ծնորհավորեց եւ ասաց, որ ինքը Վազգենի կողմից նշանակվել է Քելբաջարի պարետ: Բայց պարզվեց, որ այդպիսի բան չի եղել: Քելբաջարում հայտնվեցին որոշ դիվերսիոն խմբեր: Հակառակորդը շատ լավ էր հասկանում այդ տարածքի նշանակությունը: Ես պաշտոնապես նշանակված էի Քելբաջարի բոլոր գյուղերի մաքրման հրամանատարը: Արդեն մի ամիս անցել էր, որ մենք Քելբաջարը գրավել էինք, բայց դեռ այնտեղ աշխատում էինք: Մտնում էինք մի գյուղ եւ մի ամբողջ «Ուրալ» լիքը

ադրբեջանցիներ պատանդ վերցնում: Ես եւ իմ մարտական ընկերը՝ Միրզոյան Վարդանը, վարչակազմի նախագահին՝ Սարգսյան Վլադիկին, տարածքն էինք ցույց տալիս, ծանոթացնում, անասունների գլխաքանակի թվերը քննարկում, որ տանեն, կոլխոզների, սովխոզների տնտեսությունները վերականգնեն: Մենք ուզում էինք, որ գրաված տարածքներում բնակչություն հաստատվեր, հակառակ դեպքում՝ մեր բոլոր աշխատանքները միտք չունեն: Այն փաստից, որ այսօր Զանգելանում, Կուբաթլուում մարդ չի ապրում, մենք ոչինչ չենք շահում:

Ճանապարհին «ՈւԱԶ» տեսանք: Ես եւ Վարդանը նստեցինք, որ գործի գցենք, կրակեցին մեզ վրա: Քարանձավների մեջ թուրքեր էին ապրում: Ես ու Վարդանը միանգամից թռանք մեքենայից: Մեր հմտության եւ ճարպկության շնորհիվ՝ մենք դուրս եկանք այդ վտանգավոր իրավիճակից: Ադրբեջանցիները ուզում էին մեզ պատանդ վերցնել: Իրարից տասը մետր հեռու էինք, ուղղակի նրանք քարանձավից էին կրակում, մենք էլ պատսպարվել էինք մի քարի ետեւում: Մեքենայից ցատկելիս ռացիան ձեռքիցս ընկավ: Կապ չկար, որ տղերքին օգնության կանչեի: Նրանք կողքի գյուղում էին: Վլադիկը վերեւում էր: Ես այդ պահին չգիտեի՝ նա կարողանու՞մ է կատարվածը հաղորդել տղերքին, բայց այդ ամենը տեսնում էր: Վլադիկը մինչեւ հիմա լեգենդներ է պատմում մեր մասին, բայց մեզ համար մեր արածը սովորական գործողություն էր, այդպիսի դեպքեր շատ էին պատահում: Իսկ նա առաջին անգամ էր նման բան տեսնում: Ես եւ Վարդանը, դիմադրելով, տասը հոգու խփում ենք: Նրանք այդքան շատ, մենք՝ երկուսով: Այդ ընթացքում Վարդանը կրակոցներով պահում է, ես ձեռքս գցում եմ, ռացիան վերցնում: Կապ եմ տալիս, որ տղերքը գան, օգնեն: Առաջինը օգնության հասան Գուգուշ Լյովան եւ դիպուկահար Արթուրը: Գնդացիրները դրեցին քարանձավների ուղղությամբ եւ այնքան խփեցին, մինչեւ մենք կարողանանք այդտեղից դուրս գալ: Դա երեք-չորս ժամ հետո էր: Այդքան ժամանակ մենք պառկած վիճակում դիմադրել ենք: Հետո մտանք այդ քարանձավները եւ այդտեղից մի ամբողջ գյուղ հանեցինք: Նորիկի մոտ Զինավոր անունով թուրք պատանդ կար, նրան այդտեղից էինք վերցրել: Կարմիր Խաչը տպագրել էր լուսանկարը Սարգիս Հացպանյանի՝ մի մեծահասակ թուրք կնոջ գրկած: Այդ կինն էլ մեր բռնածներից էր: Մոտ երեսուն հոգու «Ուրալ»-ով հանում ենք այդտեղից:

Բ. - Ինչո՞ւ նրանք չէին գնացել:

Ս.Գ. - Չէին հասցրել:

Բ. - Այդտեղից Օմար գնալը շատ դժվար էր:

Ս.Գ. - Հա, շատ ծանր էր, եւ մարդիկ չէին կարողացել գնալ:
Հետո Մարտակերտը գրավեցինք:
1993 թվականի դեկտեմբերն էր: Օմարի լեռնանցքը, որն այդ ժամանակ Ներքին գործերի հրամանատարության տակ էր, հանձնվեց: Սկսվեց Օմարի լեռնանցքի երկրորդ գրավումը: Հակառակորդը այդտեղից հասել էր մինչեւ Չիչագլիի Ավոյի կամուրջ կոչվող տեղը: Դա նույնպես մեր շատ ծանր օպերացիաներից էր: Մեր կողմից Արշոյի, Բաբայան Կարոյի, Մարտունու Նելսոնի գումարտակներն էին, մենք էինք, Խալաստոյը: Մարտունեցիները երկու զոհ տվեցին: Այդ բոլորը իմ ուղղության վրա էին: Միասին բարձրացանք, մեծ չարչարանքներով դիրքերը գրավեցինք: Այդպես այդ լեռնաշղթայով գնացինք մինչեւ Յանշաղ գյուղի վերեւը: Վերջին գործողության ժամանակ խառը պատմություններ եղան. հայը հային պատահաբար խփեց: Խալաստոյն ու Ռազմիկն էին միասին: Աբովյանի տղաները սկսում են կրակել: Խալաստոյի տղաներից մեկը զոհվում է: Խալաստոյն էլ այդ տղաների վրա է կրակում: Մի քանի հոգի էլ այդ տղաներից են զոհվում: Դա Քելբաջարի երկրորդ գրավման տխուր պատմությունն է: Մի ուղղություն կար, որն առաջինը պիտի աշխատեր, Հաթերքի վերեւի Սեւ լճից անմիջապես Օմար իջնող ճանապարհն էր: Փոխարեն բոլոր ուժերը այդտեղ դնելու, երակը միանգամից փակելու՝ մենք սկսել ենք ներքեւից դեմը առնել: Յանշաղից ներքեւ՝ Բալասաղ գյուղում, ճակատ ճակատի հանդիպել ենք հակառակորդի դիվերսիոն, հետախուզական խմբին: Նրանք տասնմեկ հոգի էին: Տասը հոգուն մենք կոտորեցինք, մի հոգին փախավ: Զոհվածների վկայականները հավաքեցինք: Նրանց մեջ կային նաեւ արաբներ, չեչեններ: Շատ պատրաստված տղաներ էին: Դիվերսիոն խումբը ոչնչացնելը շատ հետաքրքիր օպերացիա էր: Այն ժամանակ ես միայն քաղաքացիական ինստիտուտն էի ավարտել, ակադեմիա դեռ չէի ընդունվել եւ չէի հասկանում, թե ինչու է օպերացիան կոչվում «Զնդան եւ մուրճ»: Մենք դիմացից էինք պահում, իսկ տղերքը հետեւից խփում էին: Հակառակորդի փախչելու պահին մենք երկու-երեք մետրից նրանց ոչնչացնում ենք: Վկայականները հանձնել եմ շտաբին: Այն ժամանակ շտաբի պետը Ֆելիքսն էր՝ այսօրվա զինկոմը: Այդ վկայականները առաջին լուրջ փաստերն էին, որով կարող էինք միջազգային հանրությանը ապացուցել, որ բացի ադրբեջանցիներից պատերազմում են նաեւ ուրիշ տեռորիստական ուժերի ներկայացուցիչներ: Հետո Չիչագլիի «տրեգապունկտը» վերցրինք: Մի խոսքով՝ ամբողջ լեռնաշղթան վերցրինք: Ներքեւից մենք էինք, Արշոյի գումարտակը, նրա տղաներից Աշոտը՝ «Խնուշինակն» էր: Գրավելով բարձրացել ենք: Վերեւից՝ Սեւ լճից,

Խալաստոյն էր մեր ուղղությամբ իջել, եւ մենք այդ ճանապարհի վրա հանդիպել ենք: Յանշաղից վերեւ ճանապարհը փակել ենք եւ դիրքերը տեղադրել: Սուգուլիկի կողմից մեր ջոկատի Սայադյան Համիկն էր, որը տանկիստ էր: Օմարի երկրորդ գրավմանը Հայաստանից եկած ուժերն էլ էին ընդգրկված:



Պատմում է Գեւորգ Ավագյանը *(Էրիկ, «Մահապարտներ» ջոկատի մարտիկ)*
17.02.2006 թ., Երեւան

Գ.Ա. - Ծնվել եմ 1965 թվականին Կիրովականում, ապրել եւ մեծացել եմ Աբովյանում ու Երեւանում:

Բ. - Շարժման մեջ ո՞նց ընդգրկվեցիր, ե՞րբ:

Գ.Ա. - Շարժում դեռ չկար, կային մարդիկ, ովքեր ստորագրություններ էին հավաքում Հայաստանով մեկ, որպեսզի Ղարաբաղը միանար Հայաստանին: Չգիտեմ՝ այդ ժամանակ ինչը դրդապատճառ եղավ, ինչ եղավ ինձ հետ, բայց ես էլ սկսեցի մասնակցել ստորագրությունների հավաքմանը: Հետո օպերայի մոտ իջնելով՝ ծանոթացա Իգոր Մուրադյանի, Սարուխանյանի հետ: Այսպես սկսվեց իմ՝ շարժման մեջ ընդգրկվելը:

Բ. - Ինչպե՞ս հայտնվեցիք Ղարաբաղում, ինչպե՞ս հավաքագրվեցիք:

Գ.Ա. - Ես չեմ հավաքագրվել, եղել եմ կամավորական: Շարժման սկզբից՝ սումգայիթյան դեպքերից հետո հայտնվել եմ շարժման մեջ, եղել եմ ակտիվիստներից, մասնակցել եմ Երասխավանի դեպքերին եւ մինչեւ 1994 թ. մայիսը եղել եմ Հորադիզում: Եղել եմ ՀԱԲ-ում, «Տիգրան Մեծ» եւ «Մահապարտներ» ջոկատներում: Ղարաբաղից վերադարձել էի տուն: Վազգենի կոչը լսեցի՝ ուղղված ժողովրդին, որ եթե ամեն շրջանից տասը-տասնհինգ տղա լինի, ինքը կկազմի «մահապարտների» ջոկատն ու կհասնի ինչ-որ արդյունքի: Եվ ես հավաքագրվեցի «Մահապարտներ» ջոկատում: Մի ամիս մայրաքաղաքային գնդում պարապելով, դուրս գալով Հոկտեմբերյանի հրաձգարան՝ մարտական պատրաստություն էինք անցնում, որպեսզի հրամանատարությունը համոզվեր, որ լրիվ պատրաստ էինք:

Մեզ տանելը մի քանի օրով արագացրին: Որքանով ես եմ տեղեկացված՝ ազերիները գրոհներով արդեն գալիս էին դեպի Մարտակերտի Վանք գյուղը: Հարկավոր էր կանգնեցնել նրանց առաջխաղացումը: Այստեղից «Ուրալ» մեքենաներով, «Իկարուսներով» շարժվեցինք դեպի Ղարաբաղ: Հենց սկզբից հրամանատարը պետք է լիներ Արկադի Իվանիչ Տեր-Թադեւոսյանը, համենայն դեպս, մեզ այդպես էին ներկայացրել: Բայց իրականում հրամանատար եղավ Ալիկը՝ Աստվածատուր Պետրոսյանը, նաեւ՝ Հովսեփ Հովսեփյանը: Ճանապարհին՝ Սիսիանում, Գորիսում, ժողովուրդը լավ դիմավորում եւ ճանապարհում էր մեզ: Մեծ հույսեր էին կապում մեզ հետ: Գիշերվա ժամը հինգի կողմերը հասանք Ստեփանակերտ: Արագ գնալու պատճառով իրար կորցրել էինք, հետո միացանք: Ես «Ուրալ» մեքենայով էի, հետախուզության մեջ էի անդամագրված:

Մինչեւ այդ ծառայել եմ Մոլդովայում՝ դեսանտային զորքերում, եղել եմ Աֆղանստանում ու մասնակցել պատերազմին: Ինչպես կարելի էր լինել Աֆղանստանում ու չմասնակցել պատերազմին: Այնտեղ անգամ թիկունքայիններն էին պատերազմին մասնակցում, ավելի մեծ վտանգ կար նրանց համար, քան ճակատայինների: Իհարկե, ռուսական բանակից մնացած ռազմական հմտություններն ինձ շատ օգնեցին, շատ դեպքերում եթե ես մի երկուսից պակաս գիտեի, մի հարյուրից ավելին գիտեի:

Մի հետաքրքիր դեպք պատմեմ: Դեռ Մարտակերտ չէինք հասել, ավելի ճիշտ, Վանք գյուղ չհասած՝ Քոլատակի կողմերը կանգնեցինք ջուր խմելու: Մի տատիկ հանդիպեց. «Ձեզ մատաղ, խոխեք ջան, բա ասում են ռեմբոներ ըն կյամ»: Մենք ծիծաղեցինք. «Չէ՛, տատի՛կ ջան, «ռեմբո» չենք»: Ասաց. «Ռեմբոները ձեր դեմ դալաթ են արել: Աստծու սիրուն, դուք մեր փրկիչներն եք, եկաք»:

Տեղ հասնելուն պես ջոկատը բաժանվեց երեք մասի: Մի ջոկատը գնաց Նարեշտարի ուղղությամբ, մյուսը՝ սարերով՝ Վաղուհասի ուղղությամբ, երրորդը՝ Առաջաձորի: Հետախուզությունը մինչեւ մեր գալն արված էր, բայց շատ թեթեւ: Գիտեին, որ ազերիները պատրաստվում են դեպի Վանք գյուղը գալ, բայց թե ինչ ուժերով, ինչ ձեւով, ոչ ոք չգիտեր: Մեզ դիմավորեցին Վանք գյուղի ժողովուրդը, Պարգեւ սրբազանը, ջոկատի հրամանատարը՝ Վանքի Յուրան: Ընկերներ շատ կային: Հանդիպեցի Ամարասի Արթուրին: Մեզ հետ մասնակցեցին հաթերքցի Հայկը, Տեր Հովհաննեսը, Վաղուհասի Հայկն իր եղբոր հետ՝ իրենց ջոկատով: Պարզ է, Ղարաբաղի ջոկատները կային, բայց արդեն զգացվում էր, որ հոգնել էին: Դե, ինչքան կարելի է պատերազմել, մի ամիս, երկու ամիս... Առանց փոխարինելու շատ դժվար էր: Ես դեպի Վաղուհաս ուղղությամբ էի՝ Ամարասի Արթուրենց հետ: Մեր հրամանատարը նա էր եւ Ալիկ Պետրոսյանը: Հիմնական ուղղությունը

Վաղուհասն էր, որովհետեւ դեպի ձորակ բացվող ճանապարհը հենց այդտեղով էր անցնում: Դրմբոն գյուղը երկու-երեք օրվա մեջ մի տասն անգամ ձեռքից ձեռք ընկավ: Մենք Գանձասարից գյուղի վերեւի՝ անտառի ճանապարհով ենք գնացել:

Բ. - Սնունդն ինչպե՞ս էր, ինչպե՞ս էին ձեզ կերակրում:

Գ.Ա. - Եթե ասեմ՝ շատ լավ էր, սուտ կլինի: Պաքսիմատներ էին տալիս, որ ատամներս ջարդում էինք դրանցով, բայց որ ասեմ՝ սոված էինք, դա էլ չէ: Սնունդը գյուղում լավ էր, բայց վերեւում արդեն լավ չէր, հացը չէին հասցնում, իսկ առանց հացի ինչ էլ ուտեինք, միեւնույնն է, չէինք կշտանում:

Առաջին մարտը շատ ծանր էր, դիրքային չէր: Մի քանի հոգու ուղարկել էին հետախուզության, անգամ տեղի տղաներից կային հետները: Հետախուզության արդյունքներն իմանալով, թե թշնամին որտեղ է, ինչպիսի դիրքեր են, ինչ շարժ, ինչ գինամթերք կան, ինչպես կարելի է դիրքերը հաղթահարել՝ մեզ ուղարկեցին դեպի Վաղուհաս: Մենք իջանք ձորը: Ներքեւում գետ կա, գետի մոտ մի 250-300 մետրի վրա բացատ կա, բացատի մոտ Վաղուհասի ուղղությամբ, գոմեր կան: Խոսելով իջնում էինք: Տղաներից մեկը երգում էր: Ասացինք. «Ա՛յ ախպեր, հո չե՞ս եկել տուրիստական արշավի, ձայնդ կտրիր»: «Մեր հողի վրա ենք, ինչի՞ց պիտի վախենանք», - պատասխանեց նա: Իսկ թշնամին մեր շարժվելու մասին չպետք է իմանար: Եթե մարդու վախի բնազդը չի աշխատում, նա չի կարող պաշտպանվել, իսկ եթե չի կարող պաշտպանվել, ուրեմն՝ իզուր է գնացել մարտի: Գետի մոտ դադար տվեցինք, որ բարձրանանք դիրքեր: Դիրքերը բարձրանում էին դեպի Կարմրաքար: Այդ բլուրը շատ բարձր, արտակարգ դիրք ունի: Եթե այդտեղ ականանետ կամ նռնականետ լիներ, Հաթերքն իր շրջակայքով կվերցներ կրակահերթի տակ: Վատն այն էր, որ Հաթերքից էլ բլուրն էր շատ լավ երեւում: Թշնամին էլ արդեն դիրքավորված էր, ունեին նռնականետ, տանկեր, ականանետ ու խփում էին: Երկրորդ օրը մարդիկ երեւացին: Գետը ձորի միջով է գնում, երկու ափերին անտառ է: Ճանապարհը գետի ափով է գնում, մի 100-150 մետր էլ անտառի միջով է գնում ու հասնում է բացատ, որտեղ գոմերն են: Պիտի արդեն բարձրանայինք այդ բացատը, մեր դիմաց դուրս եկան երեք-չորս հոգի՝ նույնպիսի համազգեստով, ինչով մենք էինք, նույնպես բեղ-մորուքով, ինչպես մենք էինք: Տղաներից մեկը կարծեց, թե մեր հետախուզությունից են՝ առանց ճանաչելու, թե ով են, ինչ են: Մերոնցից մի քանիսը վազեցին առաջ: Բայց, ցավոք, նրանք ազերիներն էին՝ հետախույզները: Իրենք էլ գալիս էին դեպի Գանձասար: Որ ասեմ՝ նրանք եւ մենք պատրաստված էինք, սուտ կլինի: Մենք մոտ հարյուր երեսուն հոգով էինք: Թուրքն ասաց. «Подождите,

переговорим». Մեկը գոռաց. «Թու՛րք է, տղե՛րք, թու՛րք է»: Մի կրակահերթ եղավ, ու դրանից հետո անտառի մեջ անկանոն կրակոցներ լսվեցին: Կրակահերթեր էին, որ արձակվում էին, ու չէր տարբերվում՝ որտեղից են: Տղաները չէին սպասում, շատերն անփորձ էին, պատերազմի մեջ չէին եղել: «Մահապարտների գումարտակ» անվան մեջ չգիտեմ՝ ինչ ձգողական բան կար, որ եկել էին: Մեր բոլոր ջոկատները, որոնք պատերազմում էին, չէին գնում մեղր ուտելու: Կամ պիտի մահանային, կամ ողջ մնային: Ճիշտ է, ավելի լավ էր ողջ մնային: Նրանք էլ էին մահապարտ, բայց կռվել ցանկացողների մեծ մասը գալիս էր «Մահապարտների» գումարտակ: Մեր տղաները խուճապի մատնվեցին, քանի որ բոլոր կողմերից կրակում էին: Նրանք չհասկացան, թե ինչ է կատարվում, եւ մի պահ կտրուկ ետ քաշվեցին այնպես, որ տեղում դիրքավորվել պատրաստվողներին էլ մի տասնհինգ-քսան մետր հրելով՝ տարան դեպի գետը: Մի տասնչորս հոգով՝ «Չաուշի», «Արաբոյի» հետ դիրքավորվեցինք գետին չհասած՝ անտառի մեջ, երեք հոգի էլ գետն անցել, վերեւում էին դիրքավորվել: Եվ մենք հարվածը վերցրինք մեզ վրա, որ թշնամին խփելով առաջ չգնա: Ռուբոն՝ «Չաուշի» տղաներից, նռնականետը վերցրեց ու դիմեց ինձ. «Մեռնեմ քեզ, սնարյադով օգնի»: Արկով լիցքավորում էի, տալիս նրան, դնում էր, խփում: Առաջին երկու կրակոցը որ եղավ, ասացի, որ տեղը փոխի, նշանառուն աշխատում է: Նա կանգնած էր ծառի կողքին: Ասաց. «Դրանց հերն եմ անիծել, կարող է պատահի՝ իրենք հասցնեն ավելի շուտ ինձ խփեն, քան ես իրե՞նց»: Նորից ասացի, որ տեղը փոխի: Արկ ուզեց, որ կրակի ու տեղը փոխի: Տվեցի, այդ մեկն էլ խփեց, բայց չորրորդ արկը չհասցրեց, նրան խփեցին ճակատից: Իմ ձեռքին գնդացիր էր: Կրակահերթերով մենք սկսեցինք պահել թուրքերի ճնշումը: Ճանապարհի վրա դիրքը հարմար չէր: Ոչ կարողանում էինք պառկած կրակել, դիմացը բարձր էր, ոչ էլ տեղ կար կանգնած կրակելու: Նստած տեղից էի խփում: Տղաներին ասացի, որ Ռուբոյին խփել են: Ռուբոյի դիակն էլ հետներս՝ ետ քաշվեցինք դեպի գետը:

Բ. - Ռուբոյի խփվելը փորձի պակասի՞ց էր:

Գ.Ա. - Ռուբոյինը փորձի պակաս չէր, ջղայնություն էր: Որ անփորձները, աղմուկով մեզ էլ հրելով հետ, քաշվեցին, ջղայնացավ: Ոչ փորձի պակասն էր, ոչ էլ ոգին էր պակաս, ամեն ինչն էլ ուներ: 17-18 տարեկան երեխա կար կողքներս, որ փամփշտակալը թարս էր հագցրել: Այն ավտոմատի վրայից հանելու համար գետի մեջ պառկած չարչարվել եմ: Փամփշտակալը ջարդել եմ, ավտոմատի մեջ մնացած փամփուշտները հանել եմ, նոր փամփշտակալ տեղադրել, տվել իրեն: Մեզ հետ լենինգրադցի Իգոր կար, մի ռուս տղա, միշտ խմած էր, բայց ուղեղն աշխատում էր: Ասում էինք. «Էս մեր պատերազմն է, դու ի՞նչ ես

անում էստեղ»: Ասում էր, որ ինքը նրանց հետ իր հաշիվն ունի: Ու թե ինչ հաշիվ էր, չիմացանք: Բայց տղան՝ որպես քրիստոնյա, մեր կողքին կանգնեց մինչեւ վերջ: Գետի մեջ պառկած ուղիղ հինգ ժամ, եթե ոչ ավելին, այդտեղ կռիվ ենք տվել: Մարդ ուղարկեցինք օգնության, օգնություն չեկավ:

Բ. - Խմբի հրամանատարը ո՞վ էր, գլխավոր չկա՞ր, որ ձեզ ղեկավարեր:

Գ.Ա. - Խմբում հրամանատար չունեինք: Ես մինչեւ հիմա չգիտեմ՝ ով էր մեզ իջեցնում, ով էր մեզ հետ գալիս: Ա՛յ, դա անփորձ մարդու, հրամանատարության անտեղյակությունն էր:

Տեղը իմացողներ կային, ղարաբաղցիներից կային: Հայկն ու եղբայրը իրենց ջոկատով մեզ հետ էին: Երեւի իրենք էին հրամանատարը: Ես «Չաուշենց» խնդրեցի կրակահերթով ինձ օգնել, որ ես գնամ օգնություն բերելու: Ես դուրս եկա դեպի գետ իջնող ճանապարհը: Մի հիսուն մետր վերեւ չբարձրացած՝ տեսա՝ մեր տղաները պառկած էին: Ամարասի Արթուրը, ինչքան որ ես հետո հասկացա, մի 100-120 հոգու հետ իջել էր մեզ օգնության: Ես ասացի, որ կրակահերթ տան, որպեսզի մերոնց օգնեն: Արթուրն ասաց, որ չգիտեն՝ մերոնք որտեղ են, չեն կրակում, որ մերոնց չվնասեն: Ասացի, որ իրենցից ներքեւ՝ դեպի ձորը, չխփեն, դեպի անտառը կրակեն, որպեսզի մեր տղաները ետ քաշվեն: Հետ քաշվելը նահանջ չէր, ընդամենը տակտիկա էր: Մինչեւ դուրս գալը վերեւ նայեցի, տեսա «Փունջ« ջոկատի մեր Տիկոյին, մեկ էլ մեր ընկերներից մեկին: Նրանց ասացի, թե խփենք, գնանք առաջ, ասացին, որ համարյա օղակի մեջ ենք, հետեւում պատ է, կողքներս՝ շրջափակված: Հետո Սամվելին ասացի, որ կրակահերթով ինձ օգնեն, ես գնամ օգնության հետեւից, Տիկոյենց էլ ասացի, որ աչքները Ռուբոյի դիակի վրա պահեն: Այդ պահին չէինք կարող հանել նրան, նույնիսկ շատ բաներ գցել էինք, բայց դիակը պահել էինք, որ հետներս անպայման տանենք: Ռուբոյի գնդացիրը, ավտոմատը, իմ ավտոմատը, նռնականետը վրաս՝ բարձրանում էինք: Ռուբոյի դիակը մի կերպ հանել եմ դուրս, դեպի գետը, դրել մի քարի, որ աչքներս վրան լինի, թշնամին չտանի: Ամարասի Արթուրը հրաման տվեց, թե որ ուղղությամբ կրակեն, եւ մերոնք դուրս եկան: Շարժվեցինք վերեւ: Մեր հրամանատարությանը այդքան էլ հետաքրքիր չէր զոհված զինվորին հանելը, իրենց ավելի շատ հետաքրքրում էր նրանց զենքը: Աֆղանստանում երբ կռվում էի, մեզ ասում էին. «Գնա զոհվիր, բայց ընկերոջդ դիակը թշնամուն մի թող»: Վերեւ ենք բարձրացել, եւ Հովսեփ Հովսեփյանը փոխանակ ասի, թե՝ Ռուբոյի դիակը ինչի՞ չեք հանել, չե՞ք ամաչում, գնացեք, հանեք, ասում է, թե լսել է, որ Ռուբոյի ավտոմատը ինձ մոտ է: Ես էլ, որ բոլոր

զենքերը մոտս էին, նույնիսկ այն, որը իմը չէր, հավաքել էի ճանապարհից, լցրել էի Ամարասի Արթուրի «Նիվան»: Շրջափակման մեջ որ հինգ ժամ կռիվ ես անում, ստրեսային վիճակում ես գտնվում, կարծես մշուշի մեջ լինես, չգիտես՝ ինչ ես անում, ինչ ես խոսում: Տղաներից մեկն ասաց, որ զենքը այստեղ է, կորած չէ: Նա էլ ասաց. «Չգիտեմ՝ դա ինչ մաֆիա է, բայց այդ զենքը պիտի գա հասնի ինձ»: Դա հրամանատարի զրո՞ւյց էր: Երկրորդ անգամ երբ դեպի բարձունք էինք գնում, հետախուզությունը գնաց ու հետ եկավ: Մինչեւ այդ գնալ-գալը բոլորը քաշվեցին, եկան վերեւ: Ես հարցրեցի, թե ով ինձ հետ կգա Ռուբոյի դիակը բերելու վերեւ: Հետս ներքեւ իջան Միշան (հիմա ազգային անվտանգության հատուկ գնդի հրամանատարն է), Վալոդը՝ Խուճուճը (Սովետաշենի գնդի հրամանատարի տեղակալն էր), վաղուհասցի Ծերուկը, Սերգեյ էր անունը, որսորդական հրացանով էր կռվում: Ասում էինք. «Կարգին զենք վերցրու»: Պատասխանում էր. «Դու մի հատ գնդակ ես կրակելու, իմ մի կրակոցով երեք գյուլլա է թռնելու, ոնց էլ լինի, մեկը կկպնի»: Հետախուզելով, առանց ձայնի՝ իջանք ներքեւ՝ փնտրելով, թե որտեղ կարող է թաքնված լինել թշնամին: Եկանք այնտեղ, որտեղ շրջափակման մեջ էինք ընկել: Մեծ շրջանցում կատարեցինք, անցանք գոմերի հետեւի մասը: Այդ կռվում մենք կորցրեցինք մեկ հոգու, վիրավորվեցին երեք հոգի: Թուրքերը կորցրեցին տասնվեց-տասնյոթ հոգու: Արյան քանակից կարող ես տարբերել՝ մահացած են, թե վիրավոր: Այնտեղ, որտեղ նրանք դիրքավորված էին, կային մեծ քանակությամբ ներարկիչներ՝ թմրադեղով լիքը:

Մի դեպք պատմեմ: Կռվի ժամանակ ճանապարհի վրա խփեցի մի թուրքի, որը գալիս էր ինձ վրա: Տեսել էր ինձ: Խփում էի, բայց գալիս էր: Երկու փամփշտակալ դատարկեցի, բայց էլի անջատված գալիս էր: Ընկավ, հրեցի կողքի վրա, տեսնեմ՝ ոնց որ մաղ լինի: Ես էլ էի շոկի մեջ, գլխի չէի ընկնում, թե ինչ է կատարվում: Հետո որ դուրս եկանք շրջափակումից, դրանց դիրքերը անցնելուց տեսա, որ թմրադեղեր էին օգտագործել: Ինչ-որ տեղ ուրախացնում էր, որ նրանք անջատվում էին ու նոր էին գալիս մարտի: Այսինքն՝ վախենում էին ու իրենց վախը բթացնում էին, ու եթե չբթանային, վախից չէին կարող գալ կռվելու: Ինձ ուրախացնում էր նաեւ այն, որ մեր տղաների մեջ նման բան չկար: Երկրորդ անգամ որ գնացինք Վաղուհաս, արդեն առաջինից դաս էինք քաղել: Չորս հոգով որպես հետախույզներ գնացինք առջեւից: Հետներս Սամվել անունով տեղացի մի տղա կար, մեկ էլ ականանետով Լյութոն էր: Վաղուհաս գյուղից էին: Այդ ժամանակ արարատցի Աթանեսյան Սեյրանն էր հրամանատարը: Սարը պիտի բարձրանայինք, վերեւից ներքեւ իջնեինք: Կարող էինք ուղիղ գնալ, բայց

այդպես դուրս էինք գալիս ճակատ ճակատի: Ճիշտ է, մի քիչ դժվար էր, շրջանցում էինք, բարձրանում, բայց արդյունքում մենք էինք վերեւում լինելու, վերեւից ավելի հեշտ է խփելը: Տղաներից մեկն ասաց, որ ինչ-որ մեկն ինսուլտ է ստացել, մի փոքր կանգնենք, սպասենք, որ ջոկատը պոչը հավաքի: Իջա իմանալու, թե ով էր: Շատ հաղթանդամ տղա էր: Նրան հիշեցի մայրաքաղաքային գնդից: Ես շատ եմ ծխում, ծխախոտը ծխախոտի հետեւից: Մի օր ինձ ասաց.

- Շատ ես ծխում, ո՞նց ես կռվելու:
- Ինչո՞ւ:
- Բա որ պետք լինի փախչել, ո՞նց ես փախչելու:
- Գնում ենք փախչելու համա՞ր,- ասացի:
- Լավ, հարձակվելու համար:
- Այդ արագությամբ չես կարող հարձակվել, որ շնչառություն քեզ պետք լինի:

Պատերազմում նման բան չկա: Ամենամեծ տարածությունը որ պիտի վազես, լինելու է հիսունից հարյուր մետր: Ոչ մի անգամ թշնամուն պետք չէ թերագնահատել: Որ տեսա ինքն է, ասացի. «Գիտե՞ս՝ ինչ էր քեզ պետք: Պիտի մի քիչ շատ ծխեիր, որ կարողանայիր դիմանալ»: Բարձրացանք վերեւ, ու ջոկատը հավաքվեց: Հարձակման անցնելուց առաջ Սեյրանը բացատրեց իրադրությունը: Առաջինը գնում է հետախուզությունը: Նրանցից էր կռիվը սկսվելու, ինչքան հնարավոր էր, ծածուկ պետք է առաջ գնային, որ մոտիկից խփեին թշնամուն: Երկրորդ ու երրորդ խմբերը աջից ու ձախից էին գնում: Չորրորդը ճակատային խումբն է: Թեւերի առաջխաղացումից հետո նոր ճակատայինն է խփում, որ միանգամից Կարմրաքար բլուրը վերցնենք: Ժամանակը ճիշտ չէր հաշվարկված, որովհետեւ նման գործողություններ կազմակերպելու համար հարկավոր էր ոչ թե ցերեկվա ժամը տասներկուսին շարժվել, այլ լուսաբացին՝ ժամը չորսից վեցը, որպեսզի հասցնենք գործողությունը կատարել ամբողջությամբ, մեկ օրվա մեջ, որ դիմացը գիշեր չլինի: Սեյրանն ասաց, որ բլուրի հետեւը տեղավորվեն քույրերը, ֆելդշերները: Բացատրեց նաեւ, թե ոնց պիտի վարվենք դիրքային պատերազմի ժամանակ, որ կողմը պիտի քաշվենք: Մենք մի քանի հոգով գնացինք առաջ՝ հետախուզության: Երեւի պետք չէր այդտեղից ուղիղ ճակատ ճակատի դուրս գալ: Հետախուզությամբ կռվի մտնել չէր կարելի, բայց հրամանը այդպես էր՝ պետք է գնալ ուղիղ դաշտի միջով: Բայց հարկավոր էր շրջանցել դաշտը, կողքերից մտնել: Մի կողքն ընկնում էր Վաղուհաս գյուղը, մյուսը՝ բացատից եկող ճանապարհը: Այդտեղ ես առաջին անգամ տեսա զենք, որն ավելի շատ նյարդերի վրա էր ազդում: «Ճտճտիկ» գնդացիրներն էին, նույն ավտոմատն էր, բայց դրա մի փամփուշտը մի

քանիսի ձայն էր արձակում: Կողքիս խփված գնդացրորդ կար: Պառկել էի թշնամուց մոտ տասնհինգ մետր հեռավորության վրա, չէի կարողանում գլուխս բարձրացնել: Ընկել էի խաչաձեւ կրակոցի տակ: Դիմացից թուրքերն էին խփում, հետեւից՝ մերոնք: Մութն էլ ընկնում էր: Վախենում էի, որ կարող է մերոնք խփեն հետեւից: Այդպես էլ եղավ: Ավտոմատիս ձայնի վրա մերոնք էլ խփեցին, թուրքերն էլ: Պառկած էի, ապարանցի Աշոտը չորեքթաթ գալիս էր օգնության, ասացի. «Պառկիր, սողալով արի»: Նա գլխի չընկավ, թե ինչ եմ ասում: Նայեցի, տեսա՝ պառկել է: Մտածեցի՝ երեւի սողալով է գալիս: Մեկ էլ նայեցի, տեսնեմ՝ նույն չորեքթաթով հետ է գնում: Ի՞նչ իմանայի՝ ինչու է հետ գնում: Այդ պահին մտածեցի, թե հետ է քաշվում, փախչում է: Ես մերոնց խփածից էլ, ազերիների խփածից էլ վիրավորվել էի: Նրանք թեւս էին փշրել, մերոնք էլ պառկած տեղս հետեւից էին խփել: Ինձ տեղափոխեցին Երեւան: Հոսպիտալում Աշոտին տեսա, համ գլուխն էր փաթաթած, համ թեւը: Ասացի. «Ես քեզ ասի՝ պառկիր»: Ասաց. «Այդ ճտճտոցի մեջ ոչինչ չեմ լսել, միայն հիշում եմ, որ շշմած ընկել էի: Մեկ էլ խելքի եկա, ուզեցի գալ առաջ, այդտեղ խփեցին: Ու ստիպված հետ գնացի»:

Մինչեւ Երեւան հասնելս անջատված էի, կոնտուզիան, շոկն ու ցավն էլ հետը: Ծշված կանգնել էի մարտի դաշտում, ավտոմատս գցել ուսիս, իջել դեպի ծառերը ու ծառերի մոտով բարձրանում էի բլուրների հետեւը, որտեղ վիրավորներին պիտի բերեին: Տղաները տեսան, որ մի կերպ քարշ գալով եմ գնում: Երկու հոգի մոտեցան, օգնեցին, ասացի. «Բերեցի՞ք, դե հետ գնացեք մարտի դաշտ»: Գնացին: Եկան, թե՝ օգնելու բան չկա, ջոկատն արանքից դուրս է եկել: Նման դեպքերում կարելի է նման ջոկատի հրամանատարին գնդակահարել: Եթե հրաման ես տալիս, որ վիրավորներն այստեղ հավաքվեն, իսկ դու ջոկատին վերցնում ես, արանքից դուրս գալիս ու վիրավորներիդ թողնում թուրքերին, ուրեմն՝ դու ամենամեծ դավաճանն ես: Երեւի հրամանատարներն էլ չէին հասկանում, թե ոնց է եղել, որ իրենք դուրս են եկել, մեզ թողել այնտեղ: Տասնչորս-տասնհինգ վիրավոր էինք, քույրերն ու ֆելդշերներն էին: Ասացի.

- Հավաքվեք, դուրս ենք գալիս:

Մթության մեջ ոչինչ չէր երեւում: Տնքտնքում էին.

- Չենք կարող գալ:
- Չե՞ք կարող:
- Չէ:

Աղջիկներից մեկին ասացի.

- Ավտոմատս լիցքավորեք:
- Ի՞նչ կա որ:

- Տեսնեմ՝ ով չի կարող գալ, խփեմ: Մահապարտ են, թող մահացած ընկնեն թուրքի ձեռքը, ոչ թե կենդանի:

Այդ խոսքիս վրա մեկ-մեկ վեր կացան: Հալալ է այդ աղջիկներին, որ այդ հսկա տղամարդկանց թեւերն ընկած՝ անտառներով, նույն ճանապարհով հանեցին թիկունք: Մեկը նույնիսկ երկու հոգու էր պահում: Այդ աղջիկներին կարելի է հերոսի կոչում տալ: Զենքը ձեռքներին՝ մեզ համ պահպանում էին, համ վիրակապում: Մի խոսքով, վաղուհասցի տղաները օգնեցին, դուրս եկանք գետի մոտ: Տղաները եկան, փաթաթվեցին, ասացին, որ «Ուրալ» մեքենաները իջեցրել են գետի մոտ: Մեզ բերեցին Ցեխիձորի ռազմական հոսպիտալ: Այնտեղ Բունիաթյանն էր, Ժաննա Գալստյանի որդին՝ Կարենը: Դրանից հետո որոշ ժամանակ անգիտակից եմ եղել, ցավագրկող էին սրսկել: Ուշքի եկա ուղղաթիռի մեջ:

Բ. - Իսկ առաջին անգամ ե՞րբ էիր Ղարաբաղ գնացել:

Ղարաբաղ գնացի 1990-ին: Շարժման ակտիվիստներով հավաքվել էինք Աբովյանում: Տղաներն ասացին, որ ուզում են գնալ Ղարաբաղ: Ուղղաթիռը պետք է նրանց տաներ: Ես տղաներին տարա փոքր օդանավակայան ճանապարհելու, բայց ոչ թե ճանապարհեցի, այլ ես էլ նրանց հետ գնացի: Դա էր իմ Ղարաբաղ գնալը: Ուղղաթիռն իջավ Հաթերքում: Մեզ այնտեղ դիմավորեցին տեղաբնակներից: Տեղում արդեն կային կազմավորված կամավորական ջոկատներ: Մեզ հետ էին Վալոդիկը, Արմենիչ Իգոն: Մենք այստեղից թռանք երեք ընկերներով: Ուրիշ տղաներ էլ կային: Պիտի գնայինք Ասկերան, ուղղաթիռը իջավ Հաթերքում: Մեզ դիմավորեց Վալոդիկի հորեղբայրը, որը ղարաբաղցի էր: Գնացինք Վաղուհաս, մի երկու օր այդտեղ մնալուց հետո լսեցինք, որ օպերացիա է պատրաստվում Գյարավանդի ուղղությամբ: Միացանք Հայկի ջոկատին: Զինված էինք որսորդական հրացաններով, ինքնաձիգներով, որոնք մեծ մասամբ ուսումնական էին, կային նաեւ հատուկենտ մարտական զենքեր: Իմ ձեռքին մարտական ինքնաձիգ էր, որն այստեղից էինք տարել: Մասնակցեցինք Գյարավանդի օպերացիային, այդտեղից տեղափոխվեցինք Ասկերան:

Բ. - Գյարավանդում ի՞նչ արեցիք, ո՞րտեղից մտաք, ի՞նչ տեսաք:

Գ.Ա. - Գյարավանդը դատարկվել էր: Գյուղի մեծ մասը մեր կրակոցներից, հարձակումներից այրվել էր, հազիվ մի քանի տուն մնացած լիներ չայրված: Գյուղից բոլորը փախել էին: Մի քանի զոհ եղավ: Դիմադրություն չկար: Այդ ժամանակ Ղարաբաղում պարետային ժամ էր, ազերիները եւ ռուսական բանակի զինվորները պաշտպանում էին բոլոր ադրբեջանական գյուղերը: Նրանք այդ գյուղում չկային: Մենք գյուղի կեսից շատն արդեն մտել էինք, երբ մեզ

խաբեցին, թե ռուսական բանակը ազերիների հետ գալիս է, որ մտնի գյուղ: Տղաներից մեկը «ՊԿ» գնդացրով այնքան էր կրակել, որ փողից կարելի էր ծխախոտ կպցնել: Փողը փչացել էր: Վերադառնալով Վաղուհաս՝ մենք այդ տղային մի քանի խրատ տվեցինք, թե ինչ անի, որ փողը չփչանա: Վաղուհասում Արարատի Գրիգորյան Գրիգորի ջոկատն էր: Իրենք, ճիշտն ասած, սպասում էին հարմար օպերացիայի, դրա համար չէին խառնվել Գյարավանդի գործողությանը: Երրորդ օրը մեզ ասացին, որ շարժվում ենք դեպի Ստեփանակերտ ու Ասկերան: Դա էր մեր հիմնական ուղղությունը: Մենք գնացել էինք Ասկերան, Աղբուլախ, Դահրազ գյուղերի կողմերը՝ այնտեղի պաշտպանությունը ապահովելու: 1990 թ. այնտեղ էինք: Շուշիի առաջին դիվերսիաները կատարվեցին հենց այդ օրերին: Մենք մի քանի անգամ գնացինք Ստեփանակերտ, Վալերային, Ժաննային, Ագոյին շտաբում տեսանք, ասացինք, որ կարելի է դիվերսիաներ կազմակերպել Շուշիի վրա. Շուշիի ժողովրդին զրկենք ջրից, էլեկտրականությունից, որպեսզի նրանք դուրս գան Շուշիից, իսկ եթե Շուշիում մարդ չլինի, ազերիների ջոկատները ժողովրդի կողմից օժանդակություն չեն ստանա, ու հեշտ կլինի նրանց հաղթելը: Նրանք համաձայնվեցին: Արմենը, ես, ստեփանակերտցի Վրեժիկը գնացինք Քարինտակ, որի հրամանատարն այդ ժամանակ Վաղոն էր: Ամունալն ու մնացած ապրանքներն արդեն ուղարկվել էին: Քարինտակցի չորս-հինգ տղաների հետ ձորակով բարձրացանք մինչեւ պոմպակայանները, որտեղից ջուր էր տրվում Շուշիին: Քանի որ մառախլապատ էր, պոմպերը հեռվից չէին երեւում: Կամաց-կամաց մոտեցանք, մի հիսուն մետրից նոր սկսեցին երեւալ: Գնացինք, տեսանք՝ պոմպակայանները պաշտպանելու երկու հենակետերում ոչ մի ադրբեջանցի չկար: Երեւի ձայներ էին լսել ու փախել: Մտանք, պոմպերում տեղադրեցինք պայթուցիկները, դետոնատորներն ու անցանք գետի մյուս կողմը: Լանջ էր, բարձրացանք: Լարերը մի քիչ կարճ էին, մեր ուզած թմբի հետեւը չկարողացանք հասցնել, հենց այդտեղից էլ տրաքացրինք: Պայթյունն այնքան ուժեղ էր, ես Արմենին ասացի, որ հետ նայի, տեսնի՝ հետեւում ինչ է կատարվում: Պոմպակայանը ահագին մեծ շենք էր: Նայում ենք՝ շենք չկա, տեղը փոս է: Ավելի լավ երեւալուն խանգարում էին մառախուղն ու փոշին: Քարինտակի տղաները շատ էին ուրախացել, որ կարողացանք առանց կրակոցի իրականացնել այդ գործողությունը: Անտառի ճանապարհով դուրս եկանք դեպի մայրուղի, իջանք Շոշ գյուղը: Գոմերի մոտով իջանք դեպի Դահրավ, հետո սարի ճանապարհով բարձրացանք դեպի Հարավ գյուղը: Հարավի մոտով բարձրանում էինք անտառ, սարի գլխով անցնում դեպի Դահրազ: Երբեմն թուրքերի դիրքերի քթի տակով էինք անցնում, շատ ժամանակ

պատրաստ էինք լինում, որ կարող է ամեն կողմից կրակեն մեզ վրա: Եկանք Դահրազ: Գյուղացիներից մեկը հեռուստացույց ուներ, նայում էինք: Քսանչորս ժամ երեւի չէր անցել, Բաքուն հայտնեց, որ Շուշիի պոմպակայանը պայթեցրել են: Ու հետաքրքիրն այն էր, որ հաջորդ օրը Մոսկվան հաղորդեց. «В ответ Степанакертской блокады, была взорвана Шушинская волокачка»: Ես իմ ականջով եմ լսել: Երկրորդ գործողությունը, որը իրականացրինք Շուշիի վրա, հոսանքի բարձր լարման գծերի հենասյուների պայթեցումն էր: Շուշին մնաց առանց լույսի: Հենասյուները տեղակայված էին Շուշիից դեպի Լիսագոր բարձրացող ճանապարհին՝ աջ թեւի թմբի վրա: Մինչեւ հիմա էլ այնտեղ ընկած են: Հենասյուների պայթեցման համար ես, Արմենը, Վրեժիկը, քարինտակցի երկու տղաներ երբ բարձրանում էինք, ջրի ձայն լսեցինք ու զարմացանք, թե ինչ ջրի ձայն է, պետք է որ ջուր չլինի: Տղաներից մեկն ասաց, որ բացի ներքեւի պոմպակայանից, ինքնահոս ջուր էլ կա: Բայց դա այնքան քիչ էր, որ Շուշիին չէր հասցնում ջուր տալ: Դրա համար ժողովուրդը դատարկվել էր: Մենք նրանց դատարկված դիրքերից տեսնում էինք, թե Լիսագորի ճանապարհով քանի ավտոբուս է գնում, ավտոբուսների մեջ քանի մարդ կարող է լինել, քանի ավտոբուսով են ազերիների ջոկատներ գնում: Այդ բոլորը հեռադիտակով ուսումնասիրում էինք: Բարձր լարման հենասյուները տրաքացնելուց հետո իջանք Քարինտակ: Գյուղացիները, տեսնելով, որ Շուշին զրկվել է հոսանքից, ուրախացել էին ու մեզ լավ դիմավորեցին: Այնտեղից նորից եկանք Դահրազ: Մի օր երեկոյան նստած էինք, մեր գյուղից տագնապ տվեցին, թե ազերիները Աղբուլախից դաշտով գալիս են գյուղի ուղղությամբ: Տղաներով լցվեցինք բեռնատար մեքենան, իջանք ներքեւ: Մութը չէր ընկել: Դահրազից էլ էին մեքենաները երեւում, ներքեւից էլ էր երեւում, բայց ներքեւից այդքան պարզ չէր երեւում, թե քանի մեքենա է եկել, թաքնվում էին փոքր բլուրների ետեւում: Գյուղում ընդհանուր թվով երեւի տասը-տասնհինգ ինքնաձիգ լիներ: Իսկ ազերիները չորս «Ուրալ» մեքենաներով եկել էին եւ գյուղից մոտ մեկուկես կիլոմետր հեռավորության վրա էին: Պատկերացրեք, ինչքան շատ էին մոտեցել, որ գնդակոծությունից տների տանիքներին ոնց որ կարկուտ խփվեր: Դիրքավորվել էինք, նայում էինք՝ որտեղից է լույս տալիս կրակահերթը, մոտավոր այդ ուղղությամբ էլ խփում էինք, քանի որ չունեինք գիշերային տեսանելիության սարքավորումներ: Տեղը հեռու էր, ավելի շատ իրենց գյուղին էին մոտ, քան մեր: Մեր առաջ գնալն անիմաստ էր, որովհետեւ ռուսական բանակը դեռ գործում էր: Եթե տեսնեին, որ դիմադրություն չկա, երեւի կմտնեին գյուղ:

Վերջին գործողությունն էլ եղավ Հորադիզում: Ադրբեջանցիները

Պարսկաստանի կողմից էին մտել, Հորադիզ կայարանը նորից ետ վերցրել: Դա 1994-ի հունվար ամսին էր: Տղաներից մեկն ասաց, որ տագնապ է, Սպայի տանը հավաքվում ենք: Գնացինք Սպայի տուն: Բագեյան Ալբերտն էր այնտեղ, հավաքվեցին «Նիկոլ Դուման» կոմիտեի ջոկատները: Իրար հետ երկու ջոկատները դուրս եկան Հորադիզ: Հունվարի 19-20-ին Հորադիզում էինք: Զինվորները որ տեսան ջոկատայիններ են եկել, զարմացան: Դե, արդեն բանակը գոյություն ուներ, զինվորներն էին հիմնականում դիրքերում: Այդ ժամանակ տեղի ունեցան մի քանի հետաքրքիր եւ հանելուկային դեպքեր: Երկու ջոկատները տեղավորվել էին Քյուղնալ գյուղում: Երկու ոչ լրիվ ավերակ տուն էինք վերցրել՝ դիրքերից մոտ յոթ կիլոմետր հեռավորության վրա: Ջոկատներին հանեցինք դիրքեր: Մեր դիրքը գտնվում էր Գորիսի եւ Ղափանի գնդերի մեջտեղում: Նրանց դիրքերի մեջտեղում դատարկ, անպաշտպան տարածություն էր մնացել, որը գրավեցին մեր երկու ջոկատները: Մեր ջոկատում մի պարսկահայ ունեինք՝ Ռազմիկը: Ուժեղ կռվի ժամանակ, երբ կրակոցները խեղդում էին արդեն, սկսում էր պարսկերեն երգել, ու միանգամից կրակոցները դադարում էին, ոչ մի կրակոց չէր լսվում: Հենց տեսնում էր, որ լռությունը երկար է ձգվում, ասում էր. «Էրի՛կ, էն ֆիդայական ժապավենդ դիր»: Հենց նվագը սկսվում էր, թշնամու կողմից դմբոց էր ելնում: Շատ մարդիկ կան այսօրվա բարձր պաշտոնյաներից, որ գալիս էին, նկարվում այնտեղ, իբր մասնակցում էին այդ կռիվներին, բայց հենց առաջին կրակոցից թողնում-փախչում էին: Դաժանը գիտե՞ք՝ որն էր: Նրանք պետք է իրենց հետ կռվող ջոկատին փոխարինող ջոկատ բերեին, բայց չէին բերում, ու հենց կրակոցներ էին լսում, փախչում էին: Ասենք՝ Աբովյանի ջոկատին պիտի փոխարինող բերեին, բայց ջոկատ չէին բերել, իրենք երեք-չորս հոգով եկել էին տեսնելու, թե իրենց ջոկատը ոնց է, համ էլ նկարվեին ու ետ դառնային: Ես Աբովյանի ջոկատից շատ լավ ընկերներ ունեմ: Արտակարգ կռվող ջոկատ էր: Նրանք այնտեղ կրակահերթի տակ ընկան ոչ իրենց մեղքով, նորից հրամանատարության մեղքով: Թուրքերը կեղծ դիրքեր էին քանդել իրենց համար: Ղարաբաղի բանակը խփեց, իբր այդ դիրքերը վերցրեց: Աբովյանի ջոկատը գնաց, որ այնտեղ դիրքավորվի, բայց թուրքերն ականանետով սկսեցին խփել իրենց թողած կեղծ դիրքերին: Ջոկատը պետք չէր, որ մնար այդտեղ: Տեսել էին, որ կեղծ դիրքեր են, նորից ետ պետք է գային իրենց ելման դիրքերը կամ պետք է խփեին, դրանից էլ առաջ գնային, ոչ թե գնային իրենց դիրքերում նստեին, նրանք էլ, որ իրենց դիրքերը գիտեին, միլիմետրի վրա սկսեին տրաքացնել: Շատ լավ տղաներ զոհվեցին Աբովյանի ջոկատից: Շատերը վիրավորվեցին: Շատերին նեղացրեցին, թողեցին եկան Հայաստան, որովհետեւ կարեւոր չէ՝

Դաշնակցության, ՀՀՇ-ի, ԱԻՄ-ի անդամ ես, թե ոչ: Կռվող տղան ի՞նչ գործ ունի կուսակցական խաղերի հետ: Նա ընդամենը իր հայրենիքն է պաշտպանում: Հորադիզում եռամսյա հավաքներին արտաշատցի Լաերտն էր բերել: «Նիկոլ Դուման» եւ «Կոռնիձոր» ջոկատների հերթափոխ կազմակերպեցինք, որ այդ դիրքերում երեք օր նրանք լինեին, երեք օր՝ մյուսները, որպեսզի կարողանային հանգստանալ: Տղաներին հերթափոխի հիմնականում ես էի տանում, ավելի շատ ինձ էին վստահում, որովհետեւ ուղիղ կրակահերթի տակով էինք անցնում, տանկերը խփում էին հենց մեր ետեւից: Դիրքերի հերթականությունն էր՝ սիսիանցիների, գորիսեցիների, մեր ու ղափանցիների: Սիսիանցիների ու գորիսեցիների դիրքերի արանքի դաշտը՝ մեր առաջին գիծը, հերթափոխ էի տարել: Երբ գնացի, ինքս մեքենան կանգնեցրի, գնացի հերթափոխը հանելու: Այդտեղ հիմնականում զինվորներն էին, բայց զինվորներին ջոկատայինների օգնություն էր պետք:

Մի հանելուկային դեպք պատմեմ: Այդ ժամանակ հենց իմ աչքի առաջ մեր տղաներից երկու-երեք հոգի ոտքի փափուկ մասերից վիրավորվեցին: Որ ասեմ՝ ազերիների կողմից նշանառու էր աշխատում, չէ, բայց, ոնց որ մեկը դիտմամբ խփեր հենց այդ մասերին, որ նրանք այդ կողմերի վրա չգնային: Ինձ համար շատ հանելուկներ կան: Օրինակ՝ կազմակերպում են ինչ-որ հարձակում: Հարձակումը հիմնականում կատարվում է ալիքաձեւ, այսինքն՝ մեկը խփում է, դիրքավորվում, հաջորդը նրա օգնությամբ ավելի հզոր ուժով անցնում է, խփում, նորից դիրքավորվում: Բայց այդտեղ նման ձեւով չէր կատարվում: Խփեց, դիրքը վերցրեց, այսինչ ջոկատին ասում է՝ եկեք, դուք դիրքավորվեք ու պահեք, մենք հանգստանանք, որ հաջորդ անգամ խփենք: Այդ ո՞ր մարտավարության մեջ է դա գրված: Դա էլի խոսում է հրամանատարության ոչ պրոֆեսիոնալիզմի մասին: Դրանով մենք ավելի շատ զոհ էինք տալիս, քան առաջխաղացում ունենում:

Հետաքրքիր դեպքերից պատմեմ: Մի ռուս տղա կար, գոռում էր.

- Эй, азер, у тебя курить есть?.
- Слушай, Игорь, у нас есть курить, иди, вместе покурим.
- Дурак, ты сам приходи к нам, у нас огня побольше.

Դիրքերն այնքան մոտ էին, որ հանգիստ խոսում էինք իրար հետ: Մի դեպք էլ պատմեմ, չնայած ես դրանում միայն վատն եմ տեսնում: Տղաներից մեկը թոքաբորբ էր, ինքն իրեն ներարկում էր դրա դեմ: Տեղեկություններ էին տվել, որ իբր այնտեղ թմրադեղ են սրսկվում: Բայց ես ասել եմ, Վազգեն Սարգսյանին էլ եմ ասել՝ համեցեք, տեսեք, որ մեջը ինչ դեղ է՝ «Պենիցիլին»: Այսինքն՝ նույն զորքերում կային սուտասաններ, խառնակիչներ, կային եւ լավերը:

Տղաներից մեկով ես հիացած մնացի: Նման բան չէի տեսել: Մի ժամվա մեջ երեք տանկ խփեց աչքիս առաջ: Տանկիստ էր: Երեխա էր, քարտեզագիտություն չգիտեր, դիմացի բլուրները երկու թղթի վրա նույն ձեւով նկարել ու համարակալել էր: Հարցրեցի.

- Ի՞նչ ես անում:
- Համարակալել եմ, տես դրանց մման ոնց եմ լացացնում:
- Ի՞նչ ես անելու:
- Հոպա՛ր, էս թուղթը վերցրու, հեռադիտակն էլ, էն վերեւը նստիր: Քանի որ բոլոր բլուրները համարակալված են, որ բլուրի ետեւից տեսնես՝ տանկը դուրս է եկել, ինձ ասա, որ էս բլուրի ետեւից տանկի փողը երեւաց: Հենց մի փոքր զրահը երեւա, ասա, քո գործը չի, ու նայիր՝ ինչ է լինում:
- Եղա՛վ,- ասացի:

Բայց, ճիշտն ասած, հավատս չեկավ: Նման բան ո՞վ է անում: Ուղղորդողը կոորդինատները ասում է, բայց էլի դժվարությամբ են խփում: Իսկ նա արագությամբ դուրս էր գալիս, քիթը կախում, արդեն մոտավոր գիտեր, թե բլուրը որտեղ է, փողն այդ ուղղությամբ պահում էր, միանգամից խփում ու նորից ետ քշում: Մեկ էլ տեսնում էի՝ տանկի աշտարակը թռավ: Իսկական անունը չգիտեմ, Հոպո էինք ասում: Փոքր-մոքր տղա էր: Ասում էի՝ Հոպո՛, կպավ: Նա թե՝ հոպա՛ր, բա ի՞նչ պիտի աներ, խփում եմ, որ կպնի, հո չեմ խփում կողքերին, որ վախեցնեմ: Ու այդպես երեք տանկ մեծ հեռավորությունից շարքից հանեց: Այդ ժամանակ խոսք կար, թե թշնամու խփված ինքնաթիռը հարյուր հազար արժե, տանկը՝ հիսուն հազար: Ջահելն էլ ուրախացել էր, թե՝ երեք տանկ եմ խփել, հարյուր հիսուն հազար կտան, տնեցիք յոլա կգնան: Բայց հարցը դա չէր: Ես վստահ եմ, որ նա ոչ թե փողի համար էր խփում, այլ իրոք հոգով նվիրված մարդ պետք է լիներ, որ իր կյանքը վտանգեր: Մի օր եկա, տեսա՝ Հոպոյի տանկը չկա: Հարցրի՝ Հոպոյի տանկը ո՞ւր է: Թե՝ խփել են: Վատ զգացի, գնացի գյուղ, որ տեսնեմ՝ հո նրանց բան չի եղել: Տեսա՝ ման է գալիս: Հարցրի, ասաց. «Մեզ բան չի եղել, մի քիչ շշված ենք ցնցումից, բայց լուրջ բան չի եղել: Փողը չէի հասցրել հանել, խփեցին փողին, թռցրին»: Տանկը բանակինն էր: Ջոկատը այդ ժամանակ տանկ չուներ: Ջոկատները շատ վաղուց են դրանք հանձնել բանակին: Երբ բանակը ստեղծվեց, հենց այդ ժամանակ էլ ամեն ինչը հանձնեցինք բանակին:

Ամեն ինչ կարգավորվել էր, ու մենք դեպի Ֆիզուլի պետք է գնայինք: Պաշտպանական բանակը Ղարաբաղ էր եկել, դիրքավորվել էր, մենք պետք է հետ գայինք: Որպես վերջին օպերացիայի՝ ուղարկեցին Ֆիզուլու մոտ՝ Զուբ կոչվող դիրքը: Գնացինք այնտեղ՝ մինչեւ պաշտպանության բանակի գումարտակը գար օգնության: Ֆիզուլի-

ում դիրքավորված էին մեր Ներքին գործերի նախարարության զորքերը: Թուրքերի զենքերը շատ հզոր էին: Նռնականետով մենք խփում էինք, շատ հեռու նշանակետին չէր հասնում, մոտ 300-400 մետր էր գցում: Նրանք որ խփում էին նույն հեռավորությունից, տալիս անցնում էր: Ես մեր պաշտպանության նախարարությունից ստացած զենքի նշանակետը ինչքան ուզեցի զրոյականի բերել, չստացվեց, բայց թուրքից «АКМ» էի վերցրել, մազ էր կտրում:

Մարտակերտում էր, 1992 թիվն էր, «Մահապարտներով» դուրս էինք եկել հետախուզությունից, մեզ բերել էին այդտեղ: Դզոտի տակ պառկած էի, չէի կարողանում շարժվել, հետեւից էլ էին խփում, դիմացից էլ: Ոտքերիս տակ այնքան էին խփել, որ մտածում էի՝ կոշիկներս վառվելու են: Աջից ու ձախից խփում էին, ու էլ ելք չկար, չէի կարողանում շարժվել ոչ մի կողմի վրա: Ինչքան հայհոյանք գիտեի, ասում էի, դրանք էլ ձայնիս վրա էին կրակում: Հետո մեր կոորդինատորը ուղղությունը տվեց: Մեր ականանետների շվվոցը լսեցի: Նայեցի վերեւ: Պարզկա գիշեր էր: Տեսնում եմ՝ թշնամու դիրքերից, ուր խփում էր ականանետը, մարդու ոտքեր ու ձեռքեր են թռչում դես ու դեն:

Պատմում է Համիկ Սայադյանը
17.11.2005 թ., Երեւան

Հ.Ս. - Արցախյան ազատամարտին մասնակցել եմ «Ազատագրական բանակ» ջոկատի կազմում 1992 թվականից: 1992-ի ամռանը ավարտեցի Երեւանի պետական համալսարանի աշխարհագրության ֆա-կուլտետի չորրորդ կուրսը: Արզականում ճամբարի պետի տեղակալ էի: Մինչ այդ ղարաբաղցի համակուրսեցիներիս հետ պայմանավորվել էի գնալ Ղարաբաղ: Մարտակերտից ավտոբուսով մի խումբ երեխա-ների բերեցին ճամբար: Նրանց մեջ կային երեխաներ, որոնց ծնողները զոհվել էին: Նաեւ ծնողներ կային երեխաների հետ: Ասում էին, որ այնտեղ տեխնիկայի մասնագետները քիչ են, թերթերում էլ կարդացել էի: Ինձ վրա շատ ազդեց թերթերից մեկում իմ կարդացածը. ռմբակոծված Ստեփանակերտի ֆոնի վրա գլուխը կապած երեխայի նկար էր: Առաջին հերթափոխը հանձնեցի, եկա Երեւան եւ անմիջապես գնացի «Արցախ» կոմիտե: «Ազատագրական բանակից» տղաներ կային, որոնք վիրավորվել էին, եկել էին բուժվելու: Տանկիստ-ների անձնակազմն էր: Ես սովետական բանակում տանկիստ եմ եղել, Վրաստանում եմ ծառայել, տանկիստների ուսումնական զորամաս էր, այնուհետեւ ծառայել եմ Նախիջեւանում՝ տանկային գնդում: Այդ տանկիստների հետ եկանք մեր տուն, մի օր հանգստացանք: Հաջորդ օրը ուղղաթիռը պետք է Ստեփանակերտ թռչեր: Հուլիսի կեսերին էր, երբ թուրքերը Մարտակերտը վերցրել էին: Գնացինք Ստեփանակերտ, այնտեղից բեռնատար մեքենայով՝ Մարտակերտ: Խաչենի կամուրջը չհասած՝ «Ազատագրական բանակ» ջոկատը հերթական օպերացիայից հետո ետ էր գալիս: Հովսեփի հետ էին, Լեոնիդը զոհվել էր: Վերադառնում էին Ստեփանակերտ հանգստանալու, որպեսզի հաջորդ գործողությանն էլ մասնակցեն: Այդ ջոկատի հետ մենք էլ ետ եկանք, երկու օրից նորից գնացինք: Անձնակազմը նոր տեխնիկա պիտի վերցներ: Ադրբեջանցիներից «Т-72» տանկ էին վերցրել: Ես խորհրդային բանակում «Т-55» տանկ էի վարում: Տղաներով՝

Խոսրովի, Վլադիկի հետ, մի գիշեր Հաթերքում մնացինք: Ինձ ցույց տվեցին այդ երկու տանկերի տարբերությունները: Սովորելուց հետո եկանք Չլդրանի մոտ՝ Ծմակահող, այնտեղ տանկը պատրաստեցինք մարտի: Մարտակերտի ազատագրման գործողություններն էին, հակահարձակման պիտի անցնեինք: Ջոկատը անցնում էր Մեծ շենի, Մոխրաթաղի վերեւի անտառով, բարձունքով էր մտնում: Մեհմանայից Մեծ շեն անտառով ճանապարհ կա՝ Ծմակահողի ճանապարհը: Այդ ճանապարհով գնացինք: Առաջին անգամ դուրս եկա Մեծ շենի վերեւը: Հուշարձանից երկու կրակոց արձակեցինք դեպի Մաղավուզի կողմը, որտեղով ադրբեջանական շարասյունն էր շարժվում: Մոխրաթաղի դպրոցում ադրբեջանական բանակի շտաբն էր: Նրանք դեռ չէին էլ հասկացել, թե իրականում ինչ է կատարվում, որ հայկական զորքերն արդեն մտել են Մոխրաթաղ: Դպրոցի առաջ մի քանի տեխնիկա ոչնչացրինք. կապի, շտաբի մեքենաներն էին, մի «БТР» էր: Մի մասն անցել էր դպրոցի դիմացի տունը: Տանտերը այնտեղ էր, Բորիս էր անունը, նոր տուն էին կառուցել: Ադրբեջանցիները մտել էին նկուղ: Տղաներից երկու հոգի վիրավորվեցին: Մի տասնհինգ հոգի անցել էին այդ կողմի վրա: Տանկով մոտեցանք, հիսուն մետր հեռավորությունից ես կրակեցի, փլվեց նկուղի մասը, ութ հոգի մնացին: Հետո մենք առաջ անցանք: Հետ եկանք, ասացին, որ այս անգամ պատի հետեւից են կրակում: Արդեն ահագին մոտեցա, տասը մետր հեռավորությունից փողը դրեցի, որ կրակեմ, ութ հոգի դուրս եկան: Գերի էին, նրանցից մեկն էլ ռուս կապիտան էր: Բնականաբար, մենք նրանց հանձնեցինք: Ադրբեջանցիները Մարտակերտի կողմից հակահարձակման էին անցել: Ստեփանակերտի մի «БМП» հետո խփեցին: Անձնակազմից միայն մեխանիկն էր ողջ մնացել: Շարժվեցինք այդ ուղղությամբ: Տեսանք, որ ուժերը շատ են, մեր տեխնիկայի մի մասը հետ է գալիս, ճանապարհ տվեցինք տանկով: Ես նշանառու էի, բայց տեղանքին անծանոթ էի, հրամանատարին՝ Տոլիկին էի հարցնում: Նա Մարտակերտից էր, նրան «Պաժարնիկ» էինք ասում, հրշեջ էր եղել: Քանի որ տեղանքին լավ ծանոթ էր, նստած էր որպես հրամանատար: Ես անընդհատ նայում էի ճանապարհներին, դրանք էլ լավ չգիտեի: Հանկարծ Տոլիկը վերեւից կանչեց՝ թխե՛ց, թխե՛ց, թխե՛ց, ու անցավ տանկի ետեւի կողմը: Ես Ղարաբաղի բարբառը չէի հասկանում, չգիտեի՝ «թխելը» ինչ է նշանակում: Կողքերս էի նայում, թե այս ինչ ասաց: Հանկարծ արկը կպավ տանկի հրամանատարական աշտարակին: Բեկորային արկ էր, տրիպլեքսը ջարդեց: Այդ ժամանակ նկատեցի, թե որտեղից են ուժերը գալիս, եւ արկով մի հատ կրակեցի: «Ուրալ» էր գալիս՝ հետեւակով: Արկը «Ուրալի» կողքին պայթեց: Ահագին վիրավորներ եղան, հետ էին փախչում: Տեսա, որ Տոլիկը

արյան մեջ կորած է: Կապվեցի մեխանիկի հետ, ասացի, որ հրամանատարը վիրավոր է, պետք է նրան դուրս բերել: Իջանք ներքեւ, Մեծ շենի վերեւում կանգնած էր սանիտարուհին, հանձնեցինք այնտեղ:

Հիշարժան է Ծովին հողի մարտը: Երկու շաբաթ հետո մենք նահանջեցինք: Ադրբեջանցիները Հաթերքի կողմից նորից հարձակման էին անցել: Ծովին հողում դիրքեր դրեցինք: Տանկով կանգնեցի ճանապարհին: Կողքը անտառն էր, բլուրը: Ջոկատի տղաները երկու կողմերում տեղավորվեցին: Ականապատեցինք: Ես քողարկել էի տանկը, դիմացից միայն փողն էր հագիվ երեւում, չէր նկատվում, որ այդտեղ տանկ կա: Թուրքերը հարձակման անցան: Նրանց առաջին տեխնիկան ականի վրա պայթեց: Հաջորդը մոտենում էր տանկին: Ես կողքերս էի նայում անընդհատ: Տեսնեմ՝ բոլորը նայում են ճամփի մեջտեղը: Տեսա, որ թուրքի «БМП»-ն մոտեցել է տանկին: Ընդամենը երեսուն մետր հեռավորության վրա էր, նոր էր հասկացել, որ դիմացը տանկ է: Արկը արդեն փողի մեջ պատրաստ կար, բայց վախից ձեռքերը թուլացել էին, գրահամեքենան հետ էր գնում: Խփեցի այդ «БМП»-ին, արկը դիմացից մտավ, ետեւից դուրս եկավ: Մեքենան տրաքեց: Այդտեղից մարտը սկսվեց: Գիրոն նռնականետով երկու «БМП» խփեց, որոնք աջ կողմով՝ անտառի միջով էին փորձում անցնել: Ավելի հեռվում՝ մոտ հարյուր մետր տարածության վրա, տեսա, որ ծառերը ուժեղ շարժվում են: Զգացվում էր, որ տեխնիկա է գալիս, բայց չէր երեւում: Բեկորային արկով նշան բռնեցի, խփեցի այդ հաստաբուն ծառին: Արկը պայթեց, հարվածող ալիքը խփեց, ու «БМП»-ի շարժիչն անջատվեց: Դա էլ թողեցին ու փախան: Այդ մարտի ժամանակ մենք վերցրինք թուրքի հինգ «БМП»: Սեյրան Օհանյանը երբ տեսավ, զարմացավ, որ այդքան մոտ մարտ է եղել, գրահամեքենան այդքան մոտեցել է տանկին: Հինգ գրահամեքենայից երկուսը բերեցինք, մնացածը ոչնչացել էին: Հաջորդ կռվի ժամանակ դարձյալ ադրբեջանցիների մի տանկ մոտեցել էր, հարյուր հիսուն մետր հեռավորությունից կրակեցինք, թողեց փախավ: Այդ տանկն էլ վերցրինք: Նույն լեռնանցքի հաջորդ կռիվների ժամանակ մեր տղաներին փոխարինեցին Ստեփանակերտի մարզադաշտի՝ Պետրոսյան Ռազմիկի ջոկատի տղաները, որոնք լավ հագնված էին: Ռազմիկին խնդրեցի մի համազգեստ տալ: Ասաց՝ մի տեխնիկա խփիր, կտամ: Հենց այդ գիշեր ադրբեջանցիները նորից առաջ էին եկել: Մի «БМП» խփեցի: Կռիվը դեռ չէր վերջացել, տանկից դուրս եկա, տեսա, որ մեկը, լրիվ նոր համազգեստը ձեռքին, կանգնել է, թե՝ Ռազմիկն է ուղարկել: Թուրքերն արդեն առանց տեխնիկայի առաջ էին գալիս: Այդ գիշեր հարձակում սկսեցին, թեեւ գիշերներն ընդհանրապես չէին

հարձակվում, երեւի դիակները հանելու համար: Գնդացիրով կրակում էի, չնայած շատ բան չէր երեւում անտառում: Տեսա, որ թուրքերի կրակոցները շատ են մոտենում: Այդ ուղղությամբ մի հաստաբուն կաղնի ընտրեցի, արկով խփեցի, կաղնին ջարդվեց ու ընկավ: Դրանից հետո կրակոցները դադարեցին, նրանք ետ գնացին: Այդ ժամանակ օպերատոր Սարգիսը եկավ, նկարում էր: Ես նրան չէի ճանաչում: Տանկը դիրքերում կանգնած էր: Սկզբում չէի թողնում նկարեր, բայց երբ իմացա, որ մեր ջոկատի օպերատոր Սարգիսն է, արդեն հանդիպեցինք, նկարեց: Մեր ձախ թեւի վրա բացի մարզադաշտի տղաներից Մարտակերտի միլիցիայի ջոկատն էլ էր կռվում: Նրանց հրամանատարներից մեկի անունը Իգոր էր, նա մեջքից ծանր վիրավորվեց, հետո մահացավ: Բժիշկն ասաց, որ փրկելը անհնար էր, բեկորը ողնաշարն էր մտել: Մեր ջոկատի մի մասը դուրս եկավ Վարդենիս՝ նախապատրաստվելու Քելբաջարի հենակետերի ոչնչացմանը: Նոր տանկ էինք ստացել՝ «Т-72», բայց հրամանատարական տարբերակը, դեռ ոչ մի անգամ չէր կրակել: 1993 թվականի մարտի 3-ին, երբ ազատագրման օպերացիան պատրաստ էր, Վարդենիսից լեռներով, շատ դժվար ճանապարհներով էինք մտնում: Սկզբում կրակեցինք նրանց դիրքի վրա: Առաջնային դիրքի վրա կրակեցինք: Մեր հետեւակը ուզում էր մոտենալ, այդ դիրքից խփում էին: Տանկի նշանառությունը չորս կիլոմետր է, իսկ նրանք հինգ կիլոմետր հեռավորության վրա էին գտնվում: Երրորդ արկը որ խփեցի, ընկավ նրանց խրամատը: Հովսեփը վերեւից գոռում էր՝ փախչու՛մ են, մալադե՛ց: Մեր հետեւակը իջավ, նստեց սահմանի վրա: Ճանապարհները ձյունով ծածկված էին, բացեցինք, տեխնիկան լիցքավորեցինք, որ արդեն դրանք մոտեցնենք: Այդ կողմում տանկը անցկացնելու հարմար տեղ չկար: Մոտ մեկ կիլոմետր տանկը լանջերով, ձյան վրա սողալով է իջել: Նույնիսկ վախենում էինք, որ ձորը կընկնենք: Բայց մեխանիկը՝ մարտակերտցի Կոլյան, արտակարգ մասնագետ էր, նա էր վարում: Առաջին գյուղը, որի միջով անցնում էինք (որքան հիշում եմ՝ Շոթանլի գյուղն էր), այնքան նեղ ճանապարհներ ուներ, որ տանկի մի թրթուրը լանջով էր գնում: Ամենադժվարը գյուղով անցնելն էր: Թրթուրը տների պատերի վրա գցելով էինք առաջ շարժվում: Թուրքերն ընդհանրապես չէին սպասում, որ այդ կողմից հնարավոր է՝ տանկ իջնի: Զինվորները թեթեւ զենքերով էին, միակ ծանր զենքը դա էր: Հասանք ձորի կամուրջը, որն ընդամենը բեռնատար մեքենայի կմախք էր: Կոլյան շատ մեծ արագությամբ անցավ: Չնայած կամուրջը ճկվեց, բայց տանկը հասցրեց անցնել: Հասանք Քելբաջարի շրջկենտրոն: Արդեն հետեւակը իջել էր: Գեներալ Դալիբալթայանը այնտեղ կանգնած էր: Մոտեցանք,

հարցրեց, թե ով է նշանառուն: Ասացի՝ ես: Ասաց՝ տեսնու՞մ ես, թե «գրադը» որտեղից է մեզ խփում: Դիմացի բարձունքից էր, ամպերի միջից չէր էլ երեւում, բայց կրակած տեղը երեւում էր, թե որտեղից է խփում: Ասացի, որ տեսնում եմ: Ասաց՝ կարո՞ղ ես խփել: Պատասխանեցի՝ կարող եմ: Մտա տանկի մեջ, տանկը շուռ տվեցի, որ կրակեմ, ասաց՝ չէ՛, այստեղից որ կրակես, ապակիները կթափվեն, մենք այս շենքերում պիտի գիշերը մնանք: Ստիպված առաջ գնացի, մի քիչ ներքեւից երկու կրակոցով խփեցի «Գրադի» կայանքին: Եվ դա թուրքերի վերջին կրակոցն էր Քելբաջարի վրա:

Բ. - Ուղիղ նշանառությամբ կրակեցի՞ր:

Հ.Ս. - Այո՛, մառախուղը չէր թողնում, որ երեւար, բայց մոտավորապես երեւում էր, թե որտեղից են դուրս գալիս արկերը: Դրանից հետո արդեն տեխնիկայով մտանք Իստիսու: Առաջիններից մեկն էինք, որ մտանք: Գեներալը, ես լողացանք այնտեղի տաք ջրերում: Դալիբալթայանն ասաց, որ այն դառնալու է մեր բանակի հանգստյան գոտին: Իջնելիս Կիրովականի տղաները ութ զոհ էին տվել: Միամիտ իջել էին թուրքի գյուղը՝ Նադիրխանլի: Վիրավորներ էլ կային: «БМП»-ով են եղել, դրանով դուրս են եկել: Նրանք այն փորձը չունեին, ինչը մենք 1992-ին ձեռք բերինք Մարտակերտում: Տանկով իջանք, մնացած մի քանի կրակակետերը ոչնչացրինք: Գեներալը հպարտությամբ «БМП»-ից իջավ, նստեց տանկը, ասաց՝ լավ եք աշխատում: Դրանից հետո պատրաստվեցինք բարձրանալ Օմար՝ հերթափոխն ընդունելու: Տեխնիկան Օմար հասցնելը շատ դժվար է: 3200 մետր բարձրությամբ լեռնանցք է: Տեխնիկայի հզորությունն էլ յուրաքանչյուր հարյուր մետրից հետո թթվածնի պակասից իջնում է: Օմարին «տանկերի գերեզմանոց» էին ասում: Այնտեղ մենք խփված մի տանկով ենք աշխատել: Թուրքերը խփել էին, տեղում կանգնած էր, բայց մեջը արկեր կային:

Բ. - Ջոկատի տղաներից ի՞նչ կարող եք հիշել, ի՞նչ դեպքեր կարող եք պատմել:

Հ.Ս. - Մոխրաթաղում նստած էինք, տղաներից մեկը, որին «Մեծ բղոճ» էինք ասում, Մարտակերտում հացթուխ էր եղել, անունը Վալոդ էր, ասաց. «Ես փիադա եմ քշանում»: Մտածեցի. «Ամոթ է՝ ամեն անգամ հարցնեմ, բայց տեսնես այդ ինչ նոր տեխնիկա է»: Նայեցի, տեսա, որ ոտքով է իջնում, հասկացա: Տղաներից մեկը 15-16 տարեկան էր: Մարտակերտի հեռուստաաշտարակի բարձունքում ադրբեջանցիներն էին նստած: Պարբերաբար, երբ նրանք հավաքվում էին, ես տանկով Մոխրաթաղից՝ ծառերի արանքից դուրս էի գալիս, խփում ու փախչում: Երեխեքից մեկը ասաց. «Ես ուզում եմ տեսնել, թե ինչպես է տանկը կրակում»: Ասացի. «Մի քիչ հետո կկրակեմ, կտեսնես»: Գնացի

կրակեցի, հերթական անգամ եկա կանգնեցի, տեսնեմ՝ գլուխն է շարժում: Հարցրեցի. «Ի՞նչ է եղել»: Ասաց. «Եկա կանգնեցի այդտեղ, խլացա»: Ասում եմ. «Հեռու պիտի կանգնեիր, ա՛յ տղա»: Դարանակալ տանկում նստած էի մեխանիկի հետ: Հանկարծ ուղղաթիռներն եկան: Ես թռա «ուտյոսի» վրա, երկու կրակահերթ արձակեցի: Մեխանիկը գոռաց. «Կասետային ռումբը գցել է»: Իջա, պառկեցինք տանկի տակ: Կասետային ռումբը ամբողջ տարածքը սկսեց մաղել գնդակներով: Կոլյան գոռաց. «Կպավ ոտքիս»: Այնտեղ թթի օղի էր դրված, ուզեցի դրանով ոտքը մաքրել, ասաց. «Արա, ի՞նչ ես անում, արաղը մի թափիր»: Կոլյայի վիրավորվելուց հետո էր, գյուղում մի տրակտորիստ կար, որը փոքր հասակում բաբոյին «բաբու» է ասել, անունը դրել էին Բաբու: Նրան բերինք, նստեցրինք տանկը: Ասացին, որ սովետական բանակում «64» է քշել, նույնիսկ Կարմիր հրապարակով շքերթի ժամանակ անցել է: Ասացի. «Դու միայն քշի՛ր, մնացածը ես կանեմ»: Մոխրաթաղի եկեղեցու բակում կանգնել էինք, որ ադրբեջանցիները չտեսնեն, քանի որ անընդհատ «Գրադով» կրակում էին: Նոր էինք ազատագրել Մոխրաթաղը: Ասաց. «Ես լավ արաղի տեղ գիտեմ, ներքեւում պառավներ են ապրում, նրանք ունեն»: Որոշեցինք գնալ այնտեղ, բերել: Ավտոմատները վերցրինք, իջանք: Ցորենի միջից հանեց երկու տակառիկ: Փորձեցինք: Լավ օղի էր: Տուիկը որ վիրավորվել էր, տեղացի նոր հրամանատար էինք նշանակել՝ Յաղուբյան Եդիկին: Նա էլ ճանապարհները լավ գիտեր: Գալիս, տեսնում է, որ մենք չկանք: Գիրոն, մյուս տղաները «Վիլիսով» գալիս են: Կտրում է դեմները, թե՝ թուրքերը եկան, ավտոմատը, նռնականետը պահեցին, տանկը՝ անձնակազմով, գերի վերցրին: Գիրոն կապվում է ներքեւի դիրքերի հետ, ասում, որ լրիվ ճանապարհները փակեն, թուրքերը գերի ետ տարել: Մենք էլ՝ քեֆներս լավ, ներքեւից գալիս ենք: Ասում է՝ արդեն բա՞ց են թողել: Հարցնում եմ՝ ո՞վ: Թե՝ թուրքերը: Ասում եմ՝ ինչի մեզ բռնել ե՞ն, հո հա՞վ չենք, որ բռնեն: Սովետական բանակում ես սովորել էի՝ ուր էլ գնայի, լիցքավորված զենքը միշտ վերցնում էի, ինչպես նաեւ նռնակ եւ՛ եկողների, եւ՛ մեզ համար:

1993 թվականի աշնանը, երբ թշնամին ուժեղ հակահարձակում սկսեց, ես Վարդենիսի գնդում էի, տանկային գումարտակի հրամանատարն էի: Առաջինը մենք դուրս եկանք: Զորքի մի մասը նահանջել էր: Գիշերը չգիտեինք՝ թուրքերը մինչեւ ուր են հասել, ինչքան են եկել: Խուճապի մեջ ընկած մարդը ամեն ինչ էլ կարող է ասել, թե՝ եկել հասել են այստեղ, հիմա Վարդենիս կմտնեն... Ամբողջ գիշեր տանկերը հետեւից էին գալիս: Ես էի, Մարտակերտից Աբրահամյան Վանիկն էր, Սադոյան Կամոն՝ բժիշկը, մեր ջոկատի Կարապետյան Սերժիկը, ՀԱԲ-ի Հակոբյան Հարութը: Ամբողջ գիշեր

ճանապարհի եզրերով ավտոմատներով առաջացանք, որ տեսնենք, թե մինչեւ ուր են հասել: Մինչեւ Յանշաղ, Չափնի հասանք, ետ եկանք, տեսանք, որ չկան: Յանշաղից երեք-չորս կիլոմետր վերեւ տեսանք նրանց: Դիմացը խրամատներ էին դնում: 1993-ի դեկտեմբերի 31-ն էր: Ճանապարհին նստած՝ մի քար շուռ տվինք, ձյունը վրայից թափվեց: Ավտոմատը ձեռքիս նստել էի, տղաները կողքիս էին: Հրամանատարության տեղը պահել էինք: Արդեն ասել էինք, թե թուրքերը ուր են հասել, մոտավորապես ինչ ուժեր ունեն: Այդ Նոր տարին դաժան դիմավորեցինք, քանի որ զոհեր տվեցինք: Թիկունքից էին մտել: Ութ հոգի զոհվեցին: «БМП»-ի վրա Միքոն էր: Նռնականետով հինգ տեղից ծակել էին, բայց կարողացել էր արագ քշել, դուրս բերել: Հետո տեխնիկան, ուժերը մոտեցան: Արդեն նորմալ դիրքեր դրեցինք թուրքերի դիմաց, կապը այդտեղ հասցրինք, երկու տանկ բերինք ճանապարհի վրա, ուրիշ տեղ չկար, որտեղով տանկը կարողանար անցնել: Դրանք հերթով լիցքավորում էինք: Ականապատեցինք: Սկզբի օրերին շեմաֆոնը չէր աշխատում: Գնում էի, մի երեք արկ կրակում էի ադրբեջանցիների վրա, որտեղ կուտակումներ կային, տանկից իջնում, մեջքով դեպի նրանց կանգնում էի, ձեռքով ցույց էի տալիս, թե ինչպես տանկը շրջադարձ կատարի, ետ գնա: Այդ ժամանակ իմ մեխանիկը գինվոր էր՝ Չոլախյան Գեւորգը: Դրանից հետո՝ 1994 թվականի հունվարի 19-ին, դարձյալ նահանջի կարիք եղավ: Նահանջեցինք մինչեւ Ղամիշլու: Զորքի մի մասը գնաց Զոդի կողմը: Մենք իջանք, որպեսզի Ղարաբաղ գնացող ճանապարհը փակենք՝ մինչեւ Ղարաբաղից ուժերը կգան: Ղամիշլուի դիմացը տանկով կանգնած էին. մոտ քառասուն զինվորներ կային, Կարապետյան Սերժն էր, Աբրահամյան Վանիկը: Նորակոչիկների գումարտակի հրամանատարը Գարիկն էր, որը զոհվեց: Տանկի կանգնած տեղից հարյուր մետր առաջ ես փորել, երեք հատ ականներ էի դրել: Զինվորները դիմացի բլրի վրա նստած էին, տանկն էլ մի քիչ կողքի վրա կանգնեցրել էի: Տանկի կողքը կանգնած էի, մի «ՈՒԱԶ» մոտեցավ, ուզում էր անցնել տանկի կողքով: Պահեցի: Կարճահասակ, բեխերով մի մարդ իջավ: «Քառասունչորս»-ն էր՝ Բաբայան Սամվելը: Ասաց. «Ի՞նչ է եղել»: Ասում եմ. «Սա է սահմանը, հարյուր մետրից այն կողմ ականներն են, դրանից այն կողմ թուրքերն են: Ամարասի Արթուրն էր եկել որպես կոորդինատոր, որպեսզի որոշեր կոնկրետ դիրքերը, զեկուցեր «Քառասունչորս»-ին, թե ինչ իրավիճակ է, որպեսզի ուժերը գային: Հարցրեց, թե որտեղ է Արթուրը: Ասացի, որ շտաբը Ղամիշլի գյուղում է: Եթե ես մեքենան չպահեի, հարյուր մետր այն կողմ կտրաքեր, կամ էլ թուրքերի ձեռքը կընկներ:

Արթուրը նիհար էր շատ, բայց քաջ ու ռեալ ծրագրեր էր մշակում,

օրինակ՝ այդ դիրքերի պաշտպանության հարցը, թե որտեղ ուժեր հանենք, որտեղից է հնարավոր, որ անցնեն: Այսինքն՝ կարողանում էր ադրբեջանցիներից մի քայլ առաջ մտածել: Բաղասարի ուղղությամբ պիտի գային, այդ ճանապարհները նա քարտեզով նայում էր, որի հիման վրա կարողացանք ուժեր հանել այդտեղ, հակառակ դեպքում՝ այդ կողմից էլ թուրքերը կգային, կիջնեին Ղամիշլիի վրա, արդեն թիկունքից մեզ կխփեին: Դրանից հետո Բաղմանյան Հայկազն իր գնդով օգնության եկավ: Գնդի մի մասը հասցրեց անցնել, մի մասի ճանապարհը թուրքերը գնդակով կտրեցին: Մի մասը մնաց Չափնիում, մի մասը անցավ Ղամիշլիի կողմը: Փետրվարի սկզբին Ղարաբաղի ուժերը կարողացան արեւելյան կողմից հարվածել դեպի Օմարի լեռնանցքը բարձրացող ճանապարհը: Թուրքերը, տեսնելով, որ ճանապարհը կրակի տակ է, սկսեցին ուժերը ետ քաշել: Այդ ժամանակ էլ ընդհանուր հակահարձակում սկսեցինք մինչեւ Օմարի լեռնանցքի տակ: Երբ մոտեցանք Օմար լեռան ստորոտին, հասանք ադրբեջանական ուժերին, որտեղ նրանք նորից դիրքեր էին դրել: Ճանապարհի երկու կողմերում խրամատներ էին փորված, նրանց գնդացրային դիրքերն էին դրված քարերի մեջ: Քարեր էին շարում, մի քիչ էլ հող էին լցնում վրան, այդպես խրամատներ էին սարքում: Երբ տանկով ավելի մոտեցա, ճիշտ է, ավտոմատներով կրակում էին տանկերի վրա, բայց տեսնում էի: Մեր ուժերը երկու կողմից բարձրացան նրանց դեմ: Ես սկսեցի տանկով մոտենալ: Տանկի մեխանիկը Չոլախյան Գեւորգն էր: Մի քանի անգամ մոտեցանք ու սկսեցինք այդ դիրքերին խփել: Մեկը ուղիղ կրակոցով թուրքերի վրանին եմ խփել, բազային: Հետ էինք գալիս արկերը եւ սոլյարկան լիցքավորելու, նորից առաջ էինք գնում: Ինձ հետ Աբրահամյան Վանիկն էր՝ «БМП-2»-ով: Վանիկի բաժին հատվածը լեռների բարձր կողմն էր, թույլ չէր տալիս, որ նռնականետով այնտեղից խփեն: Մնացածը ես էի կրակում: Երբ երրորդ անգամ հետ էինք եկել, ասացին, որ թուրքերը նահանջում են, կարող ենք գնալ: Տանկով սկսեցինք առաջ շարժվել: Միշտ էլ տանկի փողի մեջ բեկորային արկ ունեի պահած: Շրջադարձի վրա, որտեղ թուրքերի դիրքերն էին, ծուխ բարձրացավ, եւ ուժեղ բռնկում եղավ: Ես հասկացա, որ թուրքի տանկը կրակեց ինձ վրա: Մի ակնթարթ կարծես ամեն ինչ արգելակվեր: Խփելուց հետո տեսա, որ տանկը նորմալ գործում է: Խփեց, տանկի գլանիվներից մեկը թռցրեց: Մեխանիկը հարցրեց՝ ինչ էր: Ասացի՝ ոչինչ: Քշելիս տանկը կարծես կաղար: Ասացի. «Դու կամաց-կամաց հետ քշիր, ես արդեն տեսել եմ, կանեմ»: Մի հատ բեկորային արկ կրակեցի կողքի բաքերին, որը որ մեջն էր: Կողքի բաքը տրաքեց, բայց հրդեհ չեղավ: Մեկ- երկու հատ էլ ինքը կրակեց, տեղ չհասավ: Նրանը

«Т-54» էր, բայց լրիվ նոր տանկ էր, ընդամենը երկու հարյուր տասը կիլոմետր էր քշած: Նրա համար դժվար է շարժվող թիրախին խփելը, իսկ «Т-72»-ով ավելի հարմար է, հատկապես երբ մասնագետն է անում: Դժվարությունն այն էր, որ տանկը ուղիղ չէր կարողանում կանգնել: Խփեցի ճակատին: Նրանց մեխանիկը արշավային ռեժիմով էր քշում, մարտականի դեպքում պետք է լյուկը փակ լիներ: Երեւի լավ չէր տեսնում ներսից, դրսից էր նայում: Արկը պայթեց ուղիղ դիմացը, բեկորը մեխանիկի գլուխը պոկեց: Անձնակազմը դուրս եկավ, որ փախչի, գնդացրով կրակեցինք: Կողքից տեսան, որ տանկը վնասված է, հետ գնացին: Պատերազմում առաջին տանկային մենամարտն էր, երկու բանակներն էլ կանգնած սպասում էին, ինչպես միջնադարում էին զորքերը նայում, թե ոնց են զորավարները կռվում: Նրանց կողմից իրենց տանկն էր, մեր կողմից՝ մերը, ուրիշ միջոց չկար: Այնտեղ էին գեներալ Խաչատուրովը, ղարաբաղյան ուժերից Հակոբյան Ռազմիկը, Ֆելիքս Գզողլյանն էր: Բոլորը, ամեն ինչ թողած, նայում էին, ոչ մի կրակոց չկար: Երբ տանկը եւ անձնակազմին խփեցի, նրանք նահանջեցին: Եթե ինձ խփեին, մերոնք էին նահանջելու, որովհետեւ արդեն տեխնիկա էր առաջ գալու: Մեր ուժերը աստիճանաբար առաջանում էին: Մոտեցանք տանկին, ուզում էինք այն հրելով ձորը գցել, քանի որ ճանապարհի մեջ էր խփված-կանգնած: Հրեցինք, տեղից չշարժվեց: Մեխանիկն ասաց. «Ես այս տանկին ծանոթ եմ, նոր նկատեցի, որ «Т-54» է»: Ասացի. «Շարժի գցիր, լյուկը բաց թող»: Ադրբեջանցիներն արդեն նահանջել էին, գնում էին, պիտի ճանապարհը բացեինք, որ հասնեինք նրանց ետեւից: Այդ ժամանակ իջավ, նստեց թուրքի տանկը: Հեռվից, երեւի թուրքի դիպուկահար էր, Գեւորգին գլխից խփեցին: Այդ տանկը Գեւորգի անունով բերեցինք Վարդենիսի գունդ: Դրանից հետո Դրմբոնից մեխանիկ եկավ: Արթուրն էլ հրամանատարի տեղը նստեց, քանի որ նա փոքր էր, նրան «մալիշ» էինք ասում: Մի ուրիշ տանկ էր եկել Ղարաբաղից: Ականի վրա պայթեց, շղթայի կեսը պոկվել էր: Նրանք հետ գնացին: Կռվի ժամանակ որ թուրքերին խփեցինք, Խաչատուրովը ռացիայով գոռում էր. «Герой нации., молодец»: Տանկը բերեցինք, Ղարաբաղից նորոգող բրիգադ եկավ, կատոկը փոխեցին, շատ արագ աշխատում էր: Գիշերը շարունակվեց հակահարձակումը Օմարի վրա: Եթե ընդհատվեր, այլեւս հնարավոր չէր լինի վերցնել լեռնանցքը: Ադրբեջանցիների մեջ արդեն խուճապ էր: Խփված տանկից անցանք: Սակրավորները իբր թե մաքրել էին ճանապարհը: Մեր գնալուց հետո տանկը որ շրջադարձ է կատարում, տանկային ականը թռչում է դուրս: Նոր ենք տեսնում, որ ական կա, այն էլ կողքին է կպնում, վերեւի պայթուցիչին չի հասնում: Կարծես աստված մեզ պահեր: Ներքեւից

թնդանոթը այդքան չէր բարձրանում, գնդացիրով խփեցինք դիրքերին:

Փոքր Օմարի լեռնանցքում Էջմիածնի Սեյրանի տղաներն էին եւ Մարտակերտի տղաները: Մենք տանկով բարձրացանք այդ սերպանտինով՝ մինչեւ հասանք փոքրը: Տղաները հոգնած էին: Ասացին, որ ավելի լավ է հիմա բարձրանանք: Հրամանատարության հետ կապվում էինք: Արդեն մութ էր, փողը շուռ տվեցի Օմարի մեծ լեռնանցքի կողմը, որը 3200 մետր բարձրություն ուներ, եւ կամաց-կամաց սկսեցինք սերպանտինով բարձրանալ: Ես վերեւում «АКС»-ով ու փոքր ավտոմատով նստեցի: Ինչ կասկածելի բան էի տեսնում, դրանցով կրակում էի: Մի մութ բան էր, կրակեցի: Տղաներն էլ տանկի ետեւից էին գալիս: Թիթեղի ձայն լսվեց: Մոտեցանք, տեսանք թուրքի «Գրադն» է կանգնած՝ քսան հրթիռով էլ լիցքավորած: Բախտներս բերեց, հրթիռին չէր կպել: Կապվեցինք մերոնց հետ, եկան տարան: Մի քանի ոլորան էլ բարձրացանք: Տանկը լեռնանցքը մտնելուց կրակի տակ է լինում, չի կարողանում կրակել: Օմարի լեռնանցքին չհասած՝ մոտ հարյուր մետր հետ կանգնեցի, խփեցի թուրքերի դիրքերին: Նրանք դարձյալ մի քանի անգամ նռնականետով խփեցին: Երեխան վախենում էր: Բայց ես հասկացա, որ նրանք չէին տեսնում, տանկի վրա ոչ մի լույս չէր վառվում: Պատահական կրակում էին, որ վախեցնեն: Բայց եթե լույսը բացվեր, եւ ադրբեջանցիները այդ դիրքում մնացած լինեին, դա մեզ համար մահ կլիներ: Խփեցինք Օմարի լեռնանցքին, թուրքերն այնտեղից դուրս եկան, մեր ուժերը նստեցին այդ դիրքերում: Այդտեղ մեր կռիվը ավարտվեց: Օմարի լեռնանցքում թուրքերը երեք տանկ թողեցին, բացի այն մեկից, որը ներքեւում խփեցի: Թթվածինն այնքան քիչ էր, որ շարժիչն անջատվում էր, սոլյարկան էլ էր սառչել, մածունի պես էր դարձել: Տաքացուցիչներ միացրինք, սոլյարկան փոխեցինք, տանկը իջեցրինք դիրքեր: Սիմոնյան Արթուրի հետ ընկերներ էինք դեռ Օմարի առաջին կռվից: Նա Սուսուզլուկին էր պահում՝ Հատուկ նշանակության ջոկատի գնդով: Ես ներքեւում էի: Ռացիա չունեին: Նա թղթի վրա թուրքերի կոորդինատները գրում էր, գումարտակների հրամանատարներից մեկը սարով մի կիլոմետր վազելով իջնում էր, փոխանցում ինձ: Ես առաջանում էի, խփում: Արթուրը լսել էր, որ տանկ են խփել, մտածել էր՝ ինձ են խփել: Հետո իմացավ, որ ես եմ խփել թուրքի տանկին, մի շիշ կոնյակի սպիրտ էր բերել: Այն ժամանակ ամենալավ սնունդն էր դա: Առավոտը՝ կռվից հետո, ավտոմատը ձեռքիս առաջ էի գնում, տեսա՝ ձյունների մեջ մեկն ընկած է, շարժվում է: Մոտեցա, հարցրի՝ հա՞յ ես: Ձայն չկար: Ասացի՝ ռու՞ս ես: Նորից ձայն չհանեց: Հարցրի՝ ադրբեջանցի՞ ես: Գլխով արեց: Քաշեցի, բերի կրակի մոտ, մի քիչ տաքացավ: Ներքեւից իրենց սնունդից բերինք, խտացրած կաթ, միս

ուներ, լավ կերակրեցինք նրան: Ասացի. «Ձեր հրամանատարներն էին բերել, ձեզ չէին տալիս, իրենց վրանում էին պահել»: Հետո նրան հանձնեցինք շտաբին: Նույն օրը գնացինք Աբովյան՝ մասնակցելու իմ մեխանիկի՝ Չոլախյան Գեւորգի թաղմանը: Նրա նման քաջ տղա ես չէի տեսել: Ինձ ասում էր՝ ուր գնաս, կգամ... Տանկերի վրա երկաթներ էինք կապել հատուկ նռնականետների համար, որ տանկը չծակեր: Նռնականետի արկը խփեց, մնաց տանկի վրա տնկված: Բեկորային խփեցի, գնաց ընկավ ձորը:

Մինչեւ Հատուկ նշանակության ջոկատը՝ Հրազդանի՝ Միքայելյան Սասունի ջոկատն էր կանգնած Սուսուզլուկիում: Երեկոյան կապվեց, թե՝ թուրքերը մեզ շրջափակում են: Ես երկու տանկով ու երկու «БМП»-ով ներքեւում էի: Քելբաջար - Սուսուզլուկիի գլխին էր: Ասացի. «Կամաց մոտեցեք, տրասսերով ցույց տվեք, թե որտեղ են թուրքերը, ու հեռացեք այդ կրակած տեղից»: Տանկի փողը այդքան չէր բարձրանում, ստիպված տանկը իջեցրել եմ ձորը, թեքության վրա եմ կանգնեցրել, նույնը եւ՝ զրահամեքենաները, որպեսզի փողը կարողանար այդքան բարձրանալ: Այդ թեք տեղից սկսել եմ խփել: Թուրքերին այնտեղից քշեցինք, զոհեր տվեցին, տղաները մի գերի էին վերցրել: Այդպես Հրազդանի ջոկատն ազատեցինք շրջափակումից: Սասունը եկավ, փաթաթվեց: Հետաքրքիր էր այդ իրավիճակում նրա՝ այդքան հանգիստ տոնով խոսելը: Երեւի դա էր ջոկատի տղաների ոգին պահում: Խուճապը կռվի ժամանակ միշտ էլ վնաս է:

Ղամիշլիում հերթական հարձակումներից մեկի ժամանակ թուրքերը թողնում են, որ հետեւակը մտնի Ղամիշլի: Սեւանի ջոկատի տղաներն էին, հրամանատարը Սամվելն էր: Սկսում են կրակել: Հազիվ մի թմբի հետեւը հավաքված էին: Կապվում են, թե՝ «Թուրքերը զասադ են գցել ու խփում են»: Ես տանկով մտա: Տեղանքին արդեն ծանոթ էի: Թմբի վրա գնդացրի դիրք էր: Արկը գցեցի, գնդացրորդը գլորվեց ձորը: Կրակելով մոտեցանք: Նրանք անցան տանկի անվտանգ կողմը: Մի հատ էլ տանկ կար, Ղարաբաղի տանկիստներից մեկն էր: Ես տղաներին եմ բերում, նա կրակով ետեւից գալիս է: Դուրս եկա, տեսա՝ տանկը չկա: Մոտ տասնհինգ-քսան րոպե չկար: Մտածեցինք՝ թուրքերը խփել են: Ուզում էինք գնալ օգնելու, գետից դուրս եկավ: Շրջադարձի ժամանակ ընկել էր գետը: Գետն էլ այդտեղից չէր երեւում: Այդ նույն տեղում գեներալ Մոսոն իր ջոկատով մտել էր, թուրքերը խփել էին: Ոտքից վիրավորվեց, «Նիվան» էլ մնաց փոսի մեջ: Հազիվ նրան հանեցին: Ես տանկով էի, Աբրահամյան Վանիկը՝ «БМП»-ով: Ասաց, որ պիտի «Նիվան» փոսից հանենք, քանի որ մեջը ռացիա կա: Ասում եմ. «Տանկը մեկ միլիոնանոց տեխնիկա է, արժե՞ մի «Նիվայի» համար այն վտանգի ենթարկել»: Թուրքերն էլ արդեն գյուղ էին մտել:

Ասում է. «Դրա մեջ համ քարտեզներ կան, համ ռացիան է, կանալները վրան են, չենք հասցրել հանել»: Ասացի. «Դե գնացինք, ինչ անենք»: Ես տանկով անցա, անընդհատ կրակելով պահեցի: Տղաները «Նիվան» թուրքերի քթի տակից քաշեցին-հանեցին՝ առանց որեւէ բան վնասելու:

Ծովին հողի կռվի ժամանակ Գիրոն էր հրամանատարը: Միաժամանակ եւ նռնականետն էր ուսին գցած, եւ «РПК»-ն: Ձախ թեւից վազելով գալիս էր աջ թեւ, մի հատ այնտեղ էր խփում, այնտեղից էլ գնում էր, ձախ թեւում էր խփում: Ամեն տեղ տղաներին ոգեշնչում էր:

1994 թվականի սեպտեմբերին ես վերադարձա: Դասերը սկսվում էին, եկա, որ հասցնեմ: Փոխադրվում էի չորրորդ կուրս: Համալսարանը գերազանց ավարտել եմ: 2000 թվականին թեկնածուական դիսերտացիա եմ պաշտպանել «Գեղամա եւ Վարդենիսի հրաբխային լեռնավահաններում ստորգետնյա ջրերի առաջացման մեխանիզմները» թեմայով: Կրուպսկայայի անվան դպրոցում վեցից իններորդ դասարաններին աշխարհագրության դաս էի տալիս: Մի անգամ դասի ժամանակ ուսուցչանոց կանչեցին՝ ասելով, որ զանգում են ինձ: Լսափողը վերցրեցի, Հովսեփն ասաց, որ Վարդենիսում գործ ունեմ: Դասերը հետաձգեցի, եկա մասնակցելու հերթական հակահարձակմանը: Հրամանատարությունն էլ փաստաթուղթ էր տվել, որ դպրոցում իմ բացակայությունները հարգելի համարեն:

Բ. - Հովսեփի մասին ի՞նչ կարող եք պատմել:

Հ.Ս. - Մինչեւ կռիվը սկսվելը կարողանում էր ջոկատներին ամեն ինչով ապահովել՝ սնունդով, հանդերձանքով: 1992 թվականի օգոստոսին, երբ սպարապետի կողմից որոշում էր ընդունվել «Մահապարտների» գունդ կազմելու, մեր տղաների հետ մարզում էին «Մահապարտների» տղաներին: Խփված «БМП»-ի միջից ադրբեջանցիների քարտեզ էի բերել, որի վրա սլաքներով նշել էին. Միրբաշիրից գալիս էր Մարտակերտ, հասնում այն կետին, որ մենք խփել էինք: Քարտեզն եմ ցույց տալիս: Դրա վրա Լեռնային Ղարաբաղ չկար. Մարտակերտը Աղդարա էր, Ստեփանակերտը՝ Խանքենդ եւ այլն: Մինչեւ 1994 թվի աշունը ես այդ գնդի հրամանատարի տեղակալն էի:

Երբ 1992-ին առաջին անգամ ազատագրել էինք Հաթերքը, տանկիստներով գնացինք բժիշկ Օհանյանի տուն: Նրա տղան՝ Խոսրովը, նույնպես տանկիստ էր, մեխանիկ: Հայկական տարբեր ջոկատներ կային, որ մտնում էին տները, սնունդ էին վերցնում: Որպեսզի հայերը չմտնեին այնտեղ, դարպասի վրա մեծ-մեծ տառերով գրել էին՝ «Այստեղ տանկիստներ են ապրում՝ Խոսրովը, Տոլիկը եւ

Դիման»: Մի օր էլ ես եմ մնացել այդ տանը: Շատ հին տուն էր: Հաթերքն ինձ վրա մեծ տպավորություն թողեց, երբ առաջին անգամ եկա Ղարաբաղ: Ինձ համար ամեն ինչ պատմություն էր: Արժեր դրա համար կռվել ու մեռնել: Երբ թուրքերը Հաթերքը երկրորդ անգամ են վերցնում, տեսնելով այդ գրությունը՝ տունը վառում են: Խոսրովի պապը օղին պահել էր: Հաց ուտելու ժամանակ ման էր գալիս, չէր գտնում: Վերջը մեղվի փեթակից հանեց:

Բ. - Հաթերքի առաջին ազատագրումից ի՞նչ եք հիշում:

Հ.Ս. - Հաթերքի ուղղությամբ չեմ եղել: Երբ եկա, վաթսունհինգ դիակ էր թափված: Թուրքերը դեպի անտառն էին նահանջել: Տանկով անցում կատարեցինք: Իմ առաջին տանկը այնտեղից ենք բերել, թուրքից գրաված տանկ էր, թողել փախել էին: Տանկի մեջ հրթիռի արկ կար՝ «Управляемый турс»: Մի անգամ թուրքերի վրա կրակելիս բոլորը նայում էին. փողից հրթիռը դուրս եկավ թեւերը բացած, շարժիչը միացավ, գնաց: Տղաները զարմացած նայում էին, թե դա ինչ է: Խորհրդային բանակում այդպիսի մի հրթիռը մի «Ժիգուլու» գին ուներ: Մեզ մոտ չէին կարողանում այն ճիշտ պահպանել: Գցում էին բեռնատարի մեջ, ու ցնցումներից շեղվում էր: Չէր կարելի խոնավության մեջ պահել: Արդյունքում կարող էր ճիշտ չկրակել:

Պատմում են Ադրբեջանական բանակի՝ ազգությամբ լեզգի երեք զինվորները, որոնք կամավոր անցել են Արցախի ինքնապաշտպանության բանակի կողմը:
08.05.1992 թ., Շուշի

Բ. - Ի՞նչը մղեց ձեզ այդ վճռական քայլին:

1-ին զինվոր - Ադրբեջանական իշխանությունները ստիպողաբար մեզ զորակոչել են եւ բերել Ղարաբաղ: Շուշիում մենք շատ բան հասկացանք:

2-րդ զինվոր - Լեզգիստանը Ղարաբաղի հետ շատ ընդհանրություններ ունի: Նույն ցավն է, նույն ճակատագիրը: Մեր երկիրն ու ժողովուրդը Սամուր գետով բաժանված են երկու մասի. մեկը Դաղստանում է, մյուսը՝ Ադրբեջանում: Մենք Կովկասյան աղվանների սերունդներն ենք:

3-րդ զինվոր - Ցանկացած լեզգի զինվոր պատրաստ է անցնել հայերի կողմը: Մենք այդ ամենի մասին դեռեւս մինչեւ Շուշի հասնելն էինք պայմանավորվել: Մնացածը խնդիր չէր:

Բ. - Ներկայացեք, որպեսզի ես կարողանամ ձեզ ճիշտ ներկայացնել:

2-րդ զինվոր - Ներկայանալ մենք չենք կարող, քանի որ ադրբեջանական իշխանությունները ոչ միայն մեզ չեն ների, այլեւ մեր հարազատներին լուրջ նեղություն կպատճառեն:

Բ. - Ձեզ հայտնի՞ է, որ դուք արդեն մահապարտներ եք, քանի որ Ադրբեջանի Մեջլիսը որոշել է առանց դատի ու հետաքննության գնդակահարել դասալիքներին:

2-րդ զինվոր - Հայտնի է, բայց դա մեզ չի հուզում:

1-ին զինվոր - Այդ որոշումը մարդու իրավունքների խախտում է, քանի որ երրորդ ժողովրդի ներկայացուցիչներին ներքաշել են երկու այլ ժողովուրդների միջեւ պատերազմի մեջ:

Բ. - Ի՞նչ եք մտածում այս պատերազմի մասին:

2-րդ զինվոր - Երբ մեզ բերեցին Շուշին պաշտպանելու,

հասկացանք, որ ադրբեջանցիները անարդար պատերազմ են մղում:

3-րդ զինվոր - Մենք չէինք կարող կռվել ադրբեջանցիների կողմից, քանի որ վաղը նրանք սկսելու են մեր դեմ պատերազմել: Պատերազմը շուտով կտեղափոխվի թալիշների երկիրը:

1-ին զինվոր - 1988 թվականից, չէ՛, հենց Ադրբեջանի ստեղծման սկզբից էլ պիտի որ պարզ լիներ, որ այն կորստյան է մատնված, քանի որ միկրոկայսրություն է: Այժմ կայսրությունների փլուզման ժամանակաշրջան է սկսվել: Ոչ մի ժողովուրդ, ո՛չ հայերը, ո՛չ լեզգիները, ո՛չ էլ ուտիները չեն ներելու ազերի հորջորջվող թուրքերին այդ ժողովուրդների բռնի ասիմիլացումը, նրանց պատմական արժեքների սեփականացումը, մշակութային ժառանգության ոչնչացումը:

Բ. - Պատմեք Ադրբեջանի ազգային բանակի մասին: Ինչպիսի՞ն եք տեսել այն ներսից:

3-րդ զինվոր - Դուք դա բանա՞կ եք անվանում: Դա թալանչիների ավազակախումբ է: Նրանք նույնիսկ թալանում են իրենց զոհված ընկերների դիակները: Եթե զոհված զինվորը ոսկե ատամներ ունի, նրա գլուխը կտրում են, որպեսզի մի թաքուն տեղ հանեն ոսկին: Մեր դասակից աղդամցի զինվորը պատմում էր իր «սխրանքների» մասին: Նա արդեն կես կիլոգրամ ոսկի է կուտակել եւ նպատակադրվել է փախչել բանակից:

1-ին զինվոր - Մեկ այլ ադրբեջանցի զինվոր Դերբենտի կողմերում նռնակներ էր վաճառում, հատը՝ երեք հազար ռուբլի: Դատարանում նրան հարցրել են, թե որտեղից նրան այդքան նռնակներ, նա պատասխանել է, որ ղարաբաղյան ռազմաճակատում մարտերի ընթացքում է տնտեսել: Այսինքն՝ մարտի ընթացքում պիտի նետեր, բայց չի նետել, «տնտեսել» է:

2-րդ զինվոր - Ադրբեջանցիները աշխարհով մեկ աղմուկ են բարձրացնում, թե հայերը քիմիական զենք են օգտագործում, այնինչ՝ նրանք հարեւան երկրից նման զենք են ստացել արդեն:

Բ. - Շա՞տ լեզգի զինվորներ են զոհվել մարտերում:

1-ին զինվոր - Այս չորս տարիներին մարտերում զոհված ոչ մի լեզգի զինվորի դիակ տուն չեն բերել: Նամակ էլ չի հասնում:

2-րդ զինվոր - Զինակոչից հետո բոլոր լեզգի զինվորները անհայտ կորածների ցուցակում են հայտնվում:

3-րդ զինվոր - Ադրբեջանական իշխանությունները վախենում են մեր ժողովրդի ցասումից:

2-րդ զինվոր - Սակայն ստիպողական զորահավաքի միջոցով մեր երիտասարդությանը կտրում են մայր հայրենիքից, այդպես ջլատում լեզգիների ուժը:

1-ին զինվոր - լեզգի հինգ հարյուր երիտասարդներ մեր կողմերից

փախել են Դաղստան:

Բ. - Ինչպե՞ս կլուծվի այս հակամարտությունը:

2-րդ զինվոր - Հաղթանակը հեռու չէ, ու կրկին խաղաղություն կհաստատվի մեր հողում:

Բ. - Արտասահմանյան լրագրողներն ուզում են զրուցել ձեզ հետ: Ի՞նչ եք պատասխանելու նրանց:

1-ին զինվոր - Ոչ, մենք պատրաստ չենք դրան:

3-րդ զինվոր - Եթե այնպես նկարահանեն, որ չերեւան մեր դեմքերը, խնդրեմ, համաձայն ենք:

Բ. - Ի՞նչ ծրագրեր ունեք:

2-րդ զինվոր - Մի երկու շաբաթ կպատերազմենք հայկական ուժերի կողմից, որոշակի փորձ ձեռք կբերենք ու կվերադառնանք տուն:

Բ. - Դուք այդ հրազենո՞վ եք անցել հայերի կողմը:

3-րդ զինվոր - Այս հրազենով էլ տուն կմեկնենք: Մեր պայքարը նոր է սկսվում:

Բ. - Ի՞նչ կուզենայիք ասել ադրբեջանցիներին:

2-րդ զինվոր - Որ խելքի գան ու հրաժարվեն ազգային փոքրամասնություններին ճնշելու քաղաքականությունից: Այդ դեպքում չեն զոհվի իրենց որդիները:

Հ.Գ. Երկու օր հետո Ռուսական հեռուստատեսության առաջին ալիքով ցերեկային ժամին եթեր տրվեց լեզգի զինվորների հետ հարցազրույցը: Հաջորդ օրը Մոսկվայում բնակվող շուրջ քառասուն հազար ադրբեջանցիներ քարերով հարձակվեցին Օստանկինոյի հեռուստաստուդիայի վրա եւ քարկոծելով ջարդեցին ապակիները՝ պահանջելով այլեւս հայամետ հաղորդումներ եթեր չտալ:

Պատմում է Սանասար Ծատուրյանը
(Ասկերանի գնդի հրամանատարի տեղակալ)
31.10.1992 թ., Խնապատ

Բ. - Քիչ առաջ ադրբեջանական հեռուստատեսությամբ Ադրբեջանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնը հաղորդեց, որ հոկտեմբերի 30-ին բանակային ստորաբաժանումները, գործելով Խնապատ գյուղի ուղղությամբ, հակառակորդին պատճառել են կենդանի ուժի զգալի կորուստներ եւ ոչնչացրել են թշնամու զրահատեխնիկայի չորս միավոր: Մեր զինվորներից չորսը զոհվել են, քսաներկուսը՝ վիրավորվել: Ի՞նչ կասեք այդ մասին:

Ս.Ծ. - Նրանք ամեն օր կեղծում են, մոլորության մեջ գցում իրենց ժողովրդին: Իսկ իրականում մարտը այլ ընթացք է ունեցել: Վաղ առավոտյան՝ ժամը 6-ին, ադրբեջանցի զավթիչները փորձել են Կարտոֆիլի տափ կոչվող վայրով հանկարծակի գրոհով գրավել գյուղը: Վաշտի հրամանատար Անդրանիկ Պետրոսյանն ու Սուրեն Ծատուրյանը մի ջոկատով դիրքավորվել էին Կարմիր քերծ կոչվող բարձունքում, իսկ ես՝ վաշտի մյուս կեսի հետ, գյուղի ցածրադիր մասում: Թշնամու հարյուր հետեւակայիններ դեպի գյուղն էին շարժվում: Թշնամու մյուս վաշտը տանկի ուղեկցությամբ շարժվում էր դեպի մեր դիրքերը: Մենք սպասեցինք, որ տանկը մոտենա: Խնապատի վաշտի տղաները թրծված էին կռիվներում, ու տանկի հռնդյունը նրանց չէր վախեցնում: Ընդհակառակը, ուրախացան, որ այն ոչնչացնելու լավ առիթ է ստեղծվել: Երբ ընդամենը հիսուն մետր էր բաժանում տանկին մեր դիրքերից, Սամվել Շահրիմանյանն ու Սաշա Առաքելովը նռնականետերով ուղիղ նշանառությամբ հրկիզեցին այն: Տանկի հրամանատարն ու նշանառուն ցած թռան ու նույն պահին էլ զոհվեցին, իսկ վարորդը շարունակեց առաջ շարժվել: Հավանաբար, մեքենան արդեն անկառավարելի էր, ու շուտով այն ապառաժների վրայով ձորը գլորվեց: Այդ պահին էլ թշնամու երկու ռազմական ինքնաթիռները հայտնվեցին գյուղի վրա: Նրանց նետած ռումբերը հեռու ընկան: Սակայն հետեւակայինները շարժվում էին գյուղի ուղղությամբ: Շուտով նրանց առաջին շարքերը գնդացրային ու ավտոմատների կրակի տակ ընկան: Տասնհինգ ադրբեջանցիներ ետ նահանջեցին եւ թաքնվեցին ցորենի արտի մեջ: Շուտով բռնկվեց արտը: Նրանք կրակի դեմ պայքարելու ոչ մի միջոց չունեին ու բոլորն էլ այրվեցին: Մեր բոլոր տղաներն էլ հերոսաբար էին կռվում, բայց լավագույնը մեր դիպուկահարն էր, որին, շեկ լինելու պատճառով,

«Մալական» ածականով են կնքել: Դա Մանվել Մելքումյանն է: Հրաշալի էր կռվում մեր տանկի անձնակազմը՝ Գառնիկ Պետրոսյանը, Հրանտ Բաբայանն ու Սեյրան Հակոբյանը: Նրանք ուղիղ նշանառությամբ լռեցրին թշնամու թնդանոթը: Կես ժամ հետո սրընթաց արագությամբ մի զրահամեքենա էր գալիս դեպի մեր դիրքերը: Հարյուր հիսուն մետր հեռավորությունից տղաները խփեցին այն: Մեքենան բռնկվեց: Հինգ հոգանոց անձնակազմը դուրս թռավ, որ փախչի, սակայն մեր գնդակներից նրանք էլ ընկան:

Բ. - Հետաքրքիր է, մարտավարության ի՞նչ ձեւեր էին կիրառում ադրբեջանցիները:

Ս.Ծ. - Երբ նրանք խուճապահար ետ էին նահանջում, նրանց հրետանին ու զրահամեքենան սկսեցին գնդակոծել փախչողներին: Շատերը իրենց իսկ նետած ռումբերից ու գնդակներից զոհվեցին: Մեր հաշվումներով՝ այդ օրը զոհվեցին շուրջ ութսուն ադրբեջանցիներ: Մեր վաշտը զոհ չտվեց, բայց չորսը վիրավորվեցին: Գիշերը ադրբեջանցիները եկան դիակների հետեւից ու տարան քսան հոգու: Մնացածները դեռեւս դաշտում են:

Բ. - Ի՞նչ պետք է անեք դրանից հետո:

Ս.Ծ. - Դիակները կփոխանակենք պատանդների կամ ռազմագերիների հետ: Մեկ ամիս առաջ եւս եկել էին ու մահ գտել մեր գյուղի մատույցներում: Նման փոխանակում էինք կատարել: Զոհված հետեւակայինների մեջ երկուսը վարձու ռուս զինվորներ էին: Մեկը նովոսիբիրսկցի մի հսկա էր՝ ատլետիկ կազմվածքով: Երկրորդ տարին էր կռվում Ադրբեջանի բանակում: Գրպանում տասներկու հազար ռուբլի կար:

Բ. - Գյուղում բնակիչներ կա՞ն:

Ս.Ծ. - Գյուղի բնակչությունը հազար երեք հարյուր հոգի է: Հիմա յոթ հարյուր հիսունն են մնացել: Իսկ վաշտը կազմված է միմիայն գյուղի տղաներից: Նրանք, փաստորեն, պաշտպանում են իրենց երեխաներին, կանանց, ծնողներին:

Բ. - Ինչպե՞ս է լուծվում ժողովրդի ապաստարանների հարցը: Ես նկատի ունեմ ավանդական գետնափոր կամ երդիկավոր տների կառուցումը:

Ս.Ծ. - Մեր գյուղացի Սլավա Սարգսյանը ժայռափոր բնակարան է կառուցել: Կարծում եմ, որ պետք է ընդօրինակվի եւ տարածվի:

Բ. - Իսկ ո՞րն է ձեր հիմնական ուժը:

Ս.Ծ. - Ինձ թվում է, որ մեր հաջողությունների գաղտնիքը կարգապահության մեջ է: Մենք բանակային ռեժիմ ենք հաստատել: Գյուղում ռազմական խորհուրդ ենք տեղծել, որը փոխարինում է գյուղխորհրդին:

Բ. - Ինչպիսի՞ն եք տեսնում այս առճակատման վախճանը:

Ս.Ծ. - Եթե մարտական դիրքերը լքած տղաները ետ վերադառնան կամ վերադարձվեն, եթե բոլոր արցախցի երիտասարդները զինվորագրվեն Արցախյան բանակին, ապա հեռու չի լինի հաղթանակը: Մեր գյուղի օրինակը վկայում է, որ թշնամուն դժվար չի հաղթել: Դիմում եմ արցախցի երիտասարդներին, որոնք թաքնվում են Ստեփանակերտում Երեւանում, Հայաստանի այլ քաղաքներում, Ռուսաստանի քաղաքներում՝ ետ վերադարձե՛ք, զինվորագրվե՛ք, ու մենք կազատագրենք մեր երկիրը, հայրենի հողը: Բոլորդ էլ կհամոզվեք, որ ամենեւին էլ դժվար չէ թշնամուն հաղթելը:

Պատմում է Սարո Սարուխանյանը
(Հադրութի առաջին գումարտակի հրամանատար)
10.11.1992 թ., Երեւան

Բ. - Ինչպե՞ս է կազմավորվել գումարտակը:

Ս.Ս. - Ես Սարուշենի ջոկատի հրամանատարն էի: 1988-ին փոքրիկ ջոկատով սկսեցինք լքված Բինյաթլու գյուղի վերականգնումը: Ինձ առաջարկեցին շրջկենտրոնում գումարտակ կազմավորել: Չորս ամիս է, ինչ այդ գումարտակի հրամանատարն եմ: Այն հուսալիորեն պաշտպանում է շրջկենտրոնը: Գումարտակը կազմված է տեղացիներից: Ողջ շրջանի ինքնապաշտպանության հիմքը տեղի տղաներն են, իսկ այն, ինչը «հայկական էքսպեդիցիոն» կորպուս են անվանում, գոյություն չունի, միանգամայն կեղծիք է եւ ադրբեջանցիների համար միմիայն քարոզչական նշանակություն ունի: Արցախում արցախցիները կռվում ու պաշտպանում են իրենց նախնիների երկիրը, տունը, ապահովում իրենց ընտանիքների անվտանգությունը: Սա հուսալիության երաշխիք է:

Բ. - Մամուլում ընդունված է «Ադրբեջանի ազգային բանակ» արտահայտությունը: Իրականում ինչպիսի՞ն է այն:

Ս.Ս. - Նրանք շուտ են սկսել բանակի կազմավորումը: Դա խորհրդային բանակի կրկնօրինակն է: Մեր բռնագրված փաստաթղթերից երեւում է, որ այնտեղ ամեն ինչ խորհրդային բանակն է հիշեցնում: Փաստորեն, այն ստեղծվել է հենց խորհրդային 4-րդ բանակի հիմքի վրա: Սակայն այդ բանակում բացակայում է ոգին, ներշնչանքը: Ադրբեջանցի զինվորը կամ սպան, փաստորեն, հասկանում է, որ ինքը զավթիչ է: Ինչքան էլ պատժիչ զորամասեր տեղադրեն գրոհողների թիկունքում ու մահվան սպառնալիքով հարձակման մղեն, նրանց գործողության ճակատագիրը որոշված է:

Բ. - Մարտերում ո՞ր կողմն է ավելի շատ զոհ տալիս, եւ ո՞րն է դրա պատճառը:

Ս.Ս. - Երբեմն ադրբեջանցիները փորձում են ռադիոկապով կապվել մեր տղաների հետ ու հոգեբանական ճնշում գործադրել: Ցանկացած հարձակումից հետո ադրբեջանական կազմավորումները մեծաթիվ կորուստներից հետո երկար ժամանակ ուշքի չեն գալիս, չնայած նրանք հանգստի, ուժերը վերականգնելու տեղեր ունեն, իսկ մեր շրջանը բոլոր կողմերից շրջապատված մի հսկա մարտադաշտ է, որտեղ մենք անընդհատ մարտերի մեջ ենք:

Բ. - Պատմեք օգոստոսյան մարտերի մասին, երբ թշնամին լայնածավալ հարձակումներ էր ձեռնարկել:

Ս.Ս. - Ամենածանր մարտը օգոստոսի 15-ին էր: Ես նոր էի հրամանատար ընտրվել: Դատելով տարբեր կողմերի տեղեկություններից՝ հասկացա, որ թշնամին խոշոր հարձակում է ձեռնարկում Ջեբրայիլի եւ Ֆիզուլիի կողմից՝ նպատակ ունենալով գավթել ողջ Հադրութի շրջանը: Նրանք, գրավելով մեր դիրքերն ու Մելիքաշենը, գրոհեցին Հադրութի ուղղությամբ: Մենք Մելիքաշենի մոտ կանգնեցրինք առաջխաղացումը: Ես հաղորդեցի, որ Հադրութում չանհանգստանան, քանի որ ետ կվերցնենք գյուղը: Ութ տանկ, այլ զրահատեխնիկա, մեծաթիվ հետեւակ է կուտակվել գյուղում: Մի տանկ հրկիզելուց հետո մյուսները խուճապահար փախան: Կարեւորն այն էր, որ Հադրութի բնակչությունը խուճապի չէր մատնվել: Ժողովուրդը հավատում է մեզ, որ կպաշտպանենք: Բնակչության մեծ մասը մնացել է: Բռնագաղթվածների մեծ մասը վերադառնում է :

Բ. - Զինվորներն աշխատավարձ ստանու՞մ են, թե՞ ոչ:

Ս.Ս. - Ոչ, չեն ստանում: Հույս կա, որ այդ խնդիրը կլուծվի: Սակայն մի լուրջ խնդիր էլ ունենք: Մտավորականությունը պատերազմին գրեթե չի մասնակցում, ամեն առիթով հեռանում է: Նրանց պակասը զգացվում է: Շատերն ասում են. «Այս պատերազմի շուրջը քաղաքական խաղեր են գնում»:

Բ. - Ցանկացած պատերազմի շուրջ քաղաքական խաղեր են գնում:

Ս.Ս. - Այո, քաղաքագետները թող իրենց խաղն անեն: Դա չի նշանակում, թե հայրենի հողը, օջախը չպետք է պաշտպանենք: Հիմնական հարցերը այստեղ՝ ռազմի դաշտում են որոշվում: Իրականությունը սա է: Իսկ հայրենիքի պաշտպանությունից խուսափելու, կաշին փրկելու համար էլ կարելի է տասնյակ փաստարկներ հորինել: Ես նման մտավորականներին դատապարտում եմ:

Բ. - Այս մի քանի տարում դուք եւ ձեզ նման շատերը, ռազմական փորձ ձեռք բերելով, հրամանատարներ եք դարձել: Իսկ կա՞ արդյոք մասնագետ սպաների կարիք:

Ս.Ս. - Իհարկե, մարտավարության հարցերում հմուտ սպաների կարիք կա: Սակայն, գնդապետի ուսադիր ունեցող ամեն սպա չէ, որ կարող է գլուխ հանել մեր պատերազմից: Մենք շատ կարիք ունենք հատկապես ռազմական տեխնիկային տիրապետող մասնագետ սպաների: Իհարկե, նաեւ կարիք ունենք կարգապահություն ստեղծող, արդարացի հրամանատարների: Մեզ համար լուրջ խնդիր է նաեւ համալրման հարցը: Վիրավորները հիմնականում ետ չեն վերադառնում: Դիրքային պատերազմը ծանր է: Դիրքերը շատ մոտ են իրար: Թշնամին 300-400 մետր է հեռու: Թշնամու հրետակոծմանը պատասխանելու հնարավորությունները քիչ են:

Բ. - Դուք՝ որպես գումարտակի հրամանատար, ի՞նչ վերաբերմունք ունեք հրամանատարի՝ առաջինը հակագրոհի նետվելու քայլին:

Ս.Ս. - Իհարկե, հրամանատարը հրամանատարական կետում պետք է լինի, որտեղից լավ է երեւում: Ինքս երբեմն գիտակցաբար խախտում եմ այս պայմանը եւ որոշիչ պահերին գլխավորում եմ գրոհը: Զինվորներին դա ոգեւորում, նոր եռանդ է տալիս: Այդպես մենք շատ մարտեր ենք շահել: Իմ զինվորները հավատում են ինձ:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ասրյան Աշոտ 119
Ավագյան Համբարձում 8
Ավագյան Արտո 11, 12
Ավագյան Գեւորգ 194
Ավագյան Վահան 40

Բաբայան Արամ 15
Բաբայան Ռուբիկ 128
Բաբայան Հրանտ 226
Բաբայան Սամվել 20, 75, 83, 86, 131, 132, 160, 163, 168, 184, 188, 215
Բաբայան Կարո 192
Բաբաեւ Սուլեյման 103
Բաբաջանյան մարշ. 54
Բագիրով Միրջաֆար 6, 7, 8, 10, 12, 66
Բազեյան Ալբերտ 204
Բալայան Զորի 23, 78, 79, 99
Բալայան Վլադիմիր 69, 178
Բախշյան Աշոտ 16
Բաղդասարյան Լեւոն 5, 6
Բաղդասարյան Սարմեն 114
Բաղիրյան Վարդգես 77
Բաղմանյան Հայկազ115, 151, 184, 216
Բաղրամյան մարշ. 54
Բարբոս 28
Բարսեղով Յուրի 44, 49
Բեգլարյան Սամվել 152
Բոններ Ելենա 59, 62
Բրոյիդի Ասկարե 99
Բուրբուլիս 40

Գալշոյան Մուշեղ 77
Գալստյան Ժաննա 202
Գալստյան Յաշա 189
Գալստյան Կարեն 202
Աբաջյան Գեւորգ 7
Աբդուռահիմ Ալի 101
Աբովյան Խաչատուր 6, 11
Աբրահամյան Խորեն 51
Աբրահամյան Վլադիմիր 8
Աբրահամյան Հրանտ 17
Աբրահամյան Սարգիս 14, 16
Աբրահամյան Սերժիկ 113, 115
Աբրահամյան Վանիկ 214, 215, 216, 219
Աբու Մովսես (Մուսե) 4
Ագո Կարապետյան 183, 203
Ադմիրալ Սամո 164, 190
Ազգալդյան Լեոնիդ 69, 160, 178, 179, 180, 181, 182, 209
Ազոյան Հովիկ 163, 164
Ալեքսանյան Արտեմ 124
Ալի Բեխամբարի Հուսեին 98
Ալիխանե Մամե 96
Ալիխանովա Տանյա 61
Ախունդով 15
Ալիեւ Հեյդար 12, 16, 51, 96, 103
Ալիեւ Մեշադ 61
Ահարոնյան Արարատ 112
Ահարոնյան Ավետիս 5
Ահարոնյան Արթուր 112
Ահարոնյան Մանվել 117
Աղանբեկյան Աբել 22
Աղաբեկյան Արթուր 86
Անդրանիկ զոր. 52, 77, 102
Ամալյան Դավիթ 124
Ամարասի Արթուր 161, 165, 185, 186, 195, 198, 215
Ալիխանյան Համո 7, 9
Ապրեսյան Միշա 33
Առաքելով Սաշա 225
Ասրյան Բորիկ 117
Դուշման Վարդան /Ստեփանյան/ 125, 126, 127, 128, 129, 130, 139

Եղիազարյան Սամվել 161
Երանոսյան Լեւոն 84
Երիցյան Պավել 71, 76
Եսայան Օլեգ 79

Զարյան Նաիրի 17
Զատիկյան Վահան 154, 157
Զորյան Ստեփան 8

Թորոսյան Էդիկ 152

Իբոյան Սրին 98
Իսակով աղմ. 54
Իսահակյան Ավետիք 8, 10, 11, 12
Իսպետ 7, 8, 9
Իսրայելյան Գառնիկ 106

Լենին 26, 100

Խալաստոյ Երվանդ 119
Խանզադյան Սերո 102
Խաչատրյան Էդգար 124, 128
Խաչատրյան Ռոբերտ 174
Խաչատրյան Վլադիկ 108
Խաչատրյան Սամսոն 152,
Խուդյակով-Խամփերյանց մարշ. 54

Ծատուրյան Սանասար 225
Ծատուրյան Սուրեն 225
Կարապետյան Արկադի 183
Կարապետյան Սերժիկ 214, 215
Կապուտիկյան Սիլվա 17, 23
Կարոտ 152, 161
Գալստյան Համբարձում 21, 25
Գալստյան Սուրեն 178
Գալստյան Վագիֆ 106
Գասպարյան Ժորա 108
Գասպարյան Լազր 14
Գզողլյան Ֆելիկս 75, 77, 135, 137, 217
Գեյլ Ռոբերտ 93, 94
Գերոյան Հովո 125, 131, 135, 140
Գիրո /Միրզոյան Գրիգոր/ 179, 180, 182, 183, 184, 185, 189, 211, 214, 220
Գորբաչով Միխայիլ 16, 24, 44, 88, 91, 98, 99
Գրաշի Աշոտ 4, 5, 7
Գրիգորյան Արշավիր 7
Գրիգորյան Մանվել 85, 87, 133, 145
Գրիգորյան Սամվել 6, 8, 14
Գրիգորյան Սասուն 7
Գրիգորյան Լյովա 120
Գրիգորյան Օֆելյա 169
Գրիգորյան Գրիգոր 202
Գրիգորյան Սաշա 175
Գեւորգյան Սամվել 80
Գեւորգյան Լյովա 125, 129, 135, 139, 140, 141, 142, 143, 147, 148
Գեւորգյան Կարեն 126, 127, 128

Դաբաղյան Աշոտ 100
Դանթե 31
Դալիբալթայան Գուրգեն 78, 140, 155, 161, 165, 183, 212, 213
Դանիելյան Դանիել
Դանիելյան Նորայր 56, 83, 118, 166, 184
Դանիելյան Վիլեն 88
Դեմիրճյան Կարեն 54, 96, 98
Դավիդյան Մարգար 10

Ղազարյան Սամսոն 21, 28, 30
Ղազարյան Ռաֆայել 42
Ղարախանյան Բենիկ 77, 78, 84, 85
Ղահրամանյան Սամվել 75
Ղաշանց Գարիկ 180, 182
Ղուլյան Թաթուլ 5, 6, 7,
Ղուկասյան Արայիկ 188
Ղուկասյան Էդուարդ 175

Մաթեւոսյան Սամվել 151
Մակար եպ. Բարխուդարյանց 4
Մահմուդով Նադո 98, 99
Մահտեսյան Մանվել 155
Մանուկյան Վազգեն 22, 25, 26, 27, 32, 131, 132, 133, 153, 154, 155, 158, 165
Մանուչարյան Աշոտ 19, 21, 27, 31, 104
Մանուչարով Արկադի 15, 16
Մելքումյան Նիկոլայ 4
Մելքումյան Գուրգեն 15
Մելքումյան Կնյազ 112
Մելքումյան Մանվել 225
Մաո Ցզե Դուն 95
Մարգարյան Մամիկոն 9
Մարտիրոսյան Անահիտ 68
Մարության Վալերի 82, 86
Մարուխյան Հրայր 46, 55
Մելիք-Շահնազարյան 10, 15
Մելքոնյան Մոնթե /Ավո/ 69, 73, 82, 83, 143, 163, 189
Մելքումյան Գուրգեն 15
Մելքումյան Մանվել 225
Մելքումյան Նիկոլայ 4
Մելքումյան Կնյազ 112
Մեղրյան Շահեն 45, 63, 156
Մինասբեկյան 44, 49
Միրզոյան Աֆանասի 10
Միրզոյան Գրիգոր 180

Կրպեյան Թաթուլ 154
Կրուպսկայա Նադեժդա 220
Կուրղինյան Շուշանիկ 7
Կուրչիցկայա Սվետլանա 79
Կեւորկով Բորիս 97

Հակոբյան Ազիզբեկ 4
Հակոբյան Ալեքսան 101, 103, 104
Հակոբյան Աշոտ 119
Հակոբյան Բորիկ 112
Հակոբյան Դավիթ 119
Հակոբյան Հակոբ 8
Հակոբյան Հարութ 214
Հակոբյան Ռազմիկ 217
Հակոբյան Սասուն 190
Հակոբյան Սեյրան 226
Հակոբյան Սմբատ 124, 125, 131, 134, 135, 137, 140
Հակոբյան Վարդան 8
Հայրապետյան Էդիկ 119
Հայրապետյան Ռուբեն 131
Հարությունյան Ալեքսան 80
Հարությունյան Գագիկ 37
Հարությունյան Գարիկ 108
Հարությունյան Վահան 140
Հարությունյան Լյուդմիլա 44
Հարությունյան Սուրեն 54
Հայրո քոլատակցի 81
Հասանով 97
Հացպանյան Սարգիս 191
Հովակիմյան Վարդան 151, 161
Հովհաննիսյան Արմեն 7, 8
Հովհաննիսյան Վահան 46
Հովսեփյան Հովսեփ 195, 198

Ղազարյան Գեորգի 81, 82, 83, 86
Ղազարյան Մուշեղ 125, 127, 128

Չարենց 5, 6, 7
Չիլինգարյան Արտուշա 114
Չոլախյան Գեւորգ 215, 216, 219

Պարգեւ արք. Մարտիրոսյան 69, 77, 79, 152, 161, 195
Պետրոս առաքյալ 30
Պետրոսյան Անդրանիկ 225
Պետրոսյան Ասատուր 7
Պետրոսյան Աստվածատուր 150, 195
Պետրոսյան Արմեն 182, 184
Պետրոսյան Աշոտ 134
Պետրոսյան Գառնիկ 225
Պետրոսյան Լեոնարդ 43
Պետրոսյան Ռազմիկ 161, 169, 181, 188, 211
Պետրոսյան Վարդգես 99
Պետրոսյան Քրիստափոր 14
Պլեխանով 26
Պողոսյան Արամ 113
Պողոսյան Գենրիխ 16
Պողոսյան Նորիկ 152

Ջանյան Բոգդան 4, 8, 12, 13, 16

Ռահիմով Սեյրան 75
Ռահման Աբդու 98
Ռաշիդի Տոսումե /Օզմանյան/ 99
Ռենարտ 165, 166

Սադիխով գնդ. 73
Սադոյան Արշակ 124
Սահյան Համո 9, 14
Սարգսյան Գագիկ 18
Սարգսյան Մկրտիչ 102, 103
Սարգսյան Սերժ 20, 22, 25, 35, 41, 48, 78, 79, 132, 162, 165
Սազյան Սերգեյ 169
Սախարով Անդրեյ 59, 62

Միրզոյան Ռենալ 84
Միրզոյան Վարդան 191
Միրզոեւ Կնյազ 98
Միքայելյան Սասուն 219
Մխիթարյան Սերգեյ 151
Մկրտչյան Արթուր 45
Մնացականյան Կարեն 108
Մովսիսյան Գրիշա 8, 9,
Մովսիսյան Յուրի 22
Մովսիսյան Վլադիմիր 36, 37
Մուղոյան Շաքրո 98
Մուժիկով գեն. 156
Մուրադյան Իգոր 22, 23, 24, 150, 194
Մուրադյան Սարգիս 52,
Մուսաեւ 97
Մուստաֆաեւ Վաքիլ 101
Մուստաֆաեւ Ռահիմ 103

Նաղդալյան Տիգրան 80
Նաջարյան Վարդգես 93
Նավթալյան Արմեն 167, 179, 181, 190
Նարեկացի Գրիգոր 8
Ներսիսյան Արթուր 84, 86
Ներսիսյան Գրիգոր 5, 6, 7, 8, 9
Ներսիսյան Սլավիկ 179
Նժդեհ 4, 24, 58, 70, 154, 170
Նիկողոսյան Ստեփան 162, 163
Նույկին Անդրեյ 16

Շաբադ Անատոլի 59
Շահինյան Մարիետա 97
Շահումյան Ստեփան 11
Շահմուրադյան Սամվել 185
Շամիրով 98, 99
Շառոյան Գարիկ 152, 154
Շիրխանյան Վահան 158

Ոսկերչյան 12

Տեր-Պետրոսյան Լեւոն 27, 39, 41, 42, 43, 47, 48, 54, 104
Տոլստոյ Լեւ 27
Տոնյան Մկրտիչ 124

Ուլուբաբյան Բագրատ 14, 15, 22, 51
Ուլուբաբյան Աշոտ 7

Փափազյան Արթուր 77, 78, 83, 183

Քելեշյան Ռոլանդ 165
Քահքեջյան Կարո 187
Քերոյայն Քոկս 62, 86
Քոչարյան Սոֆիկ 11
Քոչար Հրաչյա 17
Քոչարյան Ռոբերտ 40, 48, 104
Քոռլեյ Ֆելիկս 122

Օգանով /Կարապետան/ Սամվել 165, 181, 186, 188
Օհանյան Խոսրով 179
Օհանյան Սեյրան 18, 86, 211
Օհանյան բժ. 220
Օսմանով Նադիր 176

Սայադյան Համիկ 193, 209
Սադոյան Կամո 214
Սարգսյան Աոս 51
Սարգսյան Վազգեն 37, 41, 48, 83, 92, 102, 131, 143, 147, 151, 152, 154, 155, 158, 206
Սարգսյան Սլավա 226
Սարգսյան Վլադիկ 191
Սարգսյան Տիգրան 161
Սարուխանյան Սարո 228
Սիմոնյան Արթուր 218
Սիմոնյան Գագիկ 77, 79, 80
Սիրադեղյան Վանո 27, 153
Սողոմոնյան Մացո 151
Սողոմոնյան Գրիգոր 77
Ստալին 7, 14
Ստարամուդ Ռաիսա 88
Ստարովոյտովա Գալինա 92
Ստեփանյան Թեւան 4
Սուվարյան Զաքարե 11, 12
Սուրկով 32
Սեւունց Գարեգին 8

Վազգեն Առաջին կթղ. 52
Վասիլյան Ռազմիկ 190
Վարդանյան Աղասի 6
Վարդանյան Դավիթ 27
Վարդանյան Ժիրայր 152
Վարդանյան Միքայել 151, 152
Վարդանյան Շավարշ 81
Վարդանով Վովա 132
Վելիեւ Շաքիր 176, 177
Վերխաշյան Վերդի 7, 9
Վոժդ Մուշեղ 125
Վուրդուն Սամեդ 7, 8, 9

Տեր-Գրիգորյան Տիգրան 10
Տեր-Թադեւոսյան Արկադի 19, 70, 77, 159, 194
Տեր Հովհաննես 166, 195

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Բաղարա 7, 129, 130, 131
Բայլական /Ժդանով/ 175
Բաղանիս-Այրում 155
Բաղասար 216
Բաքու 5, 7, 9, 10, 12, 43, 88, 89, 99, 203
Բեկում Սարով 66
Բեռլին 9
Բերքառատ գյ. 152
Բրյանսկ 88
Բուլղարիա 131

Գանձասարի վանք 112, 184, 195, 196
Գառնաքար գյ.112
Գեղամա լեռ 220
Գետաշեն գյ. 37, 59, 65, 66, 147, 154, 155, 156, 157, 158
Գետավան գյ. 114, 115, 185, 186, 190
Գերանբոյ 61
Գյարավանդ գյ. 202
Գյուլիբերդ գյ. 83, 134, 144
Գյուլիստան 66,
Գորիս 78, 83, 96, 97, 99, 101, 102, 131, 132, 138, 139, 140, 143, 151, 152, 162, 163, 195, 205

Դադիվանք գյ. 83, 88, 166
Դահրազ 203, 204
Դահրավ 203
Դաղստան 43, 117, 222, 224
Դամիրլու 190
Դաշուշեն 223
Դերբենտ 223
Դիլիջան 21

Աբովյան ք. 192, 194, 202, 205, 219
Ադրբեջան 6, 7, 8, 9, 12, 15, 16, 39, 43, 56, 61, 65, 66, 91, 93, 94, 95, 96, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 123, 130, 138, 174, 175, 176, 222, 223, 225, 226, 228
Ազատ գյ. 65
Ազիզբեկով 91
Արեգ սար 148, 149
Արզական գյ. 209
Ալաշան 19, 111, 164
Ալավերդի 154,
Ալխաս գյ. 108
Աղբուլախ 138, 203, 204
Աղդաբան 107, 182, 190
Աղդամ 61, 65, 73, 78, 80, 81, 82, 89, 130
Աղդարա 187, 220
Աղջաբեդի 105
ԱՄՆ 40, 43, 59, 62, 94, 95
Աշտարակ 96, 159, 161
Ապարան 52, 151, 152, 159
Ասկերան 33, 80, 109, 130, 162, 177, 188, 202, 203, 225
Արագած 151, 154
Արցախ 5, 9, 14, 17, 18, 22, 33, 46, 47, 49, 59, 60, 63, 64, 65, 77, 82, 101, 109, 228
Արմավիր 152, 159, 172
Արմենիքենդ 12
Ավստրալիա 54
Աֆղանստան 70, 125, 128, 156, 186, 195, 198
Աֆրիկա 95

Խանքենդ 220
Խաչեն գետ 109, 110, 209
Խնածախ գյ. 130
Խոջալու 18, 123, 125, 126, 127,128, 130, 131,154, 161
ԽՍՀՄ 29, 40, 61, 99, 100, 103

Ծմակահող 112, 210
Ծովին հող 211, 220

Կալինինո 81
Կամո գյ. 65, 151
Կատար սար 138, 140
Կարաչինար 161
Կարճաղբյուր 100
Կարմիրավան 106, 183
Կատուն գետ 62
Կիրգիր 13
Կիչան գյ. 108, 109, 110, 111, 176, 186
Կիլիկիա 124
Կովկաս 58, 156
Կիրովաբաղ 55, 73, 118, 147, 175
Կիրովական 143, 213
Կոճղոտ գյ. 113, 114, 118
Կոշ գյ. 96
Կրասնոդար 170, 171
Կրկժան 18, 61, 125, 126
Կուբաթլու 191
Կուբան 9

Հադրութ 4, 86, 133, 134, 162, 180, 229
Հաթերք 66, 88, 91, 111, 113, 116, 117, 118, 159, 164, 180, 192, 196, 202, 209, 211, 220, 221
Հակոբ Կամարի 19, 84, 144, 145, 146, 147

Դրմբոն 69, 74, 75, 82, 111, 163, 166, 186, 187, 189, 195, 217
Դուշատինսկ 88

Եթովպիա 30
Եղեգնաձոր 151
Երեւան 6, 7, 10, 11, 14, 21, 30, 43, 44, 63, 64, 66, 72, 77, 79, 80, 81, 84, 86, 88, 92, 107, 127, 140, 143, 145, 151 153, 167, 175, 178,182, 183, 184, 201, 209, 227

Զանգեզուր 97
Զանգելան 191
Զարդախաչ 113
Զող 215
Զովունի 152
Զուբ 207

Էջմիածին 151, 159, 218
Էրքեջ 64

Թալիշ գյ. 83, 85, 87, 107, 116, 120, 182
Թեհրան 7
Թուրքիա 16, 75, 95, 97

Իջեւան 151, 152, 155, 162
Իսրայել 95
Իրան 38, 39, 95

Լաչին 81, 83, 96, 97, 98, 99, 101, 102, 104, 134, 135, 137, 139, 140, 162
Լեզգիստան 222
Լենինական 87, 106, 131, 167
Լիտվա 95
Լոնդոն 54

Խանլար 15, 157

Մարտակերտ 19, 58, 65, 68, 70, 72, 74, 83, 84, 106-113, 132, 143, 147, 151, 160, 162, 167, 176, 178 179, 180, 181, 182, 183, 184, 187, 188, 189, 190, 192, 195, 208, 209, 210, 212, 213, 214, 218, 220
Մարտունաշեն 65, 156
Մարտունի 82, 159
Մանաշիդ գյ. 64
Մանասի շեն 172
Մասիս 90, 128, 134, 145, 161
Մեծ շեն 118
Մեհմանա գյ. 111
Միխայլովկա գյ. 88
Միջին Ասիա 102
Միրբաշիր 87, 88, 90, 147, 220
Մոլդովա 195
Մոխրաթաղ 182, 183, 190, 210, 213, 214
Մոնղոլիա 95
Մոսկվա 15, 22, 30, 35, 36, 44, 49, 51, 55, 59, 66, 71, 75, 91, 92, 95, 101, 103, 203, 224

Յանշաղ գյ. 118

Նաիրի շրջ. 150, 152, 162
Նախիջեւանիկ 131
Նախիջեւան 102, 104, 209
Նարեշտար գյ. 120, 163, 164, 166, 190, 195
Նասոնի 170
Նովոչերկասսկ 172, 173, 175
Նոր Հաճն 152
Նոյեմբերյան 152, 153, 154, 155, 156, 159, 161, 162
Նադիրխանլի գյ. 213

Հայաստան 6, 11, 12, 14, 15, 22, 30, 31, 39, 40, 41, 43, 44, 45, 48, 51,53, 59, 64, 65, 68, 80, 81, 83, 92, 93, 94, 95, 97, 98, 100, 101, 102, 103, 104, 124, 125, 134, 158, 165, 167, 193, 194, 205, 227
Հայբարիս 156
Հայրունաձիալ լեռ. 190
Հարությունագոմեր 113, 114, 118
Հորադիզ 194, 204, 205
Հրազդան 159, 162, 190, 219

Ղազախալի 112, 120
Ղազախստան 13
Ղազանչի գյ. 109
Ղահինլար գյ. 182
Ղամիշլու գյ. 215
Ղարաբաղ 4-17, 20, 21, 22, 23, 31, 34, 35, 38, 43, 44, 45, 49, 51, 52, 53, 55, 56, 58, 59, 60, 70, 77, 79, 81, 84, 90, 91, 93, 94, 95, 96, 97, 98, 100, 101, 102, 103, 110, 122, 123, 125, 127, 131, 132, 139, 154, 159, 162, 167, 170,175,176, 177, 179, 181, 183, 184, 194, 195, 202, 205, 207, 209, 210, 215, 216, 217, 219, 220, 221, 222
Ղափան 138, 205
Ղզղալա 10
Ղլեն քար 113, 114, 185, 186
Ղրիմ 9, 49
Ղուշչիուլար գյ. 134

Մաղավուզ 70, 71, 84, 111, 118, 144, 146, 182, 190, 210,
Մալիբելլու 125
Մատաղիս 71, 84, 85, 146, 147, 148, 182, 183
Մարաղա 68, 74
Մարգուշեւան 74

Ռուսաստան 16, 27, 52, 60, 61, 64, 67, 94, 102, 125, 155, 227

Սարատով 180
Սալ քար 114
Սարդարապատ 23
Սարսանգ ջր. 111, 117, 180, 181
Սեւոստոպոլ 7
Սեյրանլու գյ. 153
Սիրունության աղբրագլուխ լեռ 190
Սիսիան 140, 163, 164, 195
Սպիտակ 62, 151, 154, 187, 188
Սրխավանդ գյ. 110
Ստավրոպոլ 153
Ստեփանակերտ 7, 9, 11, 13, 14, 16, 18, 44, 59, 65, 70, 77, 78, 80, 88, 94, 106, 108, 110, 113, 117, 118, 122, 123, 125, 126, 127, 130, 165, 171, 172, 174, 175, 176, 184, 195, 203, 209, 210, 211, 220, 227
Ստեփանավան 51, 152, 153
Սոնա յալ 182
Սովետական Միություն 16, 103
Սումգայիթ 24, 52, 61, 170
Սուսուզլուկ գյ. 218, 219

Վանք գյ. 113, 114, 120, 163, 185, 190, 194, 195
Վայք 125, 151, 158
Վարդենիս 98, 100, 152, 159, 181, 190, 212, 214, 217, 220
Վերին Հոռաթաղ 108, 110, 113, 114, 132, 167, 190
Վերինշեն 64, 66, 70, 156
Վրաստան 49, 52, 102, 162, 209

Տաջիկստան 95
Տզամա դաչ 113, 114, 185
Տոնաշեն գյ. 84, 148, 183

Շահումյանի շրջ. 56, 58, 61, 63, 65, 66, 70, 108, 140, 155, 179, 183
Շիրակ 151
Շուլավեր 51
Շուշի 4, 11, 18, 38, 76, 78, 79, 80, 81, 88, 89, 106, 109, 123, 126, 138, 139, 152, 161, 162, 164, 175, 203, 204, 222
Շուռնուխ գյ. 131, 138, 139, 140, 141, 142, 143, 151, 163
Շոշ գյ. 77, 83, 123, 203
Շոթանլի գյ. 212
Շովելյանի բանտ 90

Ոսկեպար 59

Չանախչի /Ավետարանոց/ 10
Չայլու գյ. 85, 87, 108, 110, 178
Չայղուշան 190
Չարդախլու գյ. 66, 68
Չափնի գյ. 215, 216
Չափար գյ. 115, 116, 164, 165
Չարեքտար գյ. 107, 190
Չերնոբիլ 93
Չինաստան 153
Չլդրան 20, 75, 111, 132, 210
Չուլա գետ 62

Պռոշյան գյ. 152, 161
Պուշկի յալ 19, 76, 83, 144, 164, 165

Ջալալօղլի 51
Ջանֆիդա գյ. 68
Ջզկազգան 4, 13, 14
Ջիբիխլի գյ. 138, 140, 141, 141

Ռոստով 6, 155, 172, 175

Տումի 4

Տեխի ձոր 202

Ուլուբաբ լեռ 108
Ումուդլու /Ականաբերդ/ գյ. 88
Ուրսուլ գետ 62
Ուրուխ գետ 62

Քարին տակ 65, 123, 203, 204
Քարվաճառ 96, 100
Քաչալ բլուր 114
Քասախ գետ 159
Քարհանք 109
Քեմքեշ 111
Քյոսալար գյ. 162
Քրդստան 97, 99
Քոլատակ գյ. 112, 125, 159, 195

Օմար լեռ 213, 215, 217, 218

ԲԱԿՈՒՐ
(Բորիս Ավանեսի Կարապետյան)

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ

գիրք երրորդ

Շապիկը՝ Բակուրի
Համակարգչային ձեւավորումը՝ Վազգեն Ղազարյանի եւ Հովհաննես Կարապետյանի
Ձայնագրությունների մուտքագրումը՝ Անահիտ Ասատրյանի, Մարինա Բաղդագյուլյանի եւ Մարինե Ներսեսյանի
Սրբագրիչ՝ Անահիտ Ասատրյան

Չափսը՝ 60x84 1/16, թուղթը՝ օֆսեթ,
ծավալը՝ 15 տպ. մամուլ, տպաքանակը՝ 500:

«ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՀԱՄԱՀԱՎԱՔ»
ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՀԱՋՈՐԴ ՀԱՏՈՐՈՒՄ ԿԵՐԿԱՅԱՑՎԵՆ՝

Զորի Բալայան

Վալենտին Օսկոցկի, Գալինա եւ Անդրեյ Նուկկիներ

Սամվել Բաբայան

Դավիթ Ճահնազարյան

Դավիթ Ոսկանյան

Արթուր Ֆիվանշիրյան

Նարինե Աղաբալյան

Երջանիկ Աբգարյան

Ալեքսեյ Տրոյանսկի

Դավիթ Պետրոսյան

Արթուր Հակոբյան

Վլադիմիր Դավթյան

Ռազմիկ Հակոբյան

Լեւոն Հայրապետյան

Դավիթ Պետրոսյան

Ալեքսեյ Ֆյոդորով

Գառնիկ Արզումանյան

Սամվել Միրզոյան

Պավել Աթայան

Տիգրան Վանտանջյան

Նիկոլայ Բլոխով

Տիգրան Պետրոսյան